ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

ԶԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Համաձայնության զորությունը

ԳԱՐԻ ԿԻՍԻ

Հ Ե Ղ Ա

ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Համաձայնության զորությունը

Փ Ո Խ Ո Ւ

ԳԱՐԻ ԿԻՍԻ

Թ Յ Ո Ւ Ն Ը

Your Financial Revolution, The Power of Allegiance, Armenian
Copyright © 2020 by Gary Keesee

Originally published in English
Copyright © 2015 by Gary Keesee
ISBN: 978-0-9729035-9-2

Gary Keesee Ministries,
P.O. Box 779, New Albany,
OH 43054, USA

GaryKeesee.com

This book is a FREE GIFT from Gary Keesee Ministries and is
NOT FOR SALE

Ձեր ֆինանսական հեղափոխությունը. Համաձայնության զորությունը, հայերեն
© 2020 Գարի Կիսի

Սկզբնապես հրատարակված է անգլերենով
© 2015 Գարի Կիսի
ISBN: 978-0-9729035-9-2

Գարի Կիսիի ծառայություն,
Փ/Ա 779, Նյու Ալբանի,
Օհայո 43054, ԱՄՆ

GaryKeesee.com

Այս գիրքն ԱՆՎՃԱՐ ՆՎԵՐ է Գարի Կիսիի ծառայությունից
և ՎԱՃԱՌՔԻ ԵՆԹԱԿԱ Չէ

Այս գրքում Գարի Կիսին խոսում է այն մասին, թե ինչպես շրջադարձորեն փոխվեց իր կյանքը, երբ ինքը գտնվում էր ֆինանսապես փլուզված վիճակում: Հեղինակն այս գրքում անկեղծորեն ներկայացնում է իր ծայրահեղ վիճակը, ապա առաջնորդում է դեպի աստվածաշնչյան հրաշագործ սկզբունքները: Հենց այս սկզբունքները նրան վեր բարձրացրին դեպի հաջողակ և օրհնված կյանք:

Աստվածաշնչյան մեջբերումները հայերեն Աստվածաշունչ մատյան «Արարատ» թարգմանությունից են, հատուկ նշումների դեպքում՝ անգլերեն «Նոր միջազգային թարգմանությունից» (NIV):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 5
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 7
ԳԼՈՒԽ 1. Թագավորությունը 19
ԳԼՈՒԽ 2. Կապույտ մշուշը 63
ԳԼՈՒԽ 3. Խնդրո՛ւմ եմ, Աստվա՛ծ, ողորմի՛ր. 71
ԳԼՈՒԽ 4. Հսկա ձուկը 103
ԳԼՈՒԽ 5. Ո՞վ ընտրեց դա. 113
ԳԼՈՒԽ 6. Տիրոջ օրհնությունը 153
ԳԼՈՒԽ 7. Դուռը 175
ԳԼՈՒԽ 8. Համաձայնության զորությունը 185
ԳԼՈՒԽ 9. Դո՛ւք կերակրեք նրանց 195
ԳԼՈՒԽ 10. Վերցրու՝ առանց քրտնելու 211
ԳԼՈՒԽ 11. Թռչելը քայլելուց հեշտ է 219

ՆԱԽԱԲԱՆ

Արդեն մի քանի տարի է՝ ես ցանկանում եմ գրի առնել այն ընթացքը, որով Աստված անցկացրել է Դրենդային և ինձ: Մեր կյանքն այնքա՜ն է փոխվել: Տարիներ շարունակ մեր աչքերով տեսել ենք բոլոր հրաշքները, որոնք Հիսուսը գործում էր Աստվածաշնչում. մահացածները հարություն են առել, անդամալույծները ոտքի են կանգնել, քայլել են և հաջորդ օրը վերադարձել են իրենց աշխատանքին, անթիվ մարդիկ բժշկվել են, և հարյուր հազարավոր մարդկանց ֆինանսները վերականգնվել են: Բայց մեծագույն հրաշքը, որը տեսել ենք, տեղի է ունեցել մեր ընտանիքում և մեր կյանքում:

Իմ նպատակն է անցկացնել ձեզ այս ընթացքով՝ բացահայտման ընթացքով, որը, հուսով եմ, կփոխի ձեր կյանքն այնպես, ինչպես որ փոխեց իմը: Ես չեմ կարող ամբողջությամբ պատմել այս պատմությունը մեկ գրքում: Այս գիրքն առաջինն է իմ գրքաշարում, որը կառաջնորդի ձեզ դեպի անձնական ֆինանսական հեղափոխությունը և կհայտնի Աստծո թագավորության խորհուրդները, որոնք փոխեցին իմ կյանքը: Ինձ համար սա ոգեշնչող ընթացք է, որը երբեք չի ավարտվի: Բոլորս էլ մշտապես սովորում ենք: Աստծո թագավորության գիտելիքն անսպառ է:

Ես այնքա՜ն շնորհակալ եմ Աստծուց: Նրա ողորմությունը նորոգվում է ամեն օր, և Նա առաջնորդում է մեզ փրկության ճանապարհով՝ համբերությամբ և ներողամտությամբ: Հրավի-

ռելով ձեզ այս ընթացքի մեջ՝ չեմ կարող չհիշատակել իմ հրաշալի կնոջը՝ Դրենդային: Նրա սրտանց նվիրումն Աստծուն և համբերությունն իմ հանդեպ՝ տվեցին ինձ խիզախություն՝ բախվելու իմ տկարություններին և փնտրելու Աստծուն այն պատասխանների համար, որոնք խիստ անհրաժեշտ էին ինձ:

Ձեր ֆինանսական հեղափոխությունը

Համաձայնության զորությունը

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Ես զրկվել եմ խաղաղությունից. ես մոռացել եմ, թե ինչ է բարգավաճումը»:

– Ողբ Երեմիայի 3.17, NIV

Ես արթնացա՝ գիտակցելով, որ ինչ-որ բան լիովին սխալ էր: Իմ միտքը համակվեց մեծ վախով: Ես չէի զգում իմ լեզուն: Իմ ձեռքերը, ոտքերը և երեսիս մի կողմը թմրած էին: Արթնացրի Դրենդային և մեծ դժվարությամբ ասացի, թե ինչ էր կատարվում ինձ հետ, քանի որ իմ ամբողջ երեսը և լեզուն չէին ենթարկվում ինձ: Հանկարծ ուշադրություն դարձրի, որ սիրտս շատ արագ է բաբախում, իսկ շնչառությունս ծանրացել է, մինչ պատմում էի նրան իմ վիճակը: Նա արթնացավ և անմիջապես սկսեց աղոթել ինձ համար: Տարօրինակ և վախով լի զգացմունքները դանդաղորեն, բայց մի փոքր թուլացան: Ես նորից պառկեցի մահճակալին, իսկ Դրենդան առաջարկեց ուտելիք բերել: Ես պառկած աղոթում էի. շփոթված ու վախեցած էի այն պատճառով, ինչ տեղի էր ունենում իմ մարմնի հետ: Վրայովս ասես տագնապի ալիքներ անցնեին: Իմ միտքը ենթարկվում էր վախերի այնպիսի հարձակման, որոնք նախկինում երբեք չէի զգացել:

Իմ պարտքերի և փողի մշտական կարիքի պատճառով վախը դարձել էր իմ առօրյա կյանքի սովորական մասը: Ես անասելի ճնշվածություն էի զգում վերջին մի քանի տարվա ընթացքում իմ՝ շարունակ վատթարացող ֆինանսական վիճակի պատճառով: Ես

աշխատում էի որպես վաճառքի գործակալ և լուրջ ֆինանսական խնդիրներ ունեի: Մենք վարձով էինք ապրում 1800-ական թվականներին կառուցած մի գյուղական տանը, որը, թվում էր, կառուցվելուց հետո երբեք չէր վերանորոգվել: Կարծում եմ՝ ես մի փոքր չափազանցնում եմ, բայց այդ տունը լավ վիճակում չէր: Պատուհանների շրջանակները բացվածքներ ունեին, և բույսերը թափանցում էին մեր հյուրասենյակ: Ապակիներից շատերը կոտրված էին, և մենք կպչուն ժապավենով ստվարաթուղթ էինք փակցնում պատուհանների շրջանակների վրա: Թեև Դրենդան շատ էր հոգնում, նա կարողանում էր հարմարավետություն ստեղծել, բայց նույնիսկ նրա զարմանալի հմտությունների դեպքում, միևնույն է, երևում էր, որ այդ տունը բազմաթիվ լուրջ թերություններ ուներ:

Այն ամենը, ինչ մենք ունեինք, անսարք վիճակում էր: Մեր երկու մեքենաներն էլ հին էին. դրանց վազքն ավելի քան 350.000 կիլոմետր էր, և շարժիչները հազիվ էին միանում: Մեր երկու տղաները քնում էին մի ծերանոցի կողմից դեն նետած ներքնակների վրա. նրանց ննջասենյակի հատակի խալին բերված էր աղբանոցից: Գրավատները դարձել էին մեր կենսաոճը, և մենք պարտք էինք վերցնում նրանցից, ովքեր, մեր կարծիքով, կարող էին օգնել մեզ: Մենք հազիվ էինք հոգում մեր կարիքները, գտնում էինք վաճառքի ենթակա բաներ, փորձում էինք գոյատևել և հույս ունեինք, որ հաջորդ օրը ինչ-որ բան կփոխվեր դեպի լավը:

Իմ տասը սպառված վարկային քարտերն արգելափակվել էին ամիսներ առաջ, և ֆինանսական ընկերություններում իմ ունեցած տարեկան 28 տոկոսով երեք վարկերը ներկայացված էին բռնագանձման: Մեր մեքենաների վճարումները (այո, ես դեռ պարտք էի իմ երկու անչափ հին մեքենաների համար) ուշացել էին 120 օրով, և մենք մեքենաների առգրավման եզրին էինք: Իմ բոլոր վճարումներն ուշացած էին: Իմ դեմ արվում էին դատական հայցեր և արգելանքներ, և գանձումների մասին ծանուցող հեռախոսազանգերն արթնացնում էին ինձ ամեն առավոտ: Ես պարտք էի Հարկային տեսչությանը, և նրանք արգելանք էին դրել իմ եկամուտների վրա՝ հարկային պարտավորությունների պատճառով: Դրենդան և ես պարտք էինք

մեր ծնողներին 26.000 դոլար, և նրանք հոգնել էին մեզ օգնելուց: Մեր սառնարանը հազվադեպ էր լցված մթերքներով: Էլեկտրաէներգիա մատակարարող ընկերությունը մշտապես սպառնում էր անջատել մեր հոսանքը, երբեմն՝ ամեն ամիս: Եվ զգացմունքորեն ես արդեն անկարող էի դիմանալ այդ վիճակին:

Այդ ճնշվածությունը վնասում էր իմ մարմինը, թեև ես չէի հասկանում դա: Մի քանի բժշկի այցելելուց հետո ինձ ասացին, որ ես խուճապի նոպա եմ ունեցել, և հակադեպրեսանտ դեղամիջոցներ նշանակեցին: Դժբախտաբար, խուճապի նոպաները շարունակվեցին և դարձան հաճախակի՝ այն աստիճան, որ վախենում էի դուրս գալ տնից: Այդ վախով լի մշուշոտ օրերի ընթացքում, երբ ես պատասխաններ էի որոնում, նկատեցի, որ շաքար, օսլա կամ կաֆեին պարունակող որոշ կերակրատեսակներ իրենց հերթին խուճապի նոպաներ էին առաջացնում ինձ մոտ: Այժմ ես վախենում էի կերակուր օգտագործելուց և զգուշորեն էի ընտրում այն, ինչ ուտում էի: Իմ կյանքը վերածվեց գերության՝ այն աստիճան, որ ես չէի կարողանում աշխատել, ինչը, իհարկե, է՛լ ավելի վատթարացրեց մեր ֆինանսական վիճակը:

Կինս մտածում էր, որ կորցնելու էր իր ամուսնուն. հետագայում, երբ բժշկվեցի, նա ասաց, որ բառացիորեն ծրագրում էր, թե ինչ էր անելու, որպեսզի հոգար մեր երեխաների մասին: Ես աղաղակում էի Աստծուն՝ պատասխաններ ստանալու համար, բայց չունեի փորձառություն և գիտելիք այն մասին, թե ինչի հետ էի պայքարում: Բժիշկներն օգտագործում էին վախ առաջացնող հիվանդությունների անուններ՝ նկարագրելով իմ առողջական վիճակը, և ասում էին, որ այն անբուժելի է, և որ ես մշտապես դեղամիջոցներ եմ ընդունելու: Այլ բժիշկներ ասում էին, որ ես շաքարախտով հիվանդանալու եզրին եմ՝ պնդելով, որ ես հարմար հիվանդ էի, որին նրանք կարող էին հետևել, քանի որ տարիքի հետ այդ հիվանդությունը զարգանալու էր:

Թեև ես քրիստոնյա էի, սակայն չունեի հոգևոր պատերազմ վարելու և թշնամուն հակառակվելու փորձառություն: Իրականում, մինչև այդ պահը ես չէի հասկացել, որ պայքարում էի դիվային հոգու հետ: Ես մտածում էի, որ պարզապես խնդիր ունեի իմ մարմնում

և խնդրում էի Աստծուն բժշկել ինձ: Որպես քրիստոնյա, գիտեի, որ Աստված էր իմ պատասխանը, բայց այդ ժամանակ թվում էր՝ Աստված այնքա՜ն հեռու էր: Բժիշկները տարբեր ախտորոշումներ էին անում իմ առողջական վիճակի համար, որոնք կապված էին մտավոր խնդիրների հետ, և բոլոր դեպքերում անհրաժեշտ էր տարատեսակ դեղեր ընդունել: Ինչպես արդեն ասացի, իմ վիճակն անբուժելի էր համարվում, և բուժման միջոցները պարզապես պետք է օգնեին զսպել իմ մտավոր վիճակը: Սակայն այդ դեղերը բոլորովին չէին օգնում, և ես կողմնակի բարդություններ էի ունենում: Իրականում, կարծում եմ՝ դրանք ավելացնում էին իմ ախտանշանները: Թվում էր՝ ես ապրում էի մշուշում և չարչարվում էի վախով լի մտքերից, որոնք չէի կարողանում վերահսկել: Ես չունեի պատասխաններ, և ոչինչ չէր օգնում ինձ: Այսպես շարունակվեց մի քանի շաբաթ, և իմ հուսահատությունն ավելացավ, քանի որ թվում էր՝ վախը խլելու էր իմ կյանքը:

Բայց մի երեկո, երբ փնտրում էի Աստծուն՝ պատասխաններ ստանալու համար, ես մեծ ճեղքում ունեցա: Բացահայտեցի մի կարևոր բանալի՝ ազատություն ստանալու համար: Ես եկեղեցում էի չորեքշաբթի երեկոյան ծառայությանը: Փառաբանության և երկրպագության ժամանակ ինձ մոտ խուճապի ուժգին նոպա սկսվեց: Ես չգիտեի ինչ անել: Անհույս վիճակում էի և գիտեի, որ աղոթքի կարիք ունեի. այնպես որ, առաջ գնացի: Ինձ չէր հետաքրքրում, որ ես ընդհատում էի ծառայությունը: Ես հաճախում էի մի շատ մեծ եկեղեցի, և հովիվն անձամբ չէր ճանաչում ինձ, բայց փառաբանության և երկրպագության թիմի անդամներից մեկը, որն աշխատում էր եկեղեցում, ճանաչում էր ինձ: Ես հուսահատությունից գրեթե մագլցեցի բեմի վրա. ամեն ինչ կանգ առավ, և բոլորը նայեցին ինձ: Եկեղեցու աշխատակիցը, որը ճանաչում էր ինձ, արագորեն արձագանքեց՝ տեսնելով, որ կարգուկանոնի ծառայողներն առաջ էին գալիս՝ ինձ հեռացնելու համար:

Երբ նա պատմեց հովվին իմ վիճակը, ես տեսա, որ հովվի դեմքի արտահայտությունը մեղմացավ: Նա մոտեցավ և աղոթեց ինձ համար: Իմ ընկերն ասում էր հովվին, որ ես հիվանդ եմ: Հովիվը նայեց ինձ և ասաց.

– Նա տկարության հոգի ունի:

Այդ խոսքերով նա դրեց իր ձեռքերն իմ գլխին և հրամայեց այդ հոգուն հեռանալ: Այդ պահին կատարվեց անհավանական մի բան. ես ազատություն ստացա: Առաջին անգամ մի քանի ամսվա ընթացքում ես լավ էի զգում ինձ՝ առանց տանջող մտքերի և վախի. ես պարզապես խաղաղ էի: Ասելը, որ շնորհակալ էի, նշանակում էր ոչինչ չասել: Այն, ինչ զգում էի, շատ ավելին էր ոգեշնչումից: Գլուխս ասես պտտվեր. ես փետուրի պես թեթև էի զգում ինձ և լցված էի ուրախությամբ:

Հավաքույթից հետո Դրենդան և ես գնացինք «Պիցցա Հաթ» մեր ընկերներից մի քանիսի հետ՝ տեղի ունեցածը նշելու համար: Մինչ նստած պիցցա էի ուտում, հիշում եմ, որ ռադիոյով մի երգ միացավ, և հանկարծ զգացի վախի նույն տհաճ զգացումը, որը եկավ ինձ վրա ծածկոցի պես. այն վերադարձավ: Կրկին, այդ ժամանակ ես հասկացա, որ դա հոգի էր: Հովիվն ասել էր, որ դա տկարության հոգի էր, բայց ես չգիտեի, թե ինչ էր դա իրականում նշանակում, և ես մի փոքր շփոթված էի: Մտածեցի, որ բժշկվել եմ այդ հավաքույթին, բայց պարզվում էր՝ ո՛չ: Հաջորդ օրը ես կրկին պայքարում էի խուճապի նոպաների հետ, բայց շարունակ մտածում էի այն մասին, թե ինչ կատարվեց եկեղեցում նախորդ երեկոյան: Երբ հովիվն աղոթեց ինձ համար, նա չաղոթեց, որ ես բժշկվեմ: Նա իշխանություն վերցրեց այդ հոգու վրա: Այն, որ ես այդ կերպով արձագանքեցի իմ հովվին, կարծես թե ցույց էր տալիս, որ միգուցե իմ վիճակի վատ լինելու պատճառը հոգի էր, ոչ թե հիվանդություն (կրկին, դուք կարող եք հասկանալ, թե որքան ոչ հասուն էի ես Քրիստոսի մեջ, քանի որ չէի հասկանում դա): Այդ պահին ես շատ քիչ տեղեկություն ունեի հոգևոր պատերազմի մասին, բայց հաստատ գիտեի, որ դևերն իրական են: Մեկ անգամ տեսել էի մի դևի:

Երբ երիտասարդ էի, ես ղեկավարում էի ծնողներիս պատկանող երկու պիցցայի սրահներից մեկը: Մի երեկո ներս մտավ մի մարդ և ասաց, որ ինքն արթնության հավաքույթներ է անցկացնելու մեր փողոցում գտնվող տեղական Մեթոդիստական եկեղեցում: Նա առաջարկեց ինձ մասնակցել այդ հավաքույթներին և ավարտեց իր հրավերը հետևյալ խոսքերով.

– Հիսուսը դեռ անում է նույն բաները, ինչ որ անում էր Աստվա-

ծաշնչում:

Դա գրավեց իմ ուշադրությունը: Ես մեծացել էի եկեղեցում: Ես հանձնել էի իմ սիրտը Տիրոջը 5-րդ դասարանում՝ Արձակուրդային աստվածաշնչյան դպրոցում սովորելիս: Բայց դրանից հետո տարիներ շարունակ ոչ մի անգամ չէի տեսել, որ Աստծո զորությունը բժշկեր ինչ-որ մեկին: Չկար մի բան՝ կապված Աստծո հետ, ինչն իսկապես գրավեր իմ ուշադրությունը: Այնպես որ, ես հեռացա Տիրոջից դպրոցական տարիներին: Ժամանակ առ ժամանակ կրկին եկեղեցի հաճախելու որոշում էի կայացնում, բայց թվում էր՝ իմ հետաքրքրությունը երկար չէր տևում: Իսկ այդ մարդն այլ կերպ էր խոսում: Մի՞թե Հիսուսը դեռ անում էր նույն բաները, որոնք անում էր Աստվածաշնչում: Իմ աշխատողներից մի քանիսը հաճախում էին այդ եկեղեցի. նրանք խրախուսեցին ինձ մասնակցել այդ հավաքույթներին, և ես որոշեցի գնալ:

Առաջին օրը՝ երեկոյան, երբ այնտեղ էի, ես այնպես զգացի Աստծո ներկայությունը, ինչպես նախկինում երբեք չէի զգացել: Թվում էր՝ կարող էի իրականում զգալ Աստծո ներկայությունը. այն շոշափելի էր: Այն ուղերձը, որն այդ մարդը քարոզեց, ազդեցիկ էր, և երբ նա հարցրեց՝ արդյո՞ք ինչ-որ մեկը ցանկանում է նվիրել կամ կրկին նվիրել իր կյանքը Հիսուսին, ես բարձրացրի ձեռքս: Ինչպիսի՜ երեկո: Ես ոգեշնչված էի: Ես ուզում էի պատմել բոլորին, թե որքա՜ն մեծ է Աստված:

Այդ ժամանակ չկար ինտերնետ, լսասկավառակներ և լսաժապավեններ, և մեր հեռուստացույցը երեք ալիք ուներ: Մեր քաղաքը փոքր էր, և աշխատանքային ժամերից հետո գրեթե ոչ մի զբաղմունք չկար: Այնպես որ, երիտասարդները սովորաբար նստում էին պիցցայի սրահում մինչև ուշ գիշեր՝ ժամանակ անցկացնելու համար: Սովորաբար մենք այնտեղ էինք լինում ուրբաթ և շաբաթ երեկոները՝ գիշերվա ժամը 1:00-ին, իսկ մեր ավտոկայանատեղին ամբողջովին զբաղեցված էր լինում երիտասարդների մեքենաներով: Շատ հաճախ ես ստիպված էի լինում վռնդել նրանց, քանի որ նրանց պատճառով իմ հաճախորդները մեքենաները կայանելու տեղ չէին գտնում: Այնտեղ կռիվներ էին սկսվում, և ոստիկանությունը ստիպված էր լինում վերջ տալ դրանց և տուն ուղարկել երիտասարդներին: Եվ մի միտք ծագեց. այդ երիտասարդները պետք է լսեին Հի-

սուսի մասին: Ես մոտեցա նրանց և ասացի, որ եթե նրանք ուզում են մնալ պիցցայի սրահում, ես Աստվածաշնչի ուսումնասիրություն եմ անցկացնելու: Ուզում եմ, որ հաշվի առնեք, որ դա տեղի էր ունենալու մոտավորապես գիշերվա 01:30-ին, քանի որ ես պետք է մաքրեի ամեն ինչ և փակեի սրահը 1:00 - 1:30-ը: Ես չգիտեի՝ արդյո՞ք նրանցից որևէ մեկը կգար, բայց մի քանիսը եկան, և իմ աշխատողներից մի քանիսը նույնպես մնացին: Առաջին հանդիպման գիշերը երիտասարդներից մեկն ասաց, որ ուզում է ծառայել Քրիստոսին, և հարցրեց ինձ, թե ինչ պետք է անի: Այս հարցը խնդիր առաջացրեց ինձ համար, քանի որ ես դեռ չէի մտածել այդ մասին: Հիշեք՝ ըստ էության, ես դեռ ոչինչ չգիտեի Աստվածաշնչի մասին, բայց կարդացել էի մի խոսք, որը, իմ կարծիքով, պատասխան էր այդ իրավիճակում.

«Եվ... նա, ով որ Տիրոջ անունը կանչի, կփրկվի»:

– Գործք 2.21

Դա բավականին պարզ էր թվում, և ես որոշեցի, որ մենք այդպես էլ կանենք: Խումբն արդեն գնացել էր, երբ այդ երիտասարդը մոտեցավ ինձ այդ հարցով, և ես առաջարկեցի նրան նստել աթոռին ու ասել Հիսուսի անունը: Ես կարծում էի, որ դա շատ հեշտ էր, բայց նստեցի նրա կողքին ավելի քան երկու րոպե, և նա ոչինչ չասաց: Ես կրկնեցի իմ հրահանգը՝ մտածելով, որ նա չի լսել ինձ: Կրկին՝ ոչինչ: Հանկարծ նկատեցի, որ նա ցնցվում է: Նրա դեմքի արտահայտությունից հասկացա, որ չի կարողանում արտաբերել այդ անունը: Հանկարծ, պայթող ամբարտակի պես, նա ասաց Հիսուսի անունը, և նրա դեմքը խաղաղվեց: Ամեն ինչ ստացվե՛ց: Եվ ես այդպես էի վարվում ամեն անգամ, երբ ինչ-որ մեկը ցանկանում էր նվիրել իր սիրտը Տիրոջը: Ես խնդրում էի երիտասարդներին նստել աթոռին և ասել Հիսուսի անունը: Գրեթե առանց բացառության, նրանք չէին կարողանում անմիջապես արտաբերել այն: Նրանք սկսում էին ցնցվել, իսկ հետո, կարծես դժվարությամբ, հանկարծ ասում էին Հիսուսի անունը և խաղաղվում էին:

Մեկ անգամ, երբ խմոր էի պատրաստում պիցցայի սրահի խոհանոցում, ես լսեցի դռան թակոց: Բացելով՝ տեսա երկու երիտասար-

դի, որոնց հետ նախկինում խոսել էի Քրիստոսի մասին: Ներս հրավիրեցի նրանց, և մեկն ասաց, որ ուզում է նվիրել իր սիրտն Աստծուն: Ես նստեցրի նրան աթոռին և, ինչպես միշտ, նա սկսեց ցնցվել և վերջապես ասաց Հիսուսի անունը: Վեր նայելով՝ ես տեսա, որ մյուս երիտասարդը ետ էր գնացել և վանդակի մեջ փակված կենդանու նման սեղմվել խոհանոցի անկյունում: Նա ասես փորձում էր մտնել պատի մեջ և է՛լ ավելի հեռվանալ ինձնից: Դա շատ տարօրինակ էր, և ես չէի կարող բացատրել:

Ես նայում էի նրան, և հանկարծ մի միտք ծագեց. «Գուցե նրա մեջ դև՞ կա»: Ես չունեի ոչ մի փորձառություն դևերի հետ, բայց կարդացել էի դրանց մասին Աստվածաշնչում: Ես իսկապես չէի կարող այլ կերպ բացատրել նրա տարօրինակ վարքը: Եվ ասացի. «Հիսո՛ւս, նրա մեջ դև՞ կա»: Հանկարծ, ասես մի քող հեռացվեց, և ես տեսա դևի, որը կախված էր այդ տղայի կողքից: Դևը մեկ մետրից մի փոքր բարձր հասակ ուներ, նա բռնվել էր այդ տղայից՝ ոտքերով փաթաթվելով նրան: Մարդիկ միշտ հարցնում են ինձ. «Ինչպիսի՞ն էր նա»: Նա նման էր կապկի, բայց այլ տեսակի էր: Նա մազոտ էր՝ կապկի պես, նրա ձեռքերը երկար էին՝ կապկի պես, բայց նա ուներ վառ կարմիր աչքեր և տձև կազմվածք: Այն պահին, երբ տեսա այդ աչքերը, ճչացի: Այն ատելությունը, որը ես տեսա այդ դևի աչքերում, ավելին էր, քան կարող էի կրել: Այն, ինչ ես տեսա այդ աչքերում, լավագույնս կարելի է անվանել հեղուկ ատելություն, ներթափանցող ատելություն, որը գրեթե շոշափելի էր: Ես անմիջապես հասկացա, որ նա ոչ միայն ատում էր ինձ, այլև խիստ բարկացած էր ինձ վրա:

Եվ ի՞նչ: Ես չգիտեի ինչ անել, երբ տեսա այդ դևին: Բայց մտածեցի, որ եթե Հիսուսի անունը բերում է մեզ Աստծո թագավորության մեջ, այն պետք է որ նաև իշխանություն ունենա այդ դևի վրա, և ես բարձրաձայն ասացի.

– Հիսուսի անունո՛վ:

Քողն ակնթարթորեն փակվեց: Եթե հիշում եք հին սև-սպիտակ հեռուստացույցները, երբ անջատում էիք, վերջին պատկերը դանդաղորեն մարում էր էկրանից: Ահա թե ինչպես դա եղավ: Ես չէի տեսնում այդ դևին, բայց տեսնում էի մարող պատկերը: Երբ քողը փակվեց,

այդ երիտասարդն անմիջապես դուրս վազեց խոհանոցից:

Այնպես որ, ես գիտեի, որ դևերն իրական են: Երանի՜ կարողանայի ասել, որ այն պահից, երբ հասկացա, որ գործ ունեի դիվային հոգու հետ, ես անմիջապես հեռացրի այդ միտքն ինձնից և այդ պահից սկսեցի ապրել ազատության մեջ: Բայց դա անմիջապես տեղի չունեցավ: Ցավալի է, որ, տարիներ շարունակ եկեղեցում լինելով, ես այդպես էլ ժամանակ չէի հատկացրել, որպեսզի իմանայի, թե ով էի ես Քրիստոսում, և սովորեի կիրառել իմ օրինական իրավունքներն ընդդեմ թշնամու: Բայց այժմ, երբ հասկացա կամ, առնվազն, կասկածեցի, որ միգուցե գործ ունեի դիվային հոգու հետ, ես խրախուսվեցի՝ իմանալով, որ կարող էի սովորել, թե ինչպես պարտության մատնել այն: Ես բավականաչափ գիտելիք ունեի՝ հասկանալու համար, որ դևը պետք է հնազանդվեր իմ իշխանությանը, բայց ես շփոթված էի, քանի որ դա տեղի չէր ունենում: Մի քանի օր անց ես ունեցա ևս մեկ դրական փորձառություն, որը հաստատեց, որ ես գործ ունեի դիվային հոգու հետ:

Ես աղոթում էի Սուրբ Հոգով իմ ննջասենյակում և վճռել էի այնքան աղոթել, մինչև որ հասկանայի, թե ինչ էր կատարվում: Այդ աղոթքի ընթացքում հանկարծ թեթևություն զգացի և կրկին ազատություն վերապրեցի, ինչպես այն ժամանակ, երբ հովիվն աղոթեց ինձ համար: Այդ գիշեր ես մնացի ազատության մեջ գրեթե երկու ժամ, մինչև որ այդ դևը վերադարձավ, բայց ես արդեն լիովին համոզված էի, որ գործ ունեի դիվային հոգու հետ, և որ այն հնազանդվեց աղոթքին: Ես կրկին փորձեցի աղոթել, բայց ոչինչ չկատարվեց: Այնպես որ, սկսեցի հոգևոր պատերազմի մասին կարդալ և ժամանակ տրամադրեցի՝ սովորելու, թե ով եմ ես Քրիստոսում: Բայց այդ դևը, միևնույն է, չէր հեռանում: Այն հնազանդվել էր իմ իշխանությանը միայն մեկ անգամ՝ աղոթքի ժամանակ: Ես շփոթված էի և ջերմեռանդորեն հարցրի Տիրոջը, թե ինչ պետք է անեմ: Թեև չէի կարողանում լիարժեք ազատություն ստանալ, ես այլևս խուճապի նոպաներ չէի ունենում, և մարմնիս թմրածությունը լիովին անցել էր: Այնպես որ, արդեն իսկ մեծ հաղթանակներ էի տարել: Ես դեռ պայքարում էի տանջող մտքերի և ընկճվածության հետ, բայց վստահ էի, որ ավելի էի ուժեղանում: Ես

ամեն օր ժամանակ էի տրամադրում՝ վերանայելու համար այն, ինչ Աստվածաշունչն ասում է Քրիստոսի մեջ մեր իշխանության մասին:

Մեկ անգամ ես պայքարում էի արդեն ծանոթ սարսափի և վախի մտքերի հետ, մինչ աշխատում էի իմ գրասենյակում: Ես փորձեցի աղոթել և հրամայել վախի հոգուն հեռանալ, բայց, ինչպես միշտ, դա ոչ մի արդյունք չտվեց: Հանկարծ լսեցի Տիրոջ ձայնը: Նա պատվիրեց, որ բարձրաձայն՝ իշխանությամբ, հրամայեմ այդ հոգուն հեռանալ: Դրանից հետո Նա ասաց ևս մեկ բան, ինչը փոխեց այն, թե ինչպես էի ես դիտարկում հոգևոր իշխանությունը: Նա պատվիրեց ուշադրություն չդարձնել իմ զգացմունքներին, երբ հրամայում եմ նրան հեռանալ, այլ հենվել Իր Խոսքի վրա, ոչ թե այն բանի, թե ինչ էի ես տեսնում և զգում: Ես աշխատում էի իմ գրասենյակում և չէի կարող պարզապես կանգնել և բղավել սատանայի վրա, քանի որ իմ աշխատողները նույնպես այդտեղ էին: Այնպես որ, ես վեր կացա, գնացի զուգարան և բարձրաձայն ասացի.

– Հիսուսի անունո՛վ, ես կապո՛ւմ եմ քեզ, վախի՛ հոգի: Այն, ինչ դու անում ես, անօրինական է, և ես հրամայում եմ քեզ հեռանալ հենց հիմա՝ Հիսուսի անունով:

Ոչի՛նչ. ես չզգացի ոչ մի փոփոխություն: Բայց հիշեցի այն, ինչ Տերն ասաց ինձ. «Ուշադրություն մի՛ դարձրու քո զգացմունքներին»: Ես գոհացա Տիրոջից այն իշխանության համար, որը Նա տվել էր ինձ, և սկսեցի փառաբանել Աստծուն, որ ես ազատ եմ: Ես վերադարձա իմ գրասենյակ և կրկին անցա աշխատանքի: Ես նստած էի իմ սեղանի մոտ ու թեև չէի զգում ոչ մի փոփոխություն, ես պարզապես գոհանում էի Տիրոջից, որ ազատ էի, ամեն անգամ, երբ վախը հարձակվում էր իմ մտքի վրա: Մինչ աշխատում էի հաճախորդներից մեկի թղթապանակի հետ, հանկարծ զգացի, որ Աստծո ներկայությունն իջավ ինձ վրա, և ես տեսա սև թեթև ամպ, որը հեռացավ ինձնից, և արագորեն անհետացավ՝ անցնելով իմ գրասենյակի առաստաղի միջով:

Ես ազա՛տ էի:

Վախի դիվային հոգին հեռացավ, և եթե նա վերադառնար, ես գիտեի, թե ինչպես պարտության մատնեի: Ես այնքա՛ն ոգեշնչված էի: Զանգեցի Դրենդային և պատմեցի այն, ինչ քիչ առաջ տեղի

էր ունեցել: Նա ասաց, որ կգա ինձ մոտ, և մենք կտոնենք դա մի չինական ռեստորանում (որն իմ նախընտրելի վայրն էր): Ես ստիպված էի այդ օրվանից հետո, վախի հոգու դեմ իմ դիրքորոշումը կրկնել շատ անգամներ, քանի որ դևերը հեշտորեն չեն հանձնվում: Ու թեև այդ դևը հեռացավ, իմ կյանքում դեռ ֆինանսական քաոս էր: Եվ վախը շարունակ փորձում էր կրկին հիշեցնել իր մասին իմ մտքում՝ իմ ֆինանսների վերաբերյալ, և ես պետք է սովորեի, թե ինչպես վերահսկեի իմ միտքը և պահեի այն խաղաղության մեջ:

Կային այլ մարտեր, որ ես պետք է մասնակցեի և սովորեի իմ կյանքի ընթացքում, ինչպես նաև շատ այլ հոգևոր դասեր Աստծո Թագավորության մասին, որոնք դեռ պետք է սովորեմ, բայց ես ուզում էի պատմել ձեզ այս պատմությունը, որպեսզի ցույց տայի, որ ես հասկանում եմ, թե ինչպես է ֆինանսական ճնշվածությունն ազդում մարդկանց վրա և դուռ բացում տանջող վախերի համար:

Ուզում եմ, որ վստահաբար իմանաք, որ ես եղել եմ այդ վիճակում:

Այսպիսով, անկախ այն բանից, թե ինչպիսի խառնաշփոթ վիճակում եք դուք այսօր, կա հույս: Երանի՜ ես ավելի շուտ իմանայի Աստծո Թագավորության մասին: Ցավալի է մտածելը, որ Դրենդան և ես ապրում էինք ֆինանսական քաոսի մեջ ինը տարի, այնինչ այդպես չպետք է լիներ:

Դժբախտաբար, մեր ֆինանսական խառնաշփոթը մեր կյանքի աննշան մասնիկը չէր. այն զբաղեցնում էր մեր ամբողջ կյանքը: Այն մեր կենսաոճն էր: Ինը տարի, որոնց ընթացքում մենք շարունակ փող էինք խնդրում. հիշողություններ նվաստացուցիչ իրադարձությունների և հանգամանքների մասին: Ես կգերադասեի իսպառ մոռանալ այդ ամենը: Օրհնյա՜լ լինի իմ կինը: Այդ տարիների ընթացքում նա այնքա՜ն բաների դիմացավ: Եվ այդ պատճառով էլ ամեն անգամ ես փորձում եմ օրհնել նրան:

Ինչպես որ Տերը սովորեցրեց ինձ պարտության մատնել վախի դիվային հոգուն, այնպես էլ Նա սկսեց սովորեցնել ինձ վարվել իմ ֆինանսների հետ՝ հոգևոր տեսանկյունից: Այն ամենը, ինչ Աստված սովորեցրեց Դրենդային և ինձ, և ինչ Նա ցույց տվեց մեզ մեր ֆինանսների վերաբերյալ, այն աստիճան փոխեց մեր կյանքը և այնքան շրջա-

դարձային էր, որ մենք որոշում կայացրինք նվիրել մեր կյանքի մնացած մասը՝ օգնելով մարդկանց բացահայտել նույն սկզբունքները:

Դրենդան և ես անցում կատարեցինք անհուսորեն սնանկ վիճակից և մեր մեքենաները գնեցինք կանխիկ գումարով, մեր երազանքի տունը կառուցեցինք առանց որևէ պարտքի, բազմաթիվ ընկերություններ հիմնադրեցինք և հեռարձակեցինք *«Ֆինանսների կարգավորում»* ամենօրյա հեռուստահաղորդումը աշխարհի բոլոր ժամային գոտիներում: Դրենդան նույնպես սկսեց *«Դրենդա»* շաբաթական հեռուստահաղորդումը, որը հեռարձակվում է «էյԲիՍի Ընտանիք» հեռուստատեսային ցանցում, որպեսզի օգնի ընտանիքներին ճիշտ կյանք կառուցել և խրախուսի կանանց: Մենք զգացինք, որ Աստված առաջնորդում է մեզ հիմնադրել «Հավատքի կյանք» եկեղեցին, որտեղ մենք ամեն շաբաթ հազարավոր մարդկանց սովորեցնում ենք Աստծո Թագավորության մասին: Այժմ տարեկան միլիոնավոր դոլարներ ենք ծախսում մեր ամբողջ գործունեության համար. այս գիրքը գրելու պահին ծախսում ենք ավելի քան 200.000 դոլար ամեն ամիս՝ միայն մեր հեռուստահաղորդումները պատրաստելու և հեռարձակելու համար: Իհարկե, այս ամենն անհնարին կլիներ, եթե Աստված չսովորեցներ մեզ այն, ինչ մենք ցանկանում ենք սովորեցնել ձեզ այս գրքաշարում: Ես չեմ ուզում, որ դիտարկեք այս գիրքը որպես հերթական ձեռնարկ ֆինանսների մասին: Սա հերթական ձեռնարկը չէ այն մասին, թե ինչպես բյուջե կազմել, թեև դա, հավանաբար, անհրաժեշտ է և խրախուսելի: Սա հերթական ձեռնարկը չէ այն մասին, որ եթե ձեր եկամուտը չի բավականացնում, դուք պետք է կրճատեք ձեր ծախսերը:

Ո՛չ, այս գիրքը հեղափոխության՝ խավարի թագավորության և դրա խեղդող աղքատության դեմ ապստամբելու մասին է: Այս գիրքը խեղաթյուրված իշխանության սահմանափակումներից ազատվելու և կյանքի նոր ընթացք սկսելու մասին է: Իմ պատասխանը ընդհանուր ֆինանսական խորհուրդներ չեն: Ես հասկացա, որ ինձ անհրաժեշտ էր ամբողջական ֆինանսական հիմնանորոգում.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈ՛ՒՆ:

ԳԼՈՒԽ 1

ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ պատմեցի ձեզ, որ իմ կյանքը համակված էր տանջալի վախով: Այնպես որ, կարծում եմ՝ կարևոր է, որ սկսենք մեր ընթացքը հետևյալ պնդումով, որը դուք պետք է իրականում հասկանաք. ՄԻ՛ ՍՈՎՈՐԵՔ ԱՊՐԵԼ ՎԱԽՈՎ: Վախը դուռ է բացում ամեն տեսակի դիվային ազդեցությունների, շփոթության և ընկճվածության համար, ինչպես որ մենք տեսանք դա իմ կյանքում, և ինչպես որ դա տեղի է ունենում միլիոնավոր մարդկանց կյանքերում: Ես համոզված եմ, որ ֆինանսական խնդիրներն այն հիմնական գործոններից են, որոնք դուռ են բացում վախի համար: Արդեն 34 տարի է՝ իմ ֆինանսական պլանավորման ընկերության միջոցով ես օգնում եմ մարդկանց ֆինանսական հարցերում, և պարզեցի, որ միակ մարդը չեմ, ով կյանքում բախվում է ֆինանսական խնդիրների:

Իրականում, իմ կողմից արված հետազոտության արդյունքում ես պարզեցի, որ Ամերիկայի բնակչության 23 տոկոսը նույնիսկ չի կարողանում կատարել պարտքերի նվազագույն վճարումները և դանդաղորեն սահում է դեպի ֆինանսական մոռացություն[1]: Խոսքը մի ամբողջ երկրի մեկ չորրորդի մասին է: Մեր երկրի բնակչության մեկ վեցերորդը՝ 47 միլիոն մարդ, ապրում է սննդի կտրոններով, և տասը ընտանիքից ութն ապրում է աշխատավարձից՝ աշխատա-

1 Թրեյսի Թըրներ. «Պարտքը մարդկանց մեծագույն հոգսն է... Ֆինանսական խնդիրների սպառնալիքն ավելին է, քան ահաբեկչության և տարերային աղետների սպառնալիքը»: «The Columbus Dispatch», 2006թ.:

վարձ[2]: Ես նույնիսկ չեմ խոսի այն 18 տրիլիոն արտաքին պարտքի մասին, որն ունի մեր երկիրը, և որը երբեք չի կարողանա վճարել: Ես նույնպես չեմ հիշեցնի 120 տրիլիոն ֆինանսական պարտավորությունների մասին, որոնք մեր երկիրը հանձն է առել կատարել՝ չունենալով ոչ մի ֆինանսավորման մեխանիզմ, որը կհոգար այդ ծախսերը[3]: Մենք ապրում ենք լուրջ ֆինանսական խնդիրներ ունեցող երկրում: Ես հասկացա իմ իսկ օրինակով, որ չլուծված ֆինանսական խնդիրների և ֆինանսական ճնշման պատճառով վախի մեջ ապրելը կենսառճ է դառնում:

Այնուամենայնիվ, կան պատասխաններ. դուք կարող եք ազա՛տ լինել: Աստվածաշունչը պարզորեն հայտնում է իր տեսանկյունն այս մասին. Հիսուսը եկավ քարոզելու բարի լուրը աղքատներին:

> *«Գերիշխան Տիրոջ Հոգին Ինձ վրա է, որովհետև Տերն օծել է Ինձ՝ ազդարարելու բարի լուրը աղքատներին»:*
>
> – Եսայի 61.1, NIV

Ի՞նչն է բարի լուրը աղքատ մարդու համար: Այն, որ նա կարող է ազատ լինել: Այսօր միգուցե դուք նույնիսկ գաղափար չունեք, թե ինչպես դա կարող է տեղի ունենալ: Մի ժամանակ իմ կյանքում ես լիովին անօգնական էի զգում ինձ: Միտքն այն մասին, որ ես կարող էի ունենալ ընդամենը 100 դոլար՝ առանց որևէ մեկից պարտք վերցնելու, այնքան խորթ էր ինձ համար, որ ես կծիծաղեի դրա վրա, եթե այդ միտքն այդքան զարհուրելի և ցավալի չլիներ: Ինը տարի շարունակ գոյատևելը զգացմունքորեն ծանր ազդեցություն էր թողել ինձ վրա: Ֆինանսական ճնշվածությունը զրկում է մեզ ամեն բարի բանից: Երբ ես նայում եմ այդ տարիների մեր ընտանեկան տեսանյութերը, այնքա՛ն եմ ամաչում: Տեսանյութում ես դուրս եմ գալիս մեքենայից, և իմ հրաշալի երեխաները վազում են ինձ մոտ, որպեսզի

2 Բրեդ Փլամեր. «Ինչո՞ւ են 47 միլիոն ամերիկացիներ ապրում սննդի կտրոններով: Պատճառը, հիմնականում, տնտեսության անկումն է»: «The Washington Post», 2013թ.:

3 Գլեն Կեսլեր. «Մեր ազգն ունի՞ 128 տրիլիոն չվճարված պարտավորություններ»: «The Washington Post», 2013թ.:

տեսնեն ինձ գրասենյակում անցկացրած երկար աշխատանքային օրվանից հետո: Նրանք վազելով մոտենում են և ամուր գրկում են ոտքս՝ գոչելով. «Բա՛րև, Հայրի՛կ»: Այդ տեսանյութում ես չեմ պատասխանում նրանց և նույնիսկ չեմ նայում նրանց: Ես այնքա՛ն ճնշված և հուսալքված էի, որ ուշադրություն չէի դարձնում նույնիսկ կարևոր բաներին:

«ԳԵՐԻՇԽԱՆ ՏԻՐՈՋ ՀՈԳԻՆ ԻՆՁ ՎՐԱ Է, ՈՐՈՎՀԵՏԵՎ ՏԵՐՆ ՕԾԵԼ Է ԻՆՁ՝ ԱԶԴԱՐԱՐԵԼՈՒ ԲԱՐԻ ԼՈՒՐԸ ԱՂՔԱՏՆԵՐԻՆ»:

– ԵՍԱՅԻ 61.1, NIV

Իմ այդ ժամանակվա մտածելակերպը հիշեցնում է ինձ մի բան, ինչը ես մեկ անգամ սովորեցի լողի դասի ժամանակ: Եթե ինչ-որ մեկը խեղդվում է ջրի մեջ և օգնության է կանչում, զգո՛ւյշ եղեք, երբ գնաք օգնելու նրան: Ինչո՞ւ: Քանի որ նա այն աստիճան կլանված է իր փրկությամբ, որ կարող է ակամա քաշել ձեզ ջրի տակ: Ահա թե ինչպիսին էի ես. նման զոմբիի, ես կտրված էի կյանքից և պարզապես շարժումներ էի կատարում՝ առանց զգացմունքների: Ես ձախողված էի՝ որպես ամուսին: Ես ձախողված էի՝ որպես հայր: Ես ձախողված էի՝ որպես կերակրող: Իմ կյանքը զուրկ էր զգացմունքներից և տեսիլքից. ես ընկճված էի:

Այդ տարիներին Օհայո նահանգի Կոլամբուս քաղաքում բնակարանային բում էր: Մարդիկ ամենուր տներ էին կառուցում, և այդ պատճառով մեր քաղաքը տարիներ շարունակ Տների շքերթ էր կազմակերպում: Եթե չգիտեք, թե ինչ է դա, ես կբացատրեմ: Տների շքերթը բաղկացած էր մի խումբ տներից, որոնք կառուցում էին տարբեր շինարարներ՝ ցուցադրելու համար իրենց եզակի ոճերը և կարողությունները, ինչպես նաև տարատեսակ նոր կենցաղային սարքեր և երեսպատվածքներ: Այդ միջոցառումը շատ սպասված էր, և հազարավոր մարդիկ հաճույքով մասնակցում էին: Իսկ ես զարհուրում էի Տների շքերթից: Քանի որ մենք ապրում էինք սաստիկ աղքատության մեջ, ես չէի ցանկանում, որ Դրենդան գնար այդ տները տեսնելու: Ես արդեն իսկ վատ էի զգում ինձ իմ ֆինանսական ձախողումների պատճառով, և չէի ցանկանում, որ կինս իմանար,

թե իրականում որքան վատ էր իր կյանքը: Այժմ գիտեմ, որ դա անմտություն է, բայց այդ ժամանակ ես այդպես էի մտածում: Ես գիտեի, որ եթե նա գնար այնտեղ, ցանկանալու էր այդ տներից մեկը: Եվ ամեն տարի ես արգելում էի նրան գնալ: Բայց, ի վերջո, մեկ անգամ ես տեղի տվեցի և որոշում կայացրի, որ մենք կգնանք:

Այդ տները, ինչպես որ կարող եք պատկերացնել, ուղղակի աներևակայելի էին: Դրանք տեսնելուց հետո մեր 1800-ական թվականների գյուղական տունը քանդման ենթակա շինություն էր թվում: Առաջին մի քանի տները տեսնելուց հետո մենք քայլում էինք մայթով, երբ հանկարծ նկատեցի, որ Դրենդան կողքիս չէ: Ես շրջվեցի՝ նրան գտնելու համար, և ցավով տեսա, որ նա կանգնած էր այն տան դիմացը, որտեղից մենք քիչ առաջ դուրս եկանք: Նրա աչքերից արցունքներ էին հոսում: Ես վերադարձա նրա մոտ և մի հիմար հարց տվեցի.

– Ի՞նչ է պատահել:

Իբրև թե չգիտեի պատասխանը: Նա պարզապես նայեց ինձ և հարցրեց.

– Ե՞րբ ես տուն կունենամ:

Իմ մտքում շրջապտույտ սկսվեց. «Տո՞ւն: Այսպիսի՞: Այս տներն արժեն 500.000-700.000 դոլար»: Ես փորձում էի գտնել 300 դոլար, որպեսզի մարեի մեր հին գյուղական տան ամսական վարձավճարը: Ես գիտեմ, որ դա ցավալի է, բայց չէի տեսնում ոչ մի ելք, և ես որևէ կերպով չհուսադրեցի իմ գեղեցիկ և թանկ կնոջը: Վախը և ձախողումն աղավաղել էին իմ մտահորիզոնը: Ես այդպիսին չէի. որտե՞ղ էին իմ ուրախությունը և երջանկությունը: Ես պարզապես չէի կարողանում տեսնել ֆինանսական ճնշվածությունից այն կողմ:

Գիշերվա ժամը 2:00-ն էր կամ 3:00-ը, և ես չէի կարողանում քնել: Ծնոտս և դեմքս ցավում էին, ասես ասեղներով ծակծկեին: Երեսունվեց ժամ առաջ ես ատամնախոռոչի վիրահատության էի ենթարկվել՝ դադարեցնելու համար մի վարակ, որի պատճառով իմ դեմքն ուռչում էր փուչիկի պես: Անհավատալի ցավ և անհարմարություն էի զգում: Ես «Թայլենոլ» էի ընդունում չորս ժամը մեկ՝ ցավը թուլացնե-

լու համար, բայց այն կարծես շատ չէր օգնում: Նստած էի հյուրասենյակում և չէի կարողանում քնել: Ես ընդունեցի ևս մեկ չափաբաժին և պարզապես նայեցի «Թայլենոլի» տուփին ու սկսեցի կարդալ ցուցումները: Ոչ թե այն պատճառով, որ չգիտեի, թե ինչպես ընդունել «Թայլենոլը», այլ հասարակ ծանձրույթից, ինչպես որ բոլորս կարդում ենք տեղեկությունը շիլայի տուփի վրա՝ առավոտյան շիլա ուտելիս: Ոչ թե, որ դա հետաքրքրում է մեզ, այլ՝ որ այն մեր աչքի առջև է: Այո՛, երկու հաբ չորս ժամը մեկ, բայց ի՞նչ է գրված: Ոչ ավելի, քան 10 հաբ 24 ժամում: Ես սկսեցի արագորեն հաշվել, թե որքան հաբ է ընդունում մարդը՝ յուրաքանչյուր չորս ժամում երկու հաբ ընդունելու դեպքում, ինչպես որ ես էի օգտագործում դա վերջին երկու օրվա ընթացքում: Ստացվեց օրը 12 հաբ՝ առավելագույն չափաբաժնից երկու հաբով ավելի: Հանկարծ իմ ստամոքսը կծկվեց, և վախը պատեց ինձ:

Ինը տարի շարունակ իմ ընտանիքի կարիքները մի կերպ հոգալը, իմ ձախողումը՝ որպես ամուսին, որպես հայր և որպես կերակրող, ըստ էության, զգացմունքորեն քայքայել էին ինձ: Բժիշկները հակադեպրեսանտ դեղամիջոցներ էին նշանակել ինձ՝ փորձելով օգնել, բայց ոչինչ չէր օգնում: Այդ գիշեր ես նստած էի ատամնացավով: Արդեն երկու օր էր՝ չէի քնել, և ցավն այնքան ուժգին էր, որ դեռ չէի կարողանում քնել: Եվ կարդալով «Թայլենոլի» ցուցումները՝ հասկացա, որ ունեմ անհանգստության ևս մեկ պատճառ՝ «Թայլենոլի» չափաքանակի հնարավոր գերազանցում: Ես չգիտեի, թե ինչ կարող էր անել ինձ «Թայլենոլի» չափաքանակի գերազանցումը, բայց համոզված էի, որ այդ դեղը բավականին անվտանգ էր, քանի որ յուրաքանչյուրը կարող էր գնել այն առանց դեղատոմսի: Ես մտածեցի, որ նրանք պարզապես զգուշացումներ են ավելացրել տուփի վրա՝ իրենց իրավաբաններին խաղաղեցնելու և օրինական պահանջներին համապատասխանելու համար: Իմ մտքով չէր էլ անցնի, որ այդ դեղը երկու հաբով ավելի օգտագործելը կարող էր լուրջ խնդիր առաջացնել: Բայց վախի հոգին գրավեց իմ ուշադրությունը, վերցրեց այդ փաստը և սկսեց գրոհել մտքիս վրա «իսկ ի՞նչ, եթե...» հարցերով: Այնպես որ, ես պարզապես հանդարտվեցի և որոշեցի զանգել Թունավորման վերահսկողության

կենտրոն՝ տեղեկություն ստանալու համար: Ես համոզված էի, որ նրանք պարզապես կասեին, որ դա լուրջ խնդիր չէ:

Ինձ պատասխանող կինը մասնագետի տպավորություն թողեց ինձ վրա: Նա հարցրեց, թե ինչով կարող էր օգնել, և ես բացատրեցի նրան, որ «Թայլենոլ» էի ընդունել չորս ժամը մեկ 36 ժամվա ընթացքում, այսինքն՝ ընդունել էի օրական 12 հաբ, թեև ցուցումների մեջ նշվում է, որ չի կարելի գերազանցել 10 հաբը: Ես ասացի նրան, որ պարզապես զանգում էի, որպեսզի նա ասեր ինձ, որ այդ երկու ավել հաբը լուրջ վնաս չէր հասցնի ինձ: Մի պահ նա լռեց, և ես համակարգչի ստեղների ձայն լսեցի: Հանկարծ լսեցի հետևյալը, և հիմա բառացիորեն մեջբերում եմ նրա ասածը.

– Պարո՛ն, նման չափաբաժինն անհամատեղելի է կյանքի հետ:

Ես ճի՞շտ հասկացա նրան: Երևի թե, ո՛չ: Կրկին բացատրեցի նրան, որ պարզապես երկու ավել հաբ էի ընդունել 24 ժամվա ընթացքում, և դա տևել էր ընդամենը երկու օր:

Այս անգամ նա պատասխանեց ավելի խիստ ձայնով.

– Պարո՛ն, ինչպես արդեն ասացի, նման չափաբաժինն անհամատեղելի է կյանքի հետ: Դուք պետք է գաք վերակենդանացման բաժին ՀԵՆՑ ՀԻՄԱ:

Երբ կրկին փորձեցի բացատրել նրան, թե ինչ էր տեղի ունենում, քանի որ ես համոզված էի, որ նա ինչ-որ բան սխալ էր լսել, նա ընդհատեց ինձ և ասաց.

– Կա՛մ դուք ինքներդ հիվանդանոց կգաք, կա՛մ ես շտապ օգնություն կուղարկեմ:

Ես ցնցվա՛ծ էի:

– Ես ինքս կգամ,- կարկամեցի:

– Ո՞ր հիվանդանոցն եք գնալու,- հարցրեց նա:

Ես պատասխանեցի, և նա ցած դրեց խոսափողը:

Ապշած կանգնել էի սենյակում: Շատ կարևոր հանդիպում ունեի առավոտյան ժամը 9:00-ին, իսկ այդ պահին գիշերվա 3:30-ն էր: Ոտքերս քստքստացնելով հասա ննջասենյակ, արթնացրի Դրեն-

դային և պատմեցի տեղի ունեցածը: Նա նայեց ինձ խղճահարություն և վիհատություն արտահայտող հայացքով: Նրա ամուսնու վարքն արդեն մի քանի ամիս էր՝ տարօրինակ էր, և նա հոգնել էր ամեն ինչի մասին ինքնուրույն հոգալուց, իսկ հիմա ա՞յս խնդիրը:

– Գա՛րի, դու ընդամենը երկու ավել հաբ ես օգտագործել: Մի՞թե չես հասկանում, որ դա չի կարող սպանել քեզ: Կրկի՛ն զանգիր նրանց,- ասաց նա:

Բայց վախն անտրամաբանական և տանջող է:

– Այդ կինն ասաց, որ դա կարող է սպանել ինձ. ես պետք է հիվանդանոց գնամ:

Իմ կնոջ հայացքն ասում էր. «Երևի, դու կատակում ես», ես շրջվեցի և դուրս եկա ննջասենյակից:

Երբ մեքենայով մոտեցա հիվանդանոցին, երկու աշխատակից սպիտակ խալաթներով սպասում էին ինձ վերակենդանացման բաժանմունքի մուտքի դռան մոտ: Երբ կայանեցի մեքենան, նրանք մոտեցան ինձ և հարցրին.

– Դուք Գարի Կիսի՞ն եք:

Նրանք արագ տարան ինձ ուղիղ բուժման սենյակ: Անցնելով վերակենդանացման բաժնի գրատախտակի կողքով, ես տեսա իմ անունը: Այնտեղ գրված էր. «Գարի Կիսի. դեղաքանակի գերազանցում»: Հավատս չէր գալիս: Սակայն երբ բժիշկն արյուն վերցրեց ինձնից, նա վերադարձավ բուժման սենյակ և ասաց.

– Ինչո՞ւ եք այստեղ: «Թայլենոլի» քանակը ձեր արյան մեջ նույնիսկ բավական չէ՝ գլխացավն անցկացնելու համար:

Երբ ես պատմեցի նրան պատմությունը Թունավորման վերահսկողության կենտրոնի մասին, նա սկսեց ծիծաղել: Ես չկարծեցի, որ դա զվարճալի էր, և առավել ևս այդպես չկարծեցի, երբ փոստով 2.000 դոլարի հաշիվ ստացա այդ այցի համար: Սատանան կրկին խաբեց և թալանեց ինձ:

Ես պատմում եմ այս պատմությունները՝ ներածության հետ մեկտեղ, որպեսզի օգնեմ ձեզ հասկանալ, թե ինչպիսին էր իմ կյանքը,

մինչև որ բացահայտեցի Աստծո Թագավորությունը: Այո՛, ես քրիստոնյա էի: Այո՛, ես տասանորդ էի տալիս: Այո՛, ես որոշ ժամանակ փառաբանության թիմի ավագ էի մի եկեղեցում: Այո՛, ես սիրում էի Աստծուն: Բայց ինչ-որ բան սխալ էր, սարսափելիորեն սխալ էր: Ես պատմեցի ձեզ, թե ինչպես Աստված սովորեցրեց ինձ պայքարել վախի հոգու դեմ, և ինչպես ես ազատվեցի հակադեպրեսանտ դեղամիջոցներից և խուճապի նոպաներից: Բայց ես դեռ ազատ չէի այն հանգամանքից, որի պատճառով առաջացավ պայքարը վախի հետ, այսինքն՝ իմ անհույս ֆինանսական դրությունից: Ես դեռ անասելի ճնշում էի զգում ամեն օր, որպեսզի փող հայթայթեի և փակեի իմ հաշիվները, և բացի այդ՝ ունեի տասն սպառված և արգելափակված վարկային քարտ, երեք վարկ ֆինանսական ընկերություններում, պարտքեր Հարկային տեսչությանը, պարտքեր մեր ազգականներին, նաև բազմաթիվ դատեր և արգելանքներ:

Ինչպես արդեն ասացի, մենք ֆինանսական խառնաշփոթի մեջ էինք: Ճնշվածությունը և զգացմունքային շփոթությունն իմ սովորական վիճակն էր: Թեև ես քրիստոնյա էի, մենք մոտ էինք ֆինանսական մահվան, և իմ վարկային քարտերը մեկ առ մեկ արգելափակվում էին: Ինձ ուղարկվում էին ծանուցումներ արգելանքների մասին, իմ վարկային քարտերն արգելափակվում էին, իսկ վարկային կազմակերպությունները զանգում էին: Մեր ֆինանսական կացության ամենածանր պահերին, երբ իմ աշխատանքը մեծ եկամուտ չէր բերում, մենք նույնիսկ չէինք կարողանում կերակուր գնել: Ամբողջ ընտանիքով սեղմվում և կուչ էինք գալիս փայտի վառարանի մոտ, քանի որ չէինք կարողանում վառելիքի յուղ գնել: Մենք զննում էինք աթոռների և բազմոցների եզրերի ծալքերը՝ հուսալով գտնել դրանց մեջ պատահաբար ընկած մետաղադրամներ, որ կարողանայինք գնել մեկ «Ուրախ ճաշ» «ՄակԴոնալդս»-ից՝ մեր երկու երեխաների միջև կիսելու համար:

Ինձ հաջողվում էր ազատվել վարկային կազմակերպությունների ներկայացուցիչներից, երբ նրանք զանգում էին, բայց մեկ անգամ այդ կազմակերպություններից մեկն իրավաբան վարձեց՝ իր պարտքը ետ վերցնելու համար: Նա զանգեց ինձ և առանց ներկայանալու՝ ուղղակի ասաց.

«ԵՎ ԻՄ ԱՍՏՎԱԾ ԿՀՈԳԱ ՁԵՐ ԲՈԼՈՐ ԿԱՐԻՔՆԵՐԸ՝ ՀԱՄԱՁԱՅՆ ԻՐ ՓԱՌԱՎՈՐ ՀԱՐՍՏՈՒԹՅԱՆ՝ ՔՐԻՍՏՈՍ ՀԻՍՈՒՍՈՒՄ»:

– ՓԻԼԻՊԵՑԻՆԵՐԻ 4.19, NIV

– Ինձ պետք է այդ գումարը երեք օրում: Հակառակ դեպքում, ես դատական հայց կներկայացնեմ իմ հաճախորդի անունից:

Ես անելանելի դրության մեջ էի: Չունեի ոչ մի տարբերակ և չէի կարող ևս մեկ վարկ վերցնել: Ես արդեն պարտքեր էի վերցրել իմ բոլոր ընկերներից և հասել էի այնպիսի կետի, որ չունեի ոչ մի ելք: Ես մի կերպ հասա ննջասենյակ, ընկա մահճակալիս վրա և աղաղակեցի Աստծուն: Շատ արագ ես լսեցի Տիրոջ ձայնը: Մի խոսք, որը շատ անգամներ էի լսել, բարձրացավ իմ մտքում.

«Եվ իմ Աստված կհոգա ձեր բոլոր կարիքները՝ համաձայն Իր փառավոր հարստության՝ Քրիստոս Հիսուսում»:

– Փիլիպեցիների 4.19, NIV

Ես պատասխանեցի Տիրոջը՝ ասելով, որ գիտեի այդ խոսքը, բայց իմ կարիքները չէին լրացվում: Նա անմիջապես պատասխանեց իմ հարցին. «Այո՛, բայց դա Իմ մեղավորությունը չէ: Դու երբեք ժամանակ չես տրամադրել՝ սովորելու համար, թե ինչպես է գործում Իմ Թագավորությունը: Իրականում, Իմ եկեղեցու մեծ մասն ապրում է՝ ինչպես Իսրայելը Հին կտակարանում՝ ստրկության մեջ: Նրանք ապրում են պարտքի և ֆինանսական գերության մեջ: Ես ուզում եմ, որ Իմ ժողովուրդն ազատ լինի»:

Ես արագորեն վազեցի առաջին հարկ, բռնեցի Դրենդայի ուսերից և պատմեցի նրան այն, ինչ Տերն ասաց ինձ: Ես ապաշխարեցի իմ կնոջ առջև, որ չէի փնտրել Աստծուն և չէի սովորել, թե ինչպես է գործում Նրա Թագավորությունը: Ի վերջո, մենք եկեղեցում էինք, գրեթե միշտ տասանորդ էինք տալիս մեր եկամուտներից և սիրում էինք Աստծուն: Մենք մտածում էինք, որ արդեն իսկ ճանաչում էինք Աստծո Թագավորությունը: Այնուամենայնիվ, ինչպես պարզելու էի,

խնդիրը հետևյալն էր. այո՛, ես Երկինք էի գնում, բայց նույնիսկ գաղափար չունեի, թե ինչպես բերեի Երկնքի զորությունը և իշխանությունն իմ կյանքի մեջ և ազդեի իմ բնական հանգամանքների վրա: Այնպես որ, մենք սկսեցինք ուսումնասիրել Աստվածաշունչը, և Աստված սկսեց խոսել մեզ հետ և օգնեց հասկանալ, թե ինչ Նա նկատի ունի՝ Թագավորություն ասելով: Այն, ինչ իմացանք, իսկապես զարմանալի էր: Մենք ասես լույս վառեցինք մութ սենյակում: Առաջին անգամ մեր կյանքում մենք պատասխաններ գտանք մեր ֆինանսական կյանքի վերաբերյալ:

Աստվա՛ծ, ի՞նչ նկատի ունես՝ Թագավորություն ասելով

Երբ Աստված ասաց, որ ես երբեք չեմ սովորել, թե ինչպես է գործում Իր Թագավորությունը, ես առնվազն շփոթված էի: Թագավորությո՞ւն: Դրենդան և ես նույնիսկ գաղափար չունեինք այդ մասին: Մենք աղոթեցինք և խնդրեցինք Աստծուն սովորեցնել մեզ, թե ինչ Նա նկատի ունի. «Տե՛ր, սովորեցրո՛ւ մեզ, թե ինչ նկատի ունես Թագավորություն ասելով»: Այնպես որ, առաջին հերթին ես պետք է իմանայի, թե ինչ էր Թագավորությունը: Կարծում եմ՝ Արևմուտքի բնակիչները, որոնք ունեն ժողովրդավարության և ազատ ինքնաարտահայտման մտածելակերպ, դժվարանում են ընկալել այս հասկացությունը: Աստծո Թագավորությունը ժողովրդավարություն չէ. այն Թագավորություն է, որտեղ կա Թագավոր: Թագավորի իշխանությունը տարածվում է Թագավորության մեջ՝ բազմաթիվ լիազորված պետական պաշտոնների և մարդկանց միջոցով, որոնք հպատակվում են այդ իշխանությանը: Ամբոխը դեռ թագավորություն չէ: Նույնիսկ մեկ միլիոն մարդուց բաղկացած ամբոխը թագավորություն չէ: Թագավորությունը մարդկանց խումբ է, որոնք միավորված են օրենքով կամ կառավարման համակարգով: Թագավորության սահմանումը բառարանում հետևյալն է. «թագավորություն. պետություն կամ կառավարման համակարգ, որը ղեկավարվում է թագավորի կամ թագուհու կողմից»:

Թեև մենք տոնում ենք Սուրբ ծնունդը՝ Հիսուսի գալուստն այս երկիր, մենք, որպես կանոն, չենք գիտակցում, որ Նա բերեց Իր հետ կառավարման համակարգ: Աստվածաշունչը խոսում է այս կառա-

վարման համակարգի կամ իշխանության մասին Եսայի 9.6,7-ում.

> *«Որովհետև մեզ համար մի Մանուկ ծնվեց, մեզ մի Որդի տրվեց, և <u>իշխանությունը</u> կլինի Նրա ուսի վրա, և Նրա անունը կկոչվի Սքանչելի, Խորհրդական, Հզոր Աստված, Հավիտենության Հայր, Խաղաղության Իշխան: <u>Իշխանությունը շատացնելուն</u> և խաղաղությանը վերջ չկա Դավթի աթոռի վրա և նրա Թագավորության վրա, որ նրան հաստատի և պնդացնի իրավունքով և արդարությամբ՝ հիմիկվանից մինչև հավիտյան: Զորաց Տիրոջ նախանձը պիտի անի այս»:*

Հիսուսն այս կառավարման համակարգի գլուխն է, և ընդունելով Հիսուսին՝ որպես մեր Փրկչի, մենք դառնում ենք այս կառավարման համակարգի մասը. մենք դառնում ենք քաղաքացիներ: Եվ ոչ միայն դառնում ենք քաղաքացիներ, այլև դառնում ենք Աստծո ընտանիքի անդամներ՝ Նրա որդիները և դուստրերը:

> *«Բայց որոնք որ Նրան ընդունեցին, իշխանություն (կամ՝ իրավունք) տվեց նրանց Աստծո որդիներ լինելու՝ նրանց, որ Նրա անվանը հավատում են, որոնք ո՛չ արյունից, և ո՛չ մարմնի կամքից, և ո՛չ մարդու կամքից, այլ՝ Աստծուց ծնվեցին»:*
>
> – Հովհաննես 1.12,13

> *«Հետևաբար, դուք այլևս օտարականներ և պանդուխտներ չեք, այլ Աստծո ժողովրդի համաքաղաքացիներ և նույնպես Նրա ընտանիքի անդամներ»:*
>
> – Եփեսացիների 2.19, NIV

Մենք դառնում ենք Նրա ընտանիքի մասը, ինչը նշանակում է, որ այն ամենը, ինչն Աստծունն է, պատկանում է մեզ, իսկ մենք պատկանում ենք Նրան: Բայց մենք նույնպես դառնում ենք Նրա մեծ Թա-

գավորության քաղաքացիները: Սա նշանակում է, որ մենք ունենք օրինական իրավունքներ և արտոնություններ այդ Թագավորության մեջ: Որպեսզի ավելի լավ հասկանաք այն, ինչ ասում եմ, ես կխոսեմ Ամերիկայի Միացյալ Նահանգների քաղաքացի լինելու մասին: Որպես Միացյալ Նահանգների քաղաքացի՝ դուք ունեք օրինական իրավունքներ: Ձեր օրինական իրավունքները գրված են մեր սահմանադրության մեջ և այն օրենքների մեջ, որոնք ընդունվել են մեր կառավարության կողմից: Այդ օրենքները և արտոնությունները վերաբերում են յուրաքանչյուր քաղաքացու՝ անկախ այն բանից, թե ով է նա: Այդ իրավունքները հիմնված չեն մեր զգացմունքների կամ կարողությունների վրա: Ո՛չ, դրանք սահմանված են օրենքով և իրավաբանորեն հասանելի են յուրաքանչյուր քաղաքացու, որը համարում է Ամերիկան իր տունը: Հնարավոր է, որ քաղաքացին նույնիսկ չիմանա իր օրինական իրավունքները, բայց, այնուամենայնիվ, նա ունի այդ իրավունքները՝ պարզապես Ամերիկայի Միացյալ Նահանգների քաղաքացի լինելով:

Սա մտածելու առիթ է տալիս, և հուսով եմ, որ սա կփոխի ձեր ամբողջ պատկերացումն Աստծո մասին և այն մասին, թե ինչպես եք դուք ինչ-որ բան ստանում Աստծուց: Միացյալ Նահանգներում, եթե մենք պարզենք, որ ինչ-որ մեկը փորձում է զրկել մեզ մեր օրինական իրավունքներից, կամ որ մեզ հետ անարդարացի են վարվում, գոյություն ունի արդարադատության հասանելիություն (արդարադատությունը նշանակում է օրենքի կիրառում կամ օրինականության ապահովում)՝ մի գործընթաց, որն ապահովում է մեր օրինական իրավունքները: Մենք դիմում ենք դատարան, և դատավորն ուշադրություն չի դարձնում մեր տեսքին և հարուստ կամ աղքատ լինելուն: Նա հետևում է օրենքին: Յուրաքանչյուր դեպքում նա պետք է որոշում կայացնի հօգուտ օրենքի: Սա մեր ապահովությունն է՝ այն, որ մենք ունենք օրինական իրավունքներ, և որ մեր կառավարությունը կապահովի մեր օրինական իրավունքները՝ Միացյալ Նահանգներում գործող արդարադատության ընթացակարգերից մեկի միջոցով: Մտապահելով սա՝ ավելի ուշադրությամբ կարդանք, թե ինչպես է Եսայի 9-րդ գլուխը ներկայացնում այն նոր կառավարման համակարգը, որը Հիսուսը բերում է այս երկիր:

«(Հիսուսը կիշխի) Դավթի աթոռի վրա և նրա թագավորության վրա, որ նրան հաստատի և պնդացնի իրավունքով և արդարությամբ...»:

– Եսայի 9.7բ

Այս խոսքը հայտնում է, որ Աստծո Թագավորությունը հաստատված է և պահվում է իրավունքով՝ Աստծո օրենքի կիրառմամբ: Խոսքը ձեր օրինական իրավունքների ապահովման գործընթացի մասին է: Ձեր օրինական իրավունքներն այն են, ինչ Աստված անվանում է արդարություն կամ ինչը արդար է կոչում Իր օրենքում: Եվ հավաստիանալու համար, որ դուք կունենաք այն, ինչը Նա արդարություն է համարում Իր Թագավորության մեջ, և ինչն իրավաբանորեն պատկանում է ձեզ՝ որպես այդ Թագավորության քաղաքացու, Աստված հասանելի է դարձրել ձեզ համար արդարադատությունը՝ այն գործընթացը, որը երաշխավորում է, որ դուք կունենաք այն, ինչ խոստացել է ձեզ: Աստված հայտնել է մեզ Իր կամքն Իր Խոսքի՝ Աստվածաշնչի միջոցով, որպեսզի մենք իմանանք մեր իրավունքներն Իր Թագավորության մեջ: Սա բարի լո՛ւր է: Աստծուց ձեզ տրված բոլոր խոստումները, որոնց մասին դուք կարդում եք Աստվածաշնչում, իրավաբանորեն պատկանում են ձեզ՝ որպես Նրա Թագավորության քաղաքացու:

Երկրորդ Կորնթացիների 1.20-ում պարզորեն գրված է, որ յուրաքանչյուր խոստում՝ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԽՈՍՏՈՒՄ «Այո» և «Ամեն» է: Սա արդեն որոշված է, և այդ խոստումներն արդեն ձերն են ըստ օրենքի:

«Որովհետև որքան Աստծո խոստումներ որ կան, Նրանում է «այո»-ն և Նրանում է «ամեն»-ը Աստծո փառքի համար մեզանով»:

– Բ Կորնթացիների 1.20

Աստծո Թագավորության հիմքը՝ արդարությունն ու իրավունքն է, և այն չի կարող սասանվել: Ուրեմն, մտածե՛ք այսպես. «Եթե ես գիտեմ Աստծո Թագավորության օրենքը (Նրա կամքը), և գիտեմ,

որ ինձ համար հասանելի է արդարադատությունը՝ իմ իրավունքների ապահովման գործընթացը, որը երաշխավորում է ինձ այն, ինչ գրված է օրենքում, ես վստահ կլինեմ և չեմ վախենա»:

> *«Եվ սա է այն համարձակությունը, որ ունենք դեպի Նա, թե ինչ որ Նրա կամքի պես խնդրում ենք, լսում է մեզ: Եվ եթե գիտենք, թե լսում է մեզ, ինչ որ խնդրում ենք, գիտենք, որ առնում ենք մեր խնդրանքները, որ խնդրեցինք Նրանից»:*
>
> – Ա Հովհաննես 5.14,15

Ասելով, որ Նա լսում է մեզ, այս խոսքը նկատի չունի սոսկ մեր ձայնը կամ բառերը լսելը. այն նկատի ունի, որ Նա ընդունում է մեր հայցը: Պատկերացրեք դատավորի, որը դատական գործ է լսում՝ արդարադատություն իրականացնելու համար: Դատական ատյանի և դատավորի նպատակն է երաշխավորել, որ արդարադատությունը հասանելի լինի յուրաքանչյուր քաղաքացու: Դատավորի որոշումը հիմնված չէ իր զգացմունքների վրա, այլ՝ օրենքի, և նա նախագահում է դատարանում, որպեսզի ապահովի օրենքի կիրառումը յուրաքանչյուր քաղաքացու համար: Դատավորը պետք է երաշխավորի, որ արդարադատությունը (օրենքի կիրառումը) իրականացվելու է համաձայն գրված օրենքի: Ինչ վերաբերում է Աստծուն, Նրա գահը (իշխանության վայրը) և Նրա զորությունը պատրաստ են ապահովել արդարադատությունը (Իր կամքի կիրառումը) այն մարդկանց համար, ովքեր ընդունում են Հիսուսին և մուտք են գործում Նրա Թագավորության մեջ:

ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՌԱՎԱՐՎՈՒՄ ԵՆ ՀԱՄԱՁԱՅՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ, ԵՎ ԱՅԴ ՕՐԵՆՔՆԵՐԸ ՉԵՆ ՓՈԽՎՈՒՄ:

Խնդրո՛ւմ եմ, որ շատ դանդաղ կարդաք այս վերջին նախադասությունը և թույլ տաք, որ այն առանձնանա Աստծո մասին ձեր ներկա պատկերացումից: Մարդկանց մեծամասնությանը թվում է, թե Աստված որոշումներ է կայացնում անհատական սկզբունքով, բայց

դա ճիշտ չէ: Նա Թագավոր է մի Թագավորության մեջ, որի օրենքները չեն փոխվում: Նա չի կայացնում և չի կայացնի այնպիսի որոշումներ, որոնք դուրս են Իր օրենքից: Այսպիսով, մենք կարող ենք իմանալ, թե ինչ Նա կպատասխանի, մինչև Նրանից խնդրելը, և մենք կարող ենք վստահ լինել, որ ունենք այն, ինչ գրված է Իր օրենքում, մինչև դա տեսնելը, քանի որ Նա կարող է ապահովել Իր օրենքի կիրառումը:

Երբ Դրենդան և ես իմացանք Թագավորության մեջ մեր ունեցած օրինական իրավունքները, դա շրջադարձորեն փոխեց մեր պատկերացումն Աստծո և Աստվածաշնչի մասին: Մեր նոր ըմբռնման արդյունքում մեր կյանքերը փոխվեցին: Մենք այլևս չէինք մուրում և չէինք աղաչում: Մենք իմացանք, որ այն, ինչ Աստված ասում է, արդեն իսկ իրավաբանորեն տրված է մեզ՝ որպես Նրա Թագավորության քաղաքացիների: Մենք պարզապես պետք է շարունակեինք սովորել, թե ինչպես օրինական հայց ներկայացնել այն ամենի հանդեպ, ինչն իրավաբանորեն մերն է, և արձակել այդ ամենը այս երկրային տիրույթում: Օրինակ, ինչպե՞ս է տեղի ունենում բանկային չեկի կանխիկացումը: Թեկուզև դուք մեծ գումար ունենաք ձեր չեկային հաշվի վրա, գոյություն ունի իրավաբանական գործընթաց, որով դուք հայց եք ներկայացնում այդ գումարի հանդեպ և կանխիկացնում եք ձեր չեկը: Ցանկացած համակարգում գոյություն ունի գործընթաց, որով մենք հայց ենք ներկայացնում ինչ-որ բանի հանդեպ, նույնիսկ եթե դա արդեն պատկանում է մեզ:

> *«Նրա աստվածային զորությունը տվեց մեզ այն ամենը, ինչի կարիքը մենք ունենք կյանքի և աստվածապաշտության համար՝ Նրա մասին իմանալու միջոցով, Ով կանչեց մեզ Իր փառքով և բարությամբ»:*
>
> – Բ Պետրոս 1.3, NIV

Մենք գտնվում ենք Թագավորության մեջ: Եվ Աստծո Թագավորության յուրաքանչյուր քաղաքացի ունի նույն իրավունքները: Կարևոր է, որ հասկանանք հետևյալը. թագավորությունները կա-

ռավարվում են համաձայն օրենքների, և այդ օրենքները չեն փոխվում: Ինչո՞ւ է սա կարևոր: Սա կարևոր է, քանի որ եթե այս Թագավորությունը հիմնված է անփոփոխ օրենքների վրա, նշանակում է՝ այս Թագավորության մեջ չկա աչառություն: Փոխարենը, յուրաքանչյուրն այս Թագավորության մեջ կարող է կիրառել Թագավորության օրենքներն իր օգտի համար՝ առանց որևէ խտրության:

Այս փաստը մի փոքր շփոթություն է առաջացնում եկեղեցական միջավայրում: Քրիստոնյաների մեծամասնությունը կարծում է, որ Աստված կամայականորեն է որոշում այն, ինչ ցանկանում է անել առանձին անհատների կյանքում: Այլ կերպ ասած, նրանք կարծում են, որ Աստված որոշում է օրհնել մեկին և չօրհնել մյուսին: Նրանք մտածում են, որ Նա բժշկում է մեկին և չի բժշկում մյուսին: Քրիստոնյաների մեծամասնությունն աղաչում է Աստծուն օգնել իրենց, այնինչ Նա արդեն իսկ արել է այն ամենը, ինչ կարող է, որպեսզի օգնի նրանց: Նա տվել է նրանց Թագավորությունը՝ ամբողջ Թագավորությունը:

Երբ Աստված սկսեց խոսել ինձ հետ իմ ֆինանսների մասին՝ ասելով, որ ես պետք է ավելին իմանայի Իր Թագավորության մասին, Նա տվեց ինձ այս խոսքը.

«Երանի՜ աղքատներիդ, որ ձերն է Աստծո արքայությունը»:

– Ղուկաս 6.20բ

Աստված ասում էր ինձ, որ իմ ֆինանսական խնդիրների պատասխանն Իր Թագավորությունն է: Մենք պետք է իմանանք, թե ինչպես օգտվենք Թագավորության օրենքներից այս երկրի վրա այնպես, ինչպես դա անում էր Հիսուսը: Ես խոստովանում եմ, որ հենց սկզբում ես նույնիսկ գաղափար չունեի՝ ինչ էր այդ ամենը նշանակում: Բայց մտածելով այն մասին, ինչ Աստված ասաց, ես հասկացա, որ իսկապես, թագավորությունները կառավարվում են ըստ օրենքի: Այնպես որ, կարելի է ճանաչել ցանկացած օրենքի գործառույթը և ազդեցությունը, և կարելի է վստահ լինել, որ այդ օրենքը կգործի նույն կերպով ամեն անգամ, քանի որ օրենքները չեն փոխվում: Նախկինում ես

երբեք չէի մտածել այդ մասին հոգևոր տեսանկյունից: Այնուամենայնիվ, եթե այդպես է, և եթե Աստծո Թագավորությունն իրականում կառավարվում է այդ կերպով, ես հասկացա, որ կարող էի սովորել այդ օրենքները, կիրառել դրանք և օգտվել դրանց արդյունքից:

Ես հասկացա, որ այս աշխարհը կառավարող օրենքները նույնպես չեն փոխվում: Իրականում, մենք կարող ենք հենվել դրանց մշտական և անփոփոխ բնույթի վրա: Դրանց շնորհիվ մենք կարող ենք մարդ ուղարկել դեպի Լուսին կամ ինքնաթիռներ օդ բարձրացնել: Բայց քրիստոնյաների մեծամասնությունը չի մոտենում Աստծուն այս ընկալմամբ: Փոխարենը, նրանք աղաչում են և լաց լինում, երբ ինչ-որ բանի կարիք են ունենում՝ փորձելով համոզել Աստծուն տալ այն, ինչ պետք է իրենց, ասես թե Աստված որոշում է՝ հոգ տանե՞լ նրանց մասին, թե՞ ոչ:

Օրինակ, եթե ես գնայի քարոզելու մի եկեղեցական համաժողովի, մի՞թե այդ եկեղեցու բոլոր անդամները կսկսեին աղոթել, որ լույսերը միանային այդ միջոցառման ժամանակ: Մի՞թե նրանք ծոմ կպահեին և կաղոթեին՝ լաց լինելով և աղաչելով Աստծուն. «Աստվա՛ծ, Դու գիտես, թե որքան կարևոր է այս հավաքույթը, և որքան է մեզ պետք, որ լույսերը միանան»: Չեմ կարծում: Իրականում, ես կասկածում եմ, որ ինչ-որ մեկի մտքով նույնիսկ անցներ մտահոգվել լույսերի մասին, երբ նրանք ծրագրեին այդ հավաքույթները: Եթե ինչ-ինչ պատճառով նրանք գային այդ համաժողովին երեկոյան, և լույսերը միացրած չլինեին, մի՞թե կարծում եք, որ նրանք կզանգեին էլեկտրաէներգիա մատակարարող ընկերությանը և կաղաչեին միացնել լույսերը: Ո՛չ: Եթե նրանք այդպես վարվեին, համոզված եմ, որ այդ ընկերության ներկայացուցիչը մի պահ կլսեր, կնայեր մեկ այլ աշխատակցի և կասեր՝ մի խելագար է զանգել, իսկ հետո կպատասխաներ՝ տիկի՛ն, լույսերը միացված են. խնդիրը ձեզ մոտ է»:

Երբ ես բերում եմ այս օրինակն իմ համաժողովներին, բոլորը ծիծաղում են: Գիտե՞ք ինչու: Որովհետև մարդիկ գիտեն, որ անմտություն է զանգել էլեկտրաէներգիա մատակարարող ընկերությանը և լալագին ձայնով խնդրել նրանց միացնել լույսերը. բոլորը գիտեն, թե ինչ է պետք անել այդ իրավիճակում: Պետք է պարզապես

միացնել անջատիչը: Դա այնքա՛ն հեշտ է: Պետք չեն զգացմունքային ջանքեր և լարվածություն. պետք է պարզապես միացնել անջատիչը: Գիտե՞ք, թե ինչու մարդիկ լարվածություն չեն զգում լույսերը միացնելիս: Քանի որ նրանք ԱԿՆԿԱԼՈՒՄ ԵՆ, որ լույսերը կմիանան: Նրանք ակնկալում են, որ լույսերը կմիանան, քանի որ գիտեն, թե ինչպես է գործում էլեկտրականությունը: Նրանք հասկանում են այն ՕՐԵՆՔՆԵՐԸ, որոնցով էլեկտրականությունը գործում է, և նրանք գիտեն, որ այդ օրենքները երբեք չեն փոխվում:

Բայց եթե դուք ետ գնայիք հազար տարով և ասեիք ինչ-որ մեկին, որ կարելի է լուսավորել մի ամբողջ քաղաք փոքրիկ ապակե լամպերով, նրանք կմտածեին, որ դուք խելագար եք: Եվ եթե տեսնեին մի թաղամաս՝ լուսավորված փոքրիկ ապակե լամպերով, նրանք հրաշք կանվանեին դա: Բայց դա հրաշք չէ. պարզապես էլեկտրականության օրենքը գործում է, ինչպես որ այն կգործի յուրաքանչյուրի համար, ով ժամանակ կտրամադրի, որպեսզի սովորի էլեկտրականության օրենքները:

Մենք իմացանք, թե ինչպես է գործում էլեկտրականությունը, կամ, կարելի է ասել՝ նորոգեցինք մեր միտքը էլեկտրականությունը կառավարող օրենքների վերաբերյալ: Այնպես որ, մենք ակնկալում ենք, որ այն կգործի, և չենք զարմանում, երբ տեսնում ենք դրա ազդեցությունը: Իրականում, մենք ավելի շատ զարմանում ենք, երբ այն չի գործում: Հասկանալով և գրի առնելով էլեկտրականության օրենքները՝ մենք կարող ենք տարածել լուսավորությունը աշխարհով մեկ: Ինչպե՞ս: Սովորեցնելով մարդկանց այն մասին, թե ինչպես են գործում այդ օրենքները և թույլ տալով նրանց վայելել լուսավորություն ունենալու առավելությունները: Այս ամենը հնարավոր է դառնում, երբ մենք հասկանում ենք էլեկտրականության օրենքները: Նույնը ճշմարիտ է նաև հոգևոր օրենքների դեպքում: Եթե չհասկանանք դրանք, մենք չենք կարողանա օգտվել դրանց առավելություններից այն ժամանակ, երբ ունենանք դրանց կարիքը, և չենք կարողանա տարածել դրանք:

Երբ ինքնաթիռ ենք տեսնում օդում, չենք ասում՝ սա հրա՛շք է: Ո՛չ, մենք ակնկալում ենք, որ ինքնաթիռը պետք է թռչի, քանի որ հաս-

կանում ենք, թե ինչպես է ինքնաթիռը թռչում, և ինչու է այն թռչում: Եվ կրկին, եթե մենք ետ գնայինք 1000 տարով, և մի նոր երկիարկանի «էյրբաս 380» թռչեր ծառերի կատարների վրայով, ի՞նչ կասեին մարդիկ: Նրանք կասեին, որ դա հրաշք է: Ես համաձայն եմ, որ 380-րդ մոդելը խիստ տպավորիչ է. այդ ինքնաթիռի քաշը 545.000 կիլոգրամ է, և այն կարող է տեղավորել ավելի քան 800 մարդու և անցնել մինչև 14.000 կիլոմետր՝ 900 կիլոմետր/ժամ արագությամբ: Այդ ինքնաթիռն այն աստիճան զարմանալի է, որ միգուցե դուք գայթակղություն ունենաք մտածելու, որ այն հրաշք է: Բայց այն հրաշք չէ: Մենք կարող ենք հարցնել 380-րդ մոդելը նախագծող ինժեներներին, թե ինչպես է այն թռչում, և նրանք կպատմեն մեզ ֆիզիկայի յուրաքանչյուր օրենքի մասին, որը օգտագործել են՝ այդ ինքնաթիռն օդ բարձրացնելու համար, կպատմեն նաև յուրաքանչյուր օգտագործված պտուտակի և դետալի մասին: Այդ ինքնաթիռի առաջին թռիչքի ժամանակ ինժեներները զարմանքով չէին ասում՝ նայե՛ք, նույնիսկ հավատալ չենք կարող, որ այն թռչում է: Կրկին, մենք վստահաբար ինքնաթիռ ենք նստում, քանի որ գիտենք, որ դրա թռչելու կարողությունը հիմնված է ֆիզիկայի օրենքների վրա, որոնք չեն փոխվում. քանի դեռ մենք մնում ենք այդ օրենքների սահմաններում, մեր ինքնաթիռը թռչելու է: Հիշեք՝ օրենքները չե՛ն փոխվում:

Մենք երբեք ինքնաթիռ չէինք նստի, եթե բնության օրենքներն անփոփոխ չլինեին: Պատկերացրեք, որ մեր գնած ինքնաթիռի տոմսի վրա գրված լիներ մոտավորապես հետևյալը. «Դուք կարող եք վտանգել ձեր կյանքը, եթե թռչեք այս ինքնաթիռով, քանի որ ամբարձիչ ուժի օրենքն անկանոն է գործում: Մեկ օր այն գործում է, իսկ մյուս օրը՝ ոչ: Ոչ ոք հաստատ չգիտի: Եթե զգում եք, որ ձեր բախտը կբերի, հաճելի թռիչք ենք մաղթում»: Ե՞րբ եք վերջին անգամ վախեցել, որ վեր եք թռչելու ձեր նստարանից: Երբե՛ք: Իսկ ինչո՞ւ: Որովհետև դուք գիտեք, որ ձգողության օրենքը երբեք չի՛ փոխվում:

Ես խոսեցի երկրային տիրույթին պատկանող օրենքների մասին, որոնք ստեղծել է Աստված: Բայց գիտե՞ք, որ Նրա Թագավորության հոգևոր օրենքները գործում են նույն կերպով. դրանք անփոփոխ են: Մինչև որ Աստված սկսեց խոսել ինձ հետ Իր Թագավորության

մասին, ես շատ լավ տեղյակ էի, թե ինչպես էին գործում այս աշխարհի ֆիզիկական օրենքները, բայց կարծում էի, որ Աստծո Թագավորությունն այլ է: Ինձ թվում էր, թե Աստված պարզապես անում է՝ ինչ ուզում է, և երբ ուզում է: Բայց հայտնաբերեցի, որ դա ճիշտ չէ: Երբ հասկացա, որ Աստծո հոգևոր Թագավորության օրենքներն անփոփոխ են, և որ դրանք հնարավոր է սովորել, հասկանալ և կիրառել, ես հասկացա, թե ինչու է Հիսուսը շարունակ ասում. «Աստծո Թագավորությունը նման է այսինչ բանի», և համեմատում է այն որևէ բնական երևույթի հետ, որպեսզի մենք՝ մարդիկս, հասկանանք, թե ինչպես է այն գործում: Հանկարծ մտքումս ասես մի լամպ վառվեց: Ես մտածեցի. «Եթե Աստված տվել է մեզ Թագավորությունը, իսկ Նա տվել է մեզ այն, և Թագավորությունը կառավարվում է անփոփոխ օրենքներով, նշանակում է՝ ես կարող եմ սովորել այդ օրենքները և կիրառել իմ կյանքում»:

> *«Մի՛ վախեցիր, փոքր հոտ, որովհետև ձեր Հայրը հաճեց, որ Արքայությունը տա ձեզ»:*
>
> – Ղուկաս 12.32

Այդ օրվանից ես դարձա հոգևոր գիտնական: Ես սկսեցի դիտարկել Աստվածաշունչը բոլորովին այլ կերպ: Սկսեցի հարցեր տալ, երբ կարդում էի Աստվածաշունչը. «Ինչո՞ւ ձկները բազմապատկվեցին»: «Ինչո՞ւ այդ մարդը բժշկվեց»: «Ինչո՞ւ հացը բազմապատկվեց» և այլն: Երբ սկսեցի մոտենալ Աստվածաշնչին այդ կերպով՝ խնդրելով Աստծուն ցույց տալ ինձ դրանում գտնվող օրենքները, ես հասա ԱՆՀԱՎԱՏԱԼԻ արդյունքների:

Երբ Տերը խոսեց ինձ հետ այդ իրավաբանի զանգելու օրը և ասաց, որ իմ խնդիրն այն էր, որ ես երբեք ժամանակ չէի տրամադրել՝ սովորելու համար, թե ինչպես է գործում Իր Թագավորությունը, ես անմիջապես իջա առաջին հարկ և ապաշխարեցի իմ կնոջ առջև, որ չէի փնտրել Տիրոջը և թույլ էի տվել մեր ընտանիքին հայտնվել նման խառնաշփոթ վիճակում, ինչպես որ արդեն գրեցի: Բայց մենք չգիտեինք, թե ինչ էր իրականում նշանակում վստահել Թագավո-

ությանը՝ մեր պատասխանները ստանալու համար: Կրկին, մենք եկեղեցում էինք, մենք Երկինք էինք գնում, և մենք սիրում էինք Աստծուն: Այդ ժամանակ չէինք պատկերացնում, թե ինչ նկատի ուներ Աստված՝ խոսելով Թագավորության մասին: Մենք լուրջ խնդիր ունեինք և չգիտեինք, թե ինչպես գտնել այն գումարը, որն այդ իրավաբանը պատվիրեց վճարել երեք օրում, կամ ինչ անել այն դեպքում, եթե չկարողանայինք վճարել այդ գումարը երեք օրում, և մեր դեմ դատական հայց ներկայացվեր:

Այնպես որ, դա լավ ստուգում էր: Դա Աստծո հետ ֆինանսական խնդիր լուծելու իմ առաջին փորձառությունն էր, և ես ուզում էի, որ Տերը ցույց տար ինձ, թե ինչ նկատի ուներ «Թագավորություն» ասելով: Թույլ տվեք պատմել, թե ինչ տեղի ունեցավ: Հիշեք՝ ինձ զանգող իրավաբանը երեք օր ժամանակ էր տվել ինձ՝ պարտքս վերադարձնելու համար, բայց ես փող չունեի: Այդ հուսահատությունն էր, որ դրդեց ինձ իմ ննջասենյակ գնալ և աղաղակել Տիրոջը. ես փորձանքի մե՛ջ էի: Իհա՛րկե, այդ ժամանակ էր, երբ Նա ասաց ինձ, որ իմ պատասխանը Թագավորությունն էր, և կրկին, ես գաղափար չունեի, թե ինչ Նա նկատի ուներ, բայց, անշուշտ, ցանկանում էի իմանալ:

Երկու օր անց ես գնացի հանդիպելու մի հաճախորդի՝ կյանքի ապահովագրության պայմանագրի կնքման համար: Ի դեպ, այդ օրերին ես միշտ կայանում էի իմ մեքենան իմ հաճախորդների տների կողքի հատվածում, և երբեք՝ առջևի մասում: Իմ մեքենան մի փոքր խնդիր ուներ: Շարժիչը միանալու ժամանակ այն, առանց չափազանցության, պատում էր ամբողջ ճանապարհը կամ փողոցը սպիտակ ծխով: Ինձ միշտ թվում էր, թե իմ գործի համար օգտակար չէր լինի, եթե ես կայանեի իմ մեքենան հաճախորդի տան մուտքի ճանապարհին և հեռանալիս ամբողջովին պատեի այն ծխով: Ես ենթադրում էի, որ միգուցե վստահելի չթվայի ֆինանսական բնագավառում, եթե դա տեղի ունենար, քանի որ ես առաջարկում էի մարդկանց մինչև մի քանի հարյուր հազար դոլարի ներդրում կատարել: Եվ եթե ես այդքան լավ էի տնօրինում ֆինանսները, ինչո՞ւ էր իմ մեքենան անսարք: Այդ երեկո ես արեցի նույնը:

Երբ դուրս եկա հաճախորդի տնից, ես սարսափեցի՝ հասկանա-

լով, որ նա ուղեկցում էր ինձ դեպի իմ մեքենան: Նա ոչինչ չգիտեր. մենք պարզապես զրուցում էինք: Բայց ես մի փոքր մտահոգված էի, որ միգուցե նա մնար այնքան, մինչև որ միացնեի մեքենայի շարժիչը: Մենք շարունակեցինք զրույցը, մինչև որ ես նստեցի իմ մեքենան: Պատուհանն իջեցված էր, և ես շարունակում էի խոսել՝ հուսալով, որ նա բարի գիշեր կմաղթեր ինձ, իսկ ես կձևացնեի, թե մեկ րոպեով ինչ-որ բան էի անում, մինչ նա տուն կգնար, բայց նա չէր գնում: Ի վերջո, նա բարի գիշեր մաղթեց, բայց պարզապես ետ գնաց մեքենայից և կանգնեց: Ես գիտեի, որ այլ ելք չունեի: Միացրի շարժիչը՝ հույս ունենալով, որ գուցե այն գոնե մեկ անգամ ծուխ չէր ժայթքելու, սակայն իմ ցանկությունը չկատարվեց: Օդն անմիջապես լցվեց այնպիսի ծխով, որը ցավեցրեց աչքերս:

Նա արագ ձեռքով արեց, որպեսզի ես անջատեի շարժիչը: Մոտեցավ պատուհանին և խնդրեց ինձ բարձրացնել առջևի ծածկը: Նա ասաց ինձ, որ կես դրույքով մեխանիկ է աշխատում և ուզում է ինչ-որ բան ստուգել: Մեկ րոպե անց վերադարձավ և ասաց.

– Ճիշտ այն, ինչ ես կասկածում էի. յուղի խողովակի միջադիրը վնասված է: Տուն գնացե՛ք և անմիջապես նորոգե՛ք:

Ես շնորհակալություն հայտնեցի և գնացի, բայց նրա ախտորոշումը ոչինչ չէր նշանակում ինձ համար: Ես փող չունեի, որ նորոգեի այդ մեքենան:

Իմ գրասենյակը գրեթե տասը կիլոմետրով հեռու էր իմ հաճախորդի տնից, և գրասենյակ գնալու ճանապարհին ընկճվածության ծանոթ ծածկոցը իջավ ինձ վրա: Բայց մեքենան վարելու ընթացքում ես հիշեցի, թե ինչ էր Տերն ասել ինձ, և սկսեցի խոսել Նրա հետ իմ մեքենայի մասին. «Տե՛ր,- ասացի,- ես փող չունեմ, որ նորոգեմ այս մեքենան: Ես դեռ լիովին չեմ վճարել այս մեքենայի համար և չեմ կարող վաճառել այն վնասված վիճակում: Ես պարզապես չգիտեմ, թե ինչ անեմ: Միգուցե ավելի լավ կլիներ, եթե այս մեքենան այրվեր: Այդ դեպքում, ապահովագրական ընկերությունը կվճարեր մեքենայի մնացած պարտքը, իսկ ես կազատվեի սրանից»:

Իմ գրասենյակին մոտավորապես հինգ կիլոմետր էր մնացել,

երբ նկատեցի մի պղպջակ առջևի ծածկի վրա, որը մինչ այդ չէի տեսել: Մինչ նայում էի դրան, այն ավելի ու ավելի էր մեծանում, և երբ կայանեցի մեքենան իմ գրասենյակի կայանատեղիում, այն պայթեց՝ վերածվելով կրակե գնդի: Ես ցնցված էի. մեքենայիս առջևի մասն ամբողջությամբ բռնկվեց մոտավորապես երկու մետր բարձրություն ունեցող կրակով: Ես արագորեն վազեցի գրասենյակ և զանգեցի հրշեջ բաժանմունք: Հաջորդ օրը ապահովագրական ընկերությունը վճարում կատարեց մեքենայի համար: Նրանց կողմից տրված չեկով մենք ամբողջությամբ վճարեցինք մեքենայի պարտքը, իսկ մնացած մասը բավական էր՝ վճարելու համար այն իրավաբանին, որը զանգել էր ինձ երեք օր առաջ: Մենք չգիտեինք՝ ինչ մտածել: Բայց Թագավորության սկզբունքներով ապրելու մեր որոշումը նորովի էր փորձվելու, և դա որոշելու էր մեր ընթացքը հետագա տարիների համար:

ՄԵՆՔ ՀԱՄՈԶՎԵՑԻՆՔ, ՈՐ ԱՍՏԾՈ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԳՈՐԾՈՒՄ Է, ԵՎ ՈՐՈՇՈՒՄ ԿԱՅԱՑՐԻՆՔ, ՈՐ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ԵՆՔ ԾԱՆՈԹԱՆԱԼ ԱՍՏԾՈ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՆ ԵՎ ՕԳՏՎԵԼ ԴՐԱՆԻՑ՝ ՍԿՍԱԾ ԱՅԴ ՊԱՀԻՑ:

Այն բանից հետո, երբ իմ մեքենան այրվեց, մենք, իհարկե, ոգեշնչվեցինք, բայց հանկարծ հասկացանք, որ մեզ մեքենա է պետք: Թեև այդ մեքենայի պարտքն ամբողջովին վճարվեց, և ինձ զանգող իրավաբանը նույնպես ստացավ իր գումարը, մենք չունեինք փող՝ նոր մեքենա գնելու համար: Լսելով իմ մեքենայի կորստի մասին, հայրս զանգեց մեզ՝ ասելով, որ ուզում է օգնել նոր մեքենա գնելու հարցում: Մենք ոգեշնչվեցինք: Հայրս և ես գնացինք տեղական օգտագործված մեքենաների վաճառքի կետ և գտանք մի մեքենա, որը դուր եկավ ինձ և Դրենդային: Հայրս խոստացավ տալ մեզ 5000 դոլար՝ այդ մեքենան գնելու համար: Այն արժեր 17.000 դոլար, և մենք պետք է վճարեինք մնացած 12.000-ը: Ես դժկամորեն լրացրի վարկային դիմումը, իսկ հայրս ստորագրեց՝ որպես երաշխավոր: Հաջորդ առա-

վոտյան վաճառողը պետք է զանգեր ինձ և տեղեկացներ դիմումի պատասխանը:

Այդ գիշեր մենք չկարողացանք քնել: Գիտեինք, որ չէինք կարող նման վարկ վերցնել: Տերը հենց նոր էր խոսել ինձ հետ այլ կերպ ապրելու մասին: Բայց քանի որ ես չունեի մեքենա, տեղի տվեցի ճնշմանը: Շատ ծանր գիշերվանից հետո Դրենդան և ես համաձայնեցինք, որ չենք կարող ստորագրել այդ վարկի փաստաթղթերը: Ես զանգեցի հորս և շնորհակալություն հայտնեցի նրա առատաձեռն առաջարկի համար, բայց ասացի, որ մենք մերժելու ենք այն: Դրանից հետո զանգեցի մեքենաների վաճառքի կետ և ասացի նրանց նույնը: Վաճառողը վիատվեց, քանի որ առավոտյան վարկային դիմումը հաստատվել էր, և մեքենան պատրաստ էր՝ վերցնելու համար: Թեև մենք չգիտեինք, թե ինչպես էր Աստված օգնելու մեզ նոր մեքենա ձեռք բերել, մենք խաղաղություն զգացինք:

Այդ ընթացքում Դրենդան զբաղվում էր հնաոճ իրերի վաճառքով, որոնք ձեռք էր բերում իրենց իսկ օգտագործած իրերը վաճառող մարդկանցից: Նա հաղորդագրություն էր թողել մի մարդու մի քանի սենյակ զբաղեցնող կահույք գնելու մասին: Այդ մարդը վաճառում էր իր կահույքը մեր մեքենայի այրվելուց գրեթե մեկ ամիս առաջ, բայց Դրենդան այդպես էլ չէր կարողացել կապ հաստատել նրա հետ: Մի քանի օր անց այն բանից հետո, երբ մեր մեքենան այրվեց, այդ մարդը զանգեց և համաձայնեց վաճառել երեք սենյակ զբաղեցնող կահույքը 1000 դոլարից պակաս գնով: Դրենդան փոխանցեց այդ կահույքը մի աճուրդային ընկերության՝ իր փոխարեն վաճառելու համար, և այնպես պայմանավորվեց նրանց հետ, որ իր կոմիսիոն վճարի փոխարեն վերցրեց լավ վիճակում գտնվող մի օգտագործված մեքենա, որը պատկանում էր այդ աճուրդային ընկերությանը: Այնպես որ, արդյունքում մենք ունեցանք լավ վիճակում գտնվող մեքենա, որի համար ոչինչ պարտք չէինք, լիովին մարված վարկային քարտ և լիովին վճարված ավտոմեքենայի վարկ:

Զարմանալի՜ է: Ահա թե ինչպես է գործում Թագավորությունը: Մենք համոզվեցինք, որ Աստծո համակարգը գործում է, և որոշում կայացրինք, որ շարունակելու ենք ծանոթանալ Աստծո Թագավո-

ության համակարգին և օգտվել դրանից՝ սկսած այդ պահից: Միգուցե հարցնեք. «Ո՞ր սկզբունքը դուք օգտագործեցիք»: Ամենակարևոր սկզբունքն էր՝ հույս չդնել պարտքի վրա, այլ խնդրել Աստծուց այն, ինչի կարիքը ունենք, և թույլ տալ, որ Նա ցույց տա, թե ինչպես հնձել:

Իմ մեքենայի հետ տեղի ունեցածը հետաքրքրություն առաջացրեց և հաստատեց ևս մեկ իրադարձություն, որը տեղի էր ունեցել մի քանի ամիս առաջ, բայց այն ժամանակ ես չէի հասկանում, թե ինչ էր Աստված ցույց տալիս ինձ: Իմ մտքում ես դեռ չէի ընկալում այն որպես Թագավորության սկզբունք:

Ես եղնիկի որսի սիրահար եմ, բայց տարիներ շարունակ ձեռնունայն էի տուն վերադառնում: Գնում էի անտառ ցուրտ եղանակին և մի քանի օր շարունակ ոչինչ չէի որսում: Այնպես չէր, որ ես պարզապես սիրում էի որսորդությունը. ես երեխաներ ունեի, որոնց պետք էր կերակրել, և իհարկե, կարող էի օգտագործել որսի միսը: Թեև անցյալում ունենում էի հաջողություններ, արդեն տարիներ էին անցել իմ վերջին հաջողակ եղնիկների որսաշրջանից, երբ ես որսի միս էի բերում տուն: Մեկ անգամ, երբ մտածում էի եղնիկների առաջիկա որսաշրջանի մասին, ես լսեցի Տիրոջ ձայնը. «Ինչո՞ւ թույլ չես տալիս, որ ցույց տամ քեզ, թե ինչպես եղջերու որսաս այս տարի»: Ես հանկարծակիի եկա: Ցույց տալ ինձ, թե ինչպես եղջերո՞ւ որսամ այս տարի: Ի՞նչ է դա նշանակում: Աղոթելով այդ խոսքերի վերաբերյալ, ես զգացի, որ պետք է ֆինանսական սերմ կամ նվեր ցանեմ հենց եղջերու հնձելու նպատակի համար: Ես զգացի, որ Տերն ասում է ինձ, որ երբ ցանեմ իմ եղջերուի համար, ես պետք է հավատամ, որ արդեն ստացել եմ, մինչև այն որսալը՝ համաձայն Մարկոս 11.24-ի:

> *«Սրա համար ասում եմ ձեզ, թե ամեն ինչ, որ աղոթք անելով խնդրեք, հավատացե՛ք, թե կառնեք, և կլինի ձեզ»:*

Թեև ես՝ որպես քրիստոնյա, մշտապես նվիրատվություններ էի կատարում և աջակցում էի իմ եկեղեցուն, նպատակաուղղված կերպով ցանելը և հավատալը, որ ստանում եմ աղոթելու պահին, նոր էր

ինձ համար: Ես մի չեկ վերցրի և գրեցի հավելյալ նշումների բաժնում. «Իմ 1987 թվականի եղջերուի համար»: Ես դրեցի ձեռքերս դրա վրա, իսկ հետո փոստով ուղարկեցի մի ծառայության, որին վստահում էի, և հռչակեցի, որ ստացա իմ եղջերուին այն պահին, երբ ուղարկեցի այդ չեկը: Այդ ժամանակ ես ապրում էի Օկլահոմա նահանգի Տալսա քաղաքում, որտեղ որս անելու տեղ չկար, բայց իմ ընկերներից մեկը, ով մեր եկեղեցուց էր, Գոհության տոնի կապակցությամբ հրավիրեց ինձ իր տատիկի տուն, որը քաղաքից դուրս էր: Նա ասաց, որ նրանց ագարակի տարածքում եղնիկներ են լինում: Այսպիսով, իմ ընտանիքն ուղևորվեց Գոհության օրվա առավոտյան՝ համեղ կերակուրներով հագեցած օր անցկացնելու և եղջերու տուն բերելու համար:

Ընկերս այդքան էլ լավ չգիտեր, թե որտեղ տաներ ինձ, բայց այդտեղ անտառին սահմանակից մի արոտավայր կար, և նա առաջարկեց գնալ այդ արոտավայրը և նստել մի մեծ ծառի տակ: Ուզում եմ, որ պատկերացնեք դա. ես նստած էի հնձած արոտավայրի մեջտեղում գտնվող մի մեծ ծառի տակ՝ մեջքով հենված այդ ծառին և դեմքով դեպի անտառը, որը գրեթե 120 մետրով հեռու էր ինձնից: Այժմ, երբ հիշում եմ այդ օրը, ես պարզապես նստած էի բաց դաշտում՝ հենված ծառին, ինչը հազիվ թե կարելի է գերազանց դիրք անվանել:

Մոտավորապես 30-40 րոպե անց, երբ առավոտը մոտենում էր, մի եղջերու իմ ետևում, լիովին աննկատ վազում էր դաշտով դեպի անտառ: Ծառն իմ և եղջերուի միջև էր. նա չտեսավ ինձ: Եղջերուն վազեց ուղիղ դեպի ծառը՝ անտառ գնալու ճանապարհին, և չտեսավ, որ ես հենված էի դրան: Մոտենալով ծառին՝ նա որսաց իմ հոտը և կանգ առավ՝ փորձելով հասկանալ, թե որտեղ էի: Նա շրջվեց, նայեց ծառին, և մեր հայացքները հանդիպեցին՝ ընդամենը 5 մետր հեռավորության վրա: Չգիտեմ, թե ով էր ավելի զարմացած, բայց եղջերուն ժամանակ չկորցրեց. բարձր փնչացնելով՝ պոկվեց տեղից և արագությամբ սլացավ դեպի անտառ: Ես նստած էի, և մինչ եղջերուն արագությամբ փախչում էր ինձնից, փորձում էի ուղղել հրացանս և նշանառության տակ վերցնել նրան:

Այդ հզոր արագությամբ վազող սպիտակապոչ եղջերուին նշանառության տակ պահելը և անսպասելի գնդակ հասցնելը ամենա-

հեշտ բանը չէր: Ճիշտն ասած, նախկինում ես երբեք չէի կրակել վազող եղջերուի: Ես հիշում եմ, որ հազիվ էի պահում եղջերուին նշանառության տակ, քանի որ նա բարձր ցատկում էր, ինչպես որ վարվում են սպիտակապոչ եղջերուները ամբողջ թափով փախչելիս: Բայց երբ քաշեցի ձգանը, նա ընկավ և անշարժացավ: Ես ցնցվա՛ծ էի: Այդ ամենը կատարվեց մեկ վայրկյանում: Կրակոցն արվեց հարյուր մետրից. ես քայլերով չափեցի հեռավորությունը:

Լսելով հրացանի ձայնը, ընկերս եկավ և շնորհավորեց ինձ, քանի որ տեսավ ընկած եղջերուին: Ես չէի պատմել նրան, որ Տերն ասել էր ինձ, թե ինչպես պետք է ստանայի իմ եղջերուին, բայց այդ պահին նայեցի նրան և ասացի.

– Չեմ կարծում, որ ե՛ս որսացի այս եղջերուին իմ որսորդական մեծ հմտությունների շնորհիվ:

Ես հանեցի մի թուղթ իմ որսորդական բաճկոնի գրպանից, որի վրա նշված էր այդ չեկն ուղարկելու օրը: Դրա վրա գրված էր. «Ես հավատում եմ, որ ստանում եմ իմ 1987 թվականի եղջերուին, Հիսուսի անունով»: Դրա վրա գրել էի նաև իմ աղոթքի ամսաթիվը և ժամը: Ես պահեցի այդ թուղթը այնպես, որ ընկերս տեսներ, և պատմեցի նրան, թե ինչ էր ասել Տերը:

Այդ դեպքը գրավեց իմ ուշադրությունը: Ես նույնիսկ կասկած չունեմ, որ այն Աստծուց էր: Սակայն, ինչ-ինչ պատճառով, չհասկացա, որ օգտագործում էի Երկնքի Թագավորության օրենքներից մեկը: Իրականում, ես նույնիսկ չէի մտածում «Թագավորություն» հասկացության մասին: Այդ եղջերուին որսալը զարմանալի էր, բայց արդյո՞ք դա կրկին տեղի կունենար: Քանի որ ես չունեի պատկերացում Թագավորության օրենքների մասին, չգիտեի, թե ինչ կերպով այդ եղջերուն եկավ այդտեղ, կամ ինչ օրենքներ բերեցին նրան: Այնպես որ, ես վերագրեցի դա Աստծուն և սկսեցի անհամբեր սպասել եղնիկների հաջորդ որսաշրջանին՝ այդ սկզբունքը կրկին փորձարկելու համար: Բայց մինչև հաջորդ որսաշրջանը, իմ մեքենան այրվեց: Երբ այն այրվեց, առանց պարտքի ես ունեցա մեկ այլ մեքենա դրա փոխարեն, Աստված լիովին գրավեց իմ ուշադրությունը:

Այժմ ես ոգեշնչված էի հաջորդ որսաշրջանին ևս մեկ եղջերու որսալու մտքով: Ես ցանկանում էի ստուգել իմ տեսությունը և ավելին իմանալ Աստծո Թագավորության մասին: Եղնիկների որսաշրջանին շատ ժամանակ չէր մնացել:

Ես որսացի այդ եղջերուին Օկլահոմայում 1987 թվականի աշնանը: Իսկ 1988 թվականի հուլիսին մենք տեղափոխվեցինք Օհայո, որտեղ մեծացել էի: Թեև ես մեծացել էի այդտեղ, սակայն վերջին 12 տարում այդտեղ չէի ապրել: Եվ ինձ ոչ մի անգամ չէր հաջողվել եղջերու որսալ Օհայոյում: Ես փորձել էի մի քանի անգամ, բայց նույնիսկ չէի կրակել որևէ եղջերուի: Հենց որ տեղավորվեցինք մեր վարձակալած քաղաքային տանը Օհայոյում, ես հասկացա, որ չգիտեմ, թե որտեղ որս անեմ: Երբ երեխա էի, ես նապաստակ էի որսում իմ հոր տան փողոցի մյուս կողմում գտնվող առվակի մոտ: Երբ դեռահաս էի, մի քանի տարի շարունակ թակարդ էի դնում այդտեղ, բայց նույնիսկ մեկ անգամ չէի տեսել եղջերու կամ եղջերուի որևէ նշան ամբողջ այդ տեղանքում: Մեկ անգամ, երբ սովորում էի համալսարանում, եղբայրս զանգեց ինձ: Նա մեծ ոգևորությամբ պատմեց, որ եղնիկ է տեսել հորս տան մոտ գտնվող առվակի մոտակայքում: Երկուսս էլ զարմացել էինք:

Հիշելով այդ խոսակցությունը՝ ես որոշեցի, որ եղնիկների որսաշրջանի բացման օրը քայլելով կգնամ այդ առվակի հունի ուղղությամբ: Ես զանգեցի եղբորս և խորհուրդ հարցրի, թե առվակի որ հատվածն արժեր գնալ: Թեև նա արդեն մի քանի տարի չէր եղել այդտեղ, նա հիշեց մի մեծ թխկու մասին, որը այդ առվակի անտառային հատվածում էր և կարող էր հարմար տեղ լինել: Քանի որ մանկությանս տարիներից ես վերուվար էի անում այդ առվակով, ծանոթ էի դրա ամեն մի ոլորանին և հստակ գիտեի, թե որտեղ էր նա ուղղորդում ինձ:

Դրենդան և ես կրկնեցինք այն, ինչ Տերը ցույց էր տվել մեզ նախորդ տարի Օկլահոմայում. մենք սերմ ցանեցինք, գրի առանք մեր խնդրանքը և հավատացինք, որ ստանում ենք աղոթելու ժամանակ՝ համաձայն Մարկոս 11.24-ի: Այդ ժամանակ Օկլահոմայում կար երկու եղնիկի սահմանափակում՝ արու կամ էգ, բայց մենք մտածեցինք, որ կցանենք մեկ եղնիկի համար, իսկ որոշ ժամանակ անց կորսանք

երկրորդին: Դրենդան և ես սերմ ցանեցինք եղնիկի համար և հավատացինք, որ ստանում ենք այն աղոթքի ժամանակ: Զարմանալի էր, բայց եղնիկների որսաշրջանի բացման առավոտյան ես 40 րոպեի ընթացքում որսացի ոչ թե մեկ, այլ երկու եղնիկ: Մենք հաստատ ինչ-որ բան էինք հայտնաբերել:

Մեկ ամիս անց ես մի երազ տեսա մի գործարար գաղափարի վերաբերյալ: Այդ գործի համար պահանջվում էր ամբողջ ֆինանսական գիտելիքը, որը ես ձեռք էի բերել ապահովագրության ոլորտում, բայց իմ երազի մեջ այն օգտագործվելու էր այլ նպատակով: Ես լիովին չհասկացա այն, բայց համոզված էի, որ Աստված առաջնորդում էր ինձ, որ սկսեի իմ գործը և դուրս գայի այն ընկերությունից, որտեղ աշխատում էի արդեն ութ տարի: Այդ երազը տեսնելու ժամանակ ես դեռ կյանքի ապահովագրության փաթեթներ և արժեթղթեր էի վաճառում:

Այն շաբաթ, երբ տեսա այդ երազը, ես պայմանավորված այց ունեի մի ընտանիք՝ ապահովագրական փաթեթի վաճառքի վերաբերյալ, ու թեև մենք քննարկում էինք նրանց կյանքի ապահովագրությունը, ես գիտեի, որ այդ ընտանիքի իրական կարիքը կամ խնդիրը կյանքի ապահովագրություն ունենալը չէր: Նրանց ամսական բյուջեն անկառավարելի էր, և նրանք պարտքերի մեջ էին: Իմ հաճախորդների ֆինանսական պլանավորման մեջ էր մտնում տվյալների թերթիկ լրացնելը, որում նրանք ընդգրկում էին իրենց բոլոր ֆինանսական տվյալները: Դա թույլ էր տալիս ինձ հասկանալ, թե ինչ արժողության կյանքի ապահովագրության փաթեթ էր նրանց անհրաժեշտ: Այդ երեկո ես անհանգստություն էի զգում այդ ընտանիքի համար: Ես ուզում էի օգնել նրանց, բայց չգիտեի, թե ինչպես: Վերցրի նրանց տվյալների թերթիկը և սկսեցի որոշ տարբերակներ մշակել: Աշխատելով իմ ֆինանսական հաշվիչով՝ ես շեղվեցի կյանքի ապահովագրությունից և սկսեցի ստուգել, թե արդյո՞ք նրանք կարող էին որոշակի գումար խնայել իրենց ամսական բյուջեից: Մի քանի բան վերադասավորելուց և հաշվիչով որոշ գործողություններ կատարելուց հետո ես ցնցվեցի՝ հասկանալով, որ այդ ընտանիքը կարող էր ազատվել ամբողջ պարտքից 7 տարուց պակաս ժամանակահատվածում, ներառյալ նրանց հիփոթեքը՝ առանց եկամուտի ավելացման:

Այդ ժամանակ ես արդեն 8 տարի ֆինանսական ոլորտում էի և երբեք չէի լսել, որ նման բան հնարավոր է: Ես կրկին ու կրկին աշխատեցի այդ տարբերակի վրա և ստացա նույն պատասխանը. 6.2 տարի անց նրանք կազատվեին ամբողջ պարտքից: Դրանից հետո ես բացեցի իմ թղթապանակների դարակը և վերցրի այլ հաճախորդների տվյալների թերթիկներ: Ես կատարեցի նույն հաշվարկները և ստացա նույն պատասխանը՝ պարտքերի մարում 7 տարուց պակաս ժամանակահատվածում: Անկեղծ ասած՝ ես ցնցված էի:

ԵՍ ՑՆՑՎԵՑԻ՝ ՀԱՍԿԱՆԱԼՈՎ, ՈՐ ԱՅԴ ԸՆՏԱՆԻՔԸ ԿԱՐՈՂ ԷՐ ԱԶԱՏՎԵԼ ԱՄԲՈՂՋ ՊԱՐՏՔԻՑ 7 ՏԱՐՈՒՑ ՊԱԿԱՍ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ, ՆԵՐԱՌՅԱԼ ՆՐԱՆՑ ՀԻՓՈԹԵՔԸ՝ ԱՌԱՆՑ ԵԿԱՄՈՒՏԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ:

Ես մտածեցի, որ իմ հաճախորդը կխրախուսվեր՝ իմանալով այդ մասին, և որոշեցի գեղեցիկ զեկույց պատրաստել և մեր հաջորդ հանդիպմանը ներկայացնել այն, ինչ հայտնաբերել էի: Ես իսկապես մտահոգված էի այդ ընտանիքի համար: Գիտեի, որ ֆինանսական ճնշումն ազդել էր նրանց կյանքի յուրաքանչյուր բնագավառի վրա, և ուզում էի, որ նրանք իմանային, որ իրենց վիճակն անհույս չէր: Ես ներկայացրի իմ պատրաստած փոքրիկ տպագիր զեկույցն իմ հաճախորդին, և երբ քայլ առ քայլ ցույց տվեցի իմ նշած թվերը, նրանք ապշել էին: Այն բանից հետո, երբ ցույց տվեցի, թե որքան արագ նրանք կարող էին ազատվել պարտքերից, ամուսինն արցունքն աչքերին ոտքի ելավ և շնորհակալություն հայտնեց: Դա նման էր այն հեռուստատեսային տեսարաններին, որոնցում որևէ ընտանիք հաղթում է վիճակախաղում կամ շահում է որևէ խաղային հաղորդման գլխավոր մրցանակը: Նրանք ասես չհավատային իմ ասածին: Այդ պահն իսկապես զգացմունքային էր նրանց համար, ինչպես նաև ինձ համար:

Մտածելով այդ երեկոյի մասին, չէի կարողանում հեռացնել իմ մտքից այն փաստը, որ պարզապես վերադասավորելով այդ հաճախորդի ակտիվները և թվերը՝ ես կարողացա ցույց տալ նրան, թե ինչ-

պես մարել բոլոր պարտքերը 7 տարուց պակաս ժամանակահատվածում: Ես տեսա, թե ինչպես դա ազդեց նրանց վրա. այդ մարդիկ հույսով լցվեցին: Ես սկսեցի ուսումնասիրել իմ հաճախորդների մեծ մասի տվյալները՝ ստուգելու համար, թե քանիսն էին համապատասխանում «7 տարուց պակաս ժամանակահատվածում պարտքերից ազատվելու» ծրագրին, և զարմացա՝ պարզելով, որ դա վերաբերում էր 85 տոկոսին: Բայց ո՞վ էր ասելու նրանց այդ մասին: Այն երեկոյից հետո, երբ ես խոսեցի այդ հաճախորդի հետ, և այն բանից հետո, երբ ուսումնասիրեցի իմ հին հաճախորդների բազմաթիվ տվյալները, ես հասկացա, որ միգուցե կարող էի սկսել իմ սեփական գործը և օգնել մարդկանց ազատվել պարտքերից՝ հետևելով իմ ծրագրին:

Այդ ժամանակ ինքս դեռ չէի ազատվել պարտքերից, բայց անկասկած, կարեկցանք էի զգում ֆինանսապես ճնշված մարդկանց հանդեպ, և այդ առաքելությունը շատ ավելի գրավիչ էր ինձ համար, քան կյանքի ապահովագրության փաթեթներ վաճառելը: Սկսեցի ցույց տալ իմ բոլոր հաճախորդներին նույն տեսակի տպագիր զեկույցներ, և բոլորը, առանց բացառության, ցնցված էին:

Իմ սեփական գործը սկսելու համար, ես պետք է լուծեի երկու խնդիր: Առաջինն այն էր, որ հաշվարկները ձեռքով կատարելը և հետո դրանք հաճախորդին ներկայացվող զեկույցի ձևի մեջ ձեռքով մուտքագրելը չափազանց շատ ժամանակ էր պահանջում: Եվ երկրորդը՝ ինչպե՞ս էի ես գումար աշխատելու դրանից: Ի վերջո, պայմանավորվեցի մի ծրագրավորողի հետ, և նա մի համակարգչային ծրագիր ստեղծեց, որով կարող էի ավելի արագ կազմել իմ ֆինանսական ծրագիրը: Ինչ վերաբերում էր իմ երկրորդ խնդրին, ես գիտեի, որ չէի կարող փող վերցնել մարդկանցից՝ նրանց պարտքերից ազատելու համար, նախևառաջ այն պատճառով, որ նրանք փող չունեին: Ես սկսեցի աղոթել դրա վերաբերյալ:

Մեկ օր մի փայլուն գաղափար ստացա: Ես իսկապես զգացի, որ Աստված գաղափար տվեց ինձ այն մասին, թե ինչպես օգնեմ մարդկանց՝ առանց նրանցից գումար ստանալու, և միևնույն ժամանակ եկամուտ ունենալ: Ըստ իմ ծրագրի, ես փնտրելու էի այն, ինչը անվանեցի կորած փող՝ այն միջոցները, որոնք հաճախորդն արդեն

ուներ, բայց որոնց մասին չգիտեր: Օրինակ՝ ես համեմատելու էի մեքենայի, տան, կյանքի և առողջության ապահովագրության վճարումների չափերը՝ խնայողություններ փնտրելով: Ես համեմատելու էի հիփոթեքային վճարումների չափերը՝ պարզելու համար, թե արդյո՞ք վերաֆինանսավորումն օգտակար կլիներ: Ես ստուգելու էի բազմաթիվ նման ոլորտներ, թեև անձամբ չէի աշխատել այդ ոլորտներում: Իմ հաճախորդի տանը ցույց էի տալու նրան իր հնարավոր խնայողությունները և առաջարկելու էի գտնել այնպիսի ֆինանսական կազմակերպություն, որը կխնայեր իր միջոցները, կամ էլ պետք է դիմեր իմ առաջարկած կազմակերպություններին: Հանկարծ ես հասկացա, որ կարող էի պարգևավճար ստանալ ֆինանսական կազմակերպություններից՝ իմ հաճախորդներին նրանց մոտ ուղղորդելու համար:

Ըստ էության, ես արդեն իսկ կատարում էի ամբողջ աշխատանքը. ես վաճառում էի իմ հաճախորդին տարբեր կազմակերպությունների ֆինանսական պրոդուկտ, իսկ այդ կազմակերպությունները պարզապես գրանցում էին նրանց: Այնպես որ, սկսեցի կապ հաստատել այն ֆինանսական կազմակերպությունների գործակալների և ներկայացուցիչների հետ, որոնք առաջարկում էի իմ հաճախորդներին, և հարցնում էի՝ արդյո՞ք նրանք պատրաստ էին պարգևավճար տալ ինձ ուղղորդումների համար: Բոլորի պատասխանն «այո» էր: Եվ ես սկսեցի զբաղվել դրանով: Ես դուրս եկա իմ աշխատանքից և հիմնադրեցի իմ ընկերությունը, որն օգնում է մարդկանց ազատվել պարտքերից: Իմ գործն առաջ գնաց և տվեց մեզ բավականաչափ եկամուտ, ինչը թույլ տվեց Դրենդային և ինձ ազատվել պարտքերից երկուս ու կես տարում: Մենք այնքա՜ն ոգեշնչված էինք (Եվ եթե դուք ցանկանում եք անվճար ֆինանսական ծրագիր ստանալ, զանգե՛ք 1-800-815-0818 հեռախոսահամարով: Մենք կազմում ենք այդ ծրագրերը մինչև օրս՝ 28 տարի անց):

Ամեն օրը նոր էր, քանի որ Աստված շարունակում էր ավելի ու ավելի բացահայտել, թե ինչպես էր գործում Իր Թագավորությունը: Իմ հաճախորդներից մեկին այցելելու ընթացքում Աստված խոսեց ինձ հետ այն մասին, որ վարձեի աշխատողներ և վերածեի իմ փոք-

րիկ գործն իսկական ընկերության: Ես աշխատողներ վարձեցի, և մեր գործը սկսեց բարգավաճել՝ հասնելով նորանոր բարձունքների: Ներածության մեջ ես պատմեցի, որ մենք սկսեցինք կանխիկ գումարով մեքենաներ գնել և կառուցեցինք մեր երազանքի տունը: Իմ նոր աշխատողների հետ ամենամսյա աշխատանքային հանդիպումների ժամանակ ես պատմում էի Աստծո Թագավորության մասին: Մարդիկ ձգտում էին աշխատել մեր ընկերությունում, քանի որ ցանկանում էին ավելին իմանալ Թագավորության մասին և սովորել, թե ինչպես կիրառեն դրա սկզբունքներն իրենց կյանքում նույնքան, որքան որ ցանկանում էին աշխատանք ստանալ:

Այն դասերը, որոնք Աստված ցույց էր տալիս ինձ, զարմանալի էին և, իհարկե, մեծ մասը ես սովորել եմ իմ ամենամյա որսորդության ժամանակ: Այն պատմությունները, որոնց ես ականատես եղա որսորդության ժամանակ, ամենաքիչը կարելի է ցնցող անվանել: Ես չէի հավատա դրանց, եթե չտեսնեի իմ աչքերով: Յուրաքանչյուր պատմություն ինչ-որ նոր բան սովորեցրեց ինձ Թագավորության մասին, ինչը նախկինում չգիտեի: Կարծում եմ՝ ես կկիսվեմ դրանցից մի քանիսով այս գրքում, բայց եթե դուք իսկապես ցանկանում եք կարդալ իմ որսորդական պատմությունները, կարող եք ձեռք բերել իմ *«Հավատքի որսորդություն»* գիրքն իմ ինտերնետային կայքից:

Հետևյալ պատմությունը տեղի ունեցավ մի քանի տարի անց այն բանից հետո, երբ ես որսացի իմ առաջին եղջերուին՝ օգտագործելով իմ նորագյուտ գիտելիքը Թագավորության մասին: Ինչպես արդեն պատմեցի, Աստված սովորեցրեց ինձ, թե ինչպես ցանեմ իմ եղջերուի համար և ստանամ այն աղոթելու պահին: Եվ առանց բացառության ես եղջերու եմ հնձել 30-45 րոպեում ամեն տարի: Ի դեպ, դա շարունակվում է արդեն 28 տարի: Ինչևէ, այդ տարի ես գնացի, ինչպես միշտ, արդեն լիովին վստահ, որ եղջերուն հայտնվելու է: Եվ իհարկե, մի քանի րոպեից տեսա մի եղջերու, որը հեռանում էր ինձնից և պատրաստվում էր մտնել իմ հարևանի հողատարածքը, որը գրեթե 200 մետրով հեռու էր ինձնից: Ես գիտեի՝ հենց որ եղջերուն անտառ մտներ, ես բաց կթողնեի նրան, սակայն համոզված էի, որ այդ եղջերուն իմն էր: Սա դեռ այն ժամանակ էր, երբ ես ոչինչ չգիտեի

արբալետով որսի, փռթկացնող սուլիչների և եղջերուներին թրխկոցներով գրավելու մասին: Ես գիտեի, որ այդ եղջերուն իմ հունձքն էր, բայց անօգնական կերպով դիտում էի, թե ինչպես էր նա պատրաստվում մտնել իմ հարևանի անտառային տարածքը: Բայց հանկարծ լսեցի իմ հոգում. «Հրամայի՛ր այդ եղջերուին գալ քեզ մոտ»: Ի՞նչ: Ի՞նչ է նշանակում հրամայել եղջերուին գալ ինձ մոտ: Ես համոզված չէի, և այդ պատճառով ասացի դա բարձրաձայն, բայց ոչ այնքան բարձր, որ եղջերուն լսեր ինձ.

– Եղջերո՛ւ, ես հրամայում եմ քեզ կանգ առնել, շրջվել, գալ և կանգնել իմ ծառի տակ:

Ես որս էի անում նետով ու աղեղով, և ավելացրի, որ եղջերուն կանգներ այն ծառի տակ, որի վրա իմ որսորդական դիտանոցն էր, քանի որ ուզում էի, որ իմ եղջերուն իսկապես շատ մոտիկ լիներ: Ես մտածեցի, որ եթե հավատքը բերելու է այդ եղջերուին ինձ մոտ, նշանակում է՝ հավատքը կարող է նաև կանգնեցնել նրան իմ ծառի տակ, որտեղից ես կարող էի դիպուկ հարված հասցնել:

Զարմանալիորեն, երբ ես ասացի դա, եղջերուն մի ակնթարթում կանգ առավ, շրջվեց և եկավ ուղիղ դեպի իմ ծառը: Ես ցնցված էի, որ նա ետ եկավ այդ 180 մետրը և կանգնեց ուղիղ իմ ծառի տակ, և այո՛, ուղիղ իմ դիտանոցի տակ, որն ընդամենը 3.5 մետր բարձր էր նրանից: Ես չունեի քողածածկող հագուստ, բուրանյութ կամ փռթկացնող սուլիչ. միայն ես էի և Աստված, սակայն այդ եղջերուն կանգնած էր ուղիղ իմ ներքևում: Ես տուն տարա եղջերուին մեծ ուրախությամբ, բայց չէի կարող մոռանալ այն, ինչ տեսա: Մի՞թե եղջերուն եկավ ինձ մոտ, որովհետև ես խոսեցի և հրամայեցի նրան: Անշո՛ւշտ, այդպիսի տպավորություն էր:

Այն ագարակը, որը մենք վարձում էինք Օհայոյում, 36 հեկտար տարածք էր զբաղեցնում: Այն ընդգրկում էր անտառի մի մասը, մացառուտներով ծածկված առվակները և դաշտերը: Ձմեռային ամիսներին, և հատկապես երբ գետնի վրա ձյուն էր նստած, մենք սիրում էինք նապաստակ որսալ: Օհայոյում նախշավոր վզերով փասիանների որսաշրջանը սկսվում էր նապաստակների որսաշրջանի հետ,

բայց մեր ագարակում մենք հազվադեպ էինք փասիան տեսնում:

Մեկ օր մենք գնացինք առվակի մոտ՝ նապաստակ որսալու, երբ հանկարծ մի արու փասիան հայտնվեց: Ես արագորեն ուղղեցի հրացանս այդ թռչնի վրա և կրակեցի: Երբ քաշեցի ձգանը, գիտեի, որ վրիպել եմ, և միայն վնասեցի թռչնի թևը: Փասիանն ընկավ. այնուամենայնիվ, գետնին բախվելուն պես, այդ թռչունը սկսեց փախչել ամբողջ ուժով: Փասիանը կարող է վազել ժամում մինչև 55 կիլոմետր արագությամբ, և այս թռչունն անում էր այն, ինչ կարող էր՝ դա ապացուցելու համար: Գետինը ծածկված էր նոր եկած ձյունով, և թռչունը վազում էր մի փոքր թեքություն ունեցող բաց արոտավայրով. այնպես որ, ես հեշտորեն տեսնում էի նրա փախուստի ամեն մի քայլը:

Մի պահ ես անօգնական կանգնած էի՝ մտածելով, որ այդ թռչունն ազատվելու էր ինձնից, բայց իմ հոգում հանկարծ օծություն զգացի: Ես գիտեի, թե ինչ էր կատարվելու, երբ հրամայեցի եղջերուին կանգնել և գալ ինձ մոտ: Ես զգացի, որ պետք է անեի նույնը, և բարձրաձայն բղավեցի.

– Փասիա՛ն, Հիսուսի անունո՛վ, ԿԱՆԳՆԻ՛Ր:

Նույն ակնթարթին տեսա, որ թռչունը դադարեց առաջ շարժվել: Ես պարզորեն տեսնում էի ամբողջ դաշտը, և փասիանը կանգ առավ հենց այն պահին, երբ բղավեցի: Թիմը՝ իմ որդին, ինձ հետ էր, և նա ասաց.

– Հայրի՛կ, փասիանը կանգ առավ այն պահին, երբ դու բղավեցիր:

Բայց որտե՞ղ էր նա: Թիմը և ես գնացինք դաշտ՝ նրա հետքերով, և թռչունն այդտեղ էր՝ պարզապես նստած ձյան վրա: Նա գլուխը կիսով չափ ձյան մեջ էր մտցրել, բայց ամբողջ մարմնով պարզապես նստած էր ձյունոտ գետնին: Նա հայտնվել էր խոտերի արանքում, և դա էր պատճառը, որ մենք չէինք տեսնում նրան: Մի՞թե նա սատկել էր: Ես բարձրացրի թռչնին, և նա անմիջապես սկսեց ուժգնորեն թափահարել թևերը ու սուր ճիչեր արձակել: Այդ թռչունը լիովին ողջ էր: Երբ մենք կտրեցինք նրա վիզը, տեսա, որ ընդամենը մի թեթև քերծել էի թևը: Թիմը և ես զարմացած նայեցինք իրար. ոչ ոք չէր հավատա մեր տեսածին, ո՛չ ոք:

Օհայոյում, ինչպես և Օկլահոմայում, կար երկու եղնիկի սահմա-

նափակում՝ արու կամ էգ, սակայն ամեն տարի կարելի էր որսալ միայն մեկ եղջերուի: Օհայոն փորձում էր ցածր պահել եղնիկների գլխաքանակը նահանգում՝ թիրախավորելով էգերին: Այնպես որ, ես սերմ էի ցանում եղջերուի և եղնիկի համար, և ժամացույցի աշխատանքի պես եղջերուն հայտնվում էր առաջին իսկ օրը՝ 30 կամ 40 րոպե անց, իսկ եղնիկը հայտնվում էր դրանից հետո: Մեկ անգամ ես հասկացա. «Չէ՞ որ եղնիկները գալիս են այն հերթականությամբ, որով ես գրի եմ առնում դրանք, երբ ցանում եմ իմ սերմը»: Մի՞թե դա ճիշտ էր: Իսկ ի՞նչ կլիներ, եթե ես փոխեի հերթականությունը: Սովորաբար ես ցանում էի եղջերուի և եղնիկի համար, և նրանք հայտնվում էին ճիշտ այդ հերթականությամբ: Հաջորդ անգամ ես ցանեցի եղնիկի և եղջերուի համար, ոչ թե եղջերուի և եղնիկի, և կենդանիները կրկին հայտնվեցին, բայց այս անգամ առաջինը եղնիկն էր, իսկ հետո՝ եղջերուն: Ես փոխում էի այս հերթականությունը մի քանի տարի շարունակ՝ ստուգելով իմ տեսությունը, և այն գործում էր ամեն անգամ: Երբ հասկացա այս ամենը, ես այնքա՛ն զարմացա և հիացա Աստծո Թագավորությամբ, նաև՝ թե որքան քիչ գիտեմ դրա մասին: Մեկ բան հաստատ էր. Տերը ցույց էր տալիս, որ ես շատ ավելի մեծ իշխանություն ունեի իմ կյանքի ընթացքի վրա, քան երբևէ մտածել էի:

Որպես կողմնակի նշում՝ այժմ 2015 թվականի եղնիկների որսաշրջանն է: Ես ցանել եմ մեկ չորսձյուղանի կամ ավելի մեծ կոտոշներով եղջերուի համար, մեկ մեկամյա եղնիկի համար և մեկ վեցամսեկան եղջերուի համար՝ որպես կերակուր: Նման ժամացույցի աշխատանքին, մի վեցձյուղանի կոտոշներով եղջերու եկավ անմիջապես իմ ծառի մոտ: Հաջորդ անգամ ես որսացի մեկ մեկամյա եղնիկի, որը միակն էր, որ մոտեցավ իմ ծառին: Ես գիտեմ, որ իմ հաջորդ որսի ժամանակ հայտնվելու է վեցամսեկան եղջերուն: Ես գիտեմ, որ սա անմտություն է թվում. ես ուղղակի պատմում եմ այն, ինչ կատարվում է իմ կյանքում:

Բայց կար եղնիկի որսի մի դեպք, որն այնքա՛ն պարզ դարձրեց այդ ամենն ինձ համար, որ նույնիսկ վախեցա: Ես ցանել էի իմ սերմը մեկ չորսձյուղանի կամ ավելի մեծ կոտոշներով եղջերուի համար

և մեկ վեցամսեկան եղջերուի համար (վեցամսեկան եղջերուն համարվում է եղնիկի պես, քանի որ նրա կոտոշները մորթից ցածր են և ընդամենը նման են փոքրիկ կոճակների): Աղեղով որսաշրջանի սկզբում ես սովորականի պես որսի գնացի և որսացի մի ութճյուղանի կոտոշներով եղջերու 15 րոպեում: Ես համոզված էի, որ հաջորդ անգամ վեցամսեկան եղջերու էի որսալու:

Երկու շաբաթ անց ես կրկին գնացի որսի և, մինչ նստած էի ծառի վրա գտնվող իմ դիտանոցում, տեսա մի գեղեցիկ ութճյուղանի կոտոշներով եղջերու, որն անցնում էր արոտավայրով՝ ինձնից մոտավորապես 270 մետր հեռավորության վրա: Նա գալիս էր ուղիղ իմ ծառի մոտ: Չշեղվելով իր ճանապարհից, նա կտրեց-անցավ ամբողջ դաշտը, հասավ իմ ծառի տակ և կանգնեց գրեթե 20 վայրկյան: Դրանից հետո նա շրջվեց և ետ գնաց այդ արոտավայրով՝ նույն շավիղով, որով եկել էր: Հիշեք՝ Օհայոյում օրինական էր որսալ միայն մեկ եղջերու, իսկ ես արդեն որսացել էի ութճյուղանի կոտոշներով մի եղջերու: Այնպես որ, ես պարզապես պետք է նստեի և հետևեի այդ եղջերուին, բայց չէի կարող կրակել: Ես լիովին շփոթվեցի: Սա առաջին անգամն էր, երբ որսի էի գնացել, և ինձ մոտեցած եղնիկն այն չէր, ինչի համար ես սերմ էի ցանել: Ահա, թե ինչպես վարվեց այդ եղջերուն. նա անցավ ամբողջ դաշտը և կանգնեց ուղիղ իմ ծառի տակ, իսկ հետո վերադարձավ նույն շավղով, որով եկել էր, պարզապես տարօրինակ էր: Այն ասես նշված լիներ իմ ցուցակում: Ես սպասեցի ամբողջ առավոտ, բայց ոչ մի վեցամսեկան եղջերու այդպես էլ չհայտնվեց:

Այդ երեկո ես իմ գրասենյակում էի և անհանգստացած էի այդ ամենով: Ինչ-որ բան սխալ էր. պետք է գար իմ նշած վեցամսեկան եղջերուն: Եվ ինչո՞ւ այդ ութճյուղանի կոտոշներով եղջերուն եկավ այդ կերպով: Իմ գրասենյակում նստած՝ ես սկսեցի աղոթել Հոգով՝ խնդրելով Աստծուն ցույց տալ, թե ինչ էր տեղի ունեցել: Ես լսեցի, թե ինչպես Նա ասաց. «Նայի՛ր քո սերմին»: Նայեմ իմ սերմի՞ն: Ես գիտեի, թե ինչի համար էի ցանել: Իմ բանկը տալիս է ինձ իմ չեկերի պատճենները. այնպես որ, ես հանեցի իմ քաղվածքը և ստուգեցի այն չեկը, որը գրել էի, երբ ցանել էի իմ եղնիկների համար: Ես մտածում էի, որ ցանել էի իմ սերմը երկու եղջերուի համար, որոնցից մեկը

չորսաձյուղանի կամ ավելի մեծ կոտոշներով եղջերու է, իսկ մյուսը՝ վեց ամսական եղջերու, որը համարվում է եղնիկի պես, ինչպես արդեն ասացի: Բայց ահա թե ինչ էր գրված այդ չեկի վրա. «Երկու եղջերու՝ չորսաձյուղանի կամ ավելի մեծ կոտոշներով, մեկ վեց ամսական եղջերու»: Թեև ես նկատի ունեի երկու եղջերուի, մեկը՝ չորսաձյուղանի կամ ավելի մեծ կոտոշներով, իսկ մյուսը՝ վեց ամսական, ես այդպես չէի գրել: Չեկի վրա գրված էր. «Երկու եղջերու՝ չորսաձյուղանի կամ ավելի մեծ կոտոշներով, և մեկ վեց ամսական եղջերու»: Քանի՞ կենդանի է ստացվում: Երեք, և երկրորդը չորսաձյուղանի կամ ավելի մեծ կոտոշներով էր, ինչպես և առաջինը: Երբ տեսա դա, ես ցնցված էի: Երկրորդ ութաձյուղանի կոտոշներով եղջերուն նույնպես նշված էր: Նա պետք է լիներ այդտեղ՝ Թագավորության օրենքի շնորհիվ: Ես վեր ցատկեցի, սկսեցի գոչել և վազել տնով մեկ: ՁԱՐՄԱՆԱԼԻ՛ է:

Միևնույն ժամանակ այն, ինչ ես հասկացա, վախեցրեց ինձ: Եթե այն, ինչ նոր հասկացա, ցույց է տալիս, թե որքան ճշգրիտ է Աստծո Թագավորությունը, այդ դեպքում, ես պետք է ավելի զգույշ լինեի: Ես ակամա սկիզբ էի դրել ինձ համար անցանկալի իրադարձությունների: Այնուամենայնիվ, դրանք տեղի ունեցան, քանի որ ես արել էի դա համաձայն հոգևոր օրենքի: Հանկարծ գիտակցեցի, որ բազմաթիվ մարդիկ, որոնց թվում նաև ես եմ, գտնվում են իրենց համար անցանկալի իրավիճակներում, քանի որ հենց իրենք են սկիզբ դրել այդ իրավիճակներին: Հիշե՛ք. Իր խոսքերով Հիսուսը չորացրեց թզենին և հարություն տվեց Ղազարոսին գերեզմանից: Երկու դեպքում էլ օգտագործվեց միևնույն օրենքը՝ տարբեր նպատակներով: Հաջորդ անգամ, երբ ես գնացի որսի, եկավ վեցամսեկան եղջերուն՝ համաձայն իմ ցանքի:

Այդ իրադարձությունների շարքը զարմացրեց ինձ և անասելի ազդեցություն ունեցավ Թագավորության մասին իմ պատկերացման վրա: Այժմ ես անշեղորեն համոզված էի, որ Թագավորությունն իրապես ճշգրիտ է: Բայց մի՞թե դա պետք է զարմացնի մեզ: Բնության յուրաքանչյուր օրենք այս երկրի վրա նույնքան ճշգրիտ է: Կարծում եմ՝ ես երբեք չէի հասկացել, որ հոգևոր օրենքները գործում են ֆիզիկական օրենքների պես, որոնք կյանքի են կոչվել հոգևոր իրակա-

նությունից: Ես պետք է որ կռահեի դա, բայց չէի կռահել: Բայց այժմ գիտեմ, որ Թագավորությունը ճշգրիտ է, շատ ճշգրիտ:

Լավ, քանի որ դուք խնդրում եք, ես կպատմեմ ևս մեկ որսորդական պատմություն (ես սիրում եմ այն դասերը, որոնք սովորել եմ որս անելիս. այնպես որ, դուք պետք է համբերատար լինեք ինձ հետ): Երբ հասկացա, թե որքան ճշգրիտ է Թագավորությունը, ես որոշեցի է՛լ ավելի ճշգրիտ փորձ կատարել: Մի տարի որոշեցի ցանել յոթճյուղանի կոտոշներով եղջերուի համար: Սովորաբար եղջերուն ունենում է ճյուղերի նույն թիվը կոտոշների երկու կողմերում: Չորսճյուղանի կոտոշներով եղջերուն ունի երկու ճյուղ ամեն կոտոշի վրա, իսկ ութճյուղանի կոտոշներով եղջերուն ունի չորս ճյուղ ամեն կոտոշի վրա: Սովորաբար, եղջերուի երկու կոտոշների վրա նույն թվով ճյուղեր են լինում: Բայց շատ անգամներ եղջերուի կոտոշների երկու կողմերի ճյուղերը հավասար չեն լինում՝ տարբեր պատճառներով: Սակայն, ինչպես ասացի, սովորաբար երկու կոտոշների ճյուղերի թիվը նույնն է լինում:

Ես ցանկանում էի կիրառել իմ հավատքը որոշակի և ոչ սովորական մի բանի համար և, կարելի է ասել, որ ես փորձ էի կատարում: Ես արդեն գիտեի, որ որքան ճշգրիտ եք լինում, այնքան ստիպված եք լինում երկար սպասել և հստակ ցուցումներ ստանալ Սուրբ Հոգուց ձեր խնդրանքի իրականացման համար: Այնպես որ, ես գիտեի, որ չպետք է որսի գնայի որսաշրջանի բացման օրը: Իրականում, ես սպասեցի ամբողջ հոկտեմբեր ամիսը և իմ հոգում գիտեի. «Ո՛չ, նա դեռ այստեղ չէ»: Դա հիասթափեցնող էր. աշնան գույները պատել էին անտառը, և ես շատ էի ուզում որսի գնալ, բայց դեռ սպասում էի:

Եվ հանկարծ դա տեղի ունեցավ: Մի երեկո, երբ նստած էի հյուրասենյակում և խոսում էի կնոջս ծնողների հետ, որոնք այցելել էին մեզ Զորջիա նահանգից, ես լսեցի հետևյալը. իմ որսի օրը հաջորդ առավոտյան էր: Յոթճյուղանի կոտոշներով եղջերուն գալո՛ւ էր: Ես ասացի ընտանիքիս, որ հաջորդ օրը որսալու էի իմ եղջերուին: Երբ դեռ չէր լուսացել, ես խիստ ոգեշնչված արթնացա և անտառ գնացի: Ես որս էի անելու արբալետով, ծառի վրա գտնվող իմ որսորդական դիտանոցից, որից տեսնում էի իմ անտառին սահմանակից չորս

հեկտար զբաղեցնող ճահճուտը: Դա հրաշալի դիտանոց է: Նստած այդտեղ, կարելի է տեսնել թռչող բադերի, իսկ ճահճուտի եզրերում նշմարվում են մշկամկներ և նույնիսկ ջրաքիսներ: Ճահճուտի եզրերին թփուտներ են, և դա այն հիմնական վայրն է իմ հողատարածքում, որտեղ կարելի է եղնիկներ տեսնել: Ես սպասեցի իմ դիտանոցում, բայց ոչինչ տեղի չունեցավ: Սպասեցի 45 րոպե, իսկ հետո՝ մեկ ժամ, և ոչինչ:

ԱՅԺՄ ԵՍ ԱՆՇԵՂՈՐԵՆ ՀԱՄՈԶՎԱԾ ԷԻ, ՈՐ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱՊԵՍ ՃՇԳՐԻՏ Է:

Ես լսեցի մեքենայի դռների բացվելու և փակվելու ձայներ դաշտի մյուս կողմում՝ իմ տան մոտ. ես գիտեի՝ Դրենդայի ծնողներն էին, որոնք պատրաստվում էին Ձորջիա վերադառնալ: Ես խոստացել էի նախաճաշել նրանց հետ մինչև նրանց մեկնելը, և ես էի նախաճաշը պատրաստողը: Իմ սկզբնական ծրագիրն այսպիսին էր. վաղ առավոտյան ես որսալու էի իմ եղջերուին, իսկ հետո վերադառնալու էի տուն՝ նախաճաշելու: Բայց եղջերուն դեռ չկար, և ես դժկամորեն իջա ծառի վրայի իմ դիտանոցից ու քայլեցի դեպի տուն: Ճանաչելով իմ հողատարածքը, ես գիտեի, որ եղջերուն կարող էր գալ ճահճուտի տարածք ավելի ուշ առավոտյան, քանի որ, ինչպես արդեն նշեցի, դա հիմնական վայրն էր, որտեղ նրանք հանդիպում էին: Իհարկե, ես հասկանում էի, որ եղջերուն կարող էր գալ ամեն րոպե, բայց այլևս չէի կարող սպասել: Ես ուղղակի ստիպված կլինեի գալ այդտեղ մեկ այլ առավոտ:

Ես ողջունեցի բոլորին և սկսեցի նախաճաշ պատրաստել: Իմ տանը ես միշտ ինքս եմ նախաճաշ պատրաստում, որքան հիշում եմ՝ այդպես եմ արել: Ես ունեմ ամբողջական հասկերից վաֆլիներ պատրաստելու իմ բաղադրատոմսը և, իմ կարծիքով, դրանք շատ համեղ են ստացվում: Ձուն, նրբերշիկը և պանրով վարսակածավարի շիլան լրացնում են ճաշացանկը, բայց գլխավոր ուտեստը, որը գերազանց է դարձնում իմ պատրաստած նախաճաշը, թխկու իսկական օշարակն է: Օհայոն թխկու օշարակի նահանգ է, և բոլորը այս տարածքում պատրաստում են թխկու օշարակ և վաճառում են: Ես

թույլ չեմ տալիս կեղծ օշարակներ իմ տանը, միայն իսկականը: Եվ այսպես, ես նախաճաշ էի պատրաստում, իսկ մեր խոհանոցի պատուհանը բացվում է դեպի մեր անտառը և ճահճուտը: Հանկարծ տեսա մի եղջերուի, որն անցնում էր դաշտը՝ գնալով դեպի ճահճուտը:

– Սա իմ եղջերո՛ւն է,- բղավեցի: Ես պատվիրեցի մյուսներին շարունակել նախաճաշի պատրաստումը, որովհետև ես գնում էի՝ այն որսալու:

Հետևելով այլ եղջերուների, որոնք անցնում էին իմ դաշտով, ես գիտեի, թե ուր էր գնում այդ եղջերուն, և այդտեղ հասնելու համար նա պետք է անցներ ուղիղ իմ դիտանոցի ներքևով: Ես հասկացա, որ եթե հասնեի իմ դիտանոցին ճահճուտի կողմից և կարողանայի ծառը բարձրանալ, մինչև որ եղջերուն հասներ այդտեղ, կկարողանայի կրակել նրա վրա: Այդտեղ հասնելը և ծառը բարձրանալը, մինչև եղջերուի գալը, դժվար կլիներ, և ես պետք է դուրս գայի ՀԵՆՑ ՀԻՄԱ: Ես դուրս վազեցի՝ վերցնելով իմ արբալետը: Վազեցի դաշտի եզրով այնքան անաղմուկ, որքան կարող էի, հասա իմ դիտանոցի մոտ և սկսեցի դանդաղորեն բարձրանալ: Մինչև այդ պահը ամեն ինչ բարեհաջող էր ընթանում, և ես դեռ չէի տեսնում եղջերուին:

Երբ տեսա, որ եղջերուն անցնում էր ճահճուտով և գալիս էր ուղիղ դեպի իմ դիտանոցը, ես հասա իմ դիտանոցին և նստեցի: Եղջերուն ուշադրություն չէր դարձնում ոչնչի՝ բացի այն եղնիկից, որի հետքերով գնում էր. նա ո՛չ տեսնում էր ինձ, ո՛չ զգում էր իմ հոտը: Եղնիկն անցել էր իմ դիտանոցի ներքևով և գնացել էր դեպի ճահճուտը, և եղջերուն գնում էր նույն շավղով: Հազիվ թե կարողանայի ավելի կատարյալ դարան խնդրել: Նա գրեթե 20 մետր հեռու էր ինձնից. ես ուշադրությամբ նշան բռնեցի իմ արբալետով և բաց թողեցի նետը: Այն պահին, երբ նետը դուրս թռավ, հասկացա, որ վրիպել եմ. չէ՞ որ ես գրեթե շնչահեղձ էի լինում դաշտը ճահճուտի եզրով շրջանցելու պատճառով, քանի որ փորձում էի եղջերուից շուտ տեղ հասնել:

Ես վհատվեցի՝ տեսնելով, որ նետը շատ ցածր էր դիպչել կենդանուն, և հասկացա, որ մահացու չէի խոցել նրան: Հարված ստանալով՝ եղջերուն ցատկեց ճահճուտի եզրին գտնվող խիտ թփուտների

մեջ և դանդաղորեն հեռացավ իմ տեսադաշտից: Նախորդ որսերի ժամանակ ես տեսել էի, որ նետով խոցվելու դեպքում երբեմն եղնիկները չեն հասկանում, թե ինչ է տեղի ունենում: Հաճախ նրանք պարզապես հեռանում են, եթե չեն տեսել ձեզ կամ չեն զգացել ձեր հոտը: Ես նույնպես գիտեի, որ սովորաբար վիրավոր եղնիկները պառկում են թփուտների մեջ և շատ հեռու չեն գնում: Քանի որ եղջերուն չէր տեսել ինձ, նա հենց այդպես էր վարվում: Ես աննկատ իջա իմ ծառի վրայի դիտանոցից և գնացի տուն այն ճանապարհով, որով եկել էի՝ մեծ կիսաշրջան գծելով, որպեսզի չխրտնեցնեի նրան:

Երբ տուն հասա, բոլորը հարցրին, թե ինչ է կատարվել, և թե արդյո՞ք ես որսացել եմ եղջերուին: Ես պատմեցի կատարվածը և խնդրեցի որդիներիս օգնել ինձ դուրս բերել եղջերուին թփուտներից, որպեսզի կարողանայի ևս մեկ անգամ կրակել նրան: Մենք շրջապատեցինք թփուտները և սկսեցինք դանդաղորեն քայլել դրանց միջով: Հանկարծ տեսա, որ որդիներիցս մեկը խրտնեցրեց եղջերուին, և նա սկսեց ցատկել բարձր թփուտների մեջ: Նա իմ դիմացն էր՝ գրեթե 60 մետր հեռավորությամբ, և անցնում էր իմ աջ կողմից դեպի ձախը:

Հանկարծ եղջերուն տեսավ իմ մյուս որդուն դաշտի եզրին: Հասկանալով, որ դա իրեն խրտնեցնող մարդը չէր, և չիմանալով, թե որ կողմ վազելն էր ապահով, նա մի պահ կանգ առավ՝ արագորեն իրավիճակը գնահատելու համար: Ես գիտեի, որ դա իմ միակ հնարավորությունն էր՝ նրան որսալու համար: Նա դեռ չէր տեսել ինձ: Այժմ նա կանգնած էր ուղիղ իմ դիմացը՝ 60 մետր հեռավորության վրա, և նայում էր որդուս: Արբալետի ուժը բավական էր՝ եղջերուին այդ հեռավորությունից սպանելու համար, բայց նետը կարող էր իջնել մինչև 50 սանտիմետր՝ հեռավորության պատճառով: Նախկինում ես երբեք նետ չէի արձակել այդ հեռավորությունից, և իմ արբալետը նոր 80 կիլոգրամ հարվածային ուժով արբալետներից չէր, որը կարող է նետ արձակել վայրկյանում 120 մետր արագությամբ: Իմ արբալետի ճշգրտությունը սահմանափակվում էր 30-35 մետրով:

Քանի որ եղջերուն կանգնած էր ուղիղ իմ առջևում, ես որոշեցի կրակել:

Բարձրացրի իմ արբալետը, մոտավորապես նշան բռնեցի և արձակեցի նետը: Ես տեսա, թե ինչպես նետը թռավ դեպի եղջերուն և, ի զարման ինձ, խոցեց նրա վիզը: Անցնելով եղջերուի վզի միջով (ներողություն բոլոր մանրամասների համար), նետը դուրս եկավ նրա վզի մյուս կողմից, մինչ նա փախուստի էր դիմում: Նա փախավ թփուտների մեջ, և ես չտեսա, թե որ կողմ գնաց: Ես սկսեցի դանդաղորեն քայլել դեպի թփուտների այն մասը, որում եղջերուն անհայտացավ: Նա այդտե՛ղ էր: Նետը խոցել էր նպատակակետը, և եղջերուն իմն էր:

Երբ որդիս՝ Թիմը, միացավ ինձ, ինձ ավելի շատ հետաքրքրում էին եղջերուի կոտոշները, քան ցանկացած այլ բան: Ես դեռ չէի հասցրել հաշվել դրանց ճյուղերը, բայց հաշվելով, մենք տեսանք, որ դրանք յոթ ճյուղ ունեին: Ավելի ուշադիր նայելով՝ տեսանք, որ այդ եղջերուն իրականում ութճյուղանի կոտոշներ ուներ, բայց ճյուղերից մեկը կոտրվել էր, և այն յոթճյուղանի էր դարձել: Թիմը և ես երկյուղածությամբ կանգնեցինք և փառք տվեցինք Տիրոջը: Թագավորությունը լիովին զարմանալի՜ էր: Այդտեղ կանգնած՝ Թիմը և ես մտածեցինք. «Ո՞վ կհավատա մեզ: Մի՞թե կան մարդիկ, որոնք գիտեն, որ Թագավորությունը գործում է այս կերպով»:

Կարծում եմ՝ դուք ամեն ինչ հասկացաք: Թագավորությունը գործում է խիստ ճշգրիտ օրենքներով, որոնք որոշված են, և կարելի է վստահ լինել, որ դրանք կգործեն նույն կերպով ամեն անգամ: Սկզբում ես անչափ ոգեշնչվեցի՝ հասկանալով, որ այդ օրենքները գործում են ցանկացած բնագավառում, ներառյալ ֆինանսականը: Ես կարող էի սովորել այդ օրենքները: Ես կդառնայի հոգևոր գիտնական և կհասկանայի, թե ինչպես էր գործում Թագավորությունը: Եվ Աստված կօգներ ինձ դրանում:

ԳԼՈՒԽ 2

ԿԱՊՈՒՅՏ ՄՇՈՒՇԸ

Երբ Աստծո Թագավորությունը սկսեց գործել Դրենդայի և իմ կյանքում, մենք լիովին ազատվեցինք պարտքերից և ուզում էինք պատմել բոլորին այն, ինչ սովորել էինք: Այն ընթացքում, երբ հիմնեցինք մեր եկեղեցին, և ես ղեկավարում էի մեր ձեռնարկությունները, մենք պատմում էինք այդ մասին նրանց, ովքեր ցանկանում էին լսել: Իմ հոգում զգում էի, որ կար մեկ այլ բան, բայց չգիտեի՝ ինչ, սակայն գիտեի, որ կար ավելին, որ Աստված դրդում էր ինձ անել. ներկայացնել մարդկանց Թագավորությունը:

Ամբողջ 2005 թվականին հոգումս մղում էի զգում անցկացնել մի բան, ինչը ես անվանելու էի ֆինանսական հեղափոխության համաժողով՝ հինգ հավաքույթից բաղկացած մի շարք, որոնց ընթացքում, ինչպես կարծում էի, ժամանակ կունենայի ներկայացնել Աստծո Թագավորության ֆինանսական սկզբունքները, որոնք փոխեցին իմ կյանքը: Ես մեծացել եմ Մեթոդիստական եկեղեցում, որտեղ մենք երբեմն մեկ շաբաթ տևողությամբ արթնության հավաքույթներ էինք անցկացնում: Ես հենց այդ ձևաչափի հավաքույթներ էի տեսնում իմ հոգում. հինգ դաս, որոնց ընթացքում ես ժամանակ կունենայի ծանոթացնել մարդկանց այն հասկացություններին և սկզբունքներին, որոնք Աստված սովորեցրեց ինձ ֆինանսական ոլորտում: Մինչև այդ պահը ես երբեք չէի համակարգել այդ սկզբունքները: Բայց իմ հոգում շարունակ տեսնում էի ինձ ֆինանսների մասին հինգ դասից բաղկացած հավաքույթներ անցկացնելիս:

Մինչ աղոթում էի դրա վերաբերյալ, հանդիպեցի Լարիին՝ իմ ընկերներից մեկին, որին երկար ժամանակ չէի տեսել: Նա պատմեց ինձ Ալբանիայում կայանալիք մի համաժողովի մասին, որն ինքն էր կազմակերպում, և հրավիրեց ինձ քարոզել այնտեղ: Լարին գրեթե 12 տարի միսիոներ էր Ալբանիայում և մեծ ազդեցություն էր թողնում այդ երկրում: Այդքան հեռու գնալու միտքը նոր էր ինձ համար: Ես ընդհանրապես շատ չէի ճանապարհորդել. ոչ մի անգամ չէի եղել Ալբանիայում և նույնիսկ չգիտեի, թե որտեղ էր գտնվում: Լարին խրախուսեց ինձ՝ ասելով, որ համազգային համաժողով է կազմակերպել, որտեղ լինելու են այդ երկրի հովիվներից շատերը: Նա կարծում էր, որ իմ գիտելիքն Աստծո Թագավորության ֆինանսների վերաբերյալ օգտակար կլիներ նրանց: Լարին ասաց, որ կտրամադրի ինձ երկուերեք հավաքույթ համաժողովին կիսվելու համար: Թեև դա հինգ դաս չէր, ես, միևնույն է, անհամբեր սպասում էի, որ սովորեցնելու էի այդ մասին ինձ տրված մի քանի հավաքույթի ընթացքում: Ես պատասխանեցի, որ կցանկանայի գալ:

Երբ հասա Ալբանիա և իջա ինքնաթիռից, Լարին ողջունեց ինձ զարմանալի կերպով.

– Գա՛րի,- ասաց նա,- քարոզիչներից մեկը չեղարկել է իր հրավերը վերջին պահին, և դու հինգ հավաքույթ ես անցկացնելու:

Իմ սիրտը թրթռաց: Այո՛, դա Աստծուց էր, և այժմ ես տեսնելու էի, թե ինչպես էր ստացվելու այն, ինչ տեսել էի իմ հոգում: Ես վերցրել էի ինձ հետ իմ նշումները, բայց չէի համակարգել դրանք հինգ դասի ձևաչափով: Այնպես որ, ամեն օր ես սովորեցնում էի, իսկ հետո Հոգով աղոթում էի և կազմում հաջորդ դասի նշումները: Ամեն հավաքույթին օծությունը պարզապես աներևակայելի էր:

Մինչև առաջ անցնելը, պետք է ասեմ, որ Ալբանիան անչափ աղքատ երկիր էր այն ժամանակ, երբ ես գնացի այնտեղ: Միջին ամսական աշխատավարձը մոտավորապես 500 դոլար էր, և կաշառակերությունն այդ երկրի կենսաոճն էր: Ես չգիտեի, թե ինչպես նրանք կընդունեին, երբ սովորեցնեի ֆինանսների մասին: Ես գիտեի, որ Խոսքը գործում է բոլորի համար, բայց ինձ համար դա նոր

փորձառություն էր: Առաջին հավաքույթին սովորեցնելիս ես հակառակության պատնեշ էի զգում: Արդեն երկրորդ հավաքույթին զգում էի մարդկանց հոգևոր քաղցը և տեսնում էի նրանց դեմքերից, թե ինչպես էր հավատքն աճում, երբ լսում էին Թագավորության բարի լուրը: Ամեն օր հավաքույթի ընթացքում մարդիկ ավելի ու ավելի ուրախ էին դառնում, և կարող եմ ասել, որ նրանք ոգեշնչված էին Աստծո Թագավորությամբ:

Վերջին երեկոյան հավաքույթից առաջ, որին ես պետք է սովորեցնեի, Տերը խոսեց ինձ հետ, որ ես պետք է զոհաբերություն հավաքեմ տեղական եկեղեցիների համար: Ես վստահ չէի դրանում, քանի որ, նախևառաջ, ե՛ս չէի այդ համաժողովի կազմակերպիչը, և երկրորդը՝ չգիտեի, թե ինչպես մարդիկ կարծագանքեին: Լարին և ես ստիպված էինք վճարել տեղական հովիվների ճանապարհի և կացության ծախսերի մեծ մասը, միայն որպեսզի նրանք մասնակցեին այդ համաժողովին: Ես խոսեցի Լարիի հետ այդ մասին, և նա ասաց, որ ես կարող եմ զոհաբերություն հավաքել:

Այնպես որ, վերջին հավաքույթի ժամանակ ես զոհաբերություն հավաքեցի համաժողովի ծախսերի համար, և օծությունն այնքա՜ն ուժգին էր, որ հազիվ էի կանգնած մնում: Բոլորը դահլիճում պարում և գոչում էին՝ բերելով իրենց զոհաբերությունները: Կարգուկանոնի ծառայողները, որոնք պահում էին այն պարկերը, որոնց մեջ մարդիկ գցում էին իրենց գումարը, լաց էին լինում և հազիվ էին կանգնած մնում: Նախկինում ես երբեք նման բան չէի տեսել. ամեն դեպքում, ո՛չ զոհաբերություն հավաքելիս: Տեսնելով, թե ինչպես էին մարդիկ պարում և բացականչում ուրախությունից՝ տալով իրենց զոհաբերությունները, ես հուզվում էի՝ և՛ դահլիճում ներկա օծության, և՛ այդ թանկագին սերմը տվող մարդկանց անկեղծ հավատքի պատճառով:

Այդ հավաքույթից հետո Լարին ակնհայտորեն ազդվել էր իր տեսածից: Նա նույնպես զարմացած էր երկու լիփ-լիքը զոհաբերության պարկերի համար, որոնք մենք տանելու էինք իր բնակարան երեկոյան հավաքույթից հետո: Լարին ասաց, որ նախկինում իր հավաքած զոհաբերությունների ժամանակ սովորաբար լցվում էր միայն մեկ պարկը, այն էլ՝ մասամբ: Մենք թաքցրինք փողի պարկերը և արագ

քայլեցինք դեպի Լարիի փոքրիկ բնակարանը՝ անցնելով մարդաշատ փողոցով:

Հասնելով Լարիի բնակարանը, մենք նստեցինք նրա հյուրասենյակում և բացեցինք զոհաբերության պարկերը, որպեսզի հաշվենք փողը: Երբ Լարին դատարկեց պարկերի պարունակությունը սեղանի վրա, կատարվեց այնպիսի բան, ինչը մինչև օրս դժվար է բացատրել: Հանկարծ սենյակը պարուրվեց բաց կապտավուն մշուշով, և Աստծո օծությունը իջավ մեզ վրա: Մենք ետ նստեցինք այդ սենյակը պատած օծության ներքո: Այն նման չէր այն օծությանը, որը երբևէ զգացել էի քարոզելիս կամ մարդկանց համար աղոթելիս: Այդ օծության հետ ներկայություն կար: Այն սուրբ էր, և այդ պատճառով ինձ թվում էր, թե ես գտնվում էի անձամբ Աստծո ներկայության մեջ: Մինչ մենք նստած էինք, այն ավելի ու ավելի ուժգնացավ: Մենք միայն կարող էինք նստած մնալ և լաց լինել: Հանկարծ, այդ փոքր սեղանի վրա թափված փողի կույտի մեջ, տեսա մի տղամարդու ամուսնական մատանի: Ես հանկարծակիի եկա այն փաստից, որ այդ երեկո ինչ-որ մեկը, ով փող չի ունեցել, զոհաբերել է իր միակ, թանկ բանը: Այդ պահին Տերը խոսեց ինձ հետ.

> *«Ես կանչում եմ քեզ դեպի ազգերը, որպեսզի սովորեցնես նրանց այն սկզբունքները Թագավորության և ֆինանսների մասին, որոնք Ես սովորեցրի քեզ: Այս երեկո այս մատանին զոհաբերվել է մեծ հավատքով: Բայց Ես ուզում եմ, որ դու վերցնես այն և պահես՝ որպես հուշ այս երեկոյից: Նույնպես իմացիր՝ ինչպես որ ամուսնական մատանին ուխտ է խորհրդանշում, դու ազդարարում ես Իմ մատակարարման ուխտն Իմ ժողովրդին: Եվ իմացիր՝ որտեղ էլ ուղարկեմ քեզ, Ես միջոցներ կտամ դրանք վճարելու համար»:*

Ես չկարողացա քնել ամբողջ գիշեր: Այդ գիշեր մնացի Լարիի բնակարանում, և օծությունը նույնպես մնաց այդտեղ: Ես չկարողացա քնել Ատլանտյան օվկիանոսի վրայով տուն թռչելու ճանապարհին: Միայն կարող էի հառել հայացքս պատուհանին և լաց լինել այդ

ութժամանոց թռիչքի ընթացքում: Ես չկարողացա քնել 46 ժամ այն բանից հետո, երբ Տերը խոսեց ինձ հետ այդ երեկո: Այդ երեկոյից հետո ամիսներ շարունակ ես զգում էի միևնույն ներկայությունը և լաց էի լինում ամեն անգամ, երբ մտածում էի այդ մասին:

Ես չասացի Լարիին այն, ինչ Տերն ասել էր ինձ այդ մատանու մասին: Այդ զոհաբերության գումարը պատկանում էր Ալբանիայի եկեղեցիներին, և ես հասկանում էի, որ այդ մատանին կարող էր վաճառվել՝ հավելյալ գումար ստանալու համար, բայց ես գիտեի, թե ինչ էր Տերն ասել ինձ այդ մասին: Եվ ես այնպե՜ս ուրախացա, երբ Լարին զանգեց ինձ և ասաց, որ Տերը խոսել է իր հետ՝ պատվիրելով տալ այդ մատանին ինձ: Այժմ այդ մատանին պահված է իմ գրասենյակում: Տարիների ընթացքում, բախվելով դժվարին ֆինանսական մարտահրավերների, ես շատ անգամներ եմ նայել այդ մատանուն և հիշել այն, ինչ Տերն ասել էր ինձ այդ երեկո: Այդ երեկոն Ալբանիայում փոխեց իմ կյանքը, բայց Աստված ավելին էր պատրաստվում ցույց տալ ինձ ապագայում:

Երբ տուն վերադարձա Ալբանիայից, ուժգին մղում զգացի՝ հասցնելու Թագավորության մասին այս ուղերձն ամենուր: Իմ ներսում այս տեղեկությունը տարածելու խիստ մեծ ձգտում կար. ես ցանկանում էի կրկին սովորեցնել այս հինգ դասերը՝ տեսնելու համար՝ արդյո՞ք արդյունքը նույնը կլիներ: Ես ստիպված չէի երկար սպասել: Ինձ հրավիրեց մի հովիվ Յուտա նահանգից՝ նույն հինգ դասերը սովորեցնելու համար: Նա լսել էր Լարիից, որ դա կյանքեր փոխող ուսմունք է, և նա ցանկանում էր, որ այցելեի իրենց: Նա մի փոքր և շատ աղքատ հնդկացիական եկեղեցու հովիվ էր: Այդ մարդիկ ֆինանսական օգնության կարիք ունեին, և եթե այն, ինչ նա լսել էր Լարիից, ճիշտ էր, նա կարծում էր, որ ես կարող էի օգնել իրենց:

Ես թռա այնտեղ և հավաքույթներ անցկացրի կիրակի առավոտյան և երեկոյան, մինչև չորեքշաբթի երեկո: Ես անցկացրի հինգ դաս, ինչպես Ալբանիայում, և ստացա միևնույն արձագանքը: Մարդիկ գոչում և պարում էին համաժողովի վերջին երեկոյին անչափ ուժգին օծության ներքո՝ տալով իրենց զոհաբերությունները: Այս անգամ ես չտեսա նույն կապույտ մշուշը, բայց ուժգին օծություն էի զգում բոլոր

հինգ հավաքույթների ընթացքում: Վերջին հավաքույթից հետո ես ցնցված էի, ինչպես Լարին՝ Ալբանիայում, այն մեծ գումարի պատճառով, որը հավաքվեց ընդամենը 17 զույգի զոհաբերությունից: Ես դրեցի այդ գումարը զոհաբերությունների համար նախատեսված փականով պայուսակի մեջ և հաջորդ առավոտյան տարա իմ գրասենյակ՝ իմ ծառայության հաշվեհամարին փոխանցելու համար:

Ավելի ուշ այդ առավոտ ես հեռախոսազանգ ստացա իմ գրասենյակից: Ինձ զանգում էր իմ քարտուղարուհին, և ես հասկացա, որ ինչ-որ բան էր տեղի ունեցել: Նրա ձայնը դողում էր, և այնպիսի տպավորություն էր, որ նա լաց էր եղել: Նա ասաց.

– Հովի՛վ, ձեր բերած փողի հետ ինչ-որ բան է կատարվում:

– Ի՞նչ նկատի ունես, Թրե՛յսի,- հարցրի ես:

Նա պատմեց ինձ, որ բացել էր այդ պայուսակը՝ փողը հաշվելու և ծառայության հաշվեհամարին փոխանցելու համար, բայց նույն րոպեին նրա վրա ուժգին օծություն էր իջել գրասենյակում, և նա ընկել էր հատակին: Իմ մյուս քարտուղարուհին, լսելով այդ իրարանցումը, մոտեցել էր սենյակի այդ անկյունին և նույնպես սկսել էր ցնցվել օծության ներքո:

– Ի՞նչ էր կատարվել Յուտայում հավաքված այդ փողի հետ,- հարցրեց Թրեյսին:

Ես պատասխանեցի նրան, որ չգիտեմ:

Երկու շաբաթ անց սովորեցնում էի նույն այս սկզբունքները Օհայո նահանգի հարավում գտնվող մի փոքրիկ եկեղեցում: Մենք ուղարկել էինք այդ եկեղեցուն առաջին չորս դասերը տեսասկավառակներով, և նրանք դիտել էին դրանք նախորդ չորս շաբաթների ընթացքում: Գնացի այնտեղ կիրակի երեկոյան՝ անցկացնելու համար վերջին հինգերորդ դասը: Կրկին, մենք հազիվ էինք կանգնած մնում օծության ներքո: Երբ զոհաբերություն հավաքեցի այդ երեկո, ես ունեցա նույն արձագանքը, որը տեսել էի այլ հավաքույթների ժամանակ: Մարդիկ զոհաբերում էին մեծ ոգեշնչումով: Զոհաբերության ընթացքում եկեղեցին մի զամբյուղ էր դրել դահլիճի առջևի մասում, որպեսզի մարդիկ այնտեղ դնեին իրենց նվիրատվությունները: Այս

անգամ կապույտ մշուշը նորից հայտնվեց: Այն գրեթե մեկուկես մետր տրամագծով գնդի տեսք ուներ, որը շրջապատում էր զոհաբերությունների զամբյուղը, մինչ մարդիկ զոհաբերում էին: Օծությունն այնքա՛ն ուժգին էր, որ հավաքույթից հետո ինձ ստիպված էին տանել մեքենայիս մոտ, քանի որ ես չէի կարողանում քայլել:

ԲԱՅՑ ՀԻՍՈՒՍԸ ՈՉ ՄԻԱՅՆ ՎՃԱՐԵՑ ՄԵՐ ԵՐԿԻՆՔ ԳՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱՐ, ԱՅԼԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՏՎԵՑ ՄԵԶ ԱՊՐԵԼՈՒ ՈՐՊԵՍ ԱՍՏԾՈ ՈՐԴԻ ԿԱՄ ԴՈՒՍՏՐ ԵՎ ՎԱՅԵԼԵԼՈՒ ԱՍՏԾՈ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՅՍ ԵՐԿՐԻ ՎՐԱ:

Երբ այդպիսի բաներ էին տեղի ունենում, ես իրականում չգիտեի, թե ինչ էր կատարվում, և չէի լսել, որ նման բան կատարվեր այլ վայրում: Ես շարունակում էի համաժողովներ անցկացնել, և օծությունը կրկին շատ ուժգին էր լինում: Այո՛, կապույտ մշուշը կրկին երևացել էր մի քանի համաժողովների ընթացքում: Բայց ամենազարմանալի փաստն ինձ համար այն էր, որ օծությունը հենց փողի վրա էր: Համաժողովից հետո իմ աշխատակիցները մեծ դժվարությամբ էին հաշվում զոհաբերությունները: Հիշո՞ւմ եք, որ օծությունը եկավ Ալբանիայում գտնվող այն բնակարանում, երբ Լարին դատարկեց զոհաբերությունը սեղանին: Եթե վերցնեիք մի թղթադրամ այդ զոհաբերված գումարից, դուք անմիջապես կզգայիք այդ օծությունը և կսկսեիք ցնցվել: Գիտեմ, որ դա խենթություն է թվում, բայց պարզապես ես պատմում եմ այն, ինչ ինքս եմ տեսել:

Որպես հոգևոր գիտնական՝ դա շփոթեցնում էր ինձ, և ես հարցրի Տիրոջն այդ մասին: Նա խոսեց ինձ հետ և բացատրեց, թե ինչու էր նման ուժգին օծություն գալիս զոհաբերության վրա: Նա ասաց, որ մարդկանց մեծամասնությունը զոհաբերում է՝ ելնելով պարտավորությունից կամ օրինապաշտությունից: Ոմանք տալիս են՝ ելնելով ինչ-որ բանաձևից, բայց նրանք չեն տալիս ճշմարիտ հավատքով: Շատերը տալիս են, քանի որ կարծում են, որ Աստված կբարկանա,

եթե իրենք չզոհաբերեն: Ոմանք տալիս են՝ պարտք վերադարձնելու պես: Նա ասաց ինձ, որ երբ ես սովորեցնում եմ Աստծո Թագավորության մասին և հայտնում եմ Թագավորության թաքնված ֆինանսական սկզբունքները, հավատքը բարձրանում է մարդկանց սրտերում: Եվ երբ նրանք տալիս են, անում են դա ճշմարիտ հավատքով: Նրանք կապ են հաստատում Թագավորության հետ, և դա է օծության այդպիսի հոսքի պատճառը:

2005 թվականին Ալբանիա կատարած ճանապարհորդությունից հետո իմ կյանքը շատ է փոխվել: Թագավորության բարի լուրը հայտնելու իմ ցանկությունը դրդել է Դրենդային և ինձ օգտագործել հեռուստատեսությունը՝ այս բարի լուրով ազգերին հասնելու համար: Մենք բառացիորեն տարեկան միլիոնավոր դոլարներ ենք ծախսում, որպեսզի պատմենք մարդկանց այս Թագավորության մասին, որը հայտնագործել էինք տարիներ առաջ: Բայց միգուցե դուք դեռ չեք լսել Աստծո Թագավորության բարի լուրը: Մենք այդպիսին էինք՝ հավատացյալներ, որոնք Երկինք են գնում, բայց չգիտեն, թե ինչպես իջեցնեն Երկինքն այս երկիր: Բայց Հիսուսը ոչ միայն վճարեց մեր Երկինք գնալու իրավունքի համար, այլև հնարավորություն տվեց ապրելու որպես Աստծո որդի կամ դուստր և վայելելու Աստծո Թագավորության առավելություններն այս երկրի վրա: Բայց ամենակարևորն այն է, որ կան միլիոնավոր մարդիկ, որոնց մենք պետք է հասնենք Ավետարանի բարի լուրով, և դրա համար անհրաժեշտ են միջոցներ: Մարդիկ նայում են մեզ: Մենք պետք է այլ կերպով ապրենք:

Ի՞նչ էի ես սովորեցնում Ալբանիայում, և ի՞նչը նման օծության պատճառ դարձավ: Ի՞նչ Աստված պատվիրեց ինձ քարոզել ազգերին: Այս գիրքը սովորեցնում է հենց այդ մասին, և ես համոզված եմ, որ այն կփոխի ձեր կյանքը, ինչպես որ փոխեց իմ կյանքը:

ԳԼՈՒԽ 3

ԽՆԴՐՈ՛ՒՄ ԵՄ, ԱՍՏՎԱ՛Ծ, ՈՂՈՐՄԻ՛Ր

Ձերին զանգեց իմ գրասենյակ և հարցրեց, թե արդյո՞ք կարող է հանդիպել ինձ և ճաշել, քանի դեռ ես գտնվում էի այն շրջանում, որտեղ նա էր ապրում: Ես հարցազրույց էի տալիս մի հեռուստակայանում, որը նրա հարևան քաղաքում էր, և նա ուզում էր պատմել, թե ինչպես էր իր կյանքը փոխվել իմ նյութերի և հեռուստատեսային հաղորդումների շնորհիվ: Ես երբեք չէի հանդիպել Ձերիին, բայց մեկ կամ երկու անգամ հեռախոսով զրուցել էի նրա հետ: Իհարկե, համաձայնեցի: Միևնույն է, մենք պետք է ճաշեինք, և ես մտածեցի, որ քանի դեռ այդտեղ էի, սիրով կհանդիպեի նրան և կլսեի նրա պատմությունը:

Ճաշի ժամանակ ես ծանոթացա Ձերիի և նրա որդու հետ, և Ձերին պատմեց ինձ իր պատմությունը: Նա 30 տարի հովիվ է եղել, բայց ստիպված էր թողնել իր ծառայությունը սրտի կաթվածի պատճառով, որը հաշմանդամ էր դարձրել նրան: Կաթվածից հետո նրա կյանքը սկսել էր քայքայվել: Քանի որ նա չէր կարող աշխատել և գումար վաստակել, նրա ընտանեկան տան և հողատարածքի վրա արգելանք էր դրվել, և դրանք հայտնվել էին շերիֆի վաճառքի (արգելանքի տակ գտնվող անշարժ գույքի վաճառքի) ցուցակում: Նրանք հազիվ էին կարողանում վճարել տնային ծառայությունների համար

և կերակուր գնել: Զերին պատմեց, որ ամեն ինչ այն աստիճան էր վատացել, որ մեկ անգամ նա լիցքավորված 45 միլիմետրանոց ատրճանակը մի ձեռքում պահած և Աստվածաշունչը՝ մյուս, մտածում էր կյանքին վերջ տալու մասին:

Այդ անհուսության մեջ Զերին սկսել է դիտել մեր հեռուստատեսային հաղորդումները և որոշ բաներ պատվիրել իմ նյութերից: Նա ասաց, որ երբ նոր էր ստացել այդ նյութերը, նրան խիստ անհրաժեշտ էր 2.000 դոլար՝ մի շարք հիմնական վճարումներ կատարելու և սնունդ գնելու համար: Նա կրկին ու կրկին լսել էր այդ նյութերը, մինչև որ հավատքն աճել էր սրտում: Նա որոշել էր հավատալ Աստծուն 2.000 դոլարի համար, որի կարիքը ուներ: Եվ արել էր այն, ինչ արեցինք Դրենդան և ես՝ մեր առաջին եղջերուին ստանալու համար: Նա սերմ էր ցանել այդ 2.000 դոլարի համար: Գրել էր մի թղթի վրա այն ամսաթիվը և ժամանակը, երբ պետք է հավատար, որ ստանալու էր այդ փողը՝ համաձայն Մարկոս 11.24-ի, և ուղարկել էր իր չեկը մեր ծառայությանը:

Ես չգիտեի այդ մասին, քանի որ չէի խոսել Զերիի հետ: Նա ասաց, որ գրեթե մեկուկես շաբաթ անց մի մարդ է մոտեցել իրենց տանը և ցանկացել խոսել իր հետ: Զերին ճանաչում էր այդ մարդուն, բայց նա ասաց, որ նրանք երկար ժամանակ չէին շփվել: Նրանք մի փոքր զրուցել են, և այդ մարդն ասել է, որ իրականում նրա տուն էր եկել, որպեսզի 2.000 դոլարի չեկ տար նրան: Նա պատմեց, որ մեկուկես շաբաթ առաջ՝ այսինչ օրը և ժամին Սուրբ Հոգին դրդել է իրեն 2.000 դոլար տալ Զերիին:

Զերին ապշահար կանգնած էր: Նա արագորեն բացել է իր դրամապանակը, որում դրել էր թղթի մի փոքրիկ կտոր: Այդ թղթի վրա գրված էր այն օրը և ժամը, երբ ինքը հավատում էր, որ ստանալու էր իրեն անհրաժեշտ 2.000 դոլարը: Զերիի թղթի վրա գրված օրը և ժամը ճիշտ այն պահն էր, երբ, ինչպես այդ մարդն ասաց, Աստված դրդել է իրեն տալ Զերիին այդ 2.000 դոլարը: Զերին գիտեր, որ դա պատահականություն չէր. նա գիտեր, որ դա Աստծո Թագավորության ուղիղ պատասխանն էր՝ Աստծո Թագավորության օրենքների պատասխանը:

Նա շարունակեց՝ պատմելով, որ յոթ երեխա ուներ, և բոլորն ամուսնացած էին՝ բացի իր տասնվեցամյա որդուց (որը նրա հետ ճաշի էր եկել): Նրա որդին, ըստ էության, հեռացել էր Աստծուց՝ տեսնելով այն ամենը, ինչով անցել էր իր հայրը: Նա խիստ բարկացած էր Աստծո վրա այն պատճառով, որ, իր կարծիքով, Աստված թողել էր իր հորը 30 տարի հավատարիմ ծառայելուց հետո:

Ձերին ցանկանում էր ինչ-որ կերպով հասնել իր որդուն, և նրա մոտ մի գաղափար ծնվեց: Իմ նյութերում ես շատ եմ խոսում եղնիկների որսի մասին և պատմում եմ, թե ինչպես Աստված սովորեցրեց ինձ հավատքով որս անել: Նրա որդին եղնիկների որսի սիրահար էր, և Ձերին բացատրեց իր որդուն, թե ինչպես նա կարող էր եղջերու որսալ՝ Աստծո Թագավորության ձևով: Նրա որդին մտածեց այդ մասին և ի վերջո համաձայնեց: Նա և հայրը կիրառեցին իրենց հավատքը, ինչպես որ Ձերին՝ իր 2.000 դոլարի համար: Այդ տղան մի գեղեցիկ եղջերու որսաց ութ րոպեում: Երբ Ձերին և նրա որդին տանում էին այդ եղջերուին մսագործի մոտ, Ձերին միացրել էր իմ լսասկավառակներից մեկը: Երբ նա տանում էր այդ եղջերուին, նրա որդին ասաց, որ ուզում է մնալ մեքենայի մեջ և մի փոքր ավելի լսել: Երբ Ձերին վերադարձավ, նրա որդին ասաց.

– Հայրի՛կ, կարծում եմ՝ մենք տարիներ շարունակ ինչ-որ բան չէինք հասկանում: Ես գիտեմ, որ որսացի այս եղջերուին Աստծո Թագավորության շնորհիվ:

Նրա որդին կրկին նվիրեց իր կյանքը Տիրոջը և ասաց հորը, որ եթե Աստված կարող էր տալ իրենց 2.000 դոլար և այդ եղջերուին, Նա նաև կարող էր տալ 17.000 դոլար, որն անհրաժեշտ էր՝ իրենց արգելանքի տակ գտնվող տունն ազատելու համար: Այդ ժամանակ էր, որ ես առաջին անգամ իմացա Ձերիի մասին: Ես հիշում եմ Ձերիի նամակը, որում Ձերիի և նրա որդու սերմն էր՝ իրենց տունը արգելանքից ազատելու համար: Ես հիշում եմ՝ այդ նամակը կարճ էր, և դրանում պարզապես գրված էր այն, ինչի կարիքը նրանք ունեին: Այդտեղ այլևս ոչինչ նշված չէր, միայն տունը արգելանքից ազատելը: Ես նույնպես հիշում եմ, որ դրեցի ձեռքս այդ նամակի վրա՝ համաձայնելով նրանց հետ: Ես հիշում եմ այն պահը, երբ արեցի դա:

Եվ Զերին պատմեց ինձ, որ մոտավորապես երկու շաբաթ անց ևս մեկ մարդ մոտեցավ իրենց տանը: Կրկին, Զերին ճանաչում էր այդ մարդուն: Նա ասաց, որ տեսել էր Զերիի տունը շերիֆի վաճառքի ցուցակում, և հարցրեց նրան, թե որքան գումար էր անհրաժեշտ՝ այն արգելանքից ազատելու համար: Զերին անվանեց այդ գումարը՝ ավելի, քան 17.000 դոլար: Այդ մարդը չեկ գրեց ամբողջ գումարի համար և հեռացավ: Զերին նայում էր այդ չեկին: Պատմության այդ մասից սկսած, նա լաց էր լինում՝ նստած իմ դիմացը ռեստորանում, և շնորհակալություն էր հայտնում ինձ Աստծո Թագավորության մասին սովորեցնելու համար: Զերին ասաց, որ այնքան ուրախ է, որ իր բոլոր երեխաները տեսան Աստծո ձեռքը, և նա հնարավորություն ունեցավ պատմելու նրանց Աստծո Թագավորության մասին: Ինձ սա դուր է գալիս: Սա Աստծո Թագավորության իրականությունն է, և ես այնքա՜ն օրհնված եմ, որ կարող եմ պատմել մարդկանց այս մասին, իսկ հետո լսել նրանց պատմությունները: Իրականում, Զերիին պետք չէր խղճահարություն: Նրան պետք էին պատասխաններ, և նա գտավ պատասխաններ Թագավորության մեջ:

Ես զգում եմ, որ պետք է մի լրացում անեմ Զերիի պատմության վերաբերյալ: Թեև կարող է թվալ, թե մարդիկ պարզապես թակում էին Զերիի դուռը և փող էին տալիս նրան, ես չեմ ցանկանում, որ դուք սխալ պատկերացում կազմեք, որ ձեր ֆինանսական պատասխանը պարզապես հայտնվելու է, մինչ դուք տանը նստած գազավորված ըմպելիք եք խմելու: Ո՜չ, դուք պետք է կատարեք ձեր մասը՝ ձեր հունձքը ստանալու և ձեր կարիքը լրացնելու համար: Զերիի դեպքում, նա 30 տարի հովիվ է եղել: Նա ցանել է այդ մարդկանց կյանքերում տարիներ շարունակ: Եվ երկրորդը՝ Զերին չէր կարող դուրս գալ տնից կաթ-

«ՃՇՄԱՐԻՏ ԱՍՈՒՄ ԵՄ ՁԵԶ՝ ԵԹԵ ՄԱՆԱՆԵԽԻ ՀԱՏԻ ՉԱՓ ՀԱՎԱՏՔ ՈՒՆԵՆԱՔ, ԱՅՍ ՍԱՐԻՆ ԿԱՍԵՔ՝ ՓՈԽԱԴՐՎԻՐ ԱՅՍՏԵՂԻՑ ԱՅՆՏԵՂ, ԵՎ ԱՅՆ ԿՓՈԽԱԴՐՎԻ: ԵՎ ՈՉԻՆՉ ԱՆԿԱՐԵԼԻ ՉԻ ԼԻՆԻ ՁԵԶ ՀԱՄԱՐ»:

– ՄԱՏԹԵՈՍ 17.20բ

վածի պատճառով: Զերին հնձեց այնտեղից, որտեղ ցանել էր՝ իր եկեղեցու անդամներից, որոնց կյանքերում նա ցանել էր տարիներ շարունակ:

Եվ պետք է ասեմ ձեզ, որ Զերին նաև կատարելապես բժշկվեց կաթվածից: Նա կորցրել էր ավելի քան 30 կիլոգրամ, երբ հանդիպեցի նրան այդ օրը ճաշի ժամանակ: Փա՜ռք Աստծուն, նա հենվեց Թագավորության վրա: Միգուցե ասեք. «Չէ՞ որ Զերին հովիվ էր: Անկասկած, նա գիտեր ամեն ինչ Թագավորության մասին»: Ակնհայտ է, որ ոչ, և իմ փորձառությունից ես համոզված եմ, որ նա միայնակ չէ դրանում: Դժբախտաբար, եկեղեցիներ հաճախող բազմաթիվ մարդիկ նույնպես չգիտեն, թե ինչպես ստանան իրենց պատասխաններն Աստծո Թագավորությունից: Մատթեոսի Ավետարանում գտնվող մի պատմություն նկարագրում է, թե ինչպես են շատերը մտածում.

> *«Եվ երբ որ նրանք ժողովրդի մոտ եկան, մի մարդ մոտեցավ Նրան և առաջը ծունկ դնելով՝ ասում էր. «Տե՛ր, իմ որդուն ողորմի՛ր, որ լուսնոտում է և չարաչար տանջվում, որովհետև շատ անգամ կրակն է ընկնում, և շատ անգամ՝ ջուրը: Եվ ես նրան Քո աշակերտների մոտ բերի, և չկարողացան նրան բժշկել»:*
>
> *Հիսուսն էլ պատասխանեց և ասաց. «Ո՛վ անհավատ և խոտորյալ ազգ, մինչև ե՞րբ պիտի ձեզ հետ լինեմ, մինչև ե՞րբ պիտի ձեզ համբերեմ: Նրան Ինձ մոտ բերեք այստեղ»: Եվ Հիսուսը նրան սաստեց, և դևը նրանից դուրս եկավ, և տղան նույն ժամից բժշկվեց:*
>
> *Այն ժամանակ աշակերտներն առանձին Հիսուսի մոտ եկան և ասացին. «Մենք ինչո՞ւ չկարողացանք հանել նրան»: Հիսուսն էլ ասաց նրանց. «Ձեր թերահավատության համար: Որովհետև ճշմարիտ ասում եմ ձեզ՝ եթե մանանեխի հատի չափ հավատք ունենաք, այս սարին կասեք՝ փոխադրվի՛ր այստեղից այնտեղ, և այն կփոխադրվի: Եվ ոչինչ անկարելի չի լինի ձեզ համար»»:*
>
> – Մատթեոս 17.14-20

Այս պատմության մեջ տեսնում ենք մի հուսահատ մարդու. նրա որդին տանջվում էր չար հոգիներից, գրեթե մահվան աստիճան: Լսելով Հիսուսի ծառայության մասին, նաև՝ որ Հիսուսը դևեր հանելու զորություն ուներ, նա որոշեց տանել իր որդուն Նրա մոտ, որպեսզի բժշկեր: Բայց տեղ հասնելով՝ իմացավ, որ Հիսուսն այդտեղ չէ, այլ սար է բարձրացել Իր երեք աշակերտների հետ՝ աղոթելու: Այդտեղ գտնվող մյուս աշակերտներն ասացին, որ դա խնդիր չէր. իրենք դևեր էին հանում սկսած այն ժամանակվանից, երբ Հիսուսն Իր անունով դևեր հանելու իշխանություն էր տվել, և իրենք կարող էին հոգալ այդ տղայի մասին: Սակայն երբ նրանք աղոթեցին այդ տղայի համար, դևը չհեռացավ: Թեև նրանք փորձեցին, բայց դևը չհեռացավ: Տղայի հայրը սրտնեղեց, իսկ Հիսուսին հետևող բազմությունը շփոթվեց:

Բայց հենց այդ պահին հայտնվեց Հիսուսը՝ Իր երեք աշակերտների հետ: Նրանք ցած իջան սարից, և Հիսուսը, տեսնելով այդ իրարանցումը, հարցրեց, թե ինչ է տեղի ունենում: Տղայի հայրը պատմեց, որ ինքը բերել էր իր որդուն աշակերտների մոտ, բայց նրանք չէին կարողացել հանել նրա միջի դևին: Դրանից հետո հայրն արեց այն, ինչը ճիշտ կթվա շատերին, եթե ոչ մարդկանց մեծամասնությանը, որոնք բախվել են այնպիսի ճգնաժամի, որը, թվում է, չունի պատասխան: Նա խնդրեց Հիսուսին ողորմել իրեն: Թեև ողորմություն խնդրելը լավ միտք է թվում, երբ դուք հուսահատ վիճակում եք, դա այդ մարդու պատասխանը չէր, և ո՛չ էլ ձերն է: Այդ հայրը, ցանկանալով շարժել Հիսուսի գութն իր իրավիճակի վերաբերյալ, պատմեց, թե ինչպես էր դևը տանջում իր որդուն՝ գցելով կրակի մեջ կամ փորձելով սպանել: Հիսուսը թույլ չտվեց նրան շարունակել: Կարիք չկար, որ Նա լսեր ավելին այդ մարդու որդու չարչարանքների մասին: Հուսահատությունից Հիսուսն աղաղակեց. *«Ո՛վ անհավատ և խոտորյալ ազգ, մինչև ե՞րբ պիտի ձեզ հետ լինեմ, մինչև ե՞րբ պիտի ձեզ համբերեմ: Նրան (տղային) Ինձ մոտ բերեք այստեղ»:* Այս նախադասության մեջ Հիսուսը լիովին բացատրում է, թե ինչու այդ դևը դուրս չեկավ:

Բայց մինչ Հիսուսի խոսքերն ուսումնասիրելը, մենք պետք է վերահաստատենք այն հիմքը, որի վրա հենվում ենք՝ այն, որ Աստ-

ված չի ստում և չի կարող ստել: Այն, ինչ Նա ասում է, ճշմարիտ է: Հաստատելով սա՝ մենք կարող ենք գնահատել տվյալ իրավիճակը հետևյալ պնդումով. «Դևերը ՊԵՏՔ է դուրս գան»: Եթե նրանք դուրս չեն գալիս, ինչ-որ բան սխալ է, և այդ սխալը ոչ թե Աստծուց է, այլ մեզնից: Հիսուսը պարզ ասում է, որ դևերը դուրս չեկան խոտորված մտածելակերպի և անհավատության պատճառով: Շուտով կխոսենք այս երկու պատճառների մասին: Բայց մեր քննարկման պահին ուզում եմ կենտրոնանալ այս պատմության հոր և որդու վրա:

Հայրն ակնհայտորեն հուսահատություն էր զգում իր որդու պատճառով: Երբ աշակերտների աղոթքից հետո, թվում է, ոչինչ չկատարվեց, նա այլևս հույս չուներ: Չկար ոչ մի հստակ պատասխան: Միակ պատասխանը, որը, նրա կարծիքով, կարող էր օգնել, ոչ մի օգուտ չտվեց: Մնում էր միայն մեկ բան, և դա ողորմություն խնդրելն էր: «Ողորմություն խնդրել» արտահայտությունը ենթադրում է, որ ինչ-որ մեկն ունի ուժ, իշխանություն՝ օգնելու համար, բայց որոշում է չանել դա: Եվ միակ բանը, որը հայրը կարող էր անել, մանրամասն նկարագրելն էր այն զարհուրելի տանջանքները, որոնք իր որդին կրում էր՝ փորձելով շարժել Հիսուսի գութն իր իրավիճակի վերաբերյալ:

Անկեղծ ասած, մարդկանց մեծամասնությունը հենց այսպես է աղոթում: Իմանալով, որ Աստված կարող է օգնել, բայց համոզված չլինելով, թե ինչպիսին կլինի Նրա արձագանքը, նրանք խնդրում են Նրա ողորմությունը: Եվ այսպիսով, երկար աղոթքներով և բազմաթիվ բառերով, նրանք մանրամասն ներկայացնում են իրենց խնդիրները և հանգամանքները. «Հա՛յր, Դու գիտես, որ ինձ պետք է այդ գումարը մինչև ուրբաթ օրը. Աստվա՛ծ, խնդրո՛ւմ եմ, օգնի՛ր ինձ», կամ «Աստվա՛ծ, խնդրո՛ւմ եմ, եթե բժշկես իմ երեխային, ես կծառայեմ Քեզ մինչև իմ կյանքի ավարտը: Խնդրո՛ւմ եմ, Աստվա՛ծ»: Ես թեթևորեն չեմ նայում այն իրավիճակներին, որոնց մարդիկ բախվում են, բայց խնդրում եմ, ուշադրություն դարձրեք, թե որքան արագ Հիսուսը գործադրեց Աստծո զորությունն այդ իրավիճակում և ազատություն տվեց այդ տղային: Ահա թե ինչպիսին է Աստծո սիրտը, և ահա թե որն է Նրա ցանկությունը: Աստծո մոտ չկա գթասրտութ-

յան, զորության և իշխանության պակաս: Նման խնդիր չկար նաև այս պատմության մեջ: Հիսուսը ցույց տվեց, որ խնդիրը խոտորյալ մտածելակերպն ու անհավատությունն էին: Այլ կերպ ասած, սխալ մտածելակերպը և հավատքի պակասը սահմանափակեցին Թագավորության իրավասությունն այս պատմության մեջ:

Կան շատ բաներ՝ կապված այս պատմության հետ, որոնք մենք պետք է դիտարկենք՝ Թագավորության բազմաթիվ բանալիներ և օրենքներ: Այս պահին չեմ ուզում մանրամասնորեն քննարկել որոշ բաներ այս պատմության մեջ, որոնց մասին դուք պետք է իմանաք, բայց գոնե կնշեմ դրանք, և մենք կուսումնասիրենք որոշ ժամանակ անց:

Աստծո Թագավորության մասին տարրական գիտելիք ստանալու համար մենք պետք է հասկանանք հետևյալ գլխավոր և հիմնարար ճշմարտությունը. Աստված տվեց Ադամին լիակատար իրավասություն այս երկրի վրա: Ադամը պետք է իշխեր այս երկրում.

> *«Եվ Աստված ասաց. «Մեր պատկերով և մեր նմանության պես մարդ շինենք, որ իշխեն ծովի ձկների և երկնքի թռչունների և անասունների և ամբողջ երկրի վրա և երկրի վրա սողացող բոլոր սողունների վրա»»:*
>
> – Ծննդոց 1.26

Կարծում եմ՝ Եբրայեցիների 2.7,8 խոսքերը շատ պարզ են ներկայացնում այս փաստը.

> *«Մի քիչ ցած արեցիր նրան հրեշտակներից, փառքով և պատվով պսակեցիր նրան... ամեն բան հնազանդ արիր նրա ոտքերի տակ. որովհետև ամենը, որ հնազանդեցրեց նրան, ոչինչ չթողեց, որ հնազանդ չլինի նրան»:*

Այս պահին դուք պետք է առնվազն հասկանաք, որ Աստված չի կարող կիրառել Իր իշխանությունը այս երկրի վրա (մարդկանց թագավորության մեջ), քանի դեռ որևէ տղամարդ կամ կին, որն օրինա-

կան իրավասություն ունի այս երկրի վրա, չի կիրառել Երկնքի իշխանությունը:

Ահա թե ինչու Հիսուսն ասաց Իր աշակերտներին Մատթեոս 18.18-ում.

> *«Ճշմարիտ ասում եմ ձեզ, ինչ որ երկրի վրա կապեք, երկնքում էլ կապված կլինի, և ինչ որ երկրի վրա արձակեք, երկնքում էլ արձակված կլինի»:*

ԲԱՅՑ ՍԱ ՉԻ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ ՁԵԶ, ԻՄ ԸՆԿԵ՛Ր. ԱՍՏԾՈ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍԱՆԵԼԻ Է ՁԵԶ: ԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ ՁԵՐ ԽՆԴԻՐՆԵՐԻՆ:

Կրկին, Երկինքը չունի իրավասություն երկրի վրա, քանի դեռ որևէ տղամարդ կամ կին չի արձակել Երկնքի իշխանությունն այստեղ: Ահա թե ինչու է Հիսուսն ասում այս հատվածում, որ եթե որևէ տղամարդ կամ կին արձակի Երկնքի իշխանությունը երկրի վրա, Երկինքը կսատարի դա: Հակառակ դեպքում, Երկինքը չի կարող անել դա: Եթե սա տարօրինակ է թվում, խնդրում եմ, կանգ մի՛ առեք այստեղ: Ավելի ուշ մանրամասնորեն կներկայացնեմ այս թեման: Բայց այս պահին ընդունեք այս ճշմարտությունը որպես պատճառ, թե ինչու այդ դևը չհեռացավ տղայից. *նա ստիպված չէր հեռանալ:* Այդ դևն այդտեղ մնալու օրինական իրավունք ուներ: Կրկին, Հիսուսն ասաց, որ դևի չհեռանալու պատճառը հավատքի կամ իրավասության բացակայությունն էր: Աստված կորցրեց Իր իրավասությունը մարդկանց կյանքում, երբ Ադամն, ըստ էության, հեռացրեց Աստծուն իր ապստամբությամբ: Այդ պահին սատանան նաև իրավասություն ստացավ ամբողջ մարդկության վրա:

> *«Եվ սատանան Նրան (Հիսուսին) մի բարձր սար հանեց և աշխարհի բոլոր թագավորությունները ցույց տվեց Նրան մի վայրկյանի մեջ: Եվ սատանան ասաց Նրան. «Այս ամ-*

բողջ իշխանությունը և սրանց փառքը Քեզ կտամ, որ ինձ է տրված (Ադամի կողմից), և ում որ կամենում եմ, տալիս եմ: Արդ Դու, եթե իմ առջևն ընկած երկրպագություն անես, բոլորը Քոնը կլինի»»:

– Ղուկաս 4.5-7

Հետևաբար, Աստված կորցրեց Իր իրավասությունը երկրային տիրույթում, ինչպես որ կորցրեց այդ իրավասությունն ունեցող մարդուն՝ Ադամին: Հետագայում ավելի շատ կխոսեմ այս օրենքների մասին, բայց ես օգտագործեցի այս պատմությունը, հիմնականում ցույց տալու համար այդ տղայի հոր վերաբերմունքը և հուսահատությունը, և թե ինչպես նա դիմեց ողորմություն խնդրելուն: Խնդրում եմ, մեծ ուշադրությամբ կարդացեք հետևյալ մի քանի նախադասությունը:

Եթե գոյություն չունի որևէ իշխանություն կամ օրենք և որևէ համակարգ՝ արդարադատություն իրականացնելու և կարիք ունեցող մարդուն լուծումներ տրամադրելու համար, ողորմություն խնդրելը միակ տարբերակն է: Թույլ տվեք այլ կերպ ասել սա. եթե մարդը չունի օրինական լուծում որևէ խնդրի համար, և եթե նրան հասանելի չէ որևէ գործընթաց, որի միջոցով իրականացվում է արդարադատությունը, նշանակում է՝ նա չունի հավաստիացում, որ պատասխան կստանա: Եվ միակ տարբերակը, որը մնում է, ողորմություն խնդրելն է:

Բայց սա չի վերաբերում ձեզ, իմ ընկե՛ր. Աստծո Թագավորության մեջ արդարադատությունը հասանելի է ձեզ: Կան պատասխաններ ձեր խնդիրներին: Հիշեք՝ թագավորությունը կառավարման ձև է, որի օրենքներն անկողմնակալ են և հասանելի յուրաքանչյուր քաղաքացու, որն ապրում է այդ թագավորության իրավասության ներքո: Ինչպես որ ավելի վաղ ասացի այս գրքում, Աստծո Թագավորությունը կառուցված է իրավունքի (իրավաբանական գործընթացի, որի միջոցով Աստծո իշխանությունը ապահովում է այն, ինչը ճիշտ է ըստ Իր օրենքի) և արդարության վրա: Կար պատճառ, թե ինչու այդ դևը դուրս չեկավ, և դա ո՛չ Աստծո տկարությունն էր, ո՛չ էլ այն, որ Նա փոխել էր Իր կամքը: Հիսուսը ցույց տվեց դա այն բանով, թե որքան արագ Նա հանդիմանեց աշակերտներին, իսկ հետո հանեց այդ դևին:

Քրիստոնյաների մեծ մասը, չտեսնելով Թագավորության դրսևորումն ինչ-որ իրավիճակում, փոխում է իր վարդապետությունը՝ ասելով. «Բոլոր դևերը չէ, որ դուրս են գալիս»: Նրանք գիտեն, որ իշխանությունն ամբողջությամբ պատկանում է Աստծուն, և ենթադրում են, որ Աստված երկրային տիրույթում կարող է անել այն, ինչ ցանկանում է: Եվ եթե դևը դուրս չեկավ, նշանակում է՝ Աստված, հավանաբար, որոշել է չհարկադրել նրան դուրս գալ: Իմ ընկե՛ր, այս պատկերացումը լիովին սխալ է: Հիսուսն ասաց, որ տվյալ դեպքում ՆՐԱՆՑ խոտորված մտածելակերպն ու անհավատությունն էին խափանել Երկնքի իրավասությունը: Թույլ տվեք այսպես ասել. այդ դևի դուրս չգալն իրավական հարց էր, և վերջ: Նա ստիպված չէր հեռանալ, քանի որ ոչ ոք չբերեց Երկնքի իշխանությունը և օրինական իրավասությունը այդ իրավիճակում: «Բայց Գա՛րի, նրանք փորձում էին հանել նրան»: Այո՛, բայց, ինչպես ասացի, նա ստիպված չէր դուրս գալ: Ինչո՞ւ: Կրկին, Երկինքը չուներ իրավասություն՝ այդ դևին հանելու համար:

ՔԱՆԻ ՈՐ ՕՐԻՆԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՅՍ ԵՐԿՐՈՒՄ ՊԱՏԿԱՆՈՒՄ Է ՄԱՐԴՈՒՆ, ԱՍՏԾՈ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ և ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՉԵՆ ԿԱՐՈՂ ԳՈՐԾԵԼ, ՔԱՆԻ ԴԵՌ ՈՐԵՎԷ ՏՂԱՄԱՐԴ ԿԱՄ ԿԻՆ, ՈՐՆ ՈՒՆԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆ ԱՅՍ ԵՐԿՐԻ ՎՐԱ, ԼԻՈՎԻՆ ՀԱՄՈԶՎԱԾ ՉԷ ԵՐԿՆԱՅԻՆ ԽՈՍՔԵՐԻ ՄԵՋ ԵՎ ՉԻ ԱՐՁԱԿՈՒՄ ԵՐԿՆԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՅՍՏԵՂ:

Թույլ տվեք այլ կերպ արտահայտել իմ միտքը: Նրանք խոտորված մտածելակերպ ունեին, ինչը նշանակում է, որ նրանք բարի և ընդունելի էին անվանում այն, ինչը, Աստծո կարծիքով, սխալ կամ խեղաթյուրված մտածելակերպի արդյունք էր: Անհավատությունը նույնպես լուրջ խնդիր էր, քանի որ անհրաժեշտ է հավատք, որպեսզի Երկինքն իրավասություն ունենա երկրային տիրույթում: Աշակերտները վստահ չէին և լիովին համոզված չէին, որ այդ դևը դուրս կգար: Նրանք վախեցած էին:

Քանի որ օրինական իշխանությունն այս երկրում պատկանում է մարդուն, Աստծո կառավարումը և իշխանությունը չեն կարող գործել, քանի դեռ որևէ տղամարդ կամ կին, որն ունի իրավասություն այս երկրի վրա, լիովին համոզված չէ երկնային խոսքերի մեջ և չի արձակում երկնային իշխանությունն այստեղ: Ի դեպ, հավատքն այն է, որ մենք լիովին համոզված ենք մեր սրտում երկնային խոսքերի ճշմարտացիության մեջ, իսկ այդ օրը ոչ ոք հավատք չուներ: Նրանք երկմիտ էին և լցված էին անհավատությամբ և այդ պատճառով խափանեցին Երկնքի իրավասությունն այդ իրավիճակում: Բայց Հիսուսը հավատք ուներ և գիտեր, որ այդ դևը դո՛ւրս էր գալու: Հիսուսն Իր վրա վերցրեց այդ իրավիճակի վերահսկողությունը, և այդ դևը հեռացավ: «Բայց Գա՛րի, երբ Հիսուսը հանդիմանեց դևին, այն դուրս եկավ, քանի որ հանդիմանողը Հիսուսն էր»: Իսկապե՞ս: Կարդանք Մարկոս 6.5-ը, երբ Հիսուսը ծառայում էր Իր հայրենի քաղաքում:

> *«Եվ (Հիսուսը) չէր կարողանում այնտեղ ոչ մի զորություն (կամ՝ հրաշք) անել, բայց միայն մի քանի հիվանդների վրա ձեռք դրեց և բժշկեց»:*

Դուք պետք է համաձայնեք, որ Հիսուսն ուներ բժշկելու զորություն, ճի՞շտ է: Այդ դեպքում, պետք է բացատրեք, թե ինչու Նա չկարողացավ անել այն, ինչ ցանկանում էր անել այս պատմության մեջ: Թեև զոյություն ուներ կարիք, ինչ-որ բան խոչընդոտեց Նրան: Պատասխանը 6-րդ խոսքում է. *«Եվ նրանց անհավատության համար զարմանում էր»:* Հավատքը (համաձայնությունը Երկնքի հետ) օրինական իշխանություն է տալիս Երկնքին այս երկրային տիրույթում: Դուք կարող եք հեշտությամբ տեսնել այս սկզբունքն այն բանում, թե ինչպես փրկվեցիք և ընդունեցիք Քրիստոսին:

> *«Քանի որ՝ սրտով հավատում ենք արդարանալու համար, և բերանով դավանում ենք փրկվելու համար»:*
>
> – Հռոմեացիների 10.10

Դուք հավատում եք ձեր սրտով (Երկնքի խոսքերին) և արդարանում եք: Դա իրավական տերմին է, որը նշանակում է օրենքի կիրառում և ենթադրում է, որ այժմ Երկինքն օրինական իշխանություն ունի երկրային տիրույթում: Այս սկզբունքը պարզորեն դիտարկելու համար հիշենք, որ Ադամն այս երկրի օրինական կառավարիչն է, և այս դիրքը դեռ պատկանում է մարդուն: Սա չպետք է շփոթել այն բանի հետ, որ մարդը կորցրեց իր հոգևոր իշխանությունը՝ տանուլ տալով այն սատանային Եդեմի պարտեզում: Աստված չի կարող խախտել այն օրինական դիրքը, որը մարդը ներկայումս զբաղեցնում է այս աշխարհում: Այնպես որ, Աստված պետք է գտնի այնպիսի մարդու, որը կտա իր համաձայնությունը, որպեսզի Երկինքն օրինապես մուտք գործի երկրային տիրույթ և գործի դրանում:

Դուք կնկատեք, որ Հռոմեացիների 10.10-ում պետք է տեղի ունենա երկու բան, մինչև որ Երկնքի իշխանությունը և զորությունն արձակվեն այս երկրում: Ես արդեն խոսեցի առաջինի մասին. մենք պետք է լիովին համոզված լինենք և համաձայնենք մեր սրտերում այն ամենի հետ, ինչ ասում է Երկինքը, և դա կոչվում է հավատք: Երկրորդը՝ մենք պետք է հասկանանք, որ հավատքն ինքնին չի արձակի Երկնքի զորությունն այս երկրի վրա: Դա զարմացնո՞ւմ է ձեզ: Թույլ տվեք բացատրել: Լամպն ունի անջատիչ: էլեկտրականությունը միացված է, բայց դուք, միևնույն է, պետք է միացնեք անջատիչը, որպեսզի լամպը լույս տա: Երբ մենք հավատում ենք մեր սրտում Երկնքի խոսքերին, մեր կապը Երկնքի հետ օրինական և արդարացված է դառնում: Բայց դրանից հետո պետք է արձակենք այդ իշխանությունն այստեղ: Նման իմ օրինակին, մենք պետք է միացնենք անջատիչը: Մենք անում ենք դա, երբ դավանում ենք Թագավորության իշխանությունը և վարվում ենք դրա հիման վրա:

Ես գիտեմ, որ կրկնում եմ, բայց Թագավորության այս օրենքը հասկանալը ԿԵՆՍԱԿԱՆՈՐԵՆ ԿԱՐԵՎՈՐ է, որպեսզի դուք կարողանաք ստանալ այն, ինչ Երկինքն ունի ձեզ համար: Այն ամենը, ինչ կստանաք Երկնքից, լինելու է նույն կերպով, ինչպես որ դուք փրկվեցիք՝ սրտով հավատալով երկնային խոսքերին, իսկ հետո դավանելով երկնային խոսքերը կամ վարվելով դրանց համաձայն:

Թագավորությունը, ինչպես որ Հիսուսն էր սովորեցնում և ցուցադրում, լիովին խորթ էր աշակերտների համար: Մենք հաճախ ենք տեսնում, որ աշակերտները շփոթվում էին իրենց տեսածի պատճառով: Ես համոզված եմ, որ մեր կարդացած նախորդ աստվածաշնչյան հատվածում աշակերտները վախեցան դևի դրսևորումից և սկսեցին կասկածել, ինչը զրոյացրեց նրանց հավատքը: Ես ենթադրում եմ, որ երբ նրանք մոտեցան, որպեսզի հանեին այդ դևին, նա դրսևորվեց՝ հավանաբար, այդ տղային գետին գցելով և ազդեցիկ տեսարան սարքելով: Դա կարող էր վախ առաջացնել: Սա պարզապես իմ ենթադրությունն է, բայց համոզված եմ՝ տեղի ունեցավ ինչոր բան, ինչի պատճառով նրանց սրտերը խախտեցին համաձայնությունը Երկնքի հետ և հայտնվեցին անհավատության մեջ:

Ինչ վերաբերում է Հիսուսին, Նա լիովին համոզված էր այն բանում, թե ինչ էր Երկինքն ասում նման իրավիճակում, և Նա հրամայեց այդ դևին դուրս գալ: Այսպիսով, մենք տեսնում ենք, որ խնդիրը, թե ինչու այդ դևը դուրս չէր գալիս, երկրային տիրույթում էր, ոչ թե երկնայինում:

«ՍՐԱ ՀԱՄԱՐ ԱՍՈՒՄ ԵՄ ՁԵԶ, ԹԵ ԱՄԵՆ ԻՆՉ, ՈՐ ԱՂՈԹՔ ԱՆԵԼՈՎ ԽՆԴՐԵՔ, ՀԱՎԱՏԱՑԵՔ, ԹԵ ԿԱՌՆԵՔ (ԿԱՄ՝ «ՈՐ ՍՏԱՑԵԼ ԵՔ»), ԵՎ ԿԼԻՆԻ ՁԵԶ»:

– ՄԱՐԿՈՍ 11.24

Եթե կարիք լիներ ընտրել ընդամենը մեկ աստվածաշնչյան հատված, որը լավագույնս կնկարագրեր Թագավորության գործունեությունն այս երկրի վրա, իմ կարծիքով, այդ հատվածը կլիներ Մարկոս 11.22-24-ը: Այն ավելի լավ հասկանալու համար մենք պետք է կարդանք նախորդ երկու խոսքերը, որոնցում Հիսուսը խոսք ասաց թզենուն, և այն չորացավ: Թզենու վրա պտուղ չգտնելուց հետո Հիսուսն անիծեց այն: Հաջորդ օրը, երբ աշակերտներն անցնում էին նույն տեղով, նկատեցին, որ այն չորացել էր: Պետրոսն ապշեց իր տեսածի պատճառով և զարմացած դիմեց Հիսուսին:

«Եվ Հիսուսը պատասխանեց և ասաց նրանց. «Աստծո հավատքն ունեցե՛ք: Որովհետև ճշմարիտ ասում եմ ձեզ, թե ով որ այս սարին ասի՝ վե՛ր կաց և ծովն ընկի՛ր, և իր սրտում չերկմտի, բայց հավատա, թե ինչ որ ասում է, կլինի նրան, կլինի՝ ինչ որ ասի: Սրա համար ասում եմ ձեզ, թե ամեն ինչ, որ աղոթք անելով խնդրեք, հավատացե՛ք, թե կառնեք (կամ՝ «որ ստացել եք»), և կլինի ձեզ»»:

– Մարկոս 11.22-24

Ուշադրություն դարձրեք, որ Պետրոսը զարմացած էր տեղի ունեցածից: Ինչպե՞ս դա կատարվեց: Հիսուսը պարզապես խոսք ասաց այդ ծառին: Սակայն, անկասկած, այդ ծառն արձագանքեց Հիսուսի խոսքերին և չորացավ: Հիսուսը պատասխանեց՝ հայտնելով Պետրոսին մի «ճշմարտություն» կամ Աստծո Թագավորության մի օրենք: Հիսուսի բացատրության շնորհիվ մենք է՛լ ավելի ենք հասկանում, թե ինչպես է Աստծո Թագավորությունը փոխգործակցում երկրային տիրույթում: Կրկին, այս օրինակում տեսնում ենք նույն օրենքի կիրառումը, որի մասին մենք խոսել ենք. որևէ տղամարդ կամ կին այս երկրի վրա, որը լիովին համոզված է երկնային խոսքերի մեջ (և դրանով արդարացված է), խոսում է կամ արձակում է երկնային իշխանությունը: Իհարկե, այս պատմության մեջ այդ մարդն Ինքը Հիսուսն էր, բայց Հիսուսը շատ պարզ բացատրեց Իր աշակերտներին, որ ցանկացած մարդ կարող է անել այն, ինչ արեց Ինքը:

Համոզված եմ՝ դուք կհամաձայնեք, որ եթե մարդիկ իրականում իմանային այս մասին և հասկանային այն օրենքը, որը Հիսուսը սովորեցրեց Իր աշակերտներին, այն շրջադարձային ազդեցություն կունենար նրանց կյանքում: Ես տեսա Թագավորության ազդեցությունն իմ ընտանիքում, բայց նույնպես զարմանալի էր տեսնել Թագավորության ազդեցությունն այն ընտանիքներում, որոնց մենք սովորեցնում էինք այն, ինչ ինքներս էինք սովորել: Թույլ տվեք մի պատմություն պատմել իմ եկեղեցու անդամներից մեկի մասին, որի կյանքում գործեց այս օրենքը: Շատ հաճախ գիտելիքն այն մասին, թե ինչպիսին է Թագավորությունը և ինչպես է այն գործում, կարող է կյանքի և

մահու հարց լինել: Այս պատմությունն այդպիսին էր:

Ջենիֆերը սկսեց հաճախել մեր եկեղեցի և լսել հավատքի ու Թագավորության մասին: Նա խանդավառվեց՝ իմանալով Թագավորության մեջ իր իշխանության և իրավունքների մասին, քանի որ նա հղի էր իր երկրորդ երեխայով և ցանկանում էր ծննդաբերել տանը: Նա սկսեց ուսումնասիրել այն, ինչ Աստծո Խոսքն ասում էր ծննդաբերության մասին, նաև Աստծո Թագավորության խոստումները, որոնք կարելի էր վերագրել իր երեխային: Նա համոզված էր, որ կարող էր առողջ տնային ծննդաբերություն ունենալ: Նա ընտրեց դայակի և խնդրեց մեր եկեղեցու կանանցից մեկին, որը մի քանի տնային ծննդաբերություն էր ունեցել, ընդունել իր ծնունդը:

Մինչև իր ծննդաբերությունը նա մասնակցում էր յուրաքանչյուր հավաքույթի և յուրացնում էր Թագավորության սկզբունքները: Այս հասկացությունները նոր էին Ջենիֆերի համար, և նա սիրով էր սովորում, որ Աստծո Թագավորության մեջ կան իրական պատասխաններ: Դժբախտաբար, այդ ընթացքում նրա ամուսինը ստիպված էր աշխատել կիրակի օրերին և հիմնականում չէր կարողանում եկեղեցի հաճախել նրա հետ: Ի վերջո, եկավ նրա ծննդաբերելու ժամանակը: Նա կանչեց դայակին և իր ծնունդն ընդունող կնոջը:

Գիշերվա ժամը 2:00-ին, թե 3:00-ին իմ հեռախոսը զանգեց: Ես լսեցի Ջենիֆերի ծնունդն ընդունող կնոջ բղավոցը.

– Հովի՛վ, աղոթե՛ք, խնդրո՛ւմ եմ. երեխան մահացա՛ծ է ծնվել:

Այդ լուրը լիովին արթնացրեց ինձ: Նա շարունակեց՝ ասելով, որ քիչ առաջ երեխային շտապ օգնությամբ հիվանդանոց են տարել, և բժիշկները գրանցել են նրան որպես մեռելածին:

Դրենդան և ես ոտքի ելանք և հագնվեցինք: Ես սկսեցի աղոթել Հոգով՝ սպասելով ցուցումների: Գիտեի, որ սատանան բաց չէր թողնի մեր եկեղեցին չարախոսելու հնարավորությունը՝ այդ իրադարձության պատճառով: Ես արդեն պատկերացնում էի վերնագրերը. «Տնային ծննդաբերություններ խրախուսող եկեղեցու անդամի նորածինը մահանում է»: Իրականում մենք չունենք ոչ մի դիրքորոշում այն մասին՝ արդյո՞ք պետք է ծննդաբերել տանը, սակայն ճիշտ է, որ

մեր եկեղեցու կանանցից շատերը որոշում են ծննդաբերել տանը: Մեր տնից մինչև հիվանդանոց գրեթե 20 րոպեի ճանապարհ էր մեքենայով, և Դրենդան ու ես մեքենայի մեջ շարունակում էինք աղոթել Հոգով: Մոտավորապես ճանապարհի կեսին ես հանկարծ զգացի, որ Աստծո Հոգին իջավ ինձ վրա, և գիտեի, որ երեխայի հետ ամեն ինչ լավ է լինելու: Նույն պահին կինս շրջվեց և ասաց, որ Տերը հենց նոր հայտնեց իրեն, որ երեխայի հետ ամեն ինչ լավ է լինելու:

Ես գիտեի, թե ինչ ասաց Տերը կնոջս և ինձ: Մտնելով վերակենդանացման բաժանմունք, ինձ հետաքրքրում էր՝ ինչ էի ես տեսնելու: Այդ բաժանմունքում ես տեսա յոթ-ութ բուժքրոջից բաղկացած մի խումբ, որոնք կանգնած էին լիովին սովորական, վարդագույն և լաց լինող երեխայի շուրջ: Ես ուշադիր նայեցի նրանց դեմքերին: Որպես կանոն, երբ մի խումբ կանայք նայում են նորածնին, նրանք ժպտում են: Բայց այս դեպքում ոչ ոք չէր ժպտում: Փոխարենը, նրանց դեմքերին զարմանք էր նկատվում:

Մենք հանդիպեցինք այն կնոջը, որը զանգել էր մեզ: Նա կրկին ասաց, որ երեխան մեռելածին է ճանաչվել տանը և 20 րոպե անց հիվանդանոց է հասցվել: Հիվանդանոցը նույնպես գրանցել էր երեխային որպես մեռելածին, երբ նրան նոր էին բերել, բայց հանկարծ, առանց որևէ միջամտության, նա արթնացել էր: Փա՜ռք Աստծուն: Դրենդան և ես հուզվեցինք՝ տեսնելով, որ երեխան ողջ և առողջ է, ինչպես որ Սուրբ Հոգին ասել էր մեզ:

Միևնույն ժամանակ, մեկ այլ շտապ օգնության մեքենա ծննդատան բաժանմունք էր բերել նորածնի մորը՝ Ձենիֆերին: Կինս՝ Դրենդան, բարձրացավ ծննդատան այն հարկը, որտեղ Ձենիֆերը հանգստանում էր, և ասաց.

– Ձե՛նիֆեր, քո երեխան ողջ է, նա այնքա՜ն լավիկն է:

Ձենիֆերի կողքին կանգնած բուժքույրը միջամտեց և կտրուկ ասաց.

– Ո՛չ, այդ երեխան թաղման պարկի մեջ է:

Կինս մեծ վճռականությամբ հանդիմանեց այդ բուժքրոջ սխալ վարքը:

Այսօր, փա՛ռք Աստծուն, այդ նորածին աղջիկը, որին անվանեցին Հեյլի, գեղեցիկ երիտասարդ աղջիկ է, ով չունի ո՛չ ուղեղի վնասվածք, ո՛չ էլ որևէ կողմնակի առողջական խնդիր: Հասկանալով, որ Աստծո Թագավորությունը գործում է հոգևոր օրենքների հիման վրա, ես գիտեի, որ այդ արդյունքը պատահական չէր: Այնպես որ, որպես հոգևոր գիտնական (ոչ թե «Քրիստոնեական գիտության» հետևորդ, այլ մարդ, որն ուսումնասիրում է Աստծո Թագավորությունը), ես ուզում էի հասկանալ, թե իրականում ինչ էր տեղի ունեցել:

Ես գիտեի, որ նորածին Հեյլին պաշտոնապես մեռելածին էր ճանաչվել տուն ժամանած շտապ օգնության աշխատակազմի կողմից: Նույնպես գիտեի, որ երեխան մեռելածին էր ճանաչվել հիվանդանոցի կողմից: Այդ դեպքում, ի՞նչ էր կատարվել: Ես խոսեցի Զենիֆերի ծնունդն ընդունող կնոջ հետ, որը ներկա էր ծննդաբերությանը, և խնդրեցի մանրամասնորեն պատմել այն, ինչ տեղի էր ունեցել: Ես փորձում էի բանալիներ գտնել: Նա ասաց, որ ծննդաբերությունը լավ է ընթանում, մինչև որ երեխան ծնվեց: Նա չուներ կենդանության նշաններ և մուգ կապույտ գույնի էր: Ինքը փորձեց կյանքի վերադարձնել երեխային, բայց չկարողացավ: Նա շարունակեց՝ ասելով, որ Զենիֆերի ընտանիքի անդամներից շատերն այդտեղ էին, և խուճապի էին մատնվել: Բայց Զենիֆերը հանդարտորեն պատվիրեց նրանց լռել, իսկ հետո ուղղեց մատն իր ամուսնու երեսին՝ ասելով. «Նույնիսկ մեկ բառ չասես. այս երեխայի հետ ամեն ինչ լավ է լինելու»:

Ես անմիջապես ընդհատեցի նրան և խնդրեցի կրկնել, թե ինչ է Զենիֆերն ասել իր ամուսնուն: Նա ասաց ինձ նույն բանը, ինչ արդեն ասել էր՝ այն, որ Զենիֆերն ուղղել էր մատն ամուսնու երեսին՝ ասելով, որ նույնիսկ մեկ բառ չասի, և որ երեխայի հետ ամեն ինչ լավ է լինելու: Զարմանալի՛ է: Ահա և բանալին: Հենց այդ պահը, այդ հռչակումն էր, որ փրկեց նորածին Հեյլիի կյանքը: Ես զգում էի ինձ ինչպես քննիչ, որը մեծ գործ էր բացահայտել: Ես հիացած էի: Ամեն ինչ այնքա՛ն պարզ էր, բայց և այնքա՛ն խորը: Զենիֆերը պարզապես հոգևոր օրենք էր կիրառել այդ իրավիճակում, և այն փրկել էր իր նորածնի կյանքը: Մտորելով այն մասին, ինչ ես քիչ առաջ լսեցի, այդ ամենն իմաստավորվեց իմ մտքում:

Զենիֆերը գիտեր, որ իր աշխատանքային գրաֆիկի պատճառով, նախորդ ամիսների ընթացքում իր ամուսինը չէր կառուցել իր հավատքն այնպես, ինչպես ինքը: Նա նույնպես գիտեր, որ եթե իր ամուսինը՝ որպես ընտանիքի գլուխ, համաձայներ ծննդաբերության պահին տեղի ունեցած այդ զարհուրելի տեսարանին, երեխան ոչ մի դեպքում չէր ապրի: Ահա թե ինչու նա առաջին հերթին դիմեց իր ամուսնուն և թույլ չտվեց նրան համաձայնել իրենց երեխայի մահվանը: Փոխարենը, Զենիֆերը համոզված էր, որ երեխան ապրելու է, և նրա հետ ամեն ինչ լավ է լինելու, և նա հռչակեց դա համարձակությամբ ու հավատքով:

Հենց որ Զենիֆերը դուրս գրվեց հիվանդանոցից, նա այցելեց իր տուն եկած շտապ օգնության անձնակազմին և հարցրեց, թե ինչ էին արել երեխայի համար այդ գիշեր հիվանդանոցի ճանապարհին: Նրանք նայեցին նրան երկչոտ հայացքով.

– Ոչի՛նչ,- ի վերջո ասաց նրանցից մեկը:

– Ի՞նչ նկատի ունեք,- հարցրեց Զենիֆերը: – Դուք կատարե՞լ եք սիրտ–թոքային վերակենդանացում:

– Ո՛չ,- ասացին նրանք:

– Դուք ինչ-որ բան արե՞լ եք երեխայի համար:

– Ո՛չ,- կրկին պատասխանեցին նրանք:

Բժիշկներն ասացին Զենիֆերին, որ երեխան պարզապես մահացած է, և նրանք հույս չունեին, որ նա կապրի: Այնուամենայնիվ, հիվանդանոց հասնելուց հետո երեխան պարզապես «արթնացավ»: Այդ շտապ օգնության անձնակազմն արժանացավ գովեստի քաղաքի հիվանդանոցի և հրշեջ ծառայության կողմից: Նրանց շնորհվեց «Տարվա արձագանքը» կոչվող ամենամյա մրցանակ, որը տրվում էր բարդ իրավիճակների արդյունքների հիման վրա: Այնուամենայնիվ, նրանք խոստովանեցին, որ ոչինչ չէին արել:

Վերջերս մենք հրավիրեցինք Հեյլիին մեր հեռուստատեսային հաղորդմանը իր մոր՝ Զենիֆերի հետ: Բոլորս, արցունքները մեր աչքերին, կրկին ցնծացինք Աստծո Թագավորության համար: Մենք ուրախ էինք, որ այդ իրավիճակում կար ինչ-որ մեկը, ով գիտեր, թե ինչպես

օգտագործել Թագավորության հոգևոր օրենքները և իշխանությունը:

Այս պատմության մեջ Զենիֆերը լիովին համոզված էր այն բանում, ինչ ասում է Երկինքը, և նա կիրառեց Երկնքի իշխանությունն իր իրավիճակում՝ իր խոսքի միջոցով. Թագավորության օրենքը գործո՛ւմ է:

Եվս մեկ ընտանիք իմ եկեղեցում ունեցավ հետևյալ փորձառությունը Աստծո Թագավորության նույն օրենքի հետ: Երկու քույր որոշեցին միասին ճաշել, ինչը հեշտ գործ չէր, քանի որ նրանք երկուսով 12 կամ 13 երեխա ունեին: Մինչ նրանք ճաշում էին, նկատեցին, որ չորսամյա Զոելը չկա: Փնտրեցին երեխային տնով մեկ, բայց չգտան: Նրանք մտածեցին, որ միգուցե թաքնվել է, բայց կրկին, ամենուր փնտրելուց հետո չգտան երեխային: Հանկարծ Թինան՝ նրա մայրը, մի սարսափելի բան մտաբերեց: Տան ետնամասի լողավազա՛նը: Նա դուրս վազեց տան ետնամասի դռնից իր զարմուհու՝ տասներեքամյա Կորտնիի հետ: Տեսնելով անշարժ Զոելին լողավազանի հատակին՝ Թինան վախից կորցրեց իրեն: Ոչ ոք չգիտեր, թե որքան ժամանակ էր նա մնացել ջրի տակ: Թինան բղավեց՝ խնդրելով ինչ-որ մեկին զանգել 911, և սուզվեց լողավազանի մեջ՝ Զոելին դուրս բերելու համար: Երեխան չէր շնչում. նա մոխրագույն էր դարձել և անշարժ էր:

Այդ տասներեքամյա աղջիկը, որը մեծացել էր մեր եկեղեցու մանկական ծառայությունում, ասաց իր մորաքրոջը.

– Ո՛չ, Թի՛նա մորաքույր, պետք չէ զանգահարել 911: Մենք իշխանություն ունենք: Մենք պետք է աղոթենք:

Նրանք սկսեցին աղոթել, բայց ոչինչ տեղի չունեցավ: Թինան կրկին բղավեց.

– Զանգե՛ք 911:

Կորտնին ասաց իր մորաքրոջը.

– Թի՛նա, մորաքո՛ւյր, մենք պետք է կյանք խոսենք նրան: – Եվ ասաց. – Զո՛ել, Հիսուսի անունո՛վ, արթնացի՛ր:

Հանկարծ Զոելը սկսեց ծանր շնչել, ջուր թքեց և կրկին գիտակցության եկավ՝ լիովին կազդուրվելով:

Մտաբերելով այդ պատմությունը՝ ես միշտ զարմանում եմ, բայց

ոչ թե այն պատճառով, որ այդ տղան անվնաս էր, այլ այդ տասներեքամյա աղջկա և այդ պահին նրա ինքնատիրապետման համար: Կյանքի ու մահվան հետ կապված խիստ ճնշող իրավիճակում նա կարողացավ գնահատել, թե ինչ է պետք անել՝ առանց տեղի տալու վախին: Կորտնին ցույց տվեց, որ գիտելիքն այն մասին, թե ինչպես է գործում Թագավորությունը, հաճելի քարոզից ավելին է. այն կյանքի ու մահվան հարց է:

Կրկին, ուշադրություն դարձրեք, թե ինչպես է գործում Թագավորության օրենքը: Սկզբում Կորտնին ասաց, որ իրենք պետք է աղոթեն, և նրանք այդպես էլ վարվեցին, բայց ոչինչ տեղի չունեցավ: Պատճառն այն էր, որ աղոթելիս մենք չենք կիրառում Աստծո իշխանությունը և զորությունը: Մենք աղոթում ենք՝ առաջնորդություն ստանալու համար: Այդ պահին նրանց հենց դա էր պետք: Դուք կարող եք տեսնել այս պատմության մեջ, որ աղոթքից հետո Կորտնին ասաց, որ իրենք պետք է կյանք խոսեին Ձոելին: Երբ նրանք արեցին դա, երեխան արթնացավ լիովին առողջ վիճակում և այդպիսին է մինչև օրս: Կրկին, մենք տեսնում ենք այնպիսի սիրտ, որը լիովին համոզված է այն բանում, ինչ Երկինքն ասում է, սակայն ոչինչ տեղի չի ունենում, քանի դեռ Թագավորության իշխանությունը չի արձակվում այս երկրային տիրույթում հավատք ունեցող տղամարդու կամ կնոջ կողմից:

Թույլ տվեք պատմել ևս մեկ պատմություն, որը մեր մտերիմ ազգականների մասին է: Դրենդայի եղբայրը հիվանդանոց էր տարել իր կնոջը՝ Քենդիին, իրենց հինգերորդ երեխային ծննդաբերելու համար: Դրենդան և ես հասանք հիվանդանոց առավոտյան, որպեսզի տեսնեինք ընտանիքի նոր անդամին: Մենք մտածում էինք, որ նա արդեն իսկ ծննդաբերել է՝ մեր գալուց շատ առաջ: Սակայն իմացանք, որ ծննդաբերությունը մի քանի անգամ ձգձգվել է, և երեխան հենց նոր է ծնվել: Երբ ծննդատուն մտանք, փոքրիկ Հոլանդին բերում էին նորածինների սենյակ: Դուք երևի տեսած կլինեք, որ հիվանդանոցների ծննդատներում նորածինների սենյակը սովորաբար շրջապատված է պատուհաններով, ինչը թույլ է տալիս տեսնել նորածիններին, երբ նրանց բերում են:

Երբ նրանք ներս էին տանում փոքրիկ Հոլանդին, ես նկատեցի, որ աղջիկը գրեթե սպիտակ է: Զոնիի բոլոր երեխաներն էլ գրեթե սպիտակ էին, խարտյաշ մազերով, և սկզբում մտածեցի, որ նորածնի գունատությունը, երևի, նրա երեխաներին բնորոշ տեսքն էր: Բայց նա առողջ տեսք չուներ: Հանկարծ բոլոր բժիշկների մոտ իրարանցում սկսվեց: Բուժքույրերն անմիջապես իջեցրին վարագույրները, որպեսզի ես չտեսնեի նորածինների սենյակը, և ես գիտեի, որ դա լավ նշան չէր: Թեև վարագույրներն իջեցրած էին, կար մի բացվածք, որից ես տեսնում էի ամեն ինչ: Բուժքույրերը բացեցին սարքավորումները, և մի բժիշկ սկսեց սիրտ-թոքային վերակենդանացում անել փոքրիկ Հոլանդի վրա: Ես գնացի մյուս դռան մոտ, որտեղից պարզ լսում էի բժիշկների խոսակցությունը: Ես ցնցվեցի. նրանք ասում էին, որ երեխայի սիրտը չի բաբախում, և որ նրանք չեն կարողանում վերականգնել նրա սրտի աշխատանքը: Ես շարունակեցի լսել և հասկացա, որ սրտի աշխատանքը վերականգնող սարքը չափից շատ էր աշխատում: Ես լսում էի նոր զարկ ամեն 15-20 վայրկյանը մեկ, բայց Հոլանդի սիրտը չէ՛ր բաբախում:

ՀԻՇԵՔ՝ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ ԳՈՐԾՈՒՄ ԵՆ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԴԵՊՔՈՒՄ ԵՎ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐԻ ՀԱՄԱՐ:

Բժիշկը դուրս եկավ սենյակից և մոտեցավ Զոնիին.

– Վիճակը լավ չէ, Զո՛նի. ցավում եմ, բայց մենք դեռ փորձում ենք:

Մեզ թույլ չտվեցին մտնել նորածինների սենյակ. այնպես որ, Դրենդան և Զոնին դրեցին իրենց ձեռքերը սենյակի մի կողմի դռան վրա, իսկ ես դրեցի ձեռքս սենյակի մյուս կողմի դռան վրա: Մենք սկսեցինք աղոթել և հռչակել, որ Հոլանդը կապրի և չի մահանա, և որ նրա հետ ամեն ինչ լավ կլինի: Մենք հրամայեցինք նրա սրտին բաբախել՝ Հիսուսի անունով:

Հանկարծ Զոնիի հետ խոսող բժիշկը շատ հապճեպ դուրս եկավ նորածինների սենյակից: Նա արագ անցավ մեր կողքով՝ առանց մեկ բառ ասելու: Մի քանի րոպեից շտապելով վերադարձավ, և մի բուժ-

քույր գալիս էր նրա ետևից՝ բարձրաձայն աղաղակելով.

– Բժի՛շկ, մենք չե՛նք կարող անել դա: Մենք չունենք այդ պրոցեդուրան անելու լիազորություն այս հիվանդանոցում: Ես չե՛մ կարող թույլ տալ ձեզ վերցնել այդ արյունը:

Նա ուշադրություն չդարձրեց նրան և վերադարձավ նորածինների սենյակ: Մի ձեռնարկ վերցրեց, և ես տեսնում էի, որ նա ուշադրությամբ ուսումնասիրում էր այն՝ հասկանալու համար, թե ինչպես ինչ-որ պրոցեդուրա կատարեր: Ես հետևում էի վարագույրի բացվածքից, թե ինչպես նա սկսեց մի երկար խողովակ մտցնել նորածնի մեջ: Ես հասկացա, որ նա արյուն էր տալիս երեխային:

Հանկարծ լսեցի սրտի զարկերի ձայնը: Այն սկսեց արագանալ և հասավ նորածնի սովորական արագ զարկերի տեմպին: Մեկ րոպեից բժիշկը դուրս եկավ և ասաց.

– Այնտեղ հրեշտակներ կային. Աստված օգնեց ինձ փրկել այս երեխային:

Երևում էր, որ նա ցնցված էր: Հետագայում իմացանք, որ այդ բժիշկը հերթապահության չէր այդ օրը, և նա չէր ընդունել Քենդիի ծնունդը: Նա պարզապես հիվանդանոց էր եկել՝ ստուգելու մեկ այլ հիվանդի, երբ այդ ամենը տեղի էր ունեցել: Ես տեսնում էի, որ այդ բժիշկը դեռ զարմացած էր կատարվածով. նա ասաց, որ Հոլանդի սիրտը 36 րոպե չի բաբախել:

Այսօր Հոլանդը չորսամյա գեղեցիկ, առողջ երեխա է: Ես հավատում եմ, որ մեր գիտելիքն Աստծո Թագավորության մասին պատասխաններ բերեց այդ իրավիճակում: Ես դեռ հիշում եմ, որ դնելով ձեռքս այդ նորածինների սենյակի դռան վրա՝ ասում էի մտքումս. «Մենք թաղում չե՛նք անի Դրենդայի փոքրիկ զարմուհու համար: Մենք չե՛նք տեսնի այդ բանը»:

Մի պահ մտորենք այն մասին, թե ինչպես Թագավորությունն ազդեց յուրաքանչյուր իրավիճակի վրա, որի մասին ես պատմեցի: Ուզում եմ, որ հիշեք, որ Թագավորության օրենքները գործում են յուրաքանչյուր դեպքում և յուրաքանչյուրի համար: Ինչպես ասացի այս գրքի սկզբում, այս երկրային տիրույթի բնական օրենքները գործում

են՝ տալով միևնույն արդյունքներն ամեն անգամ: Դրանք անկողմնակալ են և գործում են յուրաքանչյուրի համար, ով ժամանակ է հատկացնում, որպեսզի ուսումնասիրի և կիրառի դրանք: Էլեկտրականությունը գործում է ԱՄՆ-ում նույն կերպով, ինչ Աֆրիկայում. տարբերություն չկա:

Երբ սկսեցի գիտակցել, որ Աստծո Թագավորության մեջ գործում են շատ հստակ, թեկուզև թաքնված կանոններ, հասկացա, որ գտել եմ իմ խնդիրների լուծումը: Ես գիտակցեցի, որ Աստված երբեք չէր զրկել ինձ և երբեք չէր որոշել չօրհնել կամ չօգնել կարիքի ժամանակ: Ո՛չ, ես հասկացա, որ Աստված տվել է ինձ այն, ինչի կարիքը ես երբևէ կունենամ կյանքում՝ Հիսուս Քրիստոսի միջոցով, Ով Իր զոհի շնորհիվ հասանելի է դարձրել ինձ այն, ինչ Երկինքն ունի: Այժմ հասկացա, որ Թագավորությունը գործում է սահմանված օրենքներով, որոնք կարող եմ սովորել և կիրառել իմ կյանքում:

Ես սկսեցի կարդալ յուրաքանչյուր պատմություն Աստվածաշնչում այլ վերաբերմունքով՝ փնտրելով բանալիներ, որոնք հայտնում են Թագավորության նորանոր օրենքներ: Ես հանձն առա հոգևոր գիտնական դառնալ, որպեսզի հասկանամ, թե ինչ են սովորեցնում այն աստվածաշնչյան պատմությունները, որոնք ես այդքան հաճախ կարդում էի: Հովհաննեսի առաջին թղթում գրված այս խոսքը տարօրինակ և անհասկանալի է շատերի համար: Ես գիտեմ, մենք արդեն կարդացել ենք այս խոսքը, բայց կրկին կարդանք, քանի որ այն ներկայացնում է մի ճշմարտություն, որը ձեր պատասխանն է:

> *«Եվ սա է այն համարձակությունը, որ ունենք դեպի Նա, թե ինչ որ Նրա կամքի պես խնդրում ենք, լսում է մեզ: Եվ եթե գիտենք, թե լսում է մեզ (ընդունում է մեր հայցը), ինչ որ խնդրում ենք, ԳԻՏԵՆՔ, որ առնում ենք մեր խնդրանքները, որ խնդրեցինք Նրանից»:*
>
> – Ա Հովհաննես 5.14,15

Ես սիրում եմ այս խոսքը, քանի որ այն վերաբերում է օրենքին, իսկ օրենքը վստահություն է հաղորդում մեզ, որ մենք արդարադա-

տություն կստանանք: Սա է մեր համարձակությունը. եթե խնդրում ենք ինչ-որ բան ըստ Աստծո կամքի (օրենքի՝ այն բանի, ինչ Աստված ճիշտ է համարում), Նա լսում է մեզ: Կրկին, «լսում է մեզ» արտահայտությունը չի նշանակում, որ Աստված պարզապես լսում է մեր ձայնը կամ բառերը, այլ՝ որ Նա ընդունում է մեր հայցը: Պատկերացրեք դատավորի, որն ընդունում է որևէ հայց և քննում է այն ըստ օրենքի, ոչ թե ըստ իր զգացմունքների (համենայն դեպս, պետք է այդպես լինի), և կհասկանաք այս խոսքը: Նա լսում է մեզ. նա ընդունում է մեր հայցը կամ լսում է այն, և մենք կարող ենք վստահ լինել, որ արդարադատություն կստանանք, այսինքն՝ կունենանք այն, ինչն ըստ օրենքի պատկանում է մեզ:

Իմ ընկե՛ր, ես իսկապես կարծում եմ, որ դուք պետք է կանգ առնեք և կրկին կարդաք սա ավելի դանդաղ: Եթե այն, ինչ դուք կարդացիք, ճիշտ է (իսկ դա ճիշտ է), ձեր կյանքը կլցվի մեծ ուրախությամբ: Այն մարդիկ, որոնք աղոթում են առանց այս գիտելիքի, չունեն վստահություն. նրանք պարզապես մրթմրթում են աղոթքի ժամանակ: Հիսուսն ասաց Մատթեոս 6.7-13-ում.

> *«Եվ երբ աղոթում եք, մի՛ մրթմրթացեք հեթանոսների նման, որովհետև նրանք մտածում են, որ կլսվեն իրենց շատ խոսքերի պատճառով»:*
>
> – Մատթեոս 6.7, NIV

«Մրթմրթալ» բառը նշանակում է արտաբերել անիմաստ խառնաշփոթ բառեր և հնչյուններ: Ահա թե ինչպես է աղոթում մարդկանց մեծ մասը: Նրանք չունեն պատկերացում այն մասին, որ իրենք ունեն արդարադատություն ստանալու իրավունք, և ո՛չ էլ պատկերացնում են, որ Աստված արդեն իրավաբանորեն տվել է իրենց ամեն ինչ Իր Թագավորության մեջ: Կարիք չկա, որ դուք աղաչեք կամ լաց լինեք այն բանի համար, ինչն արդեն ձերն է:

Պատկերացրեք ճանապարհին կանգնած մի ոստիկանի, որը մի բեռնատար է կանգնեցնում, և նա սկսում է լաց լինել ու աղաչել բեռնատարին կանգնել. «Խնդրո՛ւմ եմ, բեռնատա՛ր, կանգնի՛ր:

Ողորմի՛ր ինձ: Խնդրո՛ւմ եմ, շա՛տ եմ խնդրում, կանգնի՛ր»: Դա կլինի ամենախղճալի և խայտառակ վիրավորանքը Միացյալ Նահանգներին և դրա իրավական համակարգին: Ո՛չ, ոստիկանը կանգնում է բարձր գլխով և պարզորեն հրամայում է բեռնատարին կանգնել, և այն կանգնում է՝ համաձայն այդ երկրի օրենքի և նրա սպայական պաշտոնի, որը ներկայացնում է իր երկրի կառավարությունը:

Այն մարդիկ, ովքեր աղաչում են Աստծուն, չունեն պատկերացում իրենց երկրի օրենքի և իրենց դիրքի մասին: Եթե ոստիկանն աղաչում է բեռնատարին կանգ առնել, դա վիրավորանք է իր երկրի համար, քանի որ դա նշանակում է, որ այդ երկրում չկա օրենք և իշխանություն: Նման երկրում կարող է միայն անիշխանություն լինել: Երբ քրիստոնյաները մշտապես աղաչում են, դա պատկերում է Աստծո Թագավորությունը որպես թույլ տիրույթ, որը չունի պատասխաններ: Մարդիկ սկսում են կասկածել՝ արդյո՞ք Աստված ցանկանում է և կարող է օգնել իրենց, այնինչ նրանք արդեն իսկ իրավունք ունեն ստանալու այն, ինչ խնդրում են: Հիսուսը պարզ պատասխան է տալիս այդ անզոր և թախանձող աղոթքներին. «ՀԵՐԻ՛Ք է»:

> *«Եվ աղոթք անելիս շատախոս մի՛ եղեք ինչպես հեթանոսները, որովհետև նրանք կարծում են, թե իրենց շատ խոսելու համար կլսվեն: Արդ նրանց մի՛ նմանվեք, որովհետև ձեր Հայրը գիտի, թե ինչ բաներ են պետք ձեզ, Նրանից խնդրելուց առաջ: Արդ դուք այսպես աղոթք արեք.*
>
> *Մեր Հա՛յր, որ Երկնքում ես, սուրբ լինի Քո անունը: Գա Քո արքայությունը, լինի Քո կամքը, ինչպես Երկնքում, այնպես էլ երկրի վրա: Մեր ամեն օրվա հացը տուր մեզ այսօր: Եվ թող մեզ մեր պարտքերը, ինչպես մենք էլ թողնում ենք մեր պարտականներին: Եվ մի՛ տար մեզ փորձության մեջ, այլ ազատի՛ր մեզ չարից»:*
>
> – Մատթեոս 6.7-13

Հիշեք՝ այս հատվածում Հիսուսը սովորեցնում է մեզ աղոթել: Դժբախտաբար, շատերը դրել են այս խոսքերը գեղեցիկ շրջանակների

մեջ իրենց տներում, սակայն չեն հասկանում դրանց իմաստը: Այս հատվածը կոչվում է «Տերունական աղոթք», բայց այստեղ Հիսուսը սովորեցնում էր Իր աշակերտներին աղոթել: Նա բառացիորեն չէր աղոթում նրանց հետ այս խոսքերը, ինչպես որ մենք ենք անում մեր եկեղեցական ծառայություններին: Այս հատվածը ձեռնարկ է այն մասին, թե ինչպես աղոթել և արդյունք ստանալ. այն պարզապես անգիր սովորելու համար չէ:

«Գա Քո արքայությունը, լինի Քո կամքը, ինչպես Երկնքում, այնպես էլ երկրի վրա». այս խոսքը հրահանգ է այն մասին, թե ինչպես աղոթել: Մենք պետք է աղոթենք՝ բերելով Աստծո կամքը, որը Երկնքում է, այս երկրային տիրույթի և մեր իրավիճակների մեջ: Այսպիսով, ո՞րն է ձեր պատասխանը: Հավատացե՛ք, որ այն, ինչ Աստված ասում է, ձերն է, և օգտագործեք Երկնքի Թագավորության մեջ ունեցած ձեր իշխանությունը, որպեսզի երկիր իջեցնեք Երկինքը և հոգաք թե՛ ձեր, թե՛ ձեզ շրջապատող մարդկանց կարիքները:

Այնպես որ, մի պահ կանգ առեք և մտածեք այս մասին: Եթե դուք իմանայիք՝ առանց կասկածի նշույլի, որ ձեր աղոթքը գործում է, և որ ամբողջ Երկինքը սատարում է այն, արդյո՞ք դա վստահություն կհաղորդեր ձեզ աղոթելու ժամանակ: ԱՅՈ՛: Իմանալով ձեր հստակ օրինական իրավունքները՝ որպես երկնային քաղաքացի, իմանալով, թե ինչ է արդեն ձրիաբար տրվել ձեզ, հասկանալով այդ ամենը ստանալու գործընթացը և վայելելով այդ օրենքների առավելությունները, դուք կարող եք ապրել լիովին նոր կյանքով՝ Թագավորության կյանքով: Ի՞նչ տեղի կունենար վախի հետ: Ի՞նչ տեղի կունենար անորոշության հետ: Ի՞նչ կերպով այդ գիտելիքը վստահություն կհաղորդեր ձեր ապագայի հանդեպ. ի՞նչ կերպով այն վստահություն կհաղորդեր ձեզ ցանկացած փոթորկի ժամանակ: Ահա թե ինչպես Թագավորությունն ազդեց Դրենդայի և ինձ վրա, երբ մենք սկսեցինք բացահայտել այն: Մենք մշտապես զարմանում էինք մեր տեսածով: Ո՛չ, թույլ տվեք այլ կերպ ասել. մենք մշտապես զարմանում և ապշում էինք: Ավելին՝ մենք զարմանում էինք՝ գիտակցելով, թե ինչպիսի իշխանություն է Աստված տվել եկեղեցուն, որպեսզի եկեղեցին՝ որպես երկնային կառավարման ներկայացուցիչ, կիրառի այն այս երկրի վրա:

«Որովհետև կյանքի Հոգու ՕՐԵՆՔԸ Հիսուս Քրիստոսում ազատեց ինձ մեղքի և մահի ՕՐԵՆՔԻՑ»:

– Հռոմեացիների 8.2

Աներևակայելի էր իմանալը, որ մենք ազատված ենք «մեղքի և մահի օրենքից», և որ մենք ստացել ենք Թագավորությունը և կարող ենք ապրել «կյանքի հոգու օրենքի» ներքո: Կրկին, շատ ավելի աներևակայելի էր տեսնելը, թե ինչպես էր այդ օրենքը բերում Աստծո Թագավորության արդարության պտուղները մեր կյանքում:

Թագավորության շնորհիվ ես վերապրեցի բժշկություն իմ մարմնում, ինչպես և զգացմունքային բժշկություն՝ ստանալով նոր հույս և ազատվելով հակադեպրեսանտ դեղամիջոցներից: Թագավորության շնորհիվ ես ազատվեցի աղքատությունից, երբ հազիվ էի ամսական 300 դոլար վճարում 1800-ական թվականներից կառուցված մի գյուղական տան համար, և կառուցեցի 710 քառակուսի մետր տարածքով սեփական տուն 24 հեկտար գեղեցիկ հողատարածքի վրա: Իմ կնոջը սա շատ ավելի է դուր գալիս: Անգնահատելի է որակյալ մեքենաներ վարելը, որոնք ամեն օր չեն փչանում: Այն, որ ես կարող էի տարեկան հարյուր հազարավոր դոլարներ տրամադրել Ավետարանի համար, անհնարին միտք էր թվում ընդամենը մի քանի կարճ տարիներ առաջ: Կյանքը՝ Թագավորության ազդեցության լույսը, կլանում էր խավարը: Եվ ինչպես որ Ծննդոց գրքում Աստված ասաց. «Բարի է»՝ նայելով Իր ավարտած արարչագործությանը, ես նույնպես զարմանքով նայում էի այդ ամենին և ասում. «Այս ամենը բարի է, շա՜տ բարի է»:

Դրենդան և ես այնքա՜ն ոգեշնչված էինք, որ Աստծո Թագավորության և մեր կյանքի վկայության մասին պատմում էինք նրանց, ովքեր ցանկանում էին լսել մեզ: Մարդիկ մեր եկեղեցում որսում էին դա և ստանում նույն արդյունքները, և նրանցից մեկը մեր տասներկուամյա դուստրն էր: Նա տեսել էր շատ բաներ, որոնք Աստված արել էր, և կրկին ու կրկին ականատես էր եղել Թագավորության հաստատուն օրենքների արդյունքին մեր կյանքում: Ես գիտեի, որ նա հետևում էր մեզ և սովորում էր այդ օրենքները, բայց մի պատ-

մություն ցույց տվեց ինձ, թե որքան բան էր նա իրականում սովորել:

Մեկ անգամ ես գնացի նրա ննջասենյակ՝ բարի գիշեր մաղթելու, և այնտեղ ինչ-որ բան փոխվել էր: Նրա պատի վրա պոմերանյան շպիցի լուսանկար էր փակցված: Յուրաքանչյուր փորձառու ծնողի համար նման լուսանկարն անսխալական նշան է, որ շուտով իրենից շուն են խնդրելու: Ես որոշեցի թույլ չտալ դա, քանի որ չէի ցանկանում ևս մեկ տնային շուն ունենալ: Կիրստենի քույր Պոլին արդեն ուներ տնային շուն, և նրանք քնում էին նույն ննջասենյակում. այնպես որ, Պոլիի շունը մշտապես Պոլիի և Կիրստենի հետ էր:

Ես մեղմորեն ասացի Կիրստենին, որ ինձ շատ դուր եկավ այդ լուսանկարը, բայց չէի ցանկանում ևս մեկ տնային շուն ունենալ: Եթե նա ցանկանում էր շուն ունենալ, պետք է ավելի շատ ժամանակ տրամադրեր իր քրոջ գորշուկաշանը: Կիրստենը ոչինչ չասաց ինձ այդ գիշեր, այլ պարզապես ընդունեց իմ ասածը: Ես մտածեցի, որ ամեն ինչ ավարտված է, բայց դրանից հետո նա մի քանի անգամ հիշատակեց պոմերանյան շպիցի մասին. «Մի՞թե հրաշալի չէր լինի պոմերանյան շպից ունենալը», կամ «Նրանք այնքա՛ն հաճելի և փափկամազիկ շնիկներ են»: Իհարկե, նման մի բան ասելուց հետո Կիրստենն արագորեն ցույց էր տալիս պոմերանյան շպիցի մի լուսանկար, որը նա գտել էր ինտերնետում: Կրկին, ես պարզապես ասում էի՝ ո՛չ: Ես էի մեր տան ղեկավարը, և մենք չէինք ունենալու ևս մեկ շուն մեր տանը:

Կրկին, ես մտածեցի, որ ամեն ինչ ավարտված է, մինչև որ գրեթե մեկ ամիս անց, երբ մենք տուն վերադարձանք եկեղեցուց, Կիրստենը վստահաբար մոտեցավ ինձ և ժպիտը դեմքին ասաց.

– Հայրի՛կ, այսօր ես հավատքով ստացա պոմերանյան շպիցի, ինչպես որ դու սովորեցնում ես:

Ես կրկին հիշեցրի նրան, թե ինչ էի ասել նախկինում ևս մեկ շուն ունենալու մասին: Շարունակելով ժպտալ՝ նա պնդեց.

– Բայց, հայրի՛կ, մայրիկն ասում է, որ Աստված կարող է փոխել թագավորի սիրտը:

Նրա խոսքերը լցված չէին ապստամբությամբ: Նա պարզապես

համաձայնել էր իր մոր հետ և աղոթել, որ Աստված փոխեր իմ սիրտը: Ես այլևս ոչինչ չէի կարող անել: Ես հասկացա, որ նա խոսել էր իր մոր հետ, և մայրը խրախուսել էր նրան, որ Աստված իսկապես կարող էր փոխել իմ սիրտը:

Այդ խրախուսանքի հիման վրա, այդ առավոտ նա կիրառել էր իր հավատքը եկեղեցում՝ ցանելով և դավանելով, որ ինքը հավատքով ստացել է այդ շանը: Հավաստիացնելով նրան իմ սիրո մեջ, ես կրկին հայտնեցի իմ դիրքորոշումը.

– Մենք չենք ունենա ևս մեկ շուն մեր տանը:

Ես ասացի, որ ցավում եմ, բայց դա տեղի չի ունենալու: Թվում էր՝ իմ խոսքերը չմտահոգեցին նրան, և նա ժպտալով հեռացավ: Կրկին, ես մտածեցի, որ վերջապես ամեն ինչ ավարտված է:

Բայց մոտավորապես մեկ ամիս անց ինձ հրավիրեցին սովորեցնելու Միսսիսիպիում գտնվող մի փոքր եկեղեցում: Դա շատ փոքր գյուղական եկեղեցի էր՝ շրջապատված կիլոմետրերով ձգվող բաց դաշտերով: Առաջին երեկոյի ավարտին հովիվը մոտեցավ ինձ՝ ասելով, որ Տերը խոսել է իր հետ ծառայության ընթացքում: Նա ասաց.

– Չգիտեմ՝ դուք տեղյա՞կ եք, թե՞ ոչ, բայց ես նաև զբաղվում եմ պոմերանյան շպիցեր բուծելով, և Տերը պատվիրեց ինձ նվիրել ձեզ իմ քոթոթներից մեկը, որոնք արդեն վեցշաբաթական են և պատրաստ են նոր տուն ունենալ:

Իմ բերանը զարմանքից բացվեց: Ես դեռ վճռականորեն էի տրամադրված, որ չէի վերցնելու ևս մեկ շուն. այնպես որ, ասացի.

– Ես տեղյակ կպահեմ ձեզ:

Ես չգիտեի, որ այդ մարդը շներ էր բուծում, և իհարկե, նախկինում ես ոչինչ չէի ասել նրան այն մասին, որ Կիրստենը ցանկանում է այդ ցեղատեսակի քոթոթ ունենալ:

Ի վերջո, չդիմացա և պատմեցի Դրենդային տեղի ունեցածը, և որ չէի ցանկանում տուն տանել այդ շանը: Նա նայեց ինձ և ասաց.

– Դու մերժելո՞ւ ես քո դստեր հավատքը:

Դրենդան նույնպես չէր ցանկանում, որ տանը երկրորդ շուն լի-

ներ, բայց նա սիրում էր Կիրստենին ավելի շատ, քան ցանկացած անհարմարավետություն, որը կպատճառեր մեզ ևս մեկ շունը: Եվ հիմա, երբ Կիրստենի հավատքի արդյունքում Աստված բերել էր այդ շնիկին, ինչպե՞ս մենք կարող էինք մերժել նրան: Ի վերջո, ես ասացի այդ հովվին, որ կվերցնեմ այդ քոթոթին:

Մենք չէինք ասել այդ մասին Կիրստենին, բայց ասել էինք նրա քրոջը, որ անպայման օդանավակայան բերեր այն, երբ գար մեզ տուն տանելու: Կիրստենը եկավ օդանավակայան, և մենք մոտեցանք նրան՝ փոխանցելով փոքրիկ ճանապարհորդական պայուսակը, որը գնել էինք այդ շնիկի համար: Երբ Կիրստենը տեսավ փոքրիկ պոմերանյան շպիցին, չկարողացավ զսպել արցունքները: Ամեն ինչ կանգ առավ: Մեզ շրջապատող մարդիկ կանգ առան, որպեսզի դիտեն այդ տեսարանը: Կարճ ժամանակ անց մեր շուրջը գոյացել էր մարդկանց բազմություն, որոնք նայում էին լաց եղող Կիրստենին, որը գրկել էր այդ շնիկին: Դրենդան պատմում էր բոլորին, թե ինչպես էին մեզ տվել այդ քոթոթին, և որ Կիրստենը հավատում էր Աստծուն դրա համար:

Այդ պահին ես հասկացա, որ կարելի է արթնություն սկսել օդանավակայանում՝ պարզապես ձեր ձեռքում քոթոթ պահելով: Բոլորը ցանկանում էին տեսնել այդ քոթոթին, և մարդիկ օդանավակայանում լաց էին լինում Կիրստենի հետ, նույնիսկ Տրանսպորտային անվտանգության կառավարման աշխատակիցները: Այդ ժամանակ ինձ թվաց, թե ես սարսափելի հայր էի: Տեսնելով այն ուրախությունը, որն այդ քոթոթը պարգևեց իմ դստերը, և թե ինչպես Աստված բերեց այդ շնիկին՝ իմ դստեր հավատքի արդյունքում, ես մտածում էի, թե ինչու էի ընդդիմանում մի բանի, ինչն այդքան թանկ էր նրա համար: Շեքսպիրը, ինչպես որ Կիրստենն անվանեց նրան, պարզապես սքանչելի էր: Նա իսկապես դարձավ մեր ընտանիքի մասնիկը: Թեև նա անկախ բնավորություն ուներ, նա հետևում էր Կիրստենին ամենուր ցերեկ ու գիշեր:

Թեև սա հուզիչ պատմություն է, ես պետք է տամ մի հարց, որին անհրաժեշտ է պատասխանել, և որն իսկապես այս գրքի նպատակն է: **Ինչպե՞ս հայտնվեց այդ շնիկը:** Ինձ երբեք շուն չէին առաջարկել: Եվ ինչպե՞ս ստացվեց, որ այդ շնիկը հենց այն ցեղատեսակն էր, որի

համար իմ դուստրը հավատացել էր: Մի՞թե դա երջանիկ պատահականություն էր: Ակնհայտ է, որ ո՛չ: Դա Աստծո Թագավորության և այն կառավարող օրենքների անմիջական արդյունքն էր իմ ընտանիքում: Թագավորությունն արդյունք տվեց, և այն կանի դա ամեն անգամ յուրաքանչյուրի համար, ով հավատք ունի և արձակում է Թագավորության իշխանությունն այս երկրի վրա: Մենք կարող ենք ընդունել, որ այդ շնիկն Աստծո Թագավորության արդյունքն էր: Բայց ինչպե՞ս դա տեղի ունեցավ: Ինչպիսի՞ օրենքներ գործեցին, որպեսզի դա կատարվեր: Հուսով եմ՝ այս գիրքն ընթերցելիս մենք կստանանք պարզ պատասխաններ, որոնք կօգնեն ձեզ հասկանալ, թե ինչպես վայելեք Աստծո Թագավորությունը: Չէ՞ որ դուք այդ Թագավորության քաղաքացի եք, և ձեզ պատկանում են դրա օրինական իրավունքները և արտոնությունները: Բայց, նախ, թույլ տվեք բերել ևս մեկ օրինակ Թագավորության մասին մեր ընտանեկան կյանքից:

ԳԼՈՒԽ 4

ՀՍԿԱ ՁՈՒԿԸ

Որքան Դրենդան և ես ավելի էինք սովորում Աստծո Թագավորության մասին և այն իշխանության մասին, որն ունենք այս երկրում, այնքան ավելի ու ավելի էինք հասկանում այն փաստը, որ իրականում մենք ենք որոշում, թե ինչպիսին է մեր կյանքը: Աստծո Թագավորությունն ազդեց մեր կյանքի յուրաքանչյուր բնագավառի վրա, բայց մենք ինքներս պետք է արձակեինք այն մատակարարումը, որի կարիքն ունեինք, կամ՝ որը մենք ցանկանում էինք: Դա հենց այնպես տեղի չունեցավ: Մեր դստեր շնիկի նման, չկար այնպիսի բան, ինչը չափազանց փոքր կամ անկարևոր լիներ Աստծո Թագավորության իշխանության ներքո բերելու համար: Երբ մենք հասկացանք դա, այլևս չկար մի բան, ինչն անհնարին կլիներ մեզ համար: Գրեթե իմ ամբողջ կյանքում ես այդպես էլ չէի հասկացել, որ Աստված տվել է մեզ Թագավորությունը՝ ԱՄԲՈՂՋ Թագավորությունը՝ վայելելու համար: Այնպես որ, զարմանալի էր տեսնելը, թե ինչպես էր Թագավորությունն ազդեցություն թողնում մեր կյանքի ամեն բնագավառում, նույնիսկ փոքրիկ և ոչ էական բնագավառներում: Դրա օրինակը կարելի է տեսնել հետևյալ պատմության մեջ, որը ես անվանում եմ պատմություն հսկա ձկան մասին:

Այն տեղի ունեցավ, երբ մեր ընտանիքն արձակուրդի էր Ալյասկայում: Նույնիսկ այն, որ մենք այնտեղ էինք, արդեն իսկ երազանք էր ինձ համար: Մենք թռանք Անքորեջ, երեք շաբաթով վարձեցինք տուն անիվների վրա և շրջեցինք արևմտյան ափի մեծ մասով: Ամեն

ինչ այնքա՜ն գեղեցիկ էր: Մեկ անգամ, երբ մեքենայով շրջում էինք Կենայ թերակղզով, նկատեցինք մի մեծ ձկան՝ կախված մի նավի դիմացը գտնվող կախաղանից: Բազմաթիվ նավեր քիչ առաջ ափ էին հասել, և նավահանգստի ամբողջ երկայնքով այդպիսի մեծ ձկներ էին կախված: Ես նմանեցրի դրանք հսկա տափակաձկների: Նախկինում երբեք վահանաձուկ չէի տեսել. ես չգիտեի, թե ինչ տեսակի ձկներ էին դրանք, բայց շատ մեծ էին: Մենք զարմացանք՝ անցնելով վարձույթով նավեր տվող մի գրասենյակից մյուսը, և բոլորը գովազդում էին ուղևորություն՝ վահանաձկան որսով: Հանկարծ կինս նայեց ինձ և ասաց.

– Ես ուզում եմ վահանաձուկ որսալ այնտեղի նավապետի հետ,- նա մատնացույց արեց մի վահանաձուկ որսացող նավի գովազդային ցուցանակ, որի վերևում ձկան քրիստոնեական նշան կար:

Նախևառաջ, ես ցնցվա՜ծ էի.

– Դու ուզում ես վահանաձո՞ւկ որսալ:

Նախկինում նա երբեք չէր ցանկացել ձկնորսությամբ զբաղվել: Բայց համառեց, և մենք կայանեցինք մեքենան և մոտեցանք այդ գրասենյակին: Անձնակազմը զբաղված էր մեկ այլ հաճախորդով. այնպես որ, մենք մի փոքր զննեցինք ամեն ինչ և սկսեցինք կարդալ այն, ինչ փակցված էր հայտարարությունների տախտակին: Մենք տեսանք մի հայտարարություն, որտեղ գրված էր, որ Վահանաձկների մրցույթն ընթացքի մեջ է, բայց շուտով ավարտվելու է: Մենք չգիտեինք, թե ինչ էր դա, հնարավոր է, որ դուք նույնպես չիմանաք, այնպես որ, թույլ տվեք բացատրել: Վահանաձկների մրցույթը թե՛ այդ ժամանակ, թե՛ այսօր, պայքար է վարձույթով տրվող նավերի նավապետների միջև՝ մեկ ամսվա ընթացքում ամենամեծ վահանաձուկը որսալու համար: Հաղթողի լուսանկարը տեղադրում էին տեղական թերթում, և նա պարգևատրվում էր դրամական մրցանակով: Անհրաժեշտ էր մուծել ընդամենը մի քանի դոլար՝ մրցույթին մասնակցելու համար, և այդ պահին այն ընթացքի մեջ էր:

Դրենդան՝ իմ շատ նուրբ և կանացի կինը, նայեց ինձ և ասաց, որ որոշել է հաղթել այդ մրցույթում, որպեսզի այդ նավապետի գործը

ճանաչում ստանա մյուս բոլոր նավապետների միջև, և քանի որ նա քրիստոնյա էր, Աստված փառք կստանար դրա համար: Դրենդան համարձակությամբ հռչակեց, որ ինքը հաղթելու է Վահանաձկների մրցույթը, որպեսզի Աստված փառավորվի, և այդ մարդկանց գործը ճանաչում ստանա, քանի որ նրանք քրիստոնյա ընկերություն էին: Իհարկե, կարելի էր պատկերացնել, թե ինչ էր մտածում այդ նավապետը: Չէ՞ որ յուրաքանչյուրը կուզեր հաղթել Վահանաձկների մրցույթում, և համոզված եմ, որ նա լսել էր այդ մասին բազմաթիվ զբոսաշրջիկներից, որոնց ինքը ծով էր տարել, եթե ոչ՝ մեծամասնությունից: Այնուամենայնիվ, համոզված չեմ, որ շատերը հռչակել էին, որ իրենք այն հաղթելու են Աստծո փառքի համար:

Ինչևէ, նա գրեթե չմեկնաբանեց Դրենդայի խոսքերն այդ մրցույթի վերաբերյալ: Մենք դուրս եկանք ծով և սկսեցինք ձկնորսությունը, և Դրենդան շարունակ հարցնում էր նավապետին (ով նաև այդ նավի տերն էր), թե ինչ չափի պետք է լինի վահանաձուկը՝ այդ մրցույթում հաղթելու համար: Նա պարզապես պատասխանում էր, որ այն պետք է լինի ավելի մեծ, քան Դրենդայի որսած վերջին ձուկը, և այդ պատճառով Դրենդան տալիս էր այդ հարցն ամեն անգամ, երբ ձուկ էր որսում: Նա որսաց 20 կիլոգրամանոց ձուկ, բայց նավապետն ասաց, որ այն այդքան էլ մեծ չէ: Նա որսաց 30 կիլոգրամանոցը, բայց այն նույնպես շատ մեծ չէր: Իհարկե, յուրաքանչյուրը գիտի, որ վահանաձկները շատ համեղ են, և մենք որոշեցինք տուն ուղարկել մեր որսած ձկները: Սահմանափակումը երկուսն էր մեկ մարդու համար, և մենք պահեցինք Դրենդայի որսած 30 կիլոգրամանոց ձուկը:

Արդեն մթնում էր: Իմ որդին՝ Թոմը, դուստրս՝ Պոլին, և ես, որսացել էինք մեր երկու վահանաձկների սահմանաչափը: Մեր մյուս երեխաները՝ Էմին և Թիմը, պետք է ավելի վաղ տուն թռչեին՝ մի համաժողովի մասնակցելու համար, և նրանք մեզ հետ չէին: Իհարկե, Դրենդան մեկ 30 կիլոգրամանոց ձուկ էր որսացել, բայց մեր որսած ձկներից ոչ մեկը չէր հաղթի այդ մրցույթում: Սակայն Դրենդան դեռ վստահ էր, որ մեծ ձուկ է որսալու: Մութն արագ ընկնում էր, և նավապետը պատվիրեց բոլորիս հավաքել մեր ձկնորսական լարերը կարթաձողերի վրա, քանի որ նավահանգիստ գնալու ժամանակն

էր: Դրենդան անտեսեց այդ պատվերը, մինչ նավապետն օգնում էր բոլորիս վեր բարձրացնել մեր կարթաձողերը և դասավորել սարքավորանքը: Դրենդան խնդրեց ընդամենը մի քանի րոպե՝ կրկին հռչակելով, որ նա որսալու է Վահանաձկների մրցույթի հաղթող ձկանը: Նավապետը սպասեց ևս մի քանի րոպե և վերջապես մոտեցավ նրան՝ ասելով.

– Ցավո՛ւմ եմ, բայց մենք իսկապես պետք է վերադառնանք:

Մինչ նա կհասցներ բռնել Դրենդայի կարթաձողը, այն հանկարծակի ցած իջավ: Ակնհայտ է, որ մեծ ձուկ էր բռնվել, քանի որ ձողը թեքվեց, և կոճը ճռռոց արձակեց: Նավապետը բարձրացրեց ձողը՝ զգալու համար, թե որքան մեծ է ձուկը, և համաձայնեց, որ դա մեծ ձուկ էր, բայց ասաց, որ դա շնաձուկ է: Բավականին ժամանակ պահանջվեց, մինչև Դրենդան վեր բարձրացրեց այն: Պահանջվեցին նրա բոլոր ուժերը, որպեսզի նա, պտտելով ձկնորսական կոճը, հաներ այդ ձկանը ծովի հատակից, որը մոտավորապես 90 մետր խորություն ուներ: Երբ ձուկը երևաց ջրի մակերեսին, բոլորը տեսան, որ դա իսկապես մեծ վահանաձուկ էր՝ ավելի մեծ, քան Դրենդան:

Երբ ձուկն արդեն մոտ էր նավին, նավապետն ասաց, որ այն չափազանց մեծ է՝ ձկնորսական եռաժանիով խոցելու և նավի մեջ քաշելու համար, քանի որ այն թփրտալու էր, և իր մեծության պատճառով կարող էր վնասել նավի վրա գտնվողներից որևէ մեկին: Նա հատուկ խթան ուներ՝ նախատեսված նման մեծ ձկների համար: Դրա եզրին փոքրիկ պայթուցիկ գլխիկ կար, որը, սեղմվելով ձկան գլխին, կպայթեր և կսպաներ ձկանը: Նավապետը մոտեցրեց այդ խթանը մեծ ձկան գլխին. պայթուցիկ գլխիկը պայթեց, բայց ձուկը խույս տվեց, և հարվածը վրիպեց:

Պայթյունի ձայնից ձուկը կրկին ամբողջ ուժով իջավ ծովի հատակը: Այդ ամբողջ 90 մետր անկման ընթացքում, կարթաձողի կոճը ճռռում էր: Մենք վախենում էինք, որ կա՛մ ձկնորսական լարը չէր պահի ձկանը, կա՛մ կեռը դուրս կգար նրա բերանից արագորեն ջրի հատակ իջնելու ընթացքում: Կրկին, Դրենդան վեր բարձրացրեց այդ մեծ ձկանը: Նա մեծ դժվարությամբ էր անում դա, քանի որ ար-

դեն մեկ անգամ պայքարել էր այդ ձկան հետ: Այնպես որ, ես մոտեցա նրան, նրա հետ միասին բռնեցի կոճի բռնակը, և երկուսս կրկին դանդաղորեն բարձրացրինք այդ ձկանը մինչև ջրի մակերեսը: Այս անգամ նավապետը կարողացավ նավը գցել այն: Բոլորս զարմացել էինք այդ ձկան մեծությունից:

Մենք տարանք այդ վահանաձկանը քաղաքի հրապարակը, որտեղ բավականին մեծ կշեռք կար: Այդ ձկան քաշը 55 կիլոգրամ էր, և այն Դրենդայից ավելի երկար էր: Այն կշռող մարդն ասաց, որ այդ պահին դա մրցույթին մասնակցող ամենամեծ ձուկն էր: Սակայն մրցույթը տևելու է ևս երկու շաբաթ, և մենք դեռ չէինք կարող վստահաբար ասել, թե արդյո՞ք այդ ձուկը կհաղթեր: Այնուամենայնիվ, երկու շաբաթ անց մենք չեկ ստացանք Դրենդայի անունով՝ տեղական թերթի հոդվածի հետ միասին, որտեղ նրա լուսանկարն էր: Մենք ոգևորվել էինք:

Թագավորությունը կրկի՛ն գործեց: Կրկին ես պետք է հարցնեմ. «Ինչպե՞ս նա բռնեց այդ ձկանը»: Մեր ամբողջ ամուսնական կյանքի ընթացքում նա ձկնորսության էր եղել ընդամենը երկու անգամ, և ձկնորսությունը նրա տարերքը չէր: Առաջին հերթին, ես զարմացել էի, որ նա ցանկացավ վահանաձուկ որսալ: Բայց նա լուրջ պատճառ ուներ. նա ցանկանում էր որսալ այդ մրցույթը հաղթողի՛ն: Եվ նրա մոտ ստացվեց: Երբ վճարեցինք մեր ուղևորության համար, մենք պատմեցինք մեր նավապետին Աստծո Թագավորության մասին և այն մասին, թե ինչպես Դրենդան որսաց այդ ձկանը: Թեև այն օրը, երբ մենք ցտեսություն ասացինք այդ նավապետին, այդ ձուկը դեռ պաշտոնական հաղթողը չէր, այն բավականին մեծ էր՝ նրա ուշադրությունը գրավելու համար: Եվ, իհարկե, ի վերջո այն հաղթող ճանաչվեց:

Միգուցե մտածեք, որ սրանով մեր կամ Դրենդայի պատմությունը մեծ ձկան մասին ավարտվեց: Ես գիտեմ՝ մարդիկ կմտածեն, որ նրա բախտը պարզապես բերել էր, սակայն ի՞նչ կասեք երկրորդ անգամվա մասին: Գրեթե հինգ տարի անց, Դրենդան և ես հրավիրեցինք մեր ընկերոջը, որը հովիվ է, սաղմոն որսալու Ալյասկայում: Մենք չէինք եղել այնտեղ մեր ընտանեկան ճանապարհորդությունից

հետո, բայց շարունակ փորձում էինք որևէ պատճառ գտնել՝ այնտեղ վերադառնալու համար: Մենք կրկին վարձեցինք տուն անիվների վրա և որոշեցինք գնալ սաղմոն որսալու, քանի որ խաղաղօվկիանոսյան սաղմոնի որսաշրջանն ընթացքի մեջ էր: Մինչ մենք սաղմոն էինք որսում, հիշեցինք վահանաձկան որսի և Դրենդայի ձկան մասին: Մեր ընկերը նախկինում վահանաձուկ չէր որսացել, և առաջարկեցինք նրան միասին վահանաձկան որսի գնալ: Մենք որոշեցինք, որ կվերադառնանք նույն վայրը և նույն նավապետի մոտ, եթե նա դեռ զբաղվում էր այդ գործով:

Հասնելով այն վայրը, որտեղ նրա ընկերությունն էր, մենք տեսանք, որ նա այլևս այնտեղ չէր, և մտածեցինք, որ միգուցե ծով դուրս գանք այլ նավապետի հետ: Սակայն որոշեցինք, նախ, որոնել նրան ինտերնետում, քանի որ մենք չէինք հիշում նրա նավի և ընկերության անվանումները: Կարճատև որոնումից հետո գտանք հինգ տարի առաջ տպագրված թերթի հոդվածը Դրենդայի ձկան մասին, որում նրա լուսանկարն էր: Այդ հոդվածում նշված էին այդ նավապետի նավի և ընկերության անվանումները, և մեկ հեռախոսազանգով կարողացանք պարզել ամեն ինչ: Նրանց ընկերությունը դեռ գործում էր, բայց այն մոտավորապես 8 կիլոմետրով տեղափոխել էին իրենց առաջվա վայրից:

Երբ մտանք նրանց գրասենյակը, ընդունարանի սեղանին նստած կինը, որը նավապետի և այդ ընկերության սեփականատիրոջ կինն էր, վեր նայեց և ասաց.

– Վահանաձկան մրցույթի հաղթո՞ղը:

Մի քանի րոպե մենք հաճույքով զրուցեցինք նրա հետ մեր մեծ վահանաձկան մասին և այն մասին, թե ինչ էր կատարվել վերջին հինգ տարում: Դա տնտեսական անկման ժամանակ էր, և նրանց գործը լավ չէր ընթանում: Նա ասաց, որ մարդիկ այլևս չէին ճանապարհորդում և գումար չէին ծախսում ձկնորսության վրա այնքան, որքան անցյալում, և նրա ամուսինը հուսալքված էր: Մենք հիշեցրինք այդ կնոջը Աստծո Թագավորության մասին: Նա ասաց, որ իր ամուսինը հետաքրքրված չէր Աստծուն ծառայելով:

Երբ նստեցինք նավը, նավապետը նույնպես հիշեց Դրենդային և մեծ ձկանը: Դրենդան հարցրեց, թե ինչպես է ձկնորսության գործը, նա պատասխանեց, որ որսում է փոքր ձկներ՝ այն ձկան համեմատ, որին Դրենդան որսացել էր մրցույթի համար: Նա նույնպես ասաց, որ այդ նոր վայրում չկային մեծ ձկներ, քանի որ ջուրը ծանծաղ էր: Նա բացատրեց, որ տեղափոխել է իր գործն այդտեղ, քանի որ նախորդ վայրում, որտեղ Դրենդան որսաց մրցույթի հաղթող ձկանը, ջուրը շատ ավելի խորն էր և լի էր շնաձկներով: Շնաձկները գողանում էին խայծերը, մինչև որ դրանք հասնում էին ջրի հատակը, և նա չափազանց շատ ծախս էր անում խայծերի համար ու չափազանց շատ ժամանակ էր կորցնում:

Մենք հարցրինք նրան, թե ինչ չափի ձկներ էին որսում այս վայրում, և նա պատասխանեց, որ չէր տեսել 10-14 կիլոգրամից մեծ ձուկ վերջին ամսում: Դրենդան նայեց նրան և ասաց.

– Այսօր ես մեծ ձուկ եմ որսալու՝ ամենամեծ ձուկը, որին դուք տեսել եք վերջին շրջանում, որպեսզի իմանաք, որ Աստված հավատարիմ է:

Բայց նավապետը պարզապես քմծիծաղ տվեց: Ամբողջ օրը մենք որսացինք 10 կիլոգրամանոց ձկներ, ինչպես որ ասում էր նավապետը, և ամբողջ օրը նա քմծիծաղով խոսում էր այն «մեծ ձկան» մասին, որին Դրենդան որսալու էր: Այդ ամենը նախորդ ձկնորսության կրկնությունն էր:

Օրվա վերջում նավապետը պատվիրեց մեզ հավաքել մեր ձկնորսական լարերը կարթաձողերի վրա, և Դրենդան ուշադրություն չդարձրեց դրան՝ ասելով, որ իրեն պետք էր ընդամենը մեկ կամ երկու րոպե՝ իր մեծ ձկանը որսալու համար: Կրկին, նավապետը սպասեց մեկ կամ երկու րոպե, բայց հետո ասաց, որ ստիպված էր վերադառնալ: Հենց այդ պահին Դրենդայի կարթաձողը ցած իջավ և, կարճ ասած, նա 30 կիլոգրամանոց ձուկ որսաց: Նավապետը կրկին զարմացած էր:

Մենք ռեստորան գնացինք ձկնորսությունից հետո և զրուցեցինք մի նավապետի հետ, որը նույնպես ընթրում էր: Երբ նա լսեց, որ

Դրենդան 30 կիլոգրամանոց ձուկ էր որսացել այդ վայրում, նրա հավատը չէր գալիս: Նա հարցրեց, թե որտեղ էինք մենք ձկնորսության և ինչ հեռավորության վրա: Նա ուզում էր իմանալ, թե որտեղ էինք մենք այդքան մեծ ձուկ որսացել: Ռեստորանից դուրս գալուց հետո պետք է ևս մեկ անգամ գնայինք այդ նավի վարձույթի գրասենյակը, որպեսզի տեղեկանք ստորագրեինք այդ ձուկը մեր տուն ուղարկելու մասին:

Մինչև այդ նավապետին հրաժեշտ տալը, մենք կրկին պատմեցինք նրան Աստծո Թագավորության մասին: Ես ասացի.

– Դուք իսկապես պետք է պարզեք, թե ինչպես նա բռնեց այդ երկու ձկներին: Թագավորության օրենքները գործում են նաև ֆինանսների դեպքում:

Այս անգամ մենք գրավեցինք նրա ուշադրությունը, և նա առնվազն հետաքրքրվեց: Մենք նվիրեցինք նրան իմ *«Ֆինանսների կարգավորում»* գիրքը և գնացինք:

Այդ երկու ձկները պատահականությո՞ւն էին, թե՞ Թագավորության օրենքի արդյունք: Մտածեք՝ ինչպես ուզում եք, բայց Դրենդան և ես արդեն վաղուց պատասխանել ենք այս հարցին: Ե՛վ ձկնորսական ճանապարհորդությունների, և՛ պարտքերից ազատվելու, և՛ բժշկվելու դեպքում մեր փորձառություններն Աստծո Թագավորության հետ ոգեշնչող և շրջադարձային էին: Թագավորությունը գործում է շատերի կյանքում: Ահա մի նամակ մի կնոջից, ով լսել էր Դրենդայի պատմությունը.

> «Ողջո՛ւյն Գարի և Դրենդա,
>
> Ես կարդացել եմ ձեր գիրքը, որում Դրենդան վահանաձուկ է որսում, որը հաղթում է մրցույթում, և ես մտածեցի, որ նույնպես պետք է պատմեմ ձեզ իմ ձկնորսական պատմությունը: Վերջերս մենք ընտանեկան արձակուրդի էինք գնացել Ֆլորիդա նահանգի Կոկո լողափ և Կանավերալի հրվանդան: Իմ ամուսինը՝ Ռոբերտը, ցանկանում էր բաց ծով դուրս գալ ձկնորսության համար և հույս ուներ, որ մենք ձուկ կորսայինք և Կո-

լորադո կտանեինք մեզ հետ: Մի քանի ամիս ծրագրում էինք այդ ճանապարհորդությունը: Երբ նա ասաց, որ ցանկանում է ձկնորսության գնալ, ես ոգևորվեցի և ասացի. «Մենք կանե՛նք դա: Եվ ե՛կ հավատանք Աստծուն մեծ որսի համար»: Ես հարցրի Ռոբերտին, թե ինչ տեսակի ձկներ կան Ֆլորիդայում, որտեղ մենք ձուկ էինք որսալու: Բոլոր ձկնատեսակներից, որոնք նա արագորեն թվարկեց, ես որոշեցի աղոթել և հավատալ հսկա կարմիր լուցիանի համար:

Այդ օրը եկավ, և մենք սպասում էինք հրահանգների նավապետից և անձնակազմից: Ես դավանում էի, որ հսկա կարմիր լուցիան էի որսալու, և իմ ոգեշնչումն ավելանում էր, մինչ նավապետը խոսում էր: Ես հուսահատություն զգացի, երբ նավապետն ասաց, որ այդ ժամանակ մենք չենք կարող որսալ միայն պերկեսներ, տափակաձկներ և կարմիր լուցիաններ: Ես մտածեցի. «Ուրիշ ինչի՞ համար կարելի է հավատալ»:

Բայց ես չէի պատրաստվում բաց թողնել իմ հավատքը գործադրելու այդ հնարավորությունը և ասացի. «Տե՛ր, ես հավատացել եմ հսկա կարմիր լուցիանի համար, և թող այդպես լինի. ես կարմիր լուցիան եմ որսալու և նույնպես այլ ձկներ եմ տուն տանելու»:

Մինչ մենք այդ նավի մեջ էինք, ես ասացի իմ ութամյա դստերը՝ Ռեյչելին.

– Հիշի՛ր, որ դու կարող ես աղոթել և հավատալ Աստծուն, որ այսօր ձուկ կորսաս: Դու հավատո՞ւմ ես:

Նա ժպտաց և գլխով արեց՝ ի նշան համաձայնության: Ես ասացի նույն խրախուսական խոսքերն իմ քսանմեկամյա դստերը՝ Զորդանին: Նա զարմացած հայացք ձգեց ինձ վրա, բայց հետո համաձայնեց: Ես նայեցի Ռոբերտին և ասացի.

– Ե՛կ հավատանք, որ առատ որս կունենանք:

Մի քանի ժամ անցավ, իսկ մեր ձկնորսական լարերը ոչինչ չէին որսացել: Եվ հանկարծ Ռեյչելի լարը ձգվեց, և նա անչափ ոգեշնչվեց: Կանչեց իր հայրիկին՝ իրեն օգնելու համար: Մի քա-

նի որպե անց նրանք մի ատլանտյան շնաձուկ հանեցին ջրից: Ռեյչելը հասկացել էր, թե ինչպես հավատալ: Եվ մենք գովեցինք նրան: Նա իսկական թիմակից է:

Ես հիշում էի, որ սկսեցի մտածել, որ ոչինչ չէի որսալու, բայց լռեցրի այդ միտքը և դավանեցի, որ ես արդեն իսկ ձուկ ունեմ: Ես նստեցի, հանդարտվեցի և հանկարծ լսեցի Աստծո ձայնը. «Եթե պարզապես հանդարտվես և թույլ տաս, որ Ես բերեմ քեզ այդ ձուկը, դու կստանաս այն»: Ես գիտեի, որ ընդհանրապես ձկնորս չէի. այնպես որ, որոշեցի չհուսալ իմ հմտություններին: Նստեցի, խորը շունչ քաշեցի և սպասեցի՝ վստահելով Աստծուն: Մոտավորապես 20–30 րոպե անց իմ լարը ձգվեց, միգուցե ինձ այդպես թվաց, բայց պարզվեց, որ ես իսկապես ձուկ էի որսացել:

Ամուսինս սկսեց հրահանգել ինձ, իսկ հետո մոտեցավ նավապետը և արեց նույնը: Նա ասաց, որ ես մեծ ձուկ եմ բռնել, և հավանաբար իմ լարի մյուս կողմում հսկա կարմիր լուցիան է: Ես այնքա՜ն զարմացած էի, որ նա գիտեր, թե ինչ տեսակի ձուկ էր բռնվել, մինչև այն տեսնելը: Իհարկե, ես շարունակեցի պտտելով վեր քաշել լարը, և իմ 10 կիլոգրամանոց հսկա կարմիր լուցիանը հայտնվեց ջրի երեսին: Ես գոհանում էի Աստծուց մեծ ուրախությամբ և ոգեշնչմամբ: Ես գիտեի, որ ճեղքում ունեցա իմ հավատքի համակարգում: Ես պարզապես շարունակ հիշում էի Դրենդայի վստահությունը և մտածում էի, որ կարող էի ունենալ նույն հավատքը և վստահությունը: Ես հարատևեցի, և արդյունքն արժեր դրան:

Շնորհակալություն ձեր ծառայության և ձեր գրքերը գրելու համար, ներառյալ *«Հավատքի որսորդություն»* կոչվող գիրքը: Ես շնորհակալ եմ Աստծուն և ձեր ծառայությանը, որն օգնեց ինձ քայլել դեպի ավելի մեծ օրհնություններ: Ես նայում եմ ապագային ավելի մեծ հավատքով և ոգեշնչմամբ: Ես գիտեմ, թե որքան այս փորձառությունը ծառայեց մեր ընտանիքին:

Անկեղծորեն՝ Ս.Թ.»:

ԳԼՈՒԽ 5

Ո՞Վ ԸՆՏՐԵՑ ԴԱ

Նախորդ պատմություններում տեսանք, թե ինչ արդյունք տվեց Աստծո Թագավորությունն այս երկրի վրա՝ շնիկ, ձուկ, փող՝ ազատելու համար գրավադրված գույքը, գնելու համար մեքենաներ և տներ, որոնց կարիքը մենք ունեինք, երեք երեխայի կյանքի փրկություն և ավելին: Բոլոր այս պատմությունները տեղի ունեցան շնորհիվ Աստծո Թագավորության, կամ, թույլ տվեք ավելի անձնական ձևով ասել՝ ՄԵՐ Աստծո Թագավորության: Մենք չպետք է զարմանանք, քանի որ Նրա Թագավորությունն անսահմանորեն մեծ է:

Պետրոսի երկրորդ թղթի 1.3-ում (NIV) գրված է.

> *«Նրա աստվածային զորությունը տվել է մեզ այն ամենը, ինչի կարիքը մենք ունենք կյանքի և աստվածապաշտության համար»:*

Ես ցանկանում եմ մի շատ կարևոր հարց տալ ձեզ մեր դիտարկած բոլոր պատմությունների վերաբերյալ. «Ո՞վ ընտրեց դա»: Ես նկատի ունեմ հետևյալը. մի՞թե Աստված հանկարծակի որոշեց նվիրել Կիրստենին այդ շնիկը, կամ տալ իմ կին Դրենդային այդ ձուկը: Մի՞թե Աստված պարզապես որոշեց անել այդ բաները մեզ համար՝ Իր գերիշխան կամքով. թե՞ այդ իրադարձությունները տեղի ունեցան այլ պատճառով: Կարծում եմ՝ պատասխանը կցնցի մարդկանց մեծ մասին: Ես գիտեմ դա, քանի որ այն ցնցեց ինձ:

Այս հարցին պատասխանելու համար դիտարկենք մի պատմություն Աստվածաշնչից՝ Ղուկաս 8-րդ գլխից.

> *«Եվ Նրա (Հիսուսի) գալու ժամանակ ժողովուրդները նեղում էին Նրան: Եվ մի կին կար տասներկու տարի շարունակ տեռատեսության (արյունահոսության) մեջ, որ իր ամբողջ ինչքը բժիշկների ծախսելով չէր կարողացել ոչ մեկից բժշկվել: Սա մոտ եկավ ետևից, Նրա հանդերձի ծայրին դիպավ, և իսկույն նրա արյան վազելը կանգնեց:*
>
> *Եվ Հիսուսն ասաց. «Ո՞վ է, որ Ինձ դիպավ»: Եվ երբ որ ամենքն ուրանում էին, ասաց Պետրոսը և նրա հետ լինողները. «Վարդապե՛տ, ժողովուրդները սեղմում են Քեզ և նեղում, և Դու ասում ես՝ ո՞վ է, որ Ինձ դիպավ»: Եվ Հիսուսը ասաց. «Մեկը դիպավ Ինձ, որովհետև Ես իմացա, որ զորություն դուրս եկավ Ինձնից»:*
>
> *Եվ երբ որ տեսավ կինը, որ ծածուկ չմնաց, դողալով եկավ, Նրա առաջն ընկավ և ամբողջ ժողովրդի առջև պատմեց Նրան, թե ինչ պատճառով Նրան դիպավ, և թե ինչպես իսկույն բժշկվեց:*
>
> *Նա էլ ասաց նրան. «Քաջացի՛ր, դո՛ւստր, քո հավա՛տքը բժշկեց քեզ, գնա՛ խաղաղությունով»»:*
>
> – Ղուկաս 8.42-48

Աստվածաշունչը շատ պարզ ասում է, որ Հիսուսին սեղմում էին բոլոր կողմերից, և նույնիսկ Պետրոսը զարմացավ Հիսուսի՝ «ո՞վ դիպավ ինձ» հարցից: Որպես հոգևոր գիտնական, ուզում եմ իմանալ, և ես պետք է իմանամ, թե ինչո՞ւ բժշկվեց ա՛յդ կինը, և ուրիշ ոչ ոք: Ինչո՞ւ օծությունը հոսեց դեպի նա և չհոսեց դեպի մյուսները, ովքեր այդ պահին հպվում էին Հիսուսին: Պատասխանն այս հատվածում է, բայց մինչ ես կպատասխանեմ այս հարցին, ևս մեկ հարց տանք: Հիսուսն Ի՞նքը որոշեց ծառայել այդ կնոջը: Նա՞ էր, որ դրեց Իր ձեռքերն այդ

կնոջ վրա: Պատասխանն է՝ ո՛չ. իրականում, Հիսուսը նույնիսկ չգիտեր նրա մասին: Նա ստիպված էր հարցնել, թե ով վերցրեց Իր վրա եղած օծությունից, քանի որ Նա չէր տեսել այդ կնոջը: Այնպես որ, ո՞վ որոշում կայացրեց, որ այդ կինը բժշկված է լինելու այդ օրը:

Թույլ տվեք այլ կերպ տալ այս հարցը: Հիսո՞ւսն էր, որ այդ պահին որոշեց բժշկել այդ կնոջը, թե՞ այդ կինը որոշեց ստանալ Աստծուց: Սա կարևոր հարց է, քանի որ այնքա՛ն մարդիկ են «սպասում», որ Աստված ինչ-որ բան անի իրենց կյանքում: Ես հավատում եմ՝ այն, որ Հիսուսը նույնիսկ չգիտեր այդ կնոջը, ապացուցում է, որ հենց այդ կինը որոշեց ստանալ իր պատասխանը, ոչ թե Հիսուսը որոշեց բժշկել նրան:

Այս փաստը տալիս է մեզ մի աներևակայելի կարևոր հայտնություն. Աստված չի որոշում բժշկել մեկին և չբժշկել մյուսին՝ պատահականության սկզբունքով: Նա արդեն իսկ տվել է բոլորիս բժշկություն ստանալու հնարավորություն՝ Իր Թագավորության մեջ ունեցած մեր օրինական դիրքի միջոցով: Այնպես որ, իրականում, մե՛նք ենք ընտրում դա: Բայց ես ուզում եմ իմանալ, թե ինչպես նա վերցրեց այդ զորությունից: Ինչպե՞ս նա «որոշեց» ստանալ: Հիսուսն ասում է մեզ, թե ինչպես այդ կինը վերցրեց Թագավորության իշխանությունից և զորությունից: Նա ասաց. «Դո՛ւստր, քո հավա՛տքը բժշկեց քեզ, գնա՛ խաղաղությամբ»: Այս նախադասությունը հայտնում է այն ամենը, ինչ պետք է իմանանք, և պատասխանում է մեր հարցերին այն մասին, թե ինչու այդ օրը բժշկություն ստացավ ա՛յդ կինը, և ուրիշ ոչ ոք: Որպես հոգևոր գիտնականներ, ավելի ուշադիր դիտարկենք այս պատմությունը և տեսնենք՝ կարո՞ղ ենք արդյոք գտնել բանալիներ, որոնք ցույց են տալիս, թե ինչու նա ստացավ իր պատասխանը:

Առաջին հերթին, Հիսուսն անվանում է նրան «դուստր», ինչը նշանակում է, որ նա Իսրայելի ժողովրդից էր: Նշանակում է՝ նա ուխտ ուներ Աստծո հետ: Կամ, կարելի է ասել, որ նա, լինելով Իսրայելի ժողովրդի քաղաքացի, օրինական դիրք ուներ երկնքի առջև՝ Աստծուց ինչ-որ բան ստանալու համար: Այս փաստը չի կարող լինել այդ կնոջ պատասխանի միակ պատճառը, քանի որ այդ օրը և այդ վայրում գտնվող մարդիկ, որոնք բոլոր կողմերից սեղմում էին Հիսուսին,

ունեին միևնույն օրինական դիրքը: Պետք է որ լիներ այլ պատճառ, թե ինչու զորությունը հոսեց: Հիսուսն անվանում է ևս մեկ պատճառ, թե ինչու այդ կինը ստացավ իր պատասխանը: Իրականում, Հիսուսն ասաց, որ հենց այս պատճառով էր, որ այդ կինն ինչ-որ բան ստացավ անձամբ իր համար: Նա ասաց, որ այդ կինը բժշկվեց իր հավատքով:

Այժմ մենք գիտենք, թե ինչպես նա կարողացավ ստանալ իր պատասխանը: Առաջինը՝ նա ստանալու օրինական իրավունք ուներ, քանի որ Աբրահամի դուստր էր, և երկրորդը՝ նրա հավատքն այն անջատիչն էր, որի շնորհիվ զորությունը հոսեց անձամբ իր մարմնի մեջ հենց այդ պահին: Այն, որ նա Աբրահամի դուստր էր, ինչը նշանակում է, որ Երկնքի առջև նա գտնվում էր այն ուխտի ներքո, որն Աստված կնքել էր Աբրահամի հետ, կարելի է համեմատել այն բանի հետ, որ էլեկտրաէներգիա մատակարարող ընկերությունը լարեր է հասցրել ձեր տուն և միացրել է հոսանքը: Բայց դա չի նշանակում, որ ձեր տան լույսերը կմիանան: Որպեսզի լույսերը միանան, դուք պետք է նաև միացնեք անջատիչը: Եվ այժմ մենք պետք է հասկանանք, թե որտեղ է, կամ որն է այդ անջատիչը: Հիսուսն ասաց, որ այդ անջատիչը նրա հավատքն էր, բայց ի՞նչ է հավատքը, և ինչպե՞ս կարող եմ միացնել այն: Սա անչափ կարևոր հարց է, որին պետք է պատասխանել:

Ի՞նչ է հավատքը

Հավատքը մի հասկացություն է, որը քրիստոնյաներն անփութորեն են գործածում: Եվ ես համոզված եմ, որ նրանցից շատերը, եթե ոչ մեծ մասը, չգիտեն, թե ինչ է հավատքը, ինչու է այն անհրաժեշտ, ինչպես իմանալ, թե արդյոք իրենք հավատքի մեջ են, և ինչպես կարելի է հավատք ստանալ: Եթե հավատքն այն անջատիչն է, որը բժշկեց այդ կնոջը, ուրեմն մենք պետք է մեծ ուշադրություն դարձնենք հավատքին: Մենք գտնում ենք հավատքի սահմանումը Հռոմեացիների 4.18-21-ում: Ես գիտեմ, թե ինչ դուք մտածեցիք. «Ո՛չ, Գա՛րի, հավատքի սահմանումը գրված է Եբրայեցիների 11.1-ում»:

«Հավատքը նշանակում է համոզված լինել այն բանում, ինչի հանդեպ մենք հույս ունենք, և վստահ լինել այն բանում, ինչը մենք չենք տեսնում»:

– Եբրայեցիների 11.1, NIV

Այո՛, սա ավանդական պատասխանն է, բայց կարդալով Եբրայեցիների 11-րդ գլուխը՝ կտեսնեք, որ այն ներկայացնում է մեզ հավատքի առավելությունները, ոչ թե հավատքի սահմանումը: Ես հավատում եմ, որ մեր հատվածը Հռոմեացիների թղթից, կտա շատ պարզ պատկերացում այն մասին, թե իրականում ինչ է հավատքը:

«Որ առանց հույսի՝ հույսով հավատաց, թե շատ ազգերի հայր կլինի. ինչպես ասվեց, թե՝ «այնպես պիտի լինի քո զավակը»: Եվ չտկարացավ հավատքով, այսինքն՝ մտիկ չարեց իր մարմնին, որ արդեն մեռած էր, ինքը իբրև հարյուրամյա լինելով, և ո՛չ էլ՝ Սառայի արգանդի մեռած լինելուն: Եվ Աստծո խոստման համար չերկմտեց անհավատությամբ այլ զորացավ հավատքով և Աստծուն փառք տվեց: Եվ <u>իր մտքում համոզված էր</u> (կամ՝ «<u>լիովին համոզված լինելով</u>»), թե Նա, որ խոստացավ, կարող է և անել»:

– Հռոմեացիների 4.18-21

Ներկայացնենք այս հատվածի նախապատմությունը: Աբրահամը և Սառան չէին կարողանում երեխաներ ունենալ: Ես նկատի չունեմ, որ նրա կինը չէր հղիանում, և նրանք պետք է շարունակեին իրենց փորձերը: Այլ՝ որ նրանք գրեթե 100 տարեկան էին, և այլևս ոչ մի հույս չկար: Նրանց մարմիններն անկարող էին երեխաներ ունենալ. դա անհնա՛ր էր: Այնուա-

«ՀԱՎԱՏՔԸ ՆՇԱՆԱԿՈՒՄ Է ՀԱՄՈԶՎԱԾ ԼԻՆԵԼ ԱՅՆ ԲԱՆՈՒՄ, ԻՆՉԻ ՀԱՆԴԵՊ ՄԵՆՔ ՀՈՒՅՍ ՈՒՆԵՆՔ, ԵՎ ՎՍՏԱՀ ԼԻՆԵԼ ԱՅՆ ԲԱՆՈՒՄ, ԻՆՉԸ ՄԵՆՔ ՉԵՆՔ ՏԵՍՆՈՒՄ»:

– ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 11.1, NIV

մենայնիվ, Աստված երեխա խոստացավ Աբրահամին, թեև բնականորեն դա լիովին անհնար էր: Աստվածաշնչում գրված է, որ Աբրահամը լիովին համոզված էր, որ Աստված կարող էր անել այն, ինչ խոստացել էր՝ չնայելով իր բնական իրավիճակին, որն այլ բան էր ասում: Այսպիսով, ահա մեր հավատքի սահմանումը. «լիովին համոզված լինել, որ Աստված կարող է անել այն, ինչ խոստացել է»: Ես կասեմ սա հետևյալ կերպ. «**Ունենալ համաձայնություն Երկնքի հետ**, ունենալ ոչ միայն մտավոր, այլև լիարժեք համոզվածություն, սրտով հաստատ և վստահ լինել այն բանում, ինչ Աստված ասել է՝ չնայելով բնական իրականությանը, որն այլ բան է ցույց տալիս»:

Հավատքի մեր սահմանումը հետևյալն է.

Հավատքը նշանակում է լիովին համոզված լինել Աստծո խոսքերի մեջ, ունենալ համաձայնություն Երկնքի հետ մեր սրտով և մտքով, լիովին համոզված, վստահ և հանդարտ լինել մեր սրտում:

Ինչո՞ւ է հավատքն անհրաժեշտ

Ինչո՞ւ Աստված պարզապես չի կարող բժշկել հիվանդանոցներում գտնվող մարդկանց, երբ կամենա: Ինչո՞ւ Նա չի կարող դադարեցնել պատերազմները: Ինչո՞ւ Նա չի կարող հրեշտակներ ուղարկել՝ Ավետարանը մեզ քարոզելու համար: Համոզված եմ, որ նախկինում դուք լսել եք բոլոր այս հարցերը: Պատասխանը հետևյալն է. Նա չի կարող անել այդ բաները: Եվ այնպես չէ, որ Աստված չունի կարողություն. Նա չունի իրավասություն կամ իշխանություն, որ անի դա: «Գա՛րի, դուք ասում եք, որ Աստված չի՞ կարող անել այն, ինչ ցանկանում է անել»: Ես գիտեմ, որ դա իսկապես տարօրինակ է հնչում, բայց կարդանք Աստվածաշունչը՝ այս հարցի պատասխանը գտնելու համար:

«Մեկը վկայեց մեկտեղ՝ ասելով.

«Մարդն ի՞նչ է, որ Դու հիշես նրան, կամ մարդու որդին, որ այցելես նրան: Մի քիչ ցած արիր նրան հրեշտակներից, փառքով և պատվով պսակեցիր նրան, և Քո ձեռքի գոր-

ծերի վրա կանգնեցրիր նրան: Ամեն բան հնազանդ արիր նրա ոտքերի տակ»:

Որովհետև ամենը, որ հնազանդեցրեց նրան, ոչինչ չթողեց, որ հնազանդ չլինի նրան. բայց հիմա տակավին չենք տեսնում, թե ամեն բան հնազանդված է նրան»:

– Եբրայեցիների 2.6–8

Այս հատվածից կարող ենք տեսնել, որ Աստված տվեց մարդուն լիարժեք օրինական իրավասություն ամբողջ երկրային տիրույթում: Չկար մի բան, ինչը չէր գտնվում նրա իրավասության ներքո: Նա տիրում էր այս երկրում բացարձակ իրավասությամբ և իշխանությամբ: Նա ուներ այս երկիրը կառավարելու իշխանություն՝ շնորհիվ իրեն հաստատող իշխանության: Ըստ էության, նա իշխում էր Աստծո Թագավորության լիազորած իշխանությամբ: Մարդը կրում էր այդ իշխանության պսակը, որը ներկայացնում էր Աստծո փառքը, նաև այն օծությունը և պատվավոր դիրքը, որոնք նրա վրա էին:

Այս մասին պատկերացում կազմելու համար, մտածե՛ք որևէ երկրային թագավորի մասին: Թեև նա բնական մարդ է, որը չունի իրական իշխանություն, նա թագ է կրում, ինչը ցույց է տալիս, որ նա ներկայացնում է մի ամբողջ թագավորություն կամ պետություն: Նրա խոսքն իշխանություն ունի, քանի որ այն սատարվում է իր պետության կամ թագավորության բոլոր ուժերի և բնական ռեսուրսների կողմից:

Մտածե՛ք փողոցային շարժումն ուղղորդող ոստիկանի մասին. նա կանգնեցնում է մի հսկայական կցորդով բեռնատար՝ հրամայելով. «Կա՛նգ առ՝ օրենքի անունով»: Այո՛, այդ բեռնատարը շատ ավելի մեծ է, քան նա, և նա ինքնին չի կարող համեմատվել այդ բեռնատարի հետ, բայց բեռնատարը կանգ է առնում: Այն կանգ է առնում ոչ թե այդ մարդու պատճառով, այլ նրա կրծքանշանի, որը ներկայացնում է այդ երկրի կառավարությունը: Այդ դեպքում, կառավարությունը շատ ավելին է, քան այդ կրծքանշանը կրող մարդը: Բեռնատարի վարորդը չի վախենում այդ մարդուց, բայց նա վախենում է այն կառավարությունից, որն այդ մարդը ներկայացնում է. այն-

պես որ, նա կանգնեցնում է իր բեռնատարը: Նույնը ճշմարիտ է այս դեպքում: Ադամն իշխում էր երկրային տիրույթում գտնվող ամբողջ արարչագործության վրա: Աստծո իշխանությունը և կառավարումը՝ ներկայացված նրա փառքի և պատվի պսակով, վստահություն էին հաղորդում մարդուն, որ իր խոսքերն իշխում էին Աստծո Թագավորության անունից:

Շատ կարևոր է նշել հետևյալը. երբ Ադամը կորցրեց երկրի վրա իշխելու կարողությունը՝ Աստծո կառավարման դեմ դավաճանություն գործելու պատճառով, նա կորցրեց իր պսակը: Երկրային տիրույթն արատավորվեց և փոխվեց: Մահը մուտք գործեց այս աշխարհ, և այժմ մարդկանց կյանքերում իշխանություն և ազդեցություն ունենալու օրինական իրավունքը սատանայինն էր: Անչափ կարևոր է, որ դուք նաև հասկանաք, որ մարդը դեռևս այս երկրի օրինական իշխանն է, քանի որ Աստված է կարգել նրան, սակայն այժմ չունի հոգևոր իշխանություն, որը մի ժամանակ ուներ: Այնուամենայնիվ, նույնիսկ իր անկում ապրած վիճակում նա դեռ այս երկրի տերն է: Այո՛, նա այլևս չունի Աստծո իշխանության պսակը, որը սատարում էր նրան: Նա չի կարող իշխել Աստծո զորությամբ և փառքով. նա կորցրել է իր պատվավոր դիրքը: Բայց, միևնույն է, նա միակ օրինական դուռն է դեպի այս երկրային տիրույթը: Ահա թե ինչու Աստված պետք է գործածի Հոգով լցված քրիստոնյաներին՝ մարդկանց կյանքերում Իր կամքը կատարելու համար: Նույն կերպով, սատանան օգտագործում է դևերով ոգեշնչված մարդկանց, որպեսզի ազդի այս երկրի վրա և իրագործի իր ծրագիրը մարդկության համար: Երկրի վրա մարդու իրավասության այս սկզբունքը կենսական նշանակություն ունի Թագավորության օրենքը հասկանալու համար, և հենց որ հասկանաք, այն կպատասխանի հետագայում ծագող շատ հարցերի այն մասին, թե ինչու են կատարվում որոշ բաներ, իսկ որոշ բաներ չկատարվեցին և չեն կատարվում՝ հոգևոր առումով:

ԱՀԱ ԹԵ ԻՆՉՈՒ ԱՍՏՎԱԾ ՊԵՏՔ Է ԳՈՐԾԱԾԻ ՀՈԳՈՎ ԼՑՎԱԾ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻՆ՝ ՄԱՐԴԿԱՆՑ ԿՅԱՆՔԵՐՈՒՄ ԻՐ ԿԱՄՔԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

Միգուցե ասեք. «Բայց ես կարծում էի, որ Տիրոջն է երկիրը և դրա լիությունը»: Այո՛, այդպես է: Հուսով եմ՝ հետևյալ օրինակը կօգնի ձեզ հասկանալ, թե ինչ նկատի ունեմ: Եթե ես վարձակալության հանձնեի ձեզ իմ տունը, թեև իրավաբանորեն այն պատկանում է ինձ, ես կհրաժարվեի ցանկացած պահին այդտեղ գալու իմ օրինական իրավունքից: Վարձակալական պայմանագրերի մեծամասնության մեջ կա պարբերություն, որը հստակեցնում է, թե երբ սեփականատերերը կարող են օրինական կերպով մուտք գործել վարձակալվող տարածքները, օրինակ՝ արտակարգ պատահար կարգավորելու կամ վերանորոգում կատարելու նպատակով, ինչպես նաև այդ մասին նախապես ծանուցելու պայմանները: Եթե ես փորձեի մտնել իմ տուն՝ խախտելով այդ պայմանագիրը, իմ արարքը կոտրանք կհամարվեր, թեև այդ գույքը պատկանում է ինձ: Եթե ես խախտեի վարձակալական պայմանագրում հստակեցված օրենքը, ինձ կարելի էր օրենքի համաձայն հարկադրաբար հեռացնել այդտեղից, թեև դա իմ սեփականությունն է: Սա բացատրում է, թե ինչու էր սատանան ստիպված օգտագործել Ադամին՝ երկրային տիրույթում իշխանություն ստանալու համար: Ադամը միակ բանալի՛ն էր: Սատանան պետք է մտներ դռնով, և այդ դուռն Ադամն էր: Եթե սատանան փորձեր շրջանցել Ադամին, հնարավոր կլիներ օրինական կերպով վտարել նրան:

> *«Եվ սատանան Նրան մի բարձր սար հանեց և աշխարհի բոլոր թագավորությունները ցույց տվեց Նրան մի վայրկյանի մեջ: Եվ սատանան ասաց Նրան. «Այս ամբողջ իշխանությունը և սրանց փառքը Քեզ կտամ, որ ինձ է տրված, և ում որ կամենում եմ, տալիս եմ: Արդ Դու, եթե իմ առջևն ընկած երկրպագություն անես, բոլորը Քոնը կլինի»»:*
>
> – Ղուկաս 4.5-7

Ինչպես տեսնում եք այս հատվածում, սատանան պնդում էր, որ մարդկանց թագավորությունների իշխանությունը և փառքը (հարստությունը) տրվել էր իրեն: Ո՞վ էր տվել այդ իշխանությունը: Նա,

ում այն պատկանում էր՝ Ադամը: Այսպիսով, Աստված չէր կարող պարզապես միջամտել մարդկանց գործերի մեջ՝ առանց օրինական դռնով մտնելու: Եթե Նա այդպես վարվեր, սատանան խարդախություն կանվաներ դա: Ո՛չ, Աստված պետք է մտներ նույն դռնով, որով մտավ սատանան, որպեսզի բերեր Իր կառավարումը և իշխանությունն այս երկիր, և այդ դուռը մարդն էր: Բայց ո՞վ էր լինելու այդ մարդը:

> *«Եվ Տերն ասաց Աբրամին. «Գնա՛ քո երկրից և քո ազգականներից և քո հոր տնից այն երկիրը, որ Ես քեզ ցույց կտամ: Եվ Ես քեզ մեծ ազգ պիտի շինեմ և քեզ օրհնեմ և քո անունը մեծացնեմ, և դու օրհնյալ կլինես: Եվ քեզ օրհնողներին կօրհնեմ, և քեզ անիծողներին կանիծեմ, և երկրի բոլոր ազգերը քեզնով կօրհնվեն»»:*
>
> – Ծննդոց 12.1-3

Աբրահամը կոչվում է մեր հավատքի հայրը, քանի որ նա դուռ բացեց Աստծո համար երկրային տիրույթում, որով երկրի բոլոր ազգերն օրհնված էին լինելու: Իհարկե, ասելով, որ ազգերն օրհնված էին լինելու, այս խոսքը նկատի ունի, որ Հիսուս Քրիստոսը հետագայում ճանապարհ էր բացելու, որպեսզի Աստծո կառավարումը ևս մեկ անգամ օրինական մուտք ունենար այս երկիր՝ Աբրահամի հավատքի միջոցով: Աբրահամի հավատքն օրինական դուռ բացեց Երկնքի համար, և Աստված հավիտյան բաց պահեց այն՝ օրինական ուխտ (պայմանագիր) կնքելով Աբրահամի և նրա սերնդի կամ ժառանգների հետ:

«ՀԵՏԵՎԱԲԱՐ, ՀԱՎԱՏՔԸ ԳԱԼԻՍ Է ՈՒՂԵՐՁԸ ԼՍԵԼՈՒՑ, ԻՍԿ ՈՒՂԵՐՁԸ ԼՍՎՈՒՄ Է ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՍԻՆ ԽՈՍՔԻ ՄԻՋՈՑՈՎ»:

– ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻ 10.17, NIV

Թույլ տվեք այլ կերպ արտահայտել իմ միտքը: Երկնքի կառավարումը կարող է մուտք գործել այս երկիր միայն որևէ տղամարդու կամ կնոջ միջոցով, քանի որ մարդիկ օրինական լիազորություն

ունեն այս երկրում: Եվ երկնքի կառավարումն օրինական է միայն, երբ որևէ տղամարդ կամ կին լիովին համոզված է իր սրտում, որ այն, ինչ ասում է Աստված, ճշմարիտ է (հավատք):

Կարելի է ասել նաև, որ Երկինքը կարող է օրինապես ազդեցություն թողնել երկրային տիրույթում ապրող որևէ տղամարդու կամ կնոջ կյանքում, միայն եթե նա ցանկանում է կամ որոշում է կայացնում ընդունել Աստծո կառավարումը և իշխանությունը: Այս դեպքում գործում է նույն սկզբունքը, որն օգտագործեց սատանան՝ Ադամի միջոցով այս երկիր մուտք գործելու համար: Նա համոզեց Ադամին, որ Աստված վստահելի չէր, և հեռացրեց Ադամի սիրտն Աստծո հետ ունեցած համաձայնությունից: Արդյունքում Ադամը որոշեց հավատալ սատանային և մերժեց Աստծո իշխանությունը:

Աստված օգտագործեց նույն այս սկզբունքը՝ վերադարձնելու համար Իր կառավարումը և իշխանությունն այս երկիր Աբրահամի միջոցով: Աբրահամը հավատաց Աստծուն, և նրա համաձայնությունն արդարություն համարվեց Աստծո կողմից, ինչը նշանակում է, որ անհրաժեշտ օրինական համաձայնությունը կայացել էր: Այս երկկողմ (Աստծո և Աբրահամի) համաձայնությունը թույլ տվեց Աստծուն օրինական պայմանագիր (ուխտ) կնքել, որն ապահովում էր Երկնքի մուտքը երկրային տիրույթ, ՍԱԿԱՅՆ անչափ կարևոր է նշել, որ այս պայմանագիրն ազդեց միայն Աբրահամի և նրա ժառանգների վրա: Այս ուխտի նշանը՝ թլփատությունը, տրվեց Աբրահամի բոլոր ժառանգներին: Թլփատությունը տղամարդու առնանդամի թլիփի կտրումն էր: Երբ տղամարդը ցանում էր իր սերմը կնոջ մեջ, նրա սերմն անցնում էր թլփատված առնանդամով, ինչը հայտարարում էր սատանային և հենց ապագա երեխայի հորը և մորը, որ նա Աստծո և Աբրահամի օրինական ուխտի ժառանգն էր Երկնքի առջև:

Ինչպես արդեն կարդացինք, յուրաքանչյուր տղամարդ և կին, որին հասանելի էր այդ օրինական ուխտը, պետք է կատարեր նաև դրա իրավական պահանջը՝ նրա սիրտը պետք է լիովին համոզված լիներ Աստծո խոսքերի մեջ, որպեսզի նա վայելեր Աստծո և Աբրահամի կնքած պայմանագրի առավելություններն իր կյանքում: Ըստ էության, այդ ուխտը լարերով միացած էր Աստծո ժողովրդի տներին,

բայց նրանք, միևնույն է, պետք է միացնեին անջատիչը՝ անձամբ հավատալով Աստծո Խոսքին և գործելով դրա հիման վրա:

Այժմ մենք գիտենք, թե ինչ է հավատքը և ինչու է հավատքն իրավաբանորեն անհրաժեշտ: Եվ հիմա անչափ կարևոր է, որ իմանանք, թե ինչպես հավատք ստանանք և ինչպես իմանանք, որ մենք հավատքի մեջ ենք:

Ինչպե՞ս հավատք ստանալ

Ես մի հուշում կանեմ. դուք չեք կարող աղոթել հավատքի համար: Սա զարմացրե՞ց ձեզ: Ես այդպես էլ գիտեի:

> *«Հետևաբար, հավատքը գալիս է ուղերձը լսելուց, իսկ ուղերձը լսվում է Քրիստոսի մասին խոսքի միջոցով»:*
>
> – Հռոմեացիների 10.17, NIV

Ինչպե՞ս է հավատքը գալիս՝ երբ լսում ենք Աստծո Խոսքը: Մի՞թե լսելը միակ անհրաժեշտ պայմանն է: Ի՞նչ գործընթաց է տեղի ունենում: Արդյո՞ք Խոսքը լսելը միակ պահանջն է, որ հավատքը զարգանա մարդու հոգում: Որպեսզի հասկանանք, թե ինչպես է գալիս հավատքը և ինչ նկատի ունի Հռոմեացիների 10.17-ը, մենք կկարդանք Մարկոսի 4-րդ գլուխը: Եթե վեր գցեք ձեր Աստվածաշունչը, այն պետք է որ վայր ընկնի՝ բացված Մարկոսի 4-րդ գլխի վրա. ահա թե որքան կարևոր է այս գլուխը: Հիսուսն ասաց Մարկոս 4.13-ում, որ եթե չեք հասկանում այն, ինչի մասին Նա սովորեցնում է այս գլխում, դուք չեք կարողանա հասկանալ Աստվածաշնչի ցանկացած այլ առակ: Ես կասեի, որ այս գլուխը չափազանց կարևոր է:

Ինչո՞ւ է այս գլուխն այդքան կարևոր: Քանի որ այն պատմում է մեզ, թե ինչպես է Երկինքը փոխգործակցում երկրի հետ, ինչպես է այն օրինական իշխանություն ստանում, և որտեղ է դա տեղի ունենում: Չկա ավելի կարևոր բան ձեր կյանքում, քան այն, ինչ սովորեցնում է ամբողջ այս գլուխը: Դուք կարող եք հարցնել. «Ինչպե՞ս է գործում Աստծո Թագավորությունը»: Այս գլխում Հիսուսը պատմում

է երեք առակ այն մասին, թե ինչպես է հավատքը ծնվում մարդու հոգում և, ինչպես գիտեք, դա անհրաժեշտ է, որպեսզի Երկինքը օրինապես ներխուժի այս երկիր:

Այս գլխի երեք պատմություններն են սերմնացանի առակը, սերմ գցող մարդու առակը և մանանեխի սերմի առակը:

Սկսենք Մարկոսի 4-րդ գլխի Հիսուսի պատմած երկրորդ պատմությունից, որը սերմ գցող մարդու մասին է:

> *«Եվ ասում էր. «Այսպես է Աստծո արքայությունը, որպես թե մի մարդ սերմ գցեր հողի մեջ: Եվ գիշեր-ցերեկ քնի և վեր կենա, և սերմը բուսնի և աճի այնպես, որ նա չգիտի: Որովհետև երկիրն ինքն իրեն պտուղ է բերում՝ առաջ խոտը, հետո հասկը, և նրանից հետո լցված ցորեն հասկի մեջ: Բայց երբ որ պտուղը կտա, շուտով կուղարկի մանգաղը, որովհետև հունձքը հասել է»»:*
>
> – Մարկոս 4.26-29

Մինչև այս հատվածին անցնելը, նախ սահմանենք որոշ հասկացություններ: Ո՞րն է այն սերմը, որի մասին խոսում է Հիսուսը, և ո՞րն է հողը: Իրականում, Հիսուսը սահմանում է այս հասկացությունները նույն գլխի նախորդ առակում, որը սերմնացանի մասին է: Սերմն Աստծո Խոսքն է, իսկ հողը՝ մարդու սիրտը կամ հոգին: Այնպես որ, օգտագործելով այս երկու բառի Հիսուսի սահմանումը, մենք կարող ենք ասել, որ այս առակում Հիսուսը պատմում է մի մարդու մասին, որը ցանում է Աստծո Խոսքն իր սրտում: Եվ այդ հողը կամ մարդու սիրտն ինքն իրենով սկսում է առաջացնել հավատք (համաձայնություն Երկնքի հետ) այս երկրային տիրույթում:

Մինչև առաջ անցնելը, անչափ կարևոր է, որ հիշեք, թե որն է հավատքի մեր սահմանումը. երբ որևէ տղամարդու կամ կնոջ սիրտը հաստատ համոզված է այն բանում, ինչ ասում է Երկինքը: Այս հատվածում գրված է, որ թեև մարդը չգիտի, թե ինչպես է դա տեղի ունենում, այն Խոսքը, որը ցանված է նրա սրտում, ինքն իրենով սկսում է աճել և համաձայնություն առաջացնել: Սա տեղի է ունենում թե՛

քնած, թե՛ արթուն ժամանակ. այս գործընթացը կանգ չի առնում: Երբ մարդը պահում է Խոսքն իր սրտում, նրա սիրտն աստիճանաբար համաձայնում է Երկնքի ասածի հետ, և հավատք է ծնվում:

Մեր սուրբգրային հատվածը Մարկոսի 4-րդ գլխում ցույց է տալիս, որ սիրտը համաձայնություն է առաջացնում որոշակի գործընթացի միջոցով: Այստեղ գրված է, որ սկզբում, երբ մեր սիրտն ընդունում է Խոսքը, սկսում է ձևավորվել հավատքը: Հիսուսը համեմատում է այդ փուլը ծիլ տալու հետ: Բուսած ծիլը շարունակում է աճել և խոտ կամ ցողուն է դառնում: Ի վերջո, ցողունի վրա ձևավորվում է հասկը, և նույնիսկ այս ուշ փուլում դեռևս չկա պտուղ, չկա համաձայնություն և չկա փոփոխություն բնական աշխարհում: Հիսուսն ասում է, որ այս ընթացքը շարունակվում է, մինչև որ հասկը հասունանում է և լցվում ցորենով: Երբ գործընթացը հասնում է այս փուլին՝ երբ հասկը լիքն է հասած ցորենով, առաջանում է համաձայնություն՝ հավատք, որը թույլ է տալիս մարդուն հնձել այս աշխարհում այն, ինչ Երկինքը ցանել է նրա սրտում:

Այժմ ուշադրություն դարձրեք. եկեք վերանայենք, թե իրականում ինչ է կատարվում: Երկինքը ցանում է Աստծո Խոսքը երկրային տիրույթում՝ որևէ տղամարդու կամ կնոջ սրտի մեջ, որը պետք է համաձայնի Խոսքի հետ: Այդ պահին մարդու սիրտը դեռ չունի համաձայնություն Երկնքի հետ, բայց նրա սրտում սկսվում է մի գործընթաց, որն ինքն իրենով նրա սիրտը համաձայնության է բերում իրենում ցանվածի հետ: Հիսուսը հրաշալի օրինակ է օգտագործում՝ այս գործընթացը նկարագրելու համար: Համեմատելով այս գործընթացը գյուղացու կողմից սերմ ցանելու և այդ սերմի հասունանալու հետ, Հիսուսը պատկերացնում է տալիս այն մասին, թե ինչպիսին է հավատքը: Բնական աշխարհում, երբ սերմը հասունանում է հասկի մեջ, այն ունի **ՃԻՇՏ** նույն տեսքը, ինչ հողի մեջ ցանված սերմը: Թույլ տվեք կրկին ասել սա:

Երբ սերմը հասունանում է հասկի մեջ, այն ունի <u>ՃԻՇՏ</u> նույն տեսքը, ինչ հողի մեջ ցանված սերմը:

Եթե եգիպտացորեն ցանեք, հասկի միջի հասուն սերմը ճշտո-

րեն նման կլինի ձեր ցանած սերմին: Դրանք նույնն են և ունեն նույն տեսքն ու համը: Այդ երկուսն անկարելի կլինի տարբերել. դրանք նույնական են:

Թույլ տվեք շրջասության ենթարկել այն, ինչ նկատի ունի Հիսուսը: Երբ մենք լսում ենք Խոսքը (տե՛ս Հռոմ. 10.17), իրականում ցանում ենք Աստծո Խոսքը մեր հոգևոր մարդու կամ մեր սրտի մեջ: Եթե մենք պահենք Խոսքը մեր սրտերում, այն կհասունանա, և երբ հասունանա, մեր սրտի պատկերացումները (այս երկրային տիրույթի մասին) կհամապատասխանեն Երկնքի խոսքերին: Այսինքն, կարելի է ասել, որ եթե դուք շարունակեք ցանել Երկնքից եկած որևէ խոստում ձեր սրտում, այն աստիճանաբար և ինքնաբերաբար վստահություն կառաջացնի Աստծո ասածի վերաբերյալ: Արդյունքում, ձեր սրտերը լիովին համոզված կլինեն այն բանում, ինչ ասում է Երկինքը, և դուք կհամաձայնեք Երկնքի խոսքերի հետ: Օրինակ, եթե դուք բախվել եք հիվանդության, ձեր մարմնի վիճակն ասում է, որ դուք հիվանդ եք: Սակայն եթե սկսեք ցանել ձեր սրտում Աստծո Խոսքն այն մասին, որ Աստված գին է վճարել ձեր բժշկության համար՝ Հիսուսի կատարած աշխատանքի միջոցով, ձեր սրտում աստիճանաբար և ինքնաբերաբար կառաջանա համոզվածություն Աստծո ասածի մեջ:

Երբ բժշկության մասին խոսքը հասունանա ձեր սրտում, ձեր ներսում վստահություն կառաջանա, որ դուք բժշկված եք, և **դուք** կսկսեք հավատալ դրան և խոսել դա: Դուք արդեն պարզապես չեք կրկնի Երկնքի խոսքերը. ձեր սիրտը հաստատ համոզված կլինի: Երբ ասեք՝ ես բժշկված եմ, դուք պարզապես չեք կրկնի ինչ-որ բանաձև, այլ կհավատաք և վստահ կլինեք, որ դա փաստ է: Այն, ինչ ասում է Երկինքը, կդառնա իրականության ձեր ընկալումը:

Ահա թե ինչու է Եբրայեցիների 11.1-ում գրված.

> *«Հավատքը նշանակում է համոզված լինել այն բանում, ինչի հանդեպ մենք հույս ունենք, և վստահ լինել այն բանում, ինչը մենք չենք տեսնում» (NIV):*

Որտեղ կա հավատք, կա նաև գերբնական համոզվածություն այն

բանում, ինչ ասում է Երկինքը. այնուամենայնիվ, այս գործընթացն ունի ևս մեկ քայլ:

Այժմ մարդն ուղարկում է կամ մոտեցնում է իր մանգաղը՝ հնձելու համար, որպեսզի բերի իր իրականության մեջ այն, ինչում ինքը սրտանց համոզված է:

> *«Հենց որ հասկը հասունանում է, **նա մոտեցնում է իր մանգաղը**, որովհետև հունձքը հասել է»:*
>
> – Մարկոս 4.29, NIV

Ուշադրություն դարձրեք, որ թեև սիրտն ունի համաձայնություն Երկնքի հետ, և երկնային իրականությունը դարձել է փաստ այդ տղամարդու կամ կնոջ համար, ոչ մի իրական փոփոխություն դեռևս տեղի չի ունեցել այս երկրում: Քանի որ հենց մարդն իրավասություն ունի այս նյութական աշխարհում, նա պետք է արձակի Երկնքի իշխանությունն այս երկրում: Աստված չի կարող անել դա առանց նրա: Ես կարող եմ ցույց տալ սա մի շատ հայտնի աստվածաշնչյան հատվածից, որը դիտարկեցինք քիչ առաջ:

> *«Քանի որ սրտով հավատում ենք **արդարանալու** համար և բերանով **դավանում** ենք փրկվելու համար»:*
>
> – Հռոմեացիների 10.10

Մարդը սրտով հավատում է այն Խոսքին, որը հավատք է առաջացրել իրենում, և արդարանում է: Արդարացումն իրավաբանական տերմին է, որը նշանակում է օրենքի կիրառում: Երբ մարդու սիրտը համաձայնություն ունի Երկնքի հետ և լիովին համոզված է այն բանում, ինչ ասում է Երկինքը, նա արդարանում է: Այնպես որ, Երկինքն օրինապես կարող է գալ նրա կյանքի մեջ՝ այս երկրային տիրույթ: Բայց արդարացումն ինքնին չի արձակում Աստծո զորությունը: Ինչպես տունը, որտեղ էլեկտրականություն է միացրած՝ այն հոսանքով ապահովելու համար, կա ևս մեկ քայլ՝ միացնել անջատիչը և թույլ տալ, որ հոսանքը ներս մտնի, և լույսերը միանան: Ինչո՞ւ: Քանի որ

Հռոմեացիների 10.10-ը պնդում է, որ կա ևս մեկ քայլ արդարացում ստանալուց հետո:

Այն տղամարդը կամ կինը, որն արդարացված է երկնքի և երկրի առջև, պետք է դավանի կամ քայլ անի իր համաձայնության հիման վրա, որպեսզի արձակի Աստծո զորությունը և օծությունն այս երկրում: Կրկին ու կրկին կարդացե՛ք Հռոմեացիների 10.10-ը, մինչև լիովին հասկանաք, թե ինչ նկատի ունեմ: Ահա թե ինչպես է սա գործում: Ահա թե ինչպես է Երկինքն օրինական իրավունք ստանում այս երկրում. սիրտը կրում է երկնքի փոխազդեցությունն այս երկրային տիրույթում, իսկ հետո մեր խոսքերը և գործերը՝ անջատիչի նման, արձակում են երկնային զորությունը: Կրկին ուշադիր կարդացե՛ք այս խոսքի երկրորդ մասը. մենք ենք, որ պետք է արձակենք երկնային իշխանությունն այստեղ:

Գաղափարն այն մասին, որ Երկինքը սպասում է, որպեսզի մարդն առաջին հերթին ապահովի օրինական իրավունք, իսկ երկրորդ հերթին՝ իրավասություն այս երկրի վրա, կարելի է տեսնել Մատթեոսի 16 և 18 գլուխներում՝ Հիսուսի ուսուցումներում:

> *«Ճշմարիտ ասում եմ ձեզ, ինչ որ երկրի վրա կապեք, երկնքում էլ կապված կլինի, և ինչ որ երկրի վրա արձակեք, երկնքում էլ արձակված կլինի»:*
>
> – Մատթեոս 18.18

Այս խոսքում Հիսուսը պնդում է, որ Ինքը տալու է եկեղեցուն Թագավորության բանալիները (իշխանությունը) երկրային տիրույթում: Նա ասում է, որ Երկինքը կսատարի ձեզ, երբ որևէ բան կապեք այս երկրի վրա, և Երկինքը կսատարի ձեզ, երբ որևէ բան արձակեք այս երկրի վրա: Կրկին, հիշեք ոստիկանի օրինակը. նա ունի իշխանություն, բայց զորությունը պատկանում է պետությանը: Ոստիկանը կրում է պետության բանալին կամ իշխանությունը, քանի որ նա երդվել է լինել այդ պետության գործակալը: Իշխանությունը սատարում է այն, ինչ նա ասում է: Հիշեք՝ միայն մարդն ունի իրավասություն այս երկրում, այսինքն՝ միայն մարդը կարող է իրավասություն տրամադրել այս երկրում:

Կա ևս մեկ կարևոր փաստ հավատքի մասին, որը դուք պետք է իմանաք: Թույլ տվեք կրկին մեջբերել Մարկոսի 4-րդ գլխում գտնվող մեր հատվածից.

> *«Որովհետև <u>երկիրն ինքն իրեն պտուղ է բերում</u>՝ առաջ խոտը, հետո հասկը, և նրանից հետո լցված ցորեն հասկի մեջ»:*
>
> – Մարկոս 4.28

Հիշեք՝ Հիսուսը սահմանեց երկիրը կամ հողը, որը հիշատակված է այս առակում, որպես մարդու սիրտը կամ հոգին, ինչպես արդեն նշեցի: Ուշադրություն դարձրեք, թե որտեղ է առաջանում հավատքը. սա զարմացնո՞ւմ է ձեզ: Այն չի առաջանում երկնքում, ինչպես որ հավատում է մարդկանց մեծ մասը. այն զարգանում է այստեղ՝ երկրի վրա, և առաջանում է ձեր սրտում: Դուք չեք կարող աղոթել հավատքի համար կամ խնդրել հավատք Աստծուց: Երկնքում հավատքի կարիք չի լինի: Երկնքում մենք համաձայնության գալու կարիք չենք ունենա: Ո՛չ, հավատքն անհրաժեշտ է միայն այստեղ՝ երկրային տիրույթում, և այն կարող է առաջանալ միայն երկրի վրա գտնվող մարդկանց սրտերում: Ինչպես որ սովորեցնում է Մարկոսի 4-րդ գլխի այս առակը, գոյություն ունի հավատք ստանալու միայն մեկ միջոց՝ ցանել Աստծո Խոսքը ձեր սրտում և թույլ տալ, որ համաձայնության գործընթացը տեղի ունենա: Այնպես որ, եթե ես հավատքի կարիք ունեմ, ի՞նչ պետք է անեմ: Ես պետք է ցանեմ Աստծո Խոսքն իմ սրտում և թույլ տամ, որ այն աճի, մինչև որ իմ սրտում հավատք լինի: Սա հավատք ունենալու միակ միջոցն է:

ԱՀԱ ԹԵ ԻՆՉՊԵՍ Է ԵՐԿԻՆՔՆ ՕՐԻՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՍՏԱՆՈՒՄ ԱՅՍ ԵՐԿՐՈՒՄ. ՍԻՐՏԸ ԿՐՈՒՄ Է ԵՐԿՆՔԻ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՅՍ ԵՐԿՐԱՅԻՆ ՏԻՐՈՒՅԹՈՒՄ, ԻՍԿ ՀԵՏՈ ՄԵՐ ԽՈՍՔԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԵՐԸ ԱՆՁԱՏԻՉԻ ՆՄԱՆ ԱՐՁԱԿՈՒՄ ԵՆ ԵՐԿՆՔԻ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ:

Մինչև Մարկոսի 4-րդ գլխի այս պատմությունն ավարտելը, ուզում եմ կրկին խոսել այստեղ նշված մանգաղի մասին:

> *«Հենց որ հասկը հասունանում է, **նա մոտեցնում է իր մանգաղը**, որովհետև հունձքը հասել է»:*
>
> – Մարկոս 4.29, NIV

Ես հավատում եմ, որ եկեղեցական աշխարհի մեծ մասին չեն սովորեցրել, թե ինչպես գործածել մանգաղը, այսինքն՝ նրանց չեն սովորեցրել, թե ինչպես հնձել այն, ինչի կարիքն իրենք ունեն: Եկեղեցին մեծ մասամբ սովորել է տալ, բայց ոչ՝ աճեցնել իր ցանած սերմը և հնձել: Այս խոսքում Հիսուսը շատ պարզ բացատրում է, որ երբ մեր հավատքի հունձքը պատրաստ է, ՄԵՆՔ պետք է մոտեցնենք մանգաղը: Նույնիսկ եթե հավատքով ցանենք մեր սերմը, չնայած դեռ չգիտենք, թե ինչպես մոտեցնել մանգաղը, հունձք չի լինի: Անկեղծ ասած, ես ոչինչ չգիտեի այս մասին, մինչև որ Տերը չսովորեցրեց ինձ Թագավորության գործելակերպը: Թույլ տվեք մի քանի օրինակ բերել այն մասին, թե ինչպես է սա տեղի ունենում:

Ինձ հրավիրել էին քարոզելու Ատլանտայում գտնվող մի եկեղեցում, չորեքշաբթի երեկոյան հավաքույթին: Այդ եկեղեցին այնքան էլ մեծ չէր, բայց ինձ համար դա խնդիր չէր: Ես սիրում էի սովորեցնել մարդկանց Թագավորության մասին: Երբ եկեղեցի հասա, ինձ համար տարօրինակ էր, որ դռները փակ էին, և ոչ ոք չկար: Ես տեղ էի հասել ծառայությունից տասը րոպե առաջ: Հանկարծ լսեցի բաց թափքով մեքենայի շատ ուժգին ձայն իմ ետևում: Ձայնն այնքան ուժգին էր, ասես այդ մեքենան ընդհանրապես խլացուցիչ չուներ: Ետ նայելով՝ տեսա մի հին, մաշված և վնասված բաց թափքով մեքենա, որը մոտենում էր եկեղեցու շենքին՝ ետնամասում գտնվող ծառուղով: Ես ոչինչ չմտածեցի այդ մասին. թեև քաղաքի կենտրոնում էի, դա այնքան էլ անսովոր չէր Ատլանտայի համար: Մինչ սպասում էի, շենքի ետնամասից մոտեցավ մի մարդ և ներկայացավ որպես այդ եկեղեցու հովիվ: Նա ասաց, որ ցավում է ուշանալու համար, պարզապես նրա հին մեքենայի շարժիչը չէր միանում, և նա ստիպված

է եղել իջեցնել իր մեքենան թեքություն ունեցող ճանապարհով և մի փոքր արագություն հավաքելուց հետո, շարունակ սեղմել է կցորդիչի ոտնակը, քանի որ ընթացաշարժիչն անսարք էր: Նա ասաց, որ հաճախ շարժիչն ընդհանրապես չի միացել, և նա ստիպված է եղել ութ կիլոմետր ոտքով քայլել՝ եկեղեցի հասնելու համար:

Նա պատմեց իր եկեղեցու մասին և ասաց, որ եկեղեցու հիմնական գործունեությունը քաղաքի կենտրոնական շրջանի անապահով մարդկանց կերակրելն է: Եկեղեցին բաժանում էր ամսական մոտավորապես 10.000 ճաշ այդ տարածքում: Մինչ այդ հովիվը խոսում էր, ես բարկանում էի: Նա Աստծո մարդ էր, որը կերակրում էր 10.000 մարդու ամեն ամիս, բայց նույնիսկ հուսալի մեքենա չուներ: Նա Աստծո միակ պատկերն էր, որը երբևէ տեսնելու էին այն մարդիկ, որոնց նա կերակրում էր: Եթե նրանք տեսնեին, որ նա հազիվ էր հոգում իր կարիքները և ստիպված էր ոտքով անցնել ութ կիլոմետր 38 աստիճան շոգին՝ եկեղեցի հասնելու համար, ի՞նչ վստահություն կունենային, որ Աստված օգնելու էր իրենց: Ես կարող էի լուծել այդ խնդիրը: Ես շատ լավ վիճակում գտնվող մի մեքենա ունեի տանը, որի վազքը 32.000 կիլոմետր էր, որը կարող էի նվիրել նրան: Ես պատմեցի նրան իմ որոշման մասին և ասացի, որ իմ աշխատակիցներից մեկի հետ այդ մեքենան ուղարկելու եմ Ատլանտա: Իհարկե, նա ոգեշնչվեց: Այդ երեկոյի ամբողջ ընթացքում ես սովորեցնում էի նրան և նրա փոքր եկեղեցուն Աստծո Թագավորության մասին և այն մասին, թե ինչպես է այն գործում ֆինանսական ոլորտում:

Երբ տուն գնացի, ես կարգադրեցի Ատլանտա տանել այդ մեքենան: Երբ իմ աշխատակազմի անդամներից մեկը եկավ մեր տուն՝ այդ մեքենան տանելու համար, ես գիտեի, որ հոգևոր գործարք էի կատարում Երկնքում: Գիտեի՝ քանի որ ես տալիս էի այդ մեքենան Աստծո Թագավորությանը, ես կարող էի հավատալ Աստծուն այլ մեքենայի համար: Ես մեքենաների սիրահար չեմ, այսինքն՝ մեքենաները չեն տպավորում ինձ: Որոշ մարդիկ այդպիսին են, բայց ես՝ ոչ: Ինձ համար մեքենան պարզապես գործիք է: Իհարկե, ինձ դուր է գալիս լավ մեքենա ունենալը, բայց սովորաբար ես վարում եմ մեքենաներն այնքան ժամանակ, մինչև որ դրանք փոխարինելու կարիք է լինում:

Երբ իմ աշխատակազմի անդամը կայանեց իր մեքենան մեր տան մոտ, ես գնացի իմ ավտոտնակ, դրեցի ձեռքերս այդ մեքենայի վրա և ասացի.

– Հա՛յր, ես տալիս եմ այս մեքենան Քո ծառայության գործի համար, և տալով այս մեքենան՝ ես ընդունում եմ մեկ այլ մեքենա...

Ես վարանեցի. գիտեի, թե որքան ճշգրիտ է Աստծո Թագավորությունը, ես գիտեի, որ պարզապես «մեքենա» բառը բավական չէր: Ես նույնպես գիտեի, որ պետք է ճշգրտորեն խոսեի, և որ Դրենդան և ես պետք է հստակ համաձայնություն ունենայինք այն մասին, թե ինչ էինք մենք ստանալու: Կանգ առնելով նախադասության կեսից՝ ես նույնպես հասկացա, որ չգիտեի, թե ինչ մեքենա էի ուզում: Այնպես որ, կրկին սկսեցի.

– Տե՛ր, ես այսօր տալիս եմ այս մեքենան Քո ծառայության համար և հավատում եմ, որ ստանալու եմ շատ լավ մեքենա՝ այս ցանքի շնորհիվ, բայց ես դեռ պետք է ասեմ Քեզ այդ մեքենայի մոդելը և տեսակը, երբ որոշեմ:

Դրանով ավարտեցի, և իմ աշխատակազմի անդամը տարավ այդ մեքենան: Իմ մտքում իսկապես չկար որևէ մեքենա, որի վերաբերյալ կարող էի ասել. «Այո՛, ես ցանկանում եմ ունենալ ԱՅԴ մեքենան»:

Անցավ մի քանի ամիս: Իհարկե, Դրենդան և ես համաձայնություն ունեինք այդ մեքենան նվիրելու հարցում, և, ինչպես ես, նա չէր պատկերացնում, թե ինչ տեսակի մեքենա էր ցանկանում ունենալ: Ավելի քան երկու ամիս մենք խոսում էինք մեքենաների մասին, և վերջապես մեկ անգամ նա ասաց.

– Գիտես, կարծում եմ՝ ես կուզեի ծալվող տանիքով մեքենա ունենալ:

Ես ասացի նրան, որ համաձայն եմ, և որ իմ կարծիքով դա հետաքրքիր կլինի, բայց ի՞նչ տեսակի: Կրկին, մենք նույնիսկ չգիտեինք, թե ինչ տեսակի ծալվող տանիքով մեքենաներ կային: Բայց մեկ անգամ, երբ մենք գնում էինք ճաշելու, կինս հանկարծ ասաց.

– Ահա՛ այն:

– Ի՞նչը,- ասացի ես:

– Ահա՛ այն,- ասաց նա՝ մատնացույց անելով այն ռեստորանի ավտոկայանատեղիի մյուս կողմը, որ մենք եկել էինք:

– Ի՞նչը,- հարցրի ես:

– Այդ մեքենան, ես ցանկանում եմ այդպիսի մեքենա ունենալ:

Ես տեսա մի շատ գեղեցիկ, ծալվող տանիքով մեքենա ավտոկայանատեղիի մյուս կողմում:

– Ե՛կ գնանք և տեսնենք, թե ինչ մեքենա է դա,- ասացի ես:

Մենք մոտեցանք այդ մեքենային և կայանեցինք մեր մեքենան դրա ետևում:

Զարմանալի չէ, որ այն Դրենդային դուր էր եկել: Դա «BMW 645Ci» էր՝ անկասկած, շատ լավ ծալվող տանիքով մեքենա, որը նույնպես շատ թանկ արժեր: Ես անկեղծ կլինեմ ձեզ հետ. երբ տեսա այդ մեքենան, մտածեցի.

– Լավ, Տե՛ր, ցույց տուր մեզ, թե ինչ անենք:

Ես գիտեի, որ չէի պատրաստվում 115.000 դոլար վճարել «BMW»-ի այդ նոր մոդելի համար, բայց նույնպես գիտեի, որ Աստված կարող է զարմանալի բաներ անել: Դրենդան և ես չպատմեցինք ոչ ոքի այդ մեքենայի մասին, և ո՛չ էլ ասացինք որևէ մեկին, որ մեքենա էինք փնտրում:

Գրեթե երկու շաբաթ անց Դրենդայի եղբայրը զանգեց մեզ և ասաց.

– Ես գտե՛լ եմ Դրենդայի մեքենան:

– Ի՞նչ նկատի ունես՝ ասելով, որ գտել ես Դրենդայի մեքենան,- հարցրի նրան:

– Ես տեսա, որ այդ մեքենան վաճառվում է, և հանկարծ պարզապես զգացի, որ դա պետք է Դրենդայի մեքենան լինի, և որ ես պետք է ասեմ ձեզ այդ մասին:

– Ի՞նչ մեքենա է դա,- հարցրի ես:

– Դա «BMW 645Ci» է, և այն գերազանց վիճակում է: Իրակա-

նում՝ գերազանց վիճակում: Այն մի քանի տարվա է, ցածր վազքով, և նույնիսկ մեկ քերծվածք չունի: Այն գերազանց է: Բացի այդ, դուք ճանաչում եք այն վաճառող մարդուն:

– Իսկապե՞ս,- հարցրի ես:

– Այո՛,- ասաց նա,- դուք պետք է զանգեք նրան և խոսեք:

Երբ նա անվանեց այդ մեքենայի մոդելը և ասաց ինձ դրա վիճակի մասին, ես հասկացա, որ Աստված պատրաստվում էր ինչ-որ բան անել, քանի որ դա հենց այն մեքենան էր, որի վերաբերյալ Դրենդան և ես համաձայնեցինք երկու շաբաթ առաջ:

Ես զանգեցի այն մարդուն, ում պատկանում էր այդ մեքենան: Այո՛, ես ճանաչում էի նրան: Մենք մի փոքր զրուցեցինք մեքենայի մասին, և նա նկարագրեց, թե ինչ գերազանց վիճակում էր այն: Դրանից հետո նա ասաց ինձ հետևյալը.

– Գիտես, այն պահից, երբ մենք սկսեցինք խոսել այս մեքենայի մասին, ես իսկապես զգում եմ, որ այս մեքենան պետք է Դրենդայինը լինի:

Ես ոչինչ չէի ասել այն մասին, որ ցանկանում էի գնել այդ մեքենան Դրենդայի համար: Նա շարունակեց.

– Ահա թե ինչ կանեմ. ես կվաճառեմ այն ձեզ 28.000 դոլարով:

Ես հազիվ էի հավատում ականջներիս: Այդ մեքենան արժեր շատ ավելին: Երբ ես ասացի Դրենդային այդ մասին, նա, մեղմ ասած, խիստ ոգևորվեց: Մենք գնեցինք այդ մեքենան կանխիկ գումարով և մինչև օրս վարում ենք: Դրա վրա մինչև հիմա նույնիսկ մեկ քերծվածք չկա, և մենք շատ ուղևորություններ ենք կատարել այդ մեքենայով՝ իջեցրած տանիքով, բարձր միացրած ստերեո համակարգով և արևի կենարար ճառագայթների ներքո:

Մեր ամենասիրելի ճանապարհորդությունն այդ մեքենայով Կոլորադոյի սարերի միջով էր, որի ընթացքում մեր ճամբարելու հարմարանքները դրված էին բագաժատեղի մեջ: Մեր դուստր Կիրստենը մեզ հետ էր այդ ճանապարհորդության ժամանակ, և ես հիշում եմ, որ վարում էի այդ մեքենան Կանզաս նահանգի Այ-70 մայրուղով, գի-

շերով, իջեցրած տանիքով: Կիրստենը քնել էր ետևի նստարանին, մինչ մենք ճանապարհին էինք: Աստղերն այնքա՜ն վառ էին շողում մեր գլխավերևում, և ճանապարհը դատարկ էր՝ բացառությամբ հազվադեպ հանդիպող մեկ-երկու բեռնատարների: Դա այն գերազանց գիշերներից մեկն էր, երբ եղանակն արտակարգ է, և ամեն ինչ այս աշխարհում հրաշալի է: Հաջորդ երկու շաբաթվա ընթացքում մենք անցանք Ժայռոտ Լեռներով, և ես բացահայտեցի, թե որքան հաճելի էր այդ մեքենայով ճանապարհորդելը: Ես կարող եմ նկարագրել մեկ բառով. դա հիասքանչ էր:

Բայց ուզում եմ «մեկ միլիոն դոլարի» հարց տալ: Ինչպե՞ս այդ մեքենան հայտնվեց մեզ մոտ: Ինչո՞ւ հայտնվեց հենց այն մեքենան, որի մասին Դրենդան ասաց՝ ահա՛ այն: Ես գիտեի, որ Աստծո Թագավորությունն էր բերել այդ մեքենան մեզ: Ես գիտեի, որ երբ ցանեցի իմ մեքենան՝ տալով այդ հովվին, ես կիրառեցի հոգևոր օրենք: Հիշում եմ՝ ես ասացի, որ ստանալու եմ սեդան, ոչ թե ունիվերսալ ավտոմեքենա, ոչ թե ջիպ, այլ սեդան. հիշում եմ, որ ասացի՝ շատ լավ մեքենա: Թեև ես տվեցի այդ մեքենան հավատքով, սակայն մենք չէինք մոտեցրել մանգաղը, քանի դեռ Դրենդան չէր ասել. «Ահա՛ այն»:

Տեղի ունեցավ ևս մեկ իրադարձություն, որն ի հայտ բերեց այս սկզբունքն է՛լ ավելի տպավորիչ ձևով: Ինչպես գիտեք, ես որսորդության սիրահար եմ: Ապրում եմ որսորդության համար հրաշալի երկրում և օրհնված եմ այն բանով, որ ունեմ իմ սեփական որսորդական տարածքը: Իմ սեփական 24 հեկտար տարածքի գրեթե 7.5 հեկտարը բաղկացած է անտառից, և մոտավորապես 4-ը՝ ճահճուտից: Ամեն տարի ես մեծ հաջողությամբ եղնիկներ և սկյուռներ եմ որսում: Իմ տարածքով մշտապես բադեր և սագեր են թռչում, բայց, ինչ-ինչ պատճառով, ես երբեք չէի մտածել նրանց որսալու մասին: Այնտեղ ապրելու տարիներին որդիներս և ես մեկ կամ երկու անգամ հանկարծակի որսացել էինք մի քանի սագ՝ ընթրիքի համար: Բայց մենք երբեք բադի որս չէինք արել:

Մի քանի տարի առաջ, տեսնելով, թե ինչպես էին տասնյակ բադեր շարունակ թռչում դեպի իմ ճահճուտը, ես մտածեցի, որ կարող եմ փորձել բադեր որսալ: Դա այնքա՜ն ոգեշնչող էր: Ես կլանվեցի դրա-

նով: Աշնանային բադի որսի ընթացքում հասկացա, որ պետք է լրջորեն վարժվեմ բադեր կրակելու մեջ: Ես կարողացա որսալ մի քանիսին և պարզեցի, որ դրանք նաև շատ համեղ են: Ես նկատեցի, որ հաճախ բադերը դուրս են իմ հրացանի հասանելիությունից կամ հազիվ հասանելի են, ինչը, կարծում եմ, իմ վրիպումներից մի քանիսի պատճառն էր: Ես փորձում էի որսալ նրանց իմ հրացանով, որը օգտագործում էի ամեն տեսակի որսի համար՝ սկսած նապաստակներից մինչև եղնիկները. այն «Ռեմինգտոն 11-87» էր: Սխալ մի՛ հասկացեք. ինձ դուր է գալիս այդ հրացանը, և այն շատ լավն է: Բայց ես լսել էի, որ կային հրացանների նոր մոդելներ, որոնք պատրաստված էին հատուկ բադի որսի համար: Դրանք քողածածկված էին և նախատեսված էին երեք ու կես դյույմանոց փամփուշտների համար, ինչը, ինչպես ես գիտեի, կօգներ խոցել հեռվում գտնվող թիրախները: Ես ծրագրում էի գնել այդպիսի մի հրացան մինչև բադերի հաջորդ որսաշրջանի սկիզբը:

Բադերի որսաշրջանն ավարտվեց, արդեն հունվարն էր: Ես «Կաբելաս» կոչվող հայտնի որսորդական խանութներից մեկում էի և որոշեցի գնալ հրացանների բաժին՝ տեսնելու համար, թե ինչպիսին էին այդ հրացանները: Հասնելով այդ բաժին՝ տեսա մի ամբողջ ենթաբաժին՝ նախատեսված միայն բադի որսի հրացանների համար: Ես նայեցի դրանցից մի քանիսը և ցանկացա գնել մի հրացան, որն ինձ դուր եկավ, բայց արժեր 2.000 դոլար, իսկ որսաշրջանը սկսվելու էր միայն մի քանի ամսից: «Ես կսպասեմ»,- մտածեցի: Բայց անմտածված ու անսովոր մի բան արեցի, երբ հեռանում էի: Ես մատնացույց արեցի այն հրացանը, որը ցանկանում էի ունենալ, և բարձրաձայն ասացի.

– Ես կունենամ այս հրացանը, Հիսուսի անունո՛վ:

Կրկին, ես շատ չմտածեցի դրա վերաբերյալ. պարզապես հռչակեցի, որ ունենալու էի այդ հրացանը: Իմ սրտում կար պարզ պատկեր այն բադի որսի հրացանի մասին, որը ցանկանում էի:

Մի քանի շաբաթ անց ինձ հրավիրեցին քարոզելու մի գործարար համաժողովի, և այնտեղ տեղի ունեցավ մի բան, ինչը գրավեց իմ ուշադրությունը: Իմ խոսքից հետո այն կազմակերպած ընկերության

տնօրենը մոտեցավ ինձ և ասաց, որ իրենք ուզում էին շնորհակալական նվեր տալ ինձ՝ իրենց հրավերն ընդունելու համար: Նա ասաց.

– Գիտենք, որ դուք որսորդության սիրահար եք. այնպես որ, մենք գնեցինք ձեզ համար այս հրացանը:

Ես ցնցված էի, քանի որ նրանք գնել էին նոր «Բենելլի»՝ կիսաավտոմատ բադի որսի հրացան, ճիշտ այն մոդելը, որը ես տեսել էի այդ խանութում, և որը մատնացույց էի արել: Դուք հասկանո՞ւմ եք: Ինչպե՞ս այդ հրացանը եկավ ինձ մոտ: Տարիներ շարունակ ես տասնյակ հրացաններ էի նվիրել, բայց ոչ մի անգամ չէի մոտեցրել մանգաղը: Այլ կերպ ասած, ես ցանել էի այդ հրացանները՝ հավատքով և առատաձեռնությամբ, բայց այդպես էլ չէի մոտեցրել մանգաղը: Ես երբեք չէի ասել. «Տե՛ր, ահա՛ այն: Ես ցանկանում եմ ունենալ այս հրացանը»: Բայց այն պահին, երբ արեցի դա, հունձքը եկա՛վ:

Ես պատմում էի այդ հրացանի պատմությունը մեկ այլ ծառայողի, որն իմ ընկերն է: Նա ասաց.

– Այո՛, կարծում եմ՝ երբեմն Աստված վարվում է այդպես: Նա պարզապես օրհնում է քեզ որևէ հատուկ փոքր նվերով, որպեսզի ցույց տա, որ սիրում է քեզ:

...ԱՍՏՎԱԾ ՈՒԶՈՒՄ ԷՐ ՑՈՒՅՑ ՏԱԼ, ՈՐ ՍԻՐՈՒՄ Է ԻՆՁ: ՆԱ ՑՈՒՅՑ ՏՎԵՑ, ՈՐ ՍԻՐՈՒՄ Է ԻՆՁ, ԵՐԲ ՈՒՂԱՐԿԵՑ ՀԻՍՈՒՍԻՆ ԻՆՁ ՀԱՄԱՐ ԵՎ ՏՎԵՑ ԻՆՁ ԻՐ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ:

Մտածելով այդ մասին՝ ես հասկացա. «Ո՛չ, այդպես չէ: Այո՛, Աստված սիրում է ինձ, բայց Նա չէր ուզում պարզապես զարմացնել ինձ մի փոքր նվերով»: Շնիկը, մեծ ձուկը, եղջերուները և եղնիկները, որոնք գալիս էին ճիշտ հերթականությամբ, մեքենաները՝ այդ ամենը չեկավ պարզապես այն պատճառով, որ Աստված ուզում էր ցույց տալ, որ սիրում է ինձ: Նա ցույց տվեց, որ սիրում է ինձ, երբ ուղարկեց Հիսուսին ինձ համար և տվեց ինձ Իր Թագավորությունը:

Ուզում եմ պատմել ձեզ ևս մեկ պատմություն հունձքի մասին: Ինչպես արդեն ասացի, ես մեքենաների սիրահար չեմ: Մենք վարում

ենք մեքենաներն այնքան ժամանակ, մինչև որ դրանք փոխարինելու կարիք է լինում: Դրա օրինակը մեր ութ տարվա «Հոնդա Պիլոտն» է: Այդ մեքենան մեզ դուր է գալիս. այն որակյալ է, անխափան է աշխատում, նոր տեսք ունի, և այդ պատճառով պահում ենք այն: Բայց մենք հաճախ էինք մտածում ավելի մեծ, ունիվերսալ մեքենա ունենալու մասին՝ ուղևորների և հյուրերի համար: Որոշ ժամանակ առաջ «Կադիլակ էսկալադ» էինք վարձել մեր «Նաու Սենթր» կենտրոնում անցկացվող միջոցառումներից մեկի համար: Դրենդան ու ես վարեցինք, և այն մեզ դուր եկավ: Մեզ դուր եկավ դրա մարգարտե սպիտակ գույնը, նաև՝ կարճ մոդելը, որը վարում էինք՝ ի տարբերություն «էսկալադի» սովորական երկար մոդելի: Մենք ասացինք. «Մենք ցանկանում ենք ունենալ այս մեքենայից՝ «Կադիլակ էսկալադ», մարգարտե սպիտակ գույնի, կարճ մոդելը: Մենք պետք է այսպիսի մեքենա գնենք»: Մենք շատ զբաղված էինք և ժամանակ չունեինք այդպիսի մեքենա փնտրելու և գնելու համար:

Մոտավորապես մեկ ամիս անց ես բացեցի մեր տան դուռը՝ առավոտյան օրաթերթը վերցնելու համար, երբ իմ բջջային հեռախոսը զանգեց: Մի տղամարդ ասաց.

– Ողջո՛ւյն հովիվ, ես ուզում եմ «Կադիլակ էսկալադ» գնել ձեզ համար: Ո՞ր գույնն եք նախընտրում:

Հանկարծակիի եկած՝ ասացի.

– Հրաշալի՜ է: Դրենդան և ես նախընտրում ենք մարգարտե սպիտակ գույնը:

– Լա՛վ,- ասաց նա,- ես կփնտրեմ և կտեսնեմ, թե ինչ կարող եմ գտնել:

Ես այնպես ոգևորվեցի, որ մոռացա ասել, որ մենք ցանկանում էինք ունենալ կարճ մոդելը: Նա որոշել էր գտնել մեկ կամ երկու տարվա մեքենա՝ գերազանց վիճակում և ցածր վազքով:

Գրեթե մեկ ամիս մենք ոչ մի լուր չստացանք նրանից: Ի վերջո, նա զանգեց և ասաց.

– Ձեր «էսկալադն» ինձ մոտ է: Եկեք այսինչ վայրը, այսինչ ժամին, և կարող եք տուն տանել այն: Մենք հանդիպեցինք նրան, և նրա

մոտ մարգարտե սպիտակ գույնի «Կադիլակ» էր՝ կարճ մոդելը: Այն շատ գեղեցիկ էր:

– Ներողություն, որ այդքան երկար ժամանակ անցավ, մինչև ձեզ զանգելը,- ասաց նա:- Ես շատ էի փորձում գտնել երկար մոդելը, բայց դրանց պահանջարկն այնքա՛ն մեծ է, որ ոչ մի հատ չկար: Ես կարողացա գտնել միայն կարճ մոդելը: Հուսով եմ՝ դա խնդիր չէ:

Դա խնդի՞ր չէ: Մենք ցանկանում էինք ունենալ ճիշտ այդ մեքենան և ասացինք նրան այդ մասին:

Կրկին, ուզում եմ հարցնել. ինչպե՞ս մեզ մոտ եկավ ճիշտ այն «էսկալադը», որը ցանկանում էինք ունենալ: Առաջին հերթին, ես նվիրել էի ութ մեքենա՝ բացի այն մեքենայից, որը նվիրեցի այն հովվին, ում մասին ավելի վաղ պատմեցի ձեզ: Բայց ես երբեք չէի ասել. «Ահա՛ այն»՝ նկատի ունենալով որևէ մեքենա, մինչև որ Դրենդան չասաց դա՝ իր «BMW»-ն ստանալու համար: Այս անգամ Դրենդան և ես կրկին համաձայնեցինք և բարձրաձայն ասացինք. «Ահա՛ այն»: Տարիներ շարունակ ես ասել եմ, որ եկեղեցին փայլուն կերպով սովորեցրել է տալու մասին, բայց գրեթե ոչինչ չի սովորեցրել այն մասին, թե ինչպես հնձել: Այսպիսով, կարո՞ղ եք ասել՝ հիմնվելով նախորդ պատմությունների վրա, թե ո՞րն է մանգաղը: Հուսով եմ՝ պատասխանն ակնհայտ է: Ես ցանել էի շատ մեքենաներ՝ հավատալով հունձքի, բայց Դրենդան և ես երբեք համաձայնության չէինք եկել նոր մեքենայի համար: Կրկին, որոշ ժամանակ մենք դեռ վարում էինք մեր ունեցած մեքենաները: Բայց այն պահին, երբ ասացինք. «Ահա՛ այն», այն հայտնվեց. մանգաղը մեր խոսքե՛ր են:

«Մահն ու կյանքը լեզվի ձեռքին է, և նրան սիրողը կուտի նրա պտուղը»:

– Առակաց 18.21

Կար ժամանակ, երբ եկեղեցին, թվում է, շատ էր սովորեցնում մեր դավանության մասին: Ես շփվել եմ այնպիսի մարդկանց հետ, միգուցե, դուք նույնպես, որոնք ինչ-որ բան էին ասում, իսկ հետո դնում էին ձեռքն իրենց բերանին՝ ասելով. «Ես պետք է հետևեմ իմ դավանութ-

յանը»: Դա պատվավոր ձգտում է, և ես համաձայն եմ, որ դա կօգնի պահել Խոսքը ձեր սրտում: Այնուամենայնիվ, ձեր դավանությանը հետևելն իրականում ոչ մի կապ չունի մանգաղի հետ: «Ի՞նչ: Իսկ ես կարծում էի, որ մանգաղը մեր խոսքերն են»: Այո՛, ես ասացի դա, բայց ճիշտ խոսելու բանաձևին տիրապետելը ինքնին բանալի չէ:

*«Որովհետև ճշմարիտ ասում եմ ձեզ, թե ով որ այս սարին ասի՝ «Վե՛ր կաց և ծո՛վն ընկիր», և իր սրտում չերկմտի, բայց **հավատա,** թե ինչ որ **ասում է**՝ կլինի նրան, կլինի, ինչ որ ասի»:*

– Մարկոս 11.23

Կրկին, Մարկոս 4-րդ գլխի մանգաղը ձեր խոսքերն են: Մինչև մանգաղի մասին խոսելը, Մարկոս 4-րդ գլխում արդեն ներկայացվում է հավատքի գործընթացը, և թե ինչպես հավատք ստանալ: Գրված է, որ երբ սերմը հասունանում է, դուք մոտեցնում եք մանգաղը, քանի որ հունձքը հասել է: Հունձքը հասել է, քանի որ դուք հավատքի մեջ եք, այսինքն՝ համաձայնություն ունեք Երկնքի հետ ձեր սրտում: Վերևում բերված խոսքը Մարկոս 11-րդ գլխից նկարագրում է նույն սկզբունքը: Ձեր սիրտը հավատում է Խոսքին, և հետո դուք խոսում եք՝ արձակելով Երկնքի իշխանությունը: Բայց ուշադրություն դարձրեք հետևյալ արտահայտությանը. *«հավատա, թե ինչ որ ասում է՝ կլինի նրան»:* Հավատքի ստուգումն այն է, թե արդյո՞ք դուք համոզված եք ձեր ասածի մեջ: Խոսքը դավանելն ինքնին հավատք չէ: Եթե ձեր սիրտը չունի համաձայնություն Երկնքի հետ, դուք կարող եք դավանել մինչև վերջին շունչը, և ոչինչ տեղի չի ունենա: Այսպիսով, մենք պետք է հսկենք մեր դավանությո՞ւնը, թե՞ մեր սիրտը:

«Բարի մարդը դուրս է բերում բարի բաներ այն բարուց, որը պահված է իր սրտում, և չար մարդը դուրս է բերում չար բաներ այն չարից, որը պահված է իր սրտում: Որովհետև մարդու սրտի առատությունից է խոսում նրա բերանը»:

– Ղուկաս 6.45, NIV

«Ամեն ինչից առավել հսկի՛ր քո սիրտը, որովհետև այն կյանքի աղբյուրն է: Հեռացրո՛ւ արատավորությունը քո բերանից. հեռո՛ւ պահիր անբարո խոսակցությունը քո շուրթերից»:

– Առակաց 4.23,24, NIV

Հասկանալի է, որ այն, ինչ մենք խոսում ենք, բխում է մեր սրտից և այն ամենից, ինչին մեր սիրտը հավատում է: Համաձայն Մարկոս 4-րդ գլխում նկարագրված գործընթացի, մենք գիտենք, թե ինչպես փոխենք մեր սրտի համոզմունքները, ինչպես բերենք մեր սիրտը համաձայնության Երկնքի հետ, և ինչպես հավատք ունենանք: Եվ երբ լիովին համոզված լինենք, մենք կմոտեցնենք մանգաղը՝ մեր խոսքերով և գործերով: Դուք հասկացա՞ք սա: Շա՛տ լավ, առաջ գնանք:

Շարունակելով խոսել հավատքի մասին՝ ցանկանում եմ տալ մի հարց, որին դուք պետք է կարողանաք պատասխանել:

Ինչպե՞ս իմանամ, որ ես իրականում հավատում եմ

Սա կարևոր հարց է, որի պատասխանը **պետք** է իմանաք, քանի որ անհնար է հավատքի աղոթք անել՝ առանց հավատքի մեջ լինելու: Կան շատ ձևեր՝ իմանալու համար՝ արդյո՞ք դուք հավատքի մեջ եք, կան շատ նշաններ, որոնց մասին դուք պետք է իմանաք և որոնք պետք է փնտրեք: Երբ հավատքի մեջ չեք, դուք կարող եք բազմաթիվ վատ և վախի վրա հիմնված որոշումներ կայացնել: Վախի վրա հիմնված որոշումները մշտապես ստրկացնում են ձեզ այս երկրի անեծքին և պատճառ դառնում, որ բաց թողնեք այն, ինչ Աստված ցանկանում է տալ ձեզ: Այսպիսով, ո՞րն է հավատքի մեջ լինելու ապացույցը: Առաջին նշանը հեշտ է որոշելը. դուք կարող եք կրկին կարդալ հավատքի մեր սահմանումը և հասկանալ, որ իրական բանալին՝ ձեր սրտում լիովին համոզված լինելն է: Սակայն հաճախ մտածում ենք, որ համոզված ենք, այնինչ մենք միայն համաձայնում ենք Խոսքի հետ մեր մտքով, ոչ թե սրտով: Դուք պետք է կարողա-

նաք տարբերել այս վիճակները: Երբ լիովին համոզված եք, իհարկե, դուք ունեք մտավոր համաձայնություն Աստծո Խոսքի հետ, բայց ձեզանում կա նաև վստահություն՝ համոզվածություն, որը խաղաղություն և սպասում է բերում:

> *«Հավատք՝ նշանակում է համոզված լինել այն բանում, ինչի հանդեպ մենք հույս ունենք, և վստահ լինել այն բանում, ինչը մենք չենք տեսնում»:*
>
> – Եբրայեցիների 11.1, NIV

Եթե դուք ունեք ապացույց, որ ինչ-որ բան պատկանում է ձեզ, մի՞թե ձեզ պետք է համոզել դրանում: Իհարկե՝ ո՛չ: Կրկին, երբ դուք հավատքի մեջ եք, ձեզանում կա գիտելիք, խաղաղություն և վստահություն, որ դուք ունեք այն, ինչ Աստծո Խոսքն ասում է, թեև դեռ չեք տեսնում: Շատերն այսպես են ձևակերպում այս վստահությունը. «Ես գիտեմ, որ ես գիտեմ, որ ես գիտեմ, որ ես գիտեմ, որ ես ունեմ դա»: Այս գիտելիքը բխում է ներսից, ոչ թե ձեր հանգամանքներից: Այն ձեր հոգևոր մարդու կամ սրտի մեջ է: Վախը հեռանում է, և անհանգստության կպչուն մտքերն այլևս չեն ռմբակոծում ձեր միտքը. դուք գիտեք, որ դա կատարված է:

Հավատքի մեջ լինելու ևս մեկ կողմ՝ ուրախություն և սպասում: Դուք ստացել եք ձեր պատասխանը: Այն ձե՛րն է: Հավատքն ավելին է, քան խաղաղության կամ վստահության զգացումը, թեև դուք կունենաք դա: Դուք նույնպես պետք է կարողանաք հոգևորապես պաշտպանել ձեր դիրքը: Որպեսզի հասկանաք, թե ինչ նկատի ունեմ, պատկերացրեք դատավարություն, որում դուք՝ որպես վկա, մասնակցում եք խաչաձև հարցաքննության: Ո՞րն է ձեր հավատքի և համոզմունքների հիմքը: Ինչպե՞ս կպաշտպանեք ձեր դիրքորոշումը: Կա միայն մեկ պատասխան՝ Աստծո Խոսքով:

Օրինակ, եթե ինչ-որ մեկը ձեր տուն գար և ասեր. «Դո՛ւրս իմ տնից», մի՞թե դուք կասեիք. «Ներողություն, մեզ մեկ օր ժամանակ տվե՛ք, և մենք կհեռանանք այստեղից»: Ո՛չ, դուք այդպես չէիք վարվի: Հավանաբար, կծիծաղեիք: Եթե այդ մարդն ասեր. «Ո՛չ, սա ի՛մ

տունն է. դո՛ւրս այստեղից, այլապես ես կհանդիպեմ ձեզ դատարանում», դուք կպատասխանեիք. «Ես ուրախ կլինեմ տեսնել ձեզ դատարանում»: Լսման ժամանակ դուք հանդարտորեն ցույց կտայիք դատավորին ձեր սեփականության վկայականը: Նա ընդամենը մեկ անգամ աչքի կանցկացներ այն և կձերբակալեր այդ մարդուն ոտնձգության համար՝ հարկադրելով վճարել դատավարության հետ առնչվող բոլոր ծախսերի համար: Ձեր վստահությունը հաստատված էր ոչ թե ձեր զգացմունքների, այլ օրենքի վրա և այն փաստի, որ այդ տունն օրենքով պատկանում է ձեզ:

Երբ խոսքը հավատքի մասին է, ես պարզել եմ, որ հաճախ մարդիկ, որոնք չեն հասկանում, թե ինչ է հավատքը, հեշտորեն շփոթվում են՝ վստահելով իրենց գործերին, ոչ թե իրենց հավատքի միակ աղբյուրին, որն Աստծո Խոսքն է: Հեշտ է շփոթել գործողությունը կամ Աստծո Խոսքի հիման վրա գործելու բանաձևը Թագավորության իրական զորության հետ, որը բխում է սրտից և մեծ վստահություն ունի: Օրինակ, եթե դուք ֆինանսներ ցանեիք Աստծո Թագավորության մեջ, և ես հարցնեի ձեզ, թե ինչու եք հավատում, որ հունձք կստանաք այդ ցանքի պատճառով, ձեր պատասխանը չպետք է լիներ. «Որովհետև այսինչ ամսաթվին ես այսքան գումար եմ ցանել»: Այդ դավանությունը կենտրոնացած է միայն ձեր գործողության վրա, այսինքն՝ բանաձևի վրա, և չունի վստահության խարիսխ: Ձեր վստահությունը կարող է բխել միայն Աստծո Խոսքից:

«ՀԱՎԱՏՔ՝ ՆՇԱՆԱԿՈՒՄ Է ՀԱՄՈԶՎԱԾ ԼԻՆԵԼ ԱՅՆ ԲԱՆՈՒՄ, ԻՆՉԻ ՀԱՆԴԵՊ ՄԵՆՔ ՀՈՒՅՍ ՈՒՆԵՆՔ, ԵՎ ՎՍՏԱՀ ԼԻՆԵԼ ԱՅՆ ԲԱՆՈՒՄ, ԻՆՉԸ ՄԵՆՔ ՉԵՆՔ ՏԵՍՆՈՒՄ»:

– ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 11.1, NIV

Ես կորցրել եմ այն մարդկանց հաշիվը, որոնց համար աղոթելուց հետո հարցնում էի, թե ինչու էին նրանք հավատում, որ պատասխան էին ստանալու իմ աղոթքի շնորհիվ, և նրանք ապշահար ինձ էին նայում՝ առանց պատասխանի: Ես հարցնում էի, որ հասկանա-

յի, թե արդյո՞ք նրանք ունեին հավատք, այսինքն՝ համաձայնություն Երկնքի հետ: Ես ցանկանում էի լսել նրանցից. «Ես գիտեմ, որ ստանալու եմ, քանի որ Աստված խոստացել է ինձ այսինչ գրքի, այսինչ խոսքի հիման վրա, որ դա իմն է»: Եթե մարդիկ չեն կարողանում որևէ սուրբգրային հատված ներկայացնել այդ պահին, հավանական է, որ նրանք խարսխված չեն և իրականում նույնիսկ գաղափար չունեն, թե ուր է լողում իրենց նավը:

Հիշեք՝ հավատքը կարող է գոյություն ունենալ միայն՝ երբ դուք գիտեք Աստծո կամքը: Ինչո՞ւ: Քանի որ հավատքը կարող է գոյություն ունենալ միայն՝ երբ ձեր սիրտն ունի համաձայնություն Աստծո Խոսքի հետ: Ես համոզված եմ, որ շատերը մտածում են, որ իրենք հավատքի մեջ են, այնինչ այդպես չէ: Կրկին, միգուցե նրանց միտքը համաձայն է, որ Աստծո Խոսքը ճշմարիտ և բարի է, բայց մարդն ունի հավատք, միայն՝ երբ իր սիրտը լիովին համոզված է: Շատերը մտովի համաձայն են Աստծո Խոսքի հետ, բայց նրանց սրտերը հաստատված չեն:

Ահա մի լավ օրինակ այն մասին, թե ինչ նկատի ունեմ, և համոզված եմ, որ այս օրինակը ցույց կտա, որ շատերը հավատքի մեջ չեն, թեև, իրենց կարծիքով, հավատում են: Ի՞նչ կլիներ, եթե ես վերջերս բացահայտել եմ, որ երկինքը կապույտ չէ, ինչպես որ մարդիկ ասում են, այլ՝ որ այն գույնը, որը մենք կապույտ ենք անվանում, իրականում դեղին է: Ի՞նչ կանեիք: Մի՞թե դուք զարմանքից հոգոց կհանեիք, արագորեն կվերցնեիք ձեր բջջային հեռախոսը, կզանգեիք ձեր առաջին դասարանի ուսուցչուհուն և կբղավեիք նրա վրա՝ մեղադրելով, որ նա խառնաշփոթի է վերածել ձեր կյանքը, քանի որ սխալ է սովորեցրել ձեզ բոլոր գույները: Չեմ կարծում: Դուք զգացմունքորեն չէիք արձագանքի, չէիք վախենա և տեսարան չէիք սարքի: Դուք պարզապես կմտածեիք, որ ես անմիտ մարդ եմ, կանտեսեիք իմ խոսքերը՝ դրանք անտրամաբանական համարելով, և կշարունակեիք զբաղվել ձեր գործերով: Ինչո՞ւ: Քանի որ դուք լիովին համոզված եք, որ կապույտ գույնը կապույտ է:

Համեմատենք այս օրինակը հավատքի հետ: Ի՞նչ կլիներ, եթե լիովին համոզված լինեիք այն բանում, ինչ Աստված ասում է

բժշկության մասին, և մի բժիշկ ասեր ձեզ, որ դուք մահանալու եք քաղցկեղից: Դուք կնայեիք այդ բժշկին և կմտածեիք, որ նա անմիտ է, քանի որ դուք գիտեք, որ նման բան չի կարող տեղի ունենալ: Ինչո՞ւ: Քանի որ լիովին համոզված եք այն բժշկության մեջ, որի համար Հիսուսը վճարել է: Դուք հասկանո՞ւմ եք: Իհարկե, շատերն են աղոթում, բայց քննելով նրանց աղոթքները՝ տեսնում եմ, որ դրանք ոչ թե հավատքի աղոթքներ են, այլ հույսի, և այդ մարդիկ չունեն համոզվածություն իրենց աղոթքների արդյունքի մեջ: Իմ ընկե՛ր, ահա թե ինչու է անչափ կարևոր, որ մենք կառուցենք մեր անձերն Աստծո Խոսքով: Մենք պետք է իմանանք Աստծո կամքը, որպեսզի վստահ լինենք Նրա Խոսքի մեջ և նույնպես կարողանանք մերժել այն, ինչը Նրա կամքը չէ: Թույլ տվեք մի օրինակ բերել իմ կյանքից, որը պատկերում է, թե որքան կարևոր է սնվել այն ամենով, ինչ Աստված է ասում այս կյանքի մասին:

Ես հոգնած էի իմ ձեռնարկությունում մի քանի ծանր աշխատանքային շաբաթից հետո (այդ ժամանակ դեռ եկեղեցու հովիվ չէի): Իմ օրերը ծանրաբեռնված էին վաճառքի վերաբերյալ հեռախոսազանգերով և, իհարկե, կոմիսիոն վճարներով ապրելու ֆինանսական ճնշմամբ: Ես գնացի ատամնաբույժի մոտ հասարակ ատամնալիցքի համար: Ամեն ինչ լավ էր, քանի դեռ ատամնաբույժը չէր ներարկել նովոկաինը: Երբ նա մտցրեց ասեղը, ես հանկարծակի ցնցվեցի, և ծնոտս անմիջապես թմրեց՝ դանդաղ թմրելու փոխարեն: Ես զարմացա, ասացի ատամնաբույժին այդ մասին, և նա ասաց.

– Ո՛չ, երևի թե ես դիպա նյարդին:

– Դա խնդի՞ր չէ,- արագորեն հարցրի նրան:

– Սովորաբար դա լավանում է:

Ի՞նչ: Ես ճի՞շտ լսեցի:

– Բժի՛շկ, ի՞նչ նկատի ունեք՝ ասելով, որ սովորաբար դա լավանում է:

– Այն, որ 80-85 տոկոսի դեպքում դա լիովին անցնում է՝ առանց տևական բացասական հետևանքների:

Ի՞նչ: Հանկարծ ներսումս վախ բարձրացավ: Ի՞նչ է լինելու: Դա

անցնելո՞ւ է: Միտքս սկսեց համակվել վախով: Այդ այցից հետո իմ դեմքը դեռ թմրած էր՝ ի տարբերություն սովորական այցերի, որոնցից հետո թմրածությունն աստիճանաբար անցնում է: Ատամնաբույժին այցելելուց գրեթե մեկ ժամ անց ես հանդիպում ունեի հաճախորդի հետ. այնպես որ, շատ ժամանակ ունեի, որպեսզի մտածեի այն մասին, ինչ քիչ առաջ տեղի ունեցավ: Այդ հանդիպմանը գնալու ճանապարհին սաստիկ տագնապ էի զգում՝ ոչ թե ցավից, այլ խաղաղության բացակայությունից և մտքումս պտտվող վախերից:

Ավելի ուշ այդ օրը, երբ տուն էի վերադառնում այդ հանդիպումից հետո, որոշեցի այցելել իմ ընկերներից մեկին: Դեմքս դեռ թմրած էր, և ես ցանկանում էի, որ ինչ-որ մեկը հավաստիացներ ինձ, որ դա անցնելու էր: Ուշադրություն դարձրեք, թե ինչպիսի սխալ գործեցի. ես չդիմեցի Աստծո Խոսքին՝ վստահություն ստանալու համար, այլ մի մարդու, որը նույնիսկ հաստատուն հավատացյալ չէր: Ես պատմեցի նրան կատարվածի մասին, և սպասում էի, որ նա կասեր ինձ. «Դա խնդիր չէ, Գա՛րի: Ամեն ինչ կանցնի»: Փոխարենը, լսեցի հետևյալը.

– Ո՛չ: Ես մի ընկեր ունեմ, որի հետ նման բան տեղի ունեցավ, և նրա դեմքն այդպես էլ չբուժվեց. այն կաթվածահար է մինչև օրս:

Ես չէի հավատում ականջներիս: Վախը լիովին տիրեց իմ մտքին: Ես ձևացրի, թե համոզված էի, որ ամեն ինչ կանցներ, և շնորհակալություն հայտնեցի նրան ինձ ժամանակ տրամադրելու համար: Հուսահատության մեջ այցելեցի ևս մեկ ընկերոջ: Ես տվեցի նրան նույն հարցը և անակնկալի եկա՝ լսելով նույն պատասխանը.

– Ո՛չ, այդպիսի բան կատարվեց նաև իմ ընկերներից մեկի հետ, և նրա դեմքն այդպես էլ չլավացավ. նա մինչև օրս կաթվածահար է:

Այդ այցելությունից հետո ես լիովին հուսալքվեցի: Գիտեի, որ Աստված բժշկում է (իմ մտքում), բայց չէի կարողանում ազատվել այդ վախից: Իմ սրտում չկար համոզվածություն: Այդ գիշեր ես սաստիկ տագնապի մեջ էի. միտքս լի էր վախով, իսկ երեսս դեռ թմրած էր, ինչպես որ ատամնաբույժի սենյակում էր: Ես փորձում էի քնել, բայց հանկարծ սկսեցի մի փոքր ցավ զգալ աջ ականջիս ներքևի հատվածում: Մի՞թե ես զգում էի այն, ինչի մասին մտածում էի: Հայրս

ԱՅԴ ՊԱՀԻՆ ԵՍ ՀԱՍԿԱՑԱ, ՈՐ ԻՄ ՄԻԱԿ ՀՈՒՅՍՆ ԱՍՏԾՈ ԽՈՍՔՆ ԷՐ:

պայքարում էր դիմային կաթվածի հետ դրանից մեկ, երկու տարի առաջ, և դա սկսվել էր մի փոքր ցավից ականջի ներքևի հատվածում: Դիմային կաթվածը տեղի է ունենում, երբ դիմային մկանները վերահսկող նյարդը, որն անցնում է անմիջապես ականջի ներքևում գտնվող ոսկրի մի փոքր անցքով, վնասվում է վարակի կամ բորբոքման պատճառով:

Ես պառկած էի և փորձում էի քնել, բայց մտքումս պտտվում էին հետևյալ բառերը. «Դու դիմային կաթված ես ստանալու, ինչպես և հայրդ»: Առավոտյան, երբ արթնացա, ես դիմային կաթվածի ցայտուն ախտանշաններ ունեի: Այժմ թմրած էր ոչ միայն ծնոտս, այլև դեմքիս աջ կողմն ամբողջությամբ, չէի կարողանում փակել աչքերս և բերանս. ես շատ վատ վիճակում էի:

Գնացի տեղական բժշկի մոտ՝ իմ կասկածները հաստատելու համար: Զննումից հետո նա նայեց ինձ և ասաց, որ ինձ մոտ իսկապես դիմային կաթվածի լիարժեք դեպք է:

– Ի՞նչ կկատարվի ինձ հետ,- հարցրի ես:

– 80-85 տոկոսի դեպքում դա անցնում է՝ առանց մշտական կաթվածի:

Մի՞թե նա ասաց այն, ինչ ես լսեցի:

Ես հասկացա, որ լուրջ խնդրի մեջ եմ: Գիտեի, որ սատանան կանգ չէր առնելու դրանով, և չէի ցանկանում տեսնել, թե ինչ էր կատարվելու դրանից հետո: Իմ գիտելիքը հոգևոր պատերազմի մասին բավական էր՝ հասկանալու համար, որ ես սխալ ուղղությամբ էի գնում: Հիշեք՝ դա տարիներ առաջ էր այն ժամանակվանից, երբ ես սպառիչ գիտելիք ձեռք բերեցի նման բաների մասին: Բայց իմ գիտելիքը բավական էր՝ հասկանալու համար, որ ես պետք է պայքարեի այդ խնդրի հետ հոգևորապես, եթե ցանկանում էի պարտության մատնել այն: Ես նույնպես հասկացա, որ դա դիվային հարձակում էր, որը հանկարծակիի բերեց ինձ, երբ հոգնած էի և չէի սպասում ոչ մի վտանգի:

Այդ պահին ես հասկացա, որ իմ միակ հույսն Աստծո Խոսքն է: Ես լիովին անկարող էի ինքնուրույն կանգնեցնել այն վախը, որը տանջում էր իմ միտքը: Այնպես որ, գրեցի բժշկության խոսքեր 7x12սմ. չափի քարտերի վրա և փակցրի դրանք ամբողջ տնով: Ես ապաշխարեցի Տիրոջ առջև և սկսեցի իմ սրտում հավատքը զարգացնելու գործընթացը: Գիտեի, որ պետք է ցանեի Խոսքն իմ սրտում, որպեսզի ինձանում հավատք զարգանար: Այնպես որ, սկսեցի մտորել Աստծո Խոսքի շուրջ ամբողջ օրվա ընթացքում:

Սկզբում ոչինչ չփոխվեց: Իմ դեմքը դեռ թմրած էր, և ես շարունակ պայքարում էի վախի հոգու դեմ: Մոտավորապես մեկ շաբաթ անց, երբ դեմքս դեռ նույն վիճակում էր, դա տեղի՛ ունեցավ: Նման այն գործընթացին, որի մասին սովորեցնում է Մարկոս 4.26-ում գտնվող մեր հատվածը, մինչ ես ցանում էի Խոսքն իմ սրտում, հավատքը սկսեց աճել՝ սկզբում ծիլը, հետո ցողունը, հետո հասկը, և վերջապես հասած ցորենը հասկի մեջ:

Ամբողջ այդ ընթացքում չկար համաձայնություն, այսինքն՝ չկար հավատք: Այնուամենայնիվ, թեև ես փոփոխություն չէի տեսնում և չգիտեի այդ գործընթացի մասին, համաձայն Մարկոս 4.26-ում գտնվող մեր հատվածի, ամեն ինչ փոխվում էր: Այդ փոփոխությունը, որը նկատի ունեմ, դեռ հայտնված բնական տիրույթում չէ. այն տեղի է ունենում մեր սրտում: Եթե մենք հենվենք Խոսքի վրա, Խոսքը դանդաղորեն կփոխի մեր սրտի համոզմունքները՝ լիովին ինքնաբերաբար փոխարինելով անհավատությունը Երկնքի հետ համաձայնությամբ: Այս դեպքում ես հենվեցի Խոսքի վրա՝ հասկանալով, որ այն իմ միակ պատասխանն էր:

Հանկարծ, մեկ անգամ, երբ քայլում էի մեր տան մեջ, որտեղ ամենուր փակցված էին բժշկության խոսքեր 7x12սմ. չափի քարտերի վրա, ես պարզապես նայեցի մի խոսքի, որը հարյուր անգամ տեսել էի: Բայց այս անգամ, երբ նայեցի դրան, ասես ՊԱՅԹՅՈՒՆ տեղի ունեցավ: Հանկարծ ինձ վրա օծություն եկավ, վախն անմիջապես հեռացավ, և ես ԳԻՏԵԻ, որ բժշկված էի: Այո՛, իմ դեմքը դեռ թմրած էր: Փոփոխություն չկար, բայց ես գիտեի, որ բժշկված էի: Մի քանի ժամվա ընթացքում դեմքս լիովին վերականգնվեց, և թմրածությունը

լիովին հեռացավ: Փա՛ռք Աստծուն: Խոսքը գործո՛ւմ է:

Թեև ես թույլ էի տվել, որ իմ հոգևոր կյանքը տկարանար իմ անփութության և զբաղվածության պատճառով, ի վերջո հասկացա իմ սխալը և ապաշխարեցի իմ անմտությունից: Սա այն ժամանակ էր, երբ նոր էի սովորում, թե ինչպես էր գործում հավատքը, և դեռ չունեի շատ փորձառություն այս բնագավառում: Ետ նայելով՝ կարող եմ ասել հետևյալը. այն, որ գտնվելով նեղության մեջ՝ ես հարցրի իմ ապագայի մասին մարդկանց՝ Աստծուն հարցնելու փոխարեն, անմտություն էր: Հենց որ հասկացա, թե ինչ էր տեղի ունենում, ես վստահաբար դիմեցի Աստծո Խոսքին: Դժբախտաբար, շատերը չունեն վստահություն այս գործընթացի մեջ, քանի որ նրանց երբեք չեն սովորեցրել, թե ինչ է հավատքը և ինչպես է այն առաջանում: Նրանք տեղյակ չեն այս գործընթացից, ճնշման ներքո նրանք դադարում են հենվել Խոսքի վրա՝ մտածելով, որ այն չի գործում:

Հասկանալ սատանայի հակահարձակումը

Քրիստինը շատ բան չգիտեր Աստծո մասին, երբ եկավ մեր եկեղեցի: Նա վերստին ծնվեց մեր կիրակնօրյա ծառայություններից մեկի ժամանակ, և նրա կյանքը շրջադարձային փոխվեց: Մեր եկեղեցում մենք ունենք «Թագավորության կողմնորոշում» կոչվող դասընթաց: Այն բնագավառներից մեկը, որի մասին մենք խոսում ենք և սովորեցնում, բժշկություն ստանալու իրավաբանական իրավունքն է: Քրիստինը տարիներ շարունակ խնդիրներ ուներ լսողության հետ: Նա 40 տարի լսողական սարք էր կրում և արդեն իսկ կորցրել էր իր լսողության 50 տոկոսից ավելին: Նրա մայրը խուլ էր, և նրա եղբայրը նույնպես լսողության խնդիր ուներ: Երբ Քրիստինն իմացավ, որ որպես քրիստոնյա՝ նա բժշկվելու օրինական իրավունք ունի, այնպե՛ս ոգեշնչվեց:

Դասի ժամանակ կինս դրեց իր ձեռքերը նրա վրա և աղոթեց, որ լսողությունը բացվի, և նույն պահին նա սկսեց գերազանց լսել: Քրիստինը սկսեց ճչալ, լաց լինել և փառաբանել Աստծուն: Երբ կինս՝ Դրենդան, և Քրիստինը եկան և պատմեցին ինձ այդ բարի լուրը, ես

զգացի, որ պետք է զգուշացնեմ նրան սատանայի հակահարձակման մասին: Ես խնդրեցի Դրենդային սովորեցնել Քրիստինին, որ եթե նրա ախտանշանները վերադառնան, նա պետք է համարձակ խոսի այդ խնդրին, հռչակի, որ ինքը բժշկված է, և հրամայի սատանային հեռանալ: Նրա փորձությունը սկսվեց հաջորդ առավոտյան: Նրա լսողությունը վատացավ: Եվ նա արեց ճիշտ այն, ինչ ես ասացի.

– Ո՛չ, սատանա՛, ես չե՛մ ընդունում սա: Ես բժշկվա՛ծ եմ, և ես *բժշկվե՛լ եմ*, Հիսուսի անունո՛վ:

Հանկարծ նրա ականջները կրկին բացվեցին և բաց են մինչև օրս:

Հիշեք, որ սատանան հակահարձակում կձեռնարկի՝ փորձելով ետ վերցնել տարածքը: Թույլ մի՛ տվեք, որ նա անի դա: Հենվե՛ք Աստծո Խոսքի վրա:

Այս գլխում ես որոշ ժամանակ հատկացրի՝ տալով ձեզ հիմքային պատկերացում այն մասին, թե ինչ է հավատքը, ինչպես է այն գործում, ինչպես իմանալ, որ դուք հավատքի մեջ եք, և ինչպես հավատք ստանալ: Դուք պետք է իմանաք այս մասին, որպեսզի Աստծո Թագավորությունը գործի ձեր կյանքում: Հիշեք՝ Հիսուսն ասաց արյունահոսություն ունեցող կնոջը. «Քո հավա՛տքը բժշկեց քեզ»: Թող որ նույնը կատարվի ձեզ հետ. թող որ ձեր հավատքը, ձեր սիրտը, որը լիովին համոզված կլինի երկնային խոսքերում, նաև մանգաղը մոտեցնելը լինեն ձեր պատասխանը ցանկացած խնդրի և կարիքի համար, որին դուք կբախվեք կյանքում:

ԳԼՈՒԽ 6

ՏԻՐՈՋ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆԸ

Ես ռեստորանում էի իմ կնոջ և մի կին քարոզչի հետ, որը հյուր էր մեր եկեղեցում: Երեկոյան ժամը 22:00-ն էր, և մենք նոր էինք ավարտել մեր ազդեցիկ երեկոյան ծառայությունը: Մատուցողը մոտեցավ մեր պատվերը վերցնելու, և մենք սկսեցինք զրուցել: Իմ հյուրը պատմում էր մեր եկեղեցու մասին, նաև՝ թե որքան հրաշալի ծառայություն անցկացրինք: Այնուհետև նա հարցրեց մատուցողին.

- Դուք սիրո՞ւմ եք որսորդություն:

Նա պատասխանեց, որ սիրում է: Իմ հյուրը միշտ ոգեշնչումով էր լսում իմ որսորդական պատմությունները, և այդ երեկո նվիրել էի նրան իմ «Հավատքի որսորդություն» գրքի մի օրինակ՝ նրա ընկերուհիներից մեկի համար: Նվիրածս գիրքը դրված էր կողքիս՝ հատակին:

Մատուցողը շարունակեց՝ ասելով, որ երկար ժամանակ է՝ փորձում է եղնիկ որսալ, բայց չի կարողանում: Իմ հյուրը և ես սկսեցինք բացատրել նրան, թե ինչպես է գործում Աստծո Թագավորությունը, և որ ինքը կարող է ակնկալել, որ եղնիկ է որսալու ամեն անգամ, երբ որսի գնա: Նա իսկապես չգիտեր, թե ինչ մտածեր մեր մասին: Բայց ես հիշեցի այդ գիրքը և առաջարկեցի նվիրել այն նրան: Ես խոստացա իմ հյուրին գրքի մեկ այլ օրինակ, և նա համաձայնեց: Մատուցողը շնորհակալություն հայտնեց ինձ և խոստացավ կարդալ, բայց ես մտածեցի, որ միգուցե վերջին անգամ էի հանդիպում նրան: Սակայն դա վերջին անգամը չէր:

Մեկ տարի անց նույն կին քարոզիչը հյուրընկալվեց մեր եկեղեցում: Նա ասաց, որ իրեն դուր էր եկել այն ռեստորանը, որտեղ եղել էինք մեկ տարի առաջ, և հարցրեց, թե կարո՞ղ էինք կրկին գնալ այնտեղ: Մենք այդպես էլ արեցինք: Երբ նստեցինք, զարմացանք, որ մեզ սպասարկելու էր նույն մատուցողը, որ սպասարկել էր մեկ տարի առաջ: Երբ նա մոտեցավ, նայեց մեզ և ասաց.

- Բարև ձե՛զ, դուք այստեղ էիք մեկ տարի առաջ, և մենք խոսում էինք որսորդության մասին:

- Այո՛, հիշում ենք, - պատասխանեցինք մենք:

- Ես կարդացի ձեր նվիրած գիրքը և վարվեցի այնպես, ինչպես գրված էր: Ես երկու եղնիկ որսացի անցյալ տարի, և այս տարի ևս սպասում եմ իմ որսին:

Մենք ոգևորվեցինք՝ լսելով նրա պատմությունը, բայց չզարմացանք: Թագավորությունը գործում է ամեն անգամ:

Ես հավաքույթ էի անցկացնում մոտավորապես 25 հոգվի համար: Սովորեցնում էի Աստծո Թագավորության մասին և բացատրում էի, թե ինչպես է այն գործում: Ամեն ինչ հրաշալի ստացվեց: Երբ պատրաստվում էի հեռանալ հավաքույթի սրահից, և իմ աշխատակազմը մաքրում էր տարածքը, հոգիվներից մեկը վերադարձավ: Նա կնոջ հետ մոտեցավ իմ կնոջը, և խնդրեցին խոսել մեզ հետ: Այդ հոգիվը պատմեց մեզ, որ մինչև շաբաթվա վերջ նրա տունն արգելանքի տակ էր դրվելու, եթե չվճարեր մոտավորապես 6.900 դոլար: Նա ասաց, որ փող չունի, ունի ընդամենը 100 դոլար:

- Սա իմ ամբողջ գումարն է, - ասաց նա, - բայց ես ուզում եմ ցանել սա, ինչպես սովորեցրիք այս երեկո, և խնդրում եմ, որ դուք և ձեր կինը համաձայնության գաք մեզ հետ այն գումարի համար, որի կարիքը մենք ունենք այս շաբաթ:

Բոլորս ձեռք ձեռքի տվեցինք, աղոթեցինք և գոհացանք Աստծուց այդ գումարի համար:

Գրեթե մեկ ամիս անց ես տեսա այդ հոգվին մեկ այլ միջոցառման ժամանակ: Նա խիստ ոգևորված շտապեց ինձ մոտ:

- Ես պետք է պատմեմ ձեզ, թե ինչ տեղի ունեցավ, - ասաց նա: - Ես չէի ասել ձեզ այն ժամանակ, որ կինս և ես շապիկների վրա մետաքսագիր տպագրության փոքրիկ մասնակի գործ ենք անում մեր ավտոտնակում: Մենք մեծ գումար չենք աշխատում, բայց ժամանակ առ ժամանակ պատվերներ ենք ստանում: Մեր միացյալ աղոթքի հաջորդ օրը մի քանի պատվեր ստացանք, որոնց ընդհանուր գումարը կազմեց 8.900 դոլար: Այդ շաբաթ մենք ստիպված էինք շատ աշխատել, բայց մինչև ուրբաթ օրը մենք ունեինք անհրաժեշտ 6.900 դոլարը՝ մեր տունը պահպանելու համար: Շնորհակա՛լ եմ:

Ես ներկա էի մի հովվական համաժողովի Հյուսիսային Կարոլինայում, որտեղ կար գրեթե 500 հովիվ: Ես չէի քարոզում այնտեղ, այլ պարզապես մասնակցում էի: Մի մարդ մոտեցավ ինձ ու ասաց.

- Ես պետք է խոսեմ ձեզ հետ:

Նա հովիվ էր Գերմանիայից և ասաց, որ ցանկանում է մի հետաքրքիր պատմություն պատմել ինձ:

Նրա որդին, ով դեռահաս էր, ինչ-որ ձևով ձեռք էր բերել իմ լսասկավառակները: Դրանք լսելուց հետո որոշել էր, որ հավատքով ստանալու է «PlayStation 3», քանի որ փող չուներ դրա համար: Կարծում եմ՝ յուրաքանչյուրը գիտի, թե ինչ է «PlayStation 3»-ը, բայց եթե չգիտեք, դա կոմպյուտերային խաղային համակարգ է: Այդ հովիվը պատմեց, որ մի անգամ նրա որդին եկավ իր գրասենյակ և հարցրեց, թե համաձայնության կգա՞ իր հետ «PlayStation 3» ստանալու համար: Նա պատմեց իր հորն այն, ինչ իմացել էր իմ լսասկավառակներից, և ասաց, որ ցանկանում է սերմ ցանել և աղոթել իր հոր հետ դրա համար: Այդ հովիվն ասաց, որ մեծ կարևորություն չի տվել դրան, բայց, որպես եկեղեցու հովիվ, ընդունել է իր որդու ցանքը՝ նրա տված ֆինանսական զոհաբերությունը եկեղեցու համար: Նա աղոթել է որդու հետ՝ համաձայնելով, որ որդին արդեն ունի «PlayStation 3», և մտածել է, որ դրանով ամեն ինչ ավարտված է:

Հաջորդ օրը մի մարդ այդ հովվի եկեղեցուց զանգում է նրան և հարցնում, թե որդին դեմ չի՞ լինի մի քիչ ավել գումար վաստակել, քանի որ ինքը մի կարճաժամկետ նախագիծ ուներ, որտեղ իրեն օգ-

նություն էր պետք: Նրա որդին հիացմունքով ընդունում է այդ առաջարկը: Աշխատելով այդ երկօրյա նախագծում՝ նա այնքան գումար է վաստակում, որ կարողանում է «PlayStation 3» գնել:

Այդ դեպքը գրավեց նրա որդու ուշադրությունը: Այդ հովիվը պատմեց, որ մի քանի շաբաթ անց նա կրկին եկավ իր հոր գրասենյակ և խնդրեց համաձայնության գալ իր հետ մեկ այլ հարցի համար: Այդ հովիվն, իհարկե, պատրաստ էր, բայց նա մի փոքր զարմացավ, երբ որդին խնդրեց աղոթել իր հետ, որ Աստված ավելի մեծ մկաններ տա իրեն: Նա ասաց ինձ, որ չգիտեր՝ ինչ պատասխանել որդուն: Բայց, ի վերջո, ասում է նրան, որ եթե խնդրում ենք Աստծուց ավելի մեծ մկաններ, որդին նույնպես պետք է ինչ-որ բան անի իր կողմից, և որ ինքը համաձայնության կգա որդու հետ, եթե նա հասկանա դա: Նրա որդին ընդունում է դա և կրկին ֆինանսական սերմ ցանում՝ ավելի մեծ մկաններ ունենալու համար, և նրանք համաձայնության աղոթք են անում:

Հաջորդ օրը մի մեքենա կանգնում է այդ հովվի տան դիմացը: Այցելուները մի ընտանիք էին նրա եկեղեցուց: Հովիվը դուրս է գնում՝ նրանց հետ զրուցելու: Եվ նրանք ասում են, որ իրենց ավտոտնակը մաքրելիս գտել են սկավառակածողերի հավաքածու և մտածել են, որ միգուցե հովվի որդին ցանկանա դրանք, իսկ եթե ոչ, մտածել են, որ հովիվը գոնե կճանաչի ինչ-որ մեկին եկեղեցում, ով կցանկանա վերցնել դրանք: Այդ հովիվն ասաց ինձ, որ ոչ ոք չգիտեր այն մասին, որ իր որդին ցանկանում էր մեծ մկաններ ունենալ, և որ իրենք աղոթել էին դրա համար ընդամենը նախորդ երեկոյան: Այդ հովիվը ցնցվա՛ծ էր: Նա տուն է վերադառնում և հարցնում որդուն.

- Որտե՞ղ են այդ լսասկավառակները:

Նման պատմությունները սովորական են ինձ համար: Ես մշտապես լսում եմ դրանք և ուզում եմ, որ ձեր կյանքում նույնպես սովորական բան լինեն: Մինչև այս պահը, մենք արդեն ներկայացրինք և քննարկեցինք մի քանի բանալի սկզբունքներ այն մասին, թե ինչպես է գործում Աստծո Թագավորությունը: Խոսեցինք նաև այն մասին, որ համաձայնությունը կամ հավատքն անհրաժեշտ են, որպեսզի Եր-

կինքն օրինական իշխանություն կամ իրավասություն ստանա այս երկրային տիրույթում: Այժմ մի փոքր ավելի խորը ուսումնասիրենք այն, թե ինչպես Թագավորության այս օրենքները կարող են օգնել մեզ մեր ֆինանսական կարիքների դեպքում:

> *«Տիրոջ օրհնությունը հարստություն է բերում, և Նա նեղություն չի ավելացնում դրան»:*
>
> – Առակաց 10.22, NIV

Կարդալով այս խոսքն առաջին անգամ՝ ես մտածեցի. «Այս խոսքը չի նշանակում այն, ինչ ասում է, այնպես չէ՞»: Բայց ես պարզեցի, որ այն նշանակում է ճիշտ այն, ինչ ասում է: Հասկանալու համար, թե ինչի մասին է այս հատվածը, մենք պետք է անդրադառնանք սկզբին, երբ մարդը նոր ստեղծվում է:

> *«Մեկը վկայեց մեկտեղ՝ ասելով.*
>
> *«Մարդն ի՞նչ է, որ Դու հիշես նրան, կամ մարդու որդին, որ այցելես նրան: Մի քիչ ցածր արիր նրան հրեշտակներից, փառքով և պատվով պսակեցիր նրան և Քո ձեռքի գործերի վրա կանգնեցրիր նրան: Ամեն բան հնազանդ արիր նրա ոտքերի տակ»:*
>
> *Որովհետև ամենը, որ հնազանդեցրեց նրան, ոչինչ չթողեց, որ հնազանդ չլինի նրան. բայց հիմա տակավին չենք տեսնում, թե ամեն բան հնազանդված է նրան»:*
>
> – Եբրայեցիների 2.6-8

Մենք արդեն կարդացել ենք այս հատվածը, բայց այս պահին այն շատ կարևոր է մեր քննարկման համար: Ըստ այս հատվածի, երբ մարդը ստեղծվեց, ամեն ինչ այս երկրի վրա դրվեց նրա իշխանության ներքո: Չկար նույնիսկ մեկ բան, ինչը ենթակա չէր նրան: Նա տիրում էր այս երկրում իրեն լիազորած իշխանության դիրքից և կրում էր այդ իշխանության պսակը՝ որպես դրա ներկայացուցիչ: Նա կրում

էր այդ դիրքի օծությունը և վայելում էր դրա պատիվը: Սատանան, որն ապստամբել էր Աստծո դեմ, արդեն իսկ զցվել էր երկիր մինչև Ադամի ստեղծվելը: Սատանան ատում էր Աստծո իշխանության պսակը կրող մարդուն, քանի որ ինքը հայտնվել էր նրա իշխանության ներքո: Այժմ սատանան ստիպված էր հպատակվել այդ արարածին, որն իր ստեղծված բնական, նյութական վիճակում շատ ավելի թույլ էր իրենից: Այնուամենայնիվ, հոգևոր առումով, ամեն մի բառ, որն Ադամն ասում էր, ուներ նույն իշխանությունը, ինչ՝ եթե անձամբ Աստված ասեր դա: Ադամը՝ Աստծո որդին, տիրում էր այս երկրի վրա իշխանության և վեհության զարմանալի դիրքից:

«ՏԻՐՈՋ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆ Է ԲԵՐՈՒՄ, ԵՎ ՆԱ ՆԵՂՈՒԹՅՈՒՆ ՉԻ ԱՎԵԼԱՑՆՈՒՄ ԴՐԱՆ»:

– ԱՌԱԿԱՑ 10.22, NIV

Այնպես որ, սատանան ատում էր մարդուն և սաստիկ ցանկանում էր ստանալ նրա իշխանությունն այս երկրի վրա: Նա ուներ միայն մեկ տարբերակ. ինչ-որ կերպով խլել մարդուց նրա պսակը կամ այն դիրքը, որը նա զբաղեցնում էր: Այնուամենայնիվ, կար մի փոքր խնդիր. սատանան չուներ զորություն՝ այդ պսակն Ադամից խլելու համար. նրա միակ հույսը մարդուն ինչ-որ կերպով խաբելն էր, որպեսզի Ադամն ինքը հաներ իր վրայից այդ պսակը: Նա համոզեց Եվային, որ Աստծուն չէր կարելի վստահել, և որ կյանքը կարող էր առաջարկել նրանց շատ ավելին, քան այն, ինչ Աստված էր թույլ տալիս: Ադամն ու Եվան որոշեցին հավատալ սատանային ավելի, քան Աստծուն, և դավաճանություն գործեցին Աստծո դեմ: Արդյունքում նրանք կորցրին իրենց օրինական իշխանությունն Աստծո Թագավորության մեջ, իսկ սատանան դարձավ այս աշխարհի աստվածը, ինչպես որ Պողոսն անվանում է նրան Բ Կորնթացիների հետևյալ խոսքում.

«Որոնցում <u>այս աշխարհի աստվածն</u> այն անհավատների սրտերը կուրացրեց, որ Քրիստոսի փառավոր Ավետա-

ռանի լուսավորությունը չծագի նրանց վրա, որ աներևույթ Աստծո պատկերն է»:

– Բ Կորնթացիների 4.4

Մինչև իր ապստամբությունը, Ադամը վայելում էր որդիության առավելությունները: Նա վայելում էր այն ամենը, ինչը պատկանում էր Աստծուն. նա նույնիսկ մեկ օր չէր ապրել կարիքի մեջ և չէր ունեցել նույնիսկ վախի նշույլ: Այն, ինչ անհրաժեշտ էր երկիր մոլորակի վրա ապրելու համար, արդեն իսկ տրվել էր իր ստեղծվելուց առաջ:

Մտորելով Ծննդոց գրքում նկարագրված աշխարհի արարման վեց օրվա շուրջ, կտեսնենք, որ մարդը ստեղծվեց արարչագործության վեցերորդ օրվա վերջում, և նա Աստծո արարչագործության ծրագրի վերջին մասն էր: Նա նախասահմանված էր ապրելու յոթերորդ օրվա մեջ, որն Աստված հռչակեց հանգստի օր: Աստված չարեց դա, որովհետև Ինքը հոգնել էր, այլ՝ որովհետև Ինքն ավարտել էր Իր գործը, և ամեն ինչ լիարժեք էր: Մի պահ մտածեք Աստծո ավարտված աշխատանքի մասին և այն փառավոր ծրագրի մասին, որը Նա որոշել էր մարդու համար: Ցավոք, Ադամը թողեց այդ ամենը և արդյունքում կորցրեց իր օրինական դիրքն Աստծո Թագավորության մեջ:

Մոտենալով Ադամին այն բանից հետո, երբ նա որոշեց անհնազանդ լինել, Աստված ասաց նրան.

«Անիծյալ լինի երկիրը քո պատճառով, <u>նեղությունով</u> (կամ՝ «տանջալի աշխատանքով») ուտես նրանից կյանքիդ բոլոր օրերում: Եվ նա փուշ ու տատասկ բուսցնի քեզ համար, և դաշտի խոտն ուտես: <u>Երեսիդ քրտինքով</u> հաց ուտես, մինչև որ ետ դառնաս դեպի երկիրը, որովհետև նրանից առնվեցիր, նրա համար, որ հող էիր դու, և դեպի հողը դառնաս»:

– Ծննդոց 3.17-19

Առաջին բանը, ինչը ուզում եմ, որ հասկանաք, հետևյալն է. Աստված չանիծեց երկիրը. Ադամն անիծեց այն: Նա ուներ կատարյալ իշ-

խանություն երկրի վրա: Երկիրը հանձնված էր նրա խնամքին: Ունենալով լիարժեք և բացարձակ իշխանություն երկրի վրա՝ Ադամը դավաճանություն գործեց Աստծո իշխանության դեմ և, ըստ էության, հեռացրեց Աստծուն: Այդ որոշումն անասելի հետևանքներ ունեցավ ոչ միայն Ադամի համար, այլև ամբողջ երկրի համար, յուրաքանչյուր տղամարդու և կնոջ համար, որոնք ապրեցին այս երկրի վրա դրանից հետո: Թեև նա դեռ պահպանում էր իր իրավասությունը Աստծո կողմից իրեն տրված երկրային տիրույթում, նա արդեն անկարող էր իշխել՝ իր պսակի և կառավարման դիրքից, որն ինքը մի ժամանակ ներկայացնում էր, և որը սատարում էր իր իշխանությանը: Քանի որ Ադամը բաժանվեց կյանքից, մահը, որն օտար էր նրա համար, սկսեց իշխել:

Աստված հանդիմանեց Ադամին՝ ցույց տալով, թե ինչ նա արեց, և ասաց նրան, որ առաջինը՝ իր մեղքի պատճառով նա կորցրեց իր օրինական դիրքն Աստծո կառավարման մեջ: Եվ քանի որ Ադամն այդ կառավարման ներկայացուցիչն էր երկիր մոլորակի վրա, Երկինքը կորցրեց իր օրինական ներկայացուցչությունը, որի միջոցով այն իրավասություն ուներ երկրի վրա: Երկրորդը՝ երկիրն ինքն ազդեցություն կրեց դրանից, և այն այլևս չէր մատակարարելու այնպես, ինչպես նախկինում՝ Եդեմի պարտեզի ժամանակ: Այժմ անհրաժեշտ էր լինելու Ադամի տանջալի աշխատանքը և երեսի քրտինքը, որպեսզի երկիրը տար այն, ինչ անհրաժեշտ էր նրան՝ իր գոյության համար: Այժմ փշերը և տատասկները ծածկելու էին դաշտերը, և կյանքը դժվարանալու էր. կյանքը վերածվելու էր գոյատևման:

Ես անվանում եմ այս դժվարին կյանքը և գոյատևման մտածելակերպը՝ ներծծված վախի և մահվան գարշահոտությամբ, որը ծանրանում է Ադամից հետո ծնված յուրաքանչյուր մարդու վրա, «այս երկրի անեծքի համակարգը»: Մենք մեծացել ենք հենց այդ միջավայրում և քաջ ծանոթ ենք այս գոյատևման համակարգին: Դավիթն անվանում է այն մահվան շուքի ձոր 23-րդ Սաղմոսում:

> *«Թեև գնամ մահի շուքի ձորով, չար բանից չեմ վախենա, որովհետև Դու ինձ հետ ես»:*
>
> – Սաղմոս 23.4

Մեր երկրային մթնոլորտը համակված է մահվան վախով: Բայց կա ևս մեկ բացասական հետևանք: Մարդը կորցնում է իր շփումն Աստծո հետ և, հետևաբար, չի ճանաչում ինքն իրեն, այսինքն՝ չի գիտակցում իր նպատակը և ինքնությունը: Երբ ստեղծվեց մարդը, նա ստացավ նպատակ և առաջադրանք: Նա պետք է տիրեր երկրում Աստծո անունից: Այլ կերպ ասած, Աստված առաջադրանք և նպատակ էր տվել նրա կյանքի համար: Բայց այժմ մարդու մտածելակերպն ամբողջությամբ անցում է կատարել գոյատևմանը: Գոյատևումը դարձել է նրա նպատակը և նոր առաջադրանքը:

ԱՅՍ ԵՐԿՐԱՅԻՆ ԳՈՅԱՏԵՎՄԱՆ ԱՆԵԾՔԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐԸ ՀՈԳՆԵԼ Է ՎԱԶՔԻՑ:

Այժմ յուրաքանչյուր որոշում, որը մարդը կայացնում է, զտվում է այս գոյատևման անեծքով. նրա նպատակը կա՛մ միջոցներ հայթայթելն է, կա՛մ դրանք կուտակելը: Խաղաղություն չկա. ամեն օրը լի է տանջալի աշխատանքով և քրտինքով: Միակ հնարավոր փախուստն այս գոյատևումից՝ այս առնետավազքից, ինչպես որ այն անվանում են այսօր, այն է, որ մենք ինչ-որ կերպով կարողանանք կուտակել բավականաչափ միջոցներ, որպեսզի վերջապես դադարենք վազել: Սա յուրաքանչյուր տղամարդու և կնոջ երազանքն է մարդու անկումից ի վեր: Նրանց գլխավոր նպատակն իրենց վազքը դադարեցնելն է: Այն մարդը, ով այնքան հաջողակ է գտնվում, որ կարողանում է հավելյալ միջոցներ ձեռք բերել, սկսում է կուտակել և մեծ զգուշավորությամբ պահպանել դրանք: Այդ մարդիկ կառչում են իրենց միջոցներից՝ դրանք կորցնելու մեծ վախով, քանի որ եթե դա տեղի ունենա, նրանք կրկին ստիպված կլինեն վերադառնալ տանջալի աշխատանքով և քրտինքով լի վազքին:

Մարդու երազանքը՝ նրա գոյատևման նպատակը, ինչպես արդեն ասացի, հետևյալն է. հայթայթել բավականաչափ միջոցներ, որպեսզի նա դադարեցնի ստրկական վազքը գոյատևման համար և հանգիստ գտնի: Ես ուզում եմ վստահ լինել, որ դուք հստակ գիտակցում եք այս փաստը. այս երկրային գոյատևման անեծքի համակարգում յուրաքանչյուրը հոգնել է վազքից:

Հիշում եմ, որ մի առավոտ նստած զրուցում էի մի հովվի հետ: Ամեն առավոտ՝ արթնանալով, նա ասում էր, որ սիրում էր իր ծառայությունը, քանի դեռ չէր հիշում իր ֆինանսական վիճակը, պարտքերը և միջոցների սղությունը: Նա պատմում էր, որ ֆինանսական խնդիրները նման են թաց ծածկոցի. դրանք փորձում են խեղդել կյանքը և զրկել ուրախությամբ ծառայելուց: Այնպես չէ, որ միայն հովիվներն են նման նեղություններ կրում. այսպես է ապրում ընտանիքների մեծ մասը՝ պարտքերի մեջ և աշխատավարձից՝ աշխատավարձ:

Յուրաքանչյուրը ելք է փնտրում, և միակ ելքը հարստությունն է՝ երբ մարդն ունի ավելին, քան բավական է: Այս երկրային անեծքի համակարգում ինքնությունը որոշվում է այն բանով, թե ինչ ունեք և որքան կարող եք վաստակել: Առաջին հերթին, մարդը հուսահատորեն փորձում է ծածկել իր մերկությունը՝ Աստծուց իրեն տրված նպատակը և ինքնության կորուստը, և կեղծիք է ընտրում: Նա փորձում է փոխարինել Աստծո օծությունը, որը մի ժամանակ ծածկում էր իրեն աներևակայելի փառքով և հարստությամբ: Երկրորդը՝ նա նույնպես փորձում է փոխարինել իր պատվավոր թագավորական դիրքը (որով նա իշխում էր Աստծո Թագավորության մեջ)՝ այս կյանքի հպարտությամբ և այլ մարդկանց իշխելով: Այժմ մարդը կլանված է մեկ բանով՝ հարստություն գտնելով և կուտակելով: Մարդու ինքնությունը որոշվում է այն բանով, թե որքան հարստություն ունի և որքան իշխանություն կարող է գործադրել այլ մարդկանց վրա: Հասարակական կարգավիճակը և դիրքը շատ կարևոր են անկում ապրած մարդու ինքնագնահատականի համար:

Մտածե՛ք այս մասին: Որպես կանոն, ի՞նչ են տղամարդիկ հարցնում միմյանցից առաջին հերթին: «Ինչո՞վ եք դուք զբաղվում»: Ինչո՞ւ: Մի՞թե մեզ իրականում հետաքրքրում է դա: Ոչ այնքան, բայց այդ հարցը որոշում է մեր հարգանքի մակարդակն այդ մարդու հանդեպ: Այլ կերպ ասած, մենք հարցնում ենք ինքներս մեզ. «Ո՞վ է այս մարդը: Ի՞նչ դիրք կամ աստիճան նա ունի այս աշխարհում: Որքա՞ն հարգանք պետք է ցուցաբերեմ նրա հանդեպ»: Կանա՛յք, ես ասում եմ այս ամենը տղամարդկանց տեսանկյունից: Ես հասկանում եմ, որ դուք բոլորովին այլ կերպ եք դիտարկում մարդու ինքնությունը:

Այսօր այս երկրի անեծքի համակարգը դեռևս գործում է: Մարդիկ անցկացնում են իրենց բոլոր որոշումները փող հայթայթելու և կուտակելու զտիչով: Մարդիկ տեղափոխվում են իրենց երկրից՝ ավելի լավ վճարվող աշխատանք գտնելու համար, և նույնիսկ չեն մտածում այն մասին, թե որն է իրենց նպատակը: Յուրաքանչյուրն ուզում է ռոք աստղ լինել: Ինչո՞ւ: Ինքնություն (դիրք) և հարստություն ստանալու համար:

Հազարավոր միջին դպրոցականների միջև հարցում էր անցկացվել այն մասին, թե ինչով նրանք կցանկանան զբաղվել, երբ մեծանան: Նրանցից 65 տոկոսն ասել է, որ իրենց զբաղվածության նպատակը հայտնի լինելն է: Հայտնի՞: Որքանով տեղյակ եմ, հայտնի լինելն ինքնին զբաղվածություն չէ:

Եվս մեկ հարցում ցույց է տվել, որ աշխատող մարդկանց գրեթե 30 տոկոսն ատում է իրենց աշխատանքը, իսկ այլ հարցում պարզել է, որ մարդկանց 40 տոկոսը չի սիրում իրենց աշխատանքը: Այնպես որ, ԱՄՆ-ում աշխատող մարդկանց 70 տոկոսին դուր չի գալիս այն, ինչով իրենք զբաղվում են: Այդ դեպքում, ինչո՞ւ են նրանք շարունակում կատարել այդ աշխատանքը: Պատճառն այն է, որ նրանք գոյատևման ստրուկներ են, որոնք գտնվում են տանջալի աշխատանքով և քրտինքով վազքի մեջ՝ պարզապես գոյատևելու համար: Այս աշխատող մարդկանցից շատերի կյանքում բացակայում է որևէ նպատակ և ձգտում. նրանց դրդապատճառն իրենց հաշիվները փակելն է: Փող հայթայթելու նպատակին ստրկացված լինելը գրեթե տեղ չի թողնում այլ տարբերակների համար: Նա, ով ամենաշատն է վճարում, հաղթում է ամեն անգամ: Սա կոչվում է առնետավազք: Ահա թե որտեղ ենք մենք ապրում: Մտովի պատկերացրեք փայտե անիվի մեջ գտնվող մկան, որը վազում է՝ լարելով ուժերը, սակայն ոչ մի տեղ չի գնում: Մենք ծիծաղում ենք և կարծում ենք, թե դա զվարճալի է: Բայց իրական կյանքում դա զվարճալի չէ, բոլորովին զվարճալի չէ: Մարդիկ մահանում են այդ անիվի մեջ և այդպես էլ չեն հասնում այնտեղ, որտեղ հասնելու հույս ունեին:

«Եվ մի՛ փնտրեք այն, թե ինչ եք ուտելու կամ խմելու. մի՛ անհանգստացեք այդ մասին: Որովհետև հեթանոս աշ-

խարհն է <u>վազում այդ ամենի ետևից</u>, իսկ ձեր Հայրը գիտի, որ դրանք պետք են ձեզ: Բայց փնտրե՛ք Նրա Թագավորությունը, և այդ բաները ձեզ նույնպես կտրվեն»:

– Ղուկաս 12.29-31, NIV

Տանջալի աշխատանքով և քրտինքով վազելը միակ համակարգն է, որը մենք ճանաչում ենք: Եթե ասեի ձեզ, որ դուք պետք է ազատվեք պարտքից, այսինքն՝ դուք ՊԵՏՔ է լիովին ազատվեք ձեր պարտքից 12 ամսում, հակառակ դեպքում, ձեր ընտանիքին հավիտյան արտաքսելու են Հյուսիսային բևեռ (ես բերում եմ ծայրահեղ օրինակ՝ իմ ասելիքը հասկանալի դարձնելու համար), ի՞նչ կանեիք: Կասեմ ձեզ, թե ինչ կանեիք: Դուք անմիջապես ծրագիր կկազմեիք ավելի արագ քրտնելու և վազելու համար: Դուք կասեիք. «Ես կարող եմ ընդունվել ևս երկու կես դրույքով աշխատանքի: Կինս նույնպես կարող է ընդունվել երկու կես դրույքով աշխատանքի, երեխաներս նույնպես կարող են օգնել մեզ»: Պատճառն այն է, որ տանջալի աշխատանքի և քրտինքի համակարգը մատակարարման միակ համակարգն է, որի մասին դուք գիտեք: Թույլ տվեք բերել ևս մեկ օրինակ այս համակարգի մասին:

Պատկերացրեք, որ ես վազում եմ ձեր փողոցով և գտնում եմ մի դարչնագույն թղթե տոպրակ ձեր տան հակառակ կողմում, որի մեջ տասը միլիոն դոլար կա: Ես այնպե՛ս եմ ոգեշնչվում, բայց այդ մասին պետք է զեկուցեմ ոստիկանությանը: Եվ քանի որ ես ճանաչում եմ ձեզ, գալիս եմ ձեր տուն և ձեր տնից զանգելու թույլտվություն եմ խնդրում: Ես զանգում եմ ոստիկանական բաժանմունք, մինչ դուք կանգնած լսում եք ինձ: Ես պատմում եմ նրանց, թե ինչ եմ գտել, և կարճ լռությունից հետո, երբ նրանք ստուգում են իրենց տվյալները, ասում են ինձ, որ ոչ ոք չի ահազանգել նրանց կորած փողի մասին, և ես կարող եմ ինձ պահել այդ գումարը (չեմ կարծում, որ նրանք այդպես կասեին, բայց իմ օրինակի համար այդպես է պետք): Երբ նրանք ասում են դա, ես ցատկում եմ և գոչում ուրախությունից: Ապա փոխանցում եմ ձեզ նրանց խոսքերը և չեմ կարողանում զսպել իմ ուրախությունը:

Դուք քաղաքավարիորեն ժպտում եք, մինչ ես, ուրախությամբ լցված, բացատրում եմ ձեզ այդ ամենը: Բայց ի՞նչ կանեք այդ օրվա ընթրիքի սեղանին, երբ պատմեք այդ պատմությունը ձեր կնոջը: Կժպտա՞ք: Չեմ կարծում: Դուք կասեք. «ԴԱ _____ ՉԷ՛»: Դուք գուշակեցիք այս բառը, այնպես չէ՞: Ի՞նչ իմացաք, որ ճիշտ պատասխանն «ԱՐԴԱՐ» բառն է: Քանի որ դուք այդպես եք դաստիարակվել, դուք մեծացել եք այդ համակարգում, ըստ որի ամեն ինչ արվում է տանջալի աշխատանքով և քրտինքով:

Իմ օրինակում ես փող գտա առանց որևէ ջանքի, ինչը հակառակ է այդ համակարգին: Դա արդար չէ: Դա արդար չէ, քանի որ ես չէի աշխատել՝ այդ փողը վաստակելու համար. ես պարզապես գտել էի այն: Գիտակցելով, որ ձեզ, հավանաբար, բախտը երբեք այդպես չի ժպտա, դուք լցվում եք նախանձով և դառնությամբ, քանի որ շարունակելու եք ապրել հարկադրված ստրկության մեջ, որպեսզի գոյատևեք:

Ի տարբերություն դրա, եթե մեկ օր ես եկեղեցի գայի կեղտոտ և պատռված հագուստով, բարձրանայի ամբիոնի մոտ և ասեի. «Մեզ մոտ դա ստացվե՛ց: Վերջին տասը տարում Դրենդան և ես աշխատում էինք օրը 22 ժամ, և վերջապես վճարեցի՛ք մեր տան համար», դահլիճը կպայթեր ցնծության ձայներից և ծափահարություններից: Ինչո՞ւ: Քանի որ ինչ-որ մեկի մոտ դա ստացվեց, և դուք խրախուսական համարեցիք դա: Ինչ-որ մեկին դա հաջողվեց. նշանակում է՝ կա ելք: Միգուցե մենք կարող ենք սեղմել մեր ատամները, քշտել մեր թևքերը, գին վճարել և նույնպես ազատ լինել: Բայց ինչո՞ւ ոչ ոք չէր գոչի և չէր ծափահարի այն դեպքում, եթե ես գտնեի մայթին գցված փողը: Եվ ինչո՞ւ դուք այդքան հեշտությամբ գուշակեցիք այդ բաց թողնված բառը: Պատճառն այն է, որ դուք այդպես եք մտածում, և այդպես էլ երազում եք: Մեզ սովորեցրել են, որ ինչ-որ բան արդար է միայն տանջալի աշխատանքի և քրտինքի դեպքում: Փողն առանց ծանր աշխատանքի արդար չէ:

Այնուամենայնիվ, յուրաքանչյուրը երազում է ազատվել այդ տանջալի աշխատանքի և քրտինքի համակարգից: Հարուստ դառնալը, միլիոնատեր լինելը այն միտքն է, որը տանջում է մեծամասնությա-

նը: Այսօր միլիոն դոլարն այն չէ, ինչ անցյալում, բայց միայն որպես թիվ՝ այն դեռ հարստություն է խորհրդանշում: Հարստությունն ընձեռում է ազատ լինելու հնարավորություն՝ ի հակադրություն այն ամենօրյա կյանքի, որով ապրում է մարդկանց մեծ մասը: Բոլորն են հոգնել վազքից, և միլիոն դոլար ունենալը կնշանակեր, որ նրանք կանգ կառնեին և վերջապես կզբաղվեին այն բանով, ինչ իրենք են ցանկանում: Մտածե՛ք այս մասին. ո՞րն է վիճակախաղի հրապուրանքը: ԱԶԱՏՈՒԹՅՈ՛ՒՆԸ: Ազատություն, որը թույլ կտա ձեզ ընտրել այն, ինչ ցանկանում եք, կայացնել որոշումներ, որոնք չեն պտտվում հաշիվներ փակելու և ապրուստ վաստակելու շուրջ:

«Ո՞վ է ցանկանում դառնալ միլիոնատեր» հաղորդումը մեծ համբավ է վայելում: Այն գրավիչ է, քանի որ յուրաքանչյուրը երազում է այդ ազատության մասին: Դիտելով այդ հաղորդումը՝ մարդիկ զգացմունքորեն ներգրավվում են՝ ուրախանալով մասնակցի համար և հուսալով, որ նրան կհաջողվի հաղթել:

Մի պահ փոխենք մեր թեման. գողության ամենապարզ սահմանումը նույնպես առանց աշխատելու մատակարարում ստանալն է: Ինչ-որ իմաստով, թեև խեղաթյուրված, այն նույնպես առաջարկում է ազատություն այս աշխարհի անեծքի համակարգից: Այսպիսով, եկեք պարզապես համաձայնենք, որ յուրաքանչյուրը ցանկանում է դադարեցնել վազքը: Բայց արդյո՞ք կա ելք: Գոյություն ունեն բազմաթիվ ֆինանսական խարդախության սխեմաներ: Ես օրական առնվազն տասը էլեկտրոնային նամակ եմ ստանում արտասահմանում ապրող մարդկանց ողբերգական պատմություններով: Նրանք գրում են, որ 20 միլիոն դոլար են ժառանգել, բայց իրենց պետք է ինչ-որ մեկը, ով կօգնի պահել այդ գումարն ապահով վայրում: Նրանք առաջարկում են այդ գումարի կեսը, միայն թե ես համաձայնեմ ընդունել և պաշտպանել այդ միջոցները: Իհարկե, դրանից հետո նրանք ուղարկում են ինձ էլեկտրոնային հասցե և խնդրում են ուղարկել փոքր գումար կազմող հայտի մշակման վճար, փոխանցման վճար, ապահովագրության վճար (կամ՝ ինչ էլ որ նրանք անվանեն դա), ինչը պահանջվում է՝ իրենց ժառանգությունը ստանալու համար: Դուք լո՞ւրջ եք ասում: Մի՞թե ես նման եմ հիմարի:

Ինձ զանգեց մի հաճախորդ, որին անհրաժեշտ էր խորհրդատվություն ներդրումների համար: Ես տվեցի նրան իմ սովորական հարցերը և պարզեցի, որ նա ուներ մոտավորապես հինգ միլիոն դոլար՝ ներդրումների համար: Նա ասաց, որ այդ պահին այդ գումարը դեռ իր մոտ չէ, բայց ստանալու է այն՝ որպես ժառանգություն: Ես հարցրի նրան, թե՝ իր կարծիքով, որքա՞ն ժամանակում կկարգավորվի իր ժառանգության հարցը, և նա ասաց, որ գրեթե երկու շաբաթվա ընթացքում: Ես զանգեցի նրան երկու շաբաթ անց, իսկ նա ասաց, որ անհրաժեշտ էր ավելի շատ ժամանակ: Նա չէր կարողանում վերցնել այդ ժառանգությունը մի եվրոպական բանկից, որն արգելանք էր դրել այդ միջոցների վրա: Դա գրավեց իմ ուշադրությունը, և ես սկսեցի հարցեր տալ նրան: Նա ասաց, որ մի մարդ, որը, ինչպես ենթադրվում է, իր քեռին էր, մահացել էր Ֆրանսիայում և հինգ միլիոն դոլարի ժառանգություն էր թողել իրեն: Այնուամենայնիվ, կային 50.000 դոլարի հարկային պարտավորություններ, որոնք պետք էր վճարել, մինչև որ այդ ժառանգությունը կփոխանցեին իրեն: Նա ասաց, որ դեռ փորձում է այդքան գումար գտնել, և դիմել է հիփոթեքային վարկ ստանալու համար:

Ես հարցրի, թե իրավաբան ունի՞, և նա ասաց.

- Այո՛, այս հարցով զբաղվում է այն իրավաբանը, որը զանգեց ինձ Ֆրանսիայից:

- Այսինքն, դուք չունե՞ք ամերիկյան իրավաբան, որը զբաղվում է դրանով:

- Ո՛չ, - ասաց նա, - միայն այն մարդը, ով զանգեց ինձ Ֆրանսիայից:

Նա շարունակեց՝ ասելով, որ քանի որ չի կարողացել գտնել այդ 50.000 դոլարը, Ֆրանսիայում գտնվող այդ իրավաբանն ասել է, որ կտա իրեն այդ գումարի կեսը, իսկ ինքը կվերադարձնի դա, երբ բանկը փոխանցի իր ժառանգության գումարը:

- Ո՛չ, - ասացի ես, - դա խարդախությո՛ւն է:

Թեև նախկինում նա ոչ մի անգամ չէր լսել այդ ենթադրյալ քեռու մասին, նա համոզված էր, որ այդ ամենը ճիշտ է: Ես զանգեցի նրան

ևս երկու շաբաթ անց, և նա ասաց, որ գտել է գրեթե ամբողջ գումարը՝ այդ բանկին փոխանցելու համար: Կրկին, ես ասացի նրան.

- Այդ հաշվին արդեն հինգ միլիոն դոլար կա: Եթե նրանք իսկապես հարկային պահումների կարիք ունենային, պարզապես կուղարկեին ձեզ մի ձև էլեկտրոնային փոստով կամ արագ փոստով, որը դուք կստորագրեիք և ետ կուղարկեիք՝ լիազորելով նրանց վերցնել այդ 50.000 դոլարն այդ հաշվից:

Բայց նա չհավատաց ինձ և համոզված էր, որ այդ մարդը ճիշտ էր խոսում:

Անցած կիրակի մեր եկեղեցում տեղի ունեցավ նման մի դեպք: Մի երիտասարդ հարցնում էր ինձ ներդրումների մասին՝ մոտավորապես նույն չափի գումարով, որը նա ստանալու էր այլ աշխարհամասում ունեցած ժառանգությունից: Ես թույլ չտվեցի նրան ավարտել իր նախադասությունը՝ ասելով.

- Գիտեմ, գիտեմ, նրանք ուզում են, որ ինչ-որ վճարում անես, որպեսզի փոխանցեն քո գումարը, ճի՞շտ է:

- Այո՛, որտեղի՞ց գիտեք:

Ես ասացի նրան նույնը, որ դա խարդախություն է: Թեև նա չէր ճանաչում այն մարդուն, ով ենթադրաբար մահացել էր, և չուներ իրավաբան այստեղ՝ ԱՄՆ-ում, նա դեռ շարունակում էր ընդդիմանալ իմ ասածին, որ այդ գումարն իրականում չկար: Ինչո՞ւ են մարդիկ հավատում նման բաների. քանի որ նրանք ուզում են ազա՛տ լինել: Նրանք չեն կարողանում հրաժարվել այդ գաղափարից, քանի որ, իրենց մտքում, եթե նույնիսկ դրա հավանականությունը հավասար է մեկ տասնորդականի՝ մեկ միլիարդից, նրանք ուզում են հավատալ դրան:

Թույլ տվեք մեկ այլ օրինակ բերել: Դրենդային և ինձ պատկանող ֆինանսական ծառայություններով զբաղվող ընկերությունը գործում է ամբողջ Միացյալ Նահանգներում: Դա հրաշալի՛ ընկերություն է: Այն իրական հնարավորություններ է ընձեռում. ես ունեմ աշխատակիցներ, որոնք տարեկան մի քանի հարյուր հազար դոլար են վաստակում: Բայց իմ ընկերությունում աշխատելու համար անհրաժեշտ է շատ բան

սովորել: Մենք զբաղվում ենք մարդկանց ֆինանսներով: Կան օրենքներ, որոնք անհրաժեշտ է իմանալ, և կան ֆինանսական պլանավորման մարտավարություններ, որոնք անհրաժեշտ է սովորել:

Ես ռադիո գովազդներ էի պատվիրել Օհայո նահանգի Կոլամբուս քաղաքում գտնվող մի քրիստոնեական ռադիոեթերով, որպեսզի ռեզյումեներ ստանայի մարդկանցից, քանի որ ցանկանում էի մի քանի հեռանկարային թեկնածու գտնել իմ ընկերության համար: Մեզ դիմեց մոտավորապես 50 մարդ: Անմիջապես հարցազրույցներ կազմակերպելու փոխարեն ես որոշեցի նախնական հանդիպում կազմակերպել մոտակա մի հյուրանոցում, ինչը կօգներ ինձ առանձնացնել հնարավոր թեկնածուների: Այդ հանդիպման ընթացքում ես ներկայացնելու էի այն մեծ ներուժը, որը մեր ընկերությունն ուներ գործարար ոլորտում, և որ մեր դիրքորոշումն էր ոչ միայն խորհրդատվություն տալ այն մասին, թե ինչպես են գործում ֆինանսները, այլև ներկայացնել դա քրիստոնեական աշխարհայացքի տեսանկյունից: Մենք նույնպես ներկայացրինք մեր ընկերության գործունեությունը՝ ընթացակարգերի, փոխհատուցումների, ուսուցման և լիցենզավորման պահանջների տեսանկյունից: Իմ փորձառությունից ես գիտեի, որ իմ թեկնածուներից շատերը կհրաժարվեին՝ հասկանալով, թե որքան աշխատանք էր պահանջվելու տարեկան 200.000 դոլար վաստակելու համար:

Հանդիպումից հետո դուրս եկա այդ սրահից և տեսա, որ հյուրանոցի գլխավոր դահլիճը լեփ-լեցուն է, ավելի քան 1000 մարդ կար: Բոլորը եկել էին միևնույն պատճառով. մի հայտնի բազմաշերտ մարկետինգային ընկերություն շնորհանդես էր անցկացնում՝ առաջարկելով միանալ իրենց ընկերությանը: Բայց ինչո՞ւ էր այդտեղ այդքան շատ մարդ՝ իմ սրահում հավաքված 50 մարդու համեմատ: Պատասխանը պարզ է՝ փո՛ղը: Դժբախտաբար, և դա, ըստ էության, այն չէր, ինչ առաջարկում էր այդ բազմաշերտ ընկերությունը, մարդկանց պատկերացումն այսպիսին էր. «Եթե գրանցվեմ, կգտնեմ երեք մարդու, և հո՛պ, ես միլիոնատեր կդառնամ»: Ես արդեն բավականին ժամանակ է՝ հետևում եմ գործարար աշխարհին՝ հասկանալու համար, որ ցանկացած մարդ, ով մեծ գումարներ է վաստակում բազ-

մաշերտ ընկերություններում, մեծ աշխատանք է կատարում: Այո՛, այդտեղ կա ներուժ, բայց կրկին, մարդիկ ենթադրում են, որ հեշտ փող են վաստակելու, և մտածում են. «Տե՛ս, թե որքա՛ն մարդ կա այստեղ: Եթե ես չգրանցվեմ հիմա, բաց կթողնեմ իմ ամբողջ կյանքի հնարավորությունը»: Խնդրում եմ, սխալ մի՛ հասկացեք ինձ: Ես ունեմ շատ լավ ընկերներ, որոնք միլիոններ են վաստակել նման ընկերություններից, և գոյություն ունեն շատ լավ բազմաշերտ մարկետինգային ընկերություններ: Բայց ես պարզապես նկարագրում եմ այն մտածելակերպը, որն ունի այնտեղ դիմող միջին մարդը: Հեշտ եկամուտ առաջարկելը մեծ գումարներ է բերում այս երկրային գոյատևման անեծքի համակարգում:

Եթե դուք մի պահ կանգ առնեք և հարցնեք ձեզ, թե որքան եք մտածում փողի մասին՝ թե՛ այն ձեռք բերելու, թե՛ ձեր ունեցածը պաշտպանելու համար, կզարմանաք: Ես կրկին կասեմ դա, պարզապես որպեսզի դուք հասկանաք. բոլորն են ցանկանում դադարեցնել իրենց վազքը, և մարդիկ հոգնել են ապրել միայն գոյատևման համար: Շաբաթավերջի հրապուրանքն այն է, որ մենք կարող ենք դադարեցնել մեր վազքը: Արձակուրդի հրապուրանքն այն է, որ մենք կարող ենք դադարեցնել մեր վազքը: Թոշակի անցնելու հրապուրանքն այն է, որ մենք վերջապես կարող ենք դադարեցնել մեր վազքը և անել այն, ինչ ցանկանում ենք: Սխալ մի՛ հասկացեք ինձ: Մարդկանց մեծ մասը չի ցանկանում պարզապես նստել և ոչինչ չանել: Եվ ես չեմ ասում, որ դա է Աստծո կամքը ձեզ համար: Ո՛չ, մենք ստեղծված ենք, որպեսզի կատարենք մեր առաջադրանքը՝ մեզ համար պատրաստված եզակի նպատակը: Դժբախտաբար, մարդկանց մեծ մասը այնքա՛ն է զբաղված գոյատևման վազքով, որ արդեն տարիներ շարունակ հրաժարվել է իր երազանքներից:

ԵԹԵ ԴՈՒՔ ՉԼՈՒԾԵՔ ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ՄԻՆՉԵՎ ՁԵՐ ԿՅԱՆՔԻ ԱՎԱՐՏԸ ՀԱՐԿԱԴՐՎԱԾ ԿԼԻՆԵՔ ԱՊՐԵԼ ԱՅՍ ԵՐԿՐԱՅԻՆ ԳՈՅԱՏԵՎՄԱՆ ԱՆԵԾՔԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄՏԱԾԵԼԱԿԵՐՊՈՎ:

Ես համոզված եմ, դուք լսել եք, որ մարդիկ ասում են, կամ, միգուցե, ինքներդ եք ասել. «Ես ստիպված եմ գնալ աշխատանքի այսօր»: Ինչպես արդեն հասկացել եք, մարդիկ զգացմունքորեն լավ վիճակում չեն, եթե նրանք «ստիպված» են գնում աշխատանքի: Այնուամենայնիվ, նրանք ծաղկում են, երբ ցանկանում են և ձգտում են գնալ աշխատանքի, և եռանդով ու նվիրմամբ են կատարում այն, ինչով իրենք զբաղվում են: Սովորաբար մարդկանց մեծ մասն այսպես չի ապրում: Փոխարենը, նրանք ասում են. «Ես ստիպված եմ գնալ աշխատանքի այսօր»: Պարզապես գումար վաստակելու համար՝ անցկացնելով աշխատանքի վայրում ևս մեկ օր, գոյատևելով և հազիվ ծայրը ծայրին հասցնելով ևս մեկ օր: Սկզբում շատերը լցված էին լավատեսությամբ և ոգևորությամբ: Այն աշխատանքը, որը նրանք կատարում էին՝ իրենց հաշիվները փակելու համար, ժամանակավոր էր, մինչև կորոշեին, թե ինչով պետք է զբաղվեն: Սակայն կյանքն ավելի ու ավելի անորոշ էր դառնում, և արդեն քառասունից հետո նրանք հասկացան, որ այլևս ելք չունեն: Դա կոչվում է միջին տարիքի ճգնաժամ, երբ կյանքում առաջին անգամ մարդը հասկանում է, որ ծուղակի մեջ է:

Իմ ընկե՛ր, սա այն կյանքը չէ, որն Աստված որոշել է ձեզ համար: Դուք արդեն գիտեք այս մասին: Բայց հենց այս խղճալի ապագայից խուսափելու համար է, որ Դրենդան և ես տարիներ շարունակ ասում ենք, որ եթե դուք չլուծեք ձեր ֆինանսական խնդիրները, երբեք չեք գտնի ձեր կյանքի եզակի նպատակը: Եթե դուք չլուծեք ձեր ֆինանսական խնդիրները, մինչև ձեր կյանքի ավարտը հարկադրված կլինեք ապրել այս երկրային գոյատևման անեծքի համակարգի մտածելակերպով:

Եթե դուք չլուծեք ձեր ֆինանսական խնդիրները, դուք երբեք չեք բացահայտի այն նպատակը, որի համար ստեղծված եք:

Որպես համեմատություն, խոսենք այն մասին, թե ինչպիսին կարող է լինել ձեր կյանքը: Խոսենք ձեր նախասիրության մասին: Պատ-

կերացրեք, որ այն գոլֆն է: Դուք երբևէ լսե՞լ եք, որ ինչ-որ մեկն ասի. «Գրո՛ղը տանի, այսօր ես պետք է գնամ գոլֆ խաղալու»: Կամ, դուք երբևէ լսե՞լ եք. «Գրո՛ղը տանի, արդեն ուրբաթ երեկո է. ես ատում եմ ուրբաթ երեկոները: Երանի՜ հիմա երկուշաբթի առավոտ լիներ, որպեսզի ես վերադառնայի աշխատանքի»: Կամ, պատկերացրեք, որ ձեր նախասիրությունը ձկնորսությունն է: Մի՞թե ես երբևէ կլսեի ձեզնից. «Գրո՛ղը տանի, այսօր ես պետք է ձկնորսության գնամ»: Ո՛չ, կասկածում եմ, որ երբևէ կլսեի դա, քանի որ դուք ձգտում ունեք այդ զբաղմունքի հանդեպ: Ի՞նչ տեղի կունենար, եթե ապրեիք նույն եռանդով ու նվիրումով ձեր գործի հանդեպ, եթե կարողանայիք իրականացնել ձեր ձգտումները և գտնեիք ոչ թե տանջալի աշխատանքի տեղը, այլ ձեր ամենից արդյունավետ տեղը կյանքում: Ի՞նչ տեղի կունենար, եթե դուք ունենայիք անհրաժեշտ գումար՝ հոգալու ձեր ընտանիքի մասին և ապրելու ֆինանսական ճնշումներից ազատ: Արդյո՞ք իրականում հնարավոր է անել դա: Դրենդան և ես պարզեցինք, որ դա հնարավո՛ր է:

> *«Տիրոջ օրհնությունը հարստություն է բերում, և Նա նեղություն չի ավելացնում դրան»:*
>
> – Առակաց 10.22, NIV

Ժամանակ տրամադրե՛ք և դանդաղորեն կարդացե՛ք այս խոսքը: Եբրայերենը բառացիորեն նկատի ունի հարստություն՝ առանց տանջալի աշխատանքի: Դուք հասկանո՞ւմ եք: Աստծո Թագավորությունը ելք է առաջարկում այն տանջալի աշխատանքի և քրտինքի համակարգից, որը մենք ստացանք Ադամի պատճառով: Հնարավո՞ր է արդյոք, որ այս խոսքը նշանակի՝ ինչ որ այն նկատի ունի: Դուք կհամաձայնեք, որ եթե այդպես է, նշանակում է՝ դուք հենց նոր կարդացիք երկար ժամանակվա ընթացքում ձեր լսած լավագույն բարի լուրը: Եվ այդպես էլ կա՛: Ահա թե ինչու Եսայի 61-ը, որը մարգարեաբար ներկայացնում է Հիսուսին, և այն, ինչ Նա անելու է Իր ծառայության մեջ, հայտարարում է.

«Գերիշխան Տիրոջ Հոգին Ինձ վրա է, որովհետև Տերն օծել է Ինձ՝ ազդարարելու բարի լուրը աղքատներին»:

– Եսայի 61.1, NIV

Ո՞րն է բարի լուրը այն մարդու համար, ով գտնվում է այս երկրի անեծքի համակարգի գոյատևման ծուղակում: Իհարկե՝ ֆինանսական ազատությո՛ւնը: Հիսուսը բառացիորեն ասում է, որ Աստծո Թագավորությունը մատակարարում է ավելին, քան այս երկրային անեծքի համակարգի սահմանափակումները, որոնցում մարդիկ գտնվում են վազքի մեջ՝ տանջալի աշխատանքով և քրտինքով: Եկեք խոստովանենք. դուք կարող եք վազել այնքան արագ, որքան կարող եք, և վերջ: Եվ շատերը վազում են մեծ ջանքով, բայց նրանց արագությունը բավական չէ՝ ազատվելու համար: Ես վազում էի այնքան արագ, որքան կարող էի, այն ինը տարվա ընթացքում, երբ Դրենդան և ես ծանր պարտքերի տակ էինք: Այն հարյուր հազարավոր հաճախորդները, որոնց մեր ընկերությունը հանդիպել է վերջին 27 տարում, նույնպես վազում էին այնքան արագ, որքան կարող էին: Չնայած դրան, անկախ նրանց աշխատասիրությունից, նրանք դեռ ֆինանսական ստրկության ծուղակի մեջ էին: Բոլոր այդ մարդիկ զանգում էին մեզ, որովհետև եկել էին այն զարհուրելի գիտակցության, որ իրենք անհուսալի ֆինանսական վիճակում էին, որ իրենց երազանքները ֆինանսական ազատության մասին ավելի ու ավելի անհասանելի էին թվում, և իրենց տեսիլքը փոխարինվել էր գոյատևմամբ: Մի պահ մտածենք նյութական ապահովության մասին:

Նյութական ապահովությունն օգնում է մեզ իրականացնել մեր տեսիլքը:

Առանց նյութական ապահովության տեսիլք չի կարող լինել, քանի որ այդ դեպքում ձեր միակ տեսիլքը լինելու է նյութական ապահովություն ձեռք բերելը: Կրկին, մարդկանց մեծ մասն ապրում է հենց այսպես՝ առանց տեսիլքի: Սա ստրկության ամենախաբուսիկ ձևն է:

ԳԼՈՒԽ 7

ԴՈՒՌԸ

Եկեք մի պահ կրկնենք այն, ինչ սովորեցինք Աստծո Թագավորության մասին: Առաջինը՝ մենք սովորեցինք, որ մարդը դրվեց այս երկրի վրա որպես իշխան: Մենք տեսանք Եբրայեցիների 2.7,8-ում, որ երկրի վրա չկար մի բան, ինչը ենթակա չէր մարդուն: Այսպիսով, մենք բացահայտեցինք, որ մարդը երկրային տիրույթի դուռն էր կամ բանալին: Սատանան գիտեր այդ մասին, այդ պատճառով նա թիրախավորեց Ադամին և Եվային՝ ծրագրելով իշխանություն ձեռք բերել այս երկրի վրա: Երբ Ադամն ու Եվան տեղի տվեցին նրա խաբեությանը, նրանք մեղանչեցին և կտրվեցին Աստծո օրինական իշխանությունից, որով կառավարում էին այս երկիրը: Աստծո Հոգին, որը ծածկում էր նրանց արարչագործության մեջ, այժմ ստիպված էր հեռանալ: Նրանք մերկացան ոչ միայն ֆիզիկապես, այլև հոգևորապես: Կարող եմ պատկերացնել այն ցնցումը, որը նրանք վերապրեցին, երբ Աստծո Հոգին գնաց նրանցից: Աստվածաշունչն ասում է, որ նրանք անմիջապես սկսեցին թզենու ճյուղեր գործել՝ իրենց ծածկելու համար, քանի որ իրենց մերկ զգացին:

Թեև մարդը դեռ պահպանում էր այս երկրի իշխանի դիրքը, քանի որ արարչագործության ժամանակ այն տրվել էր իրեն, նա կորցրեց այս երկիրը հոգևորապես կառավարելու իշխանությունը և զորությունը: Որոշելով ապստամբել Աստծո դեմ, նաև հավատալ և միանալ սատանային, ոչ թե Աստծուն, մարդը հայտնվեց սատանայի իշխանության ներքո և, հետևաբար, ենթակա դարձավ նույն դատաստա-

նին, որն իր վրա բերեց սատանան (արուսյակը), երբ վայր գցվեց երկնքից: Այդ դատաստանը դժոխք կոչվող մի վայր է՝ չարչարանքի վայր, որում հայտնվողները հավիտյան արտաքսված են Աստծո ներկայությունից: Անհրաժեշտ է նշել, որ դժոխքը ոչ մի դեպքում չի ստեղծվել և նախատեսված չի եղել մարդու համար: Աստված երբեք մտադրված չի եղել, որ որևէ մարդ գնա այնտեղ:

> *«Այն ժամանակ կասի ձախ կողմիններին էլ. «Ինձնից դե՛ն գնացեք, ո՛վ անիծյալներ, հավիտենական կրակի մեջ, որ պատրաստված է սատանայի և նրա հրեշտակների համար»:*
>
> – Մատթեոս 25.41

Մարդուն այս արհավիրքից ազատելու համար Աստված պետք է վերահաստատեր Իր իշխանությունն այս երկրի վրա: Նա պետք է գտներ ինչ-որ միջոց՝ ետ վերցնելու այն իշխանությունը, որն այժմ սատանայի ձեռքում էր: Դա կարող էր տեղի ունենալ միայն մեկ ճանապարհով: Ինչ-որ մեկը, ով հանցավոր չէր մեղքի մեջ, պետք է ինքնակամ գրավեր Ադամի դիրքը և իր վրա վերցներ մահվան պատիժը: Սակայն կար մի խոչընդոտ, որն անհնարին էր դարձնում այս ծրագրի իրականացումը: Երկրի վրա գտնվող յուրաքանչյուր մարդ ապականված էր մեղքով և անկարող էր կրել Աստծո Հոգուն ու Նրա իշխանությունը: Բայց Աստված ծրագիր ուներ՝ այդ խոչընդոտը հաղթահարելու համար: Նրա ծրագրի համար անհրաժեշտ էր, որ Իր արդար պահանջները (Իր օրենքը) հաստատվեին և գրվեին այս երկրի վրա, որպեսզի ինչ-որ մեկը երկրային տիրույթում անմեղ համարվեր ըստ այդ օրենքի, եթե դա հնարավոր լիներ: Միայն այդ դեպքում այդ մարդը կկարողանար օրինավոր կերպով ինքնակամ գրավել Ադամի դիրքը՝ վերցնելով իր վրա Ադամին հասանելի տուգանքը և պատիժը:

Այնուամենայնիվ, այս գաղափարն ուներ լուրջ խնդիր. այն մարդը, որին կհաջողվեր իրականացնել այս անձնազոհ ծրագիրը, չէր կարող լինել Ադամի ժառանգը, քանի որ Ադամի սերունդն ապականված և կտրված էր Աստծո ներկայությունից: Այդ դեպքում, ինչպե՞ս

այդ ծրագիրը կարող էր իրականանալ: Որպեսզի այն հնարավոր դառնար, Աստված պետք է բերեր այս երկիր այնպիսի մարդու, որն Ադամի սերնդից չէր, և որը պատրաստ կլիներ զոհաբերել իր անձը մարդկության համար: Սակայն երկրային տիրույթը տրվել էր Ադամին և նրա սերունդներին. այնպես որ, այդ իրավաբանական կարգավիճակի ներքո, սա նաև ապօրինի կլիներ: Կար միայն մեկ միջոց՝ այս ծրագիրն իրականացնելու համար, և միայն մեկ թեկնածու. այդ մարդը պետք է ծնվեր այս երկրի վրա, բայց չլիներ Ադամի սերնդից:

Առաջին հայացքից, դուք կհամաձայնեք, որ սա կրկին անհնար կլիներ: Բայց տեխնիկապես կար մի հնարավոր տարբերակ: Աստված օրինապես կարող էր արու զավակի սերմ դնել այս երկրում ապրող մի կնոջ մեջ, եթե գտներ այնպիսի տղամարդու, որը կհավատար Իրեն դրա համար՝ դրանով իսկ տալով Իրեն դա անելու օրինական իրավասություն: Հիշեք՝ այս երկրային տիրույթի բանալին մարդու ձեռքում է: Սատանան օգտագործեց այդ բանալին, որպեսզի մուտք գործեր այս երկրային տիրույթ և գողանար այն հոգևոր իշխանության դիրքը, որը տրվել էր Ադամին այս երկրի վրա: Որպեսզի Աստծո ծրագիրը հաջողվեր, և որպեսզի սատանան ստիպված լիներ ընդունել, որ այն օրինական է, քանի որ հակառակ դեպքում նա անպայման կբարձրաձայներ խարդախության մասին, Աստված պետք է գտներ այնպիսի տղամարդու և կնոջ, որոնք կհավատային Իրեն երեխայի համար՝ այն դեպքում, երբ երեխա ունենալը նրանց կյանքում լիովին և մշտապես անհնար էր: Նրանք պետք է հավատային, որ Աստված կաներ անհնարինը:

Այդ երեխայի ծնունդը նույնպես նշանակում էր, որ իր՝ երեխայի կյանքում խոստում էր լինելու. նա ստանալու էր կոչում, ըստ որի նրա սերնդի միջոցով բոլոր ազգերն օրհնվելու էին, և նրա սերնդի միջոցով Աստված ստանալու էր օրինականություն և իրավասություն՝ բերելու այս աշխարհ Հիսուսին: Եթե լիներ այնպիսի զույգ, որը կհավատար, որ Աստված ի զորու էր անել դա, կհղանար մահացած որովայնում և կհավատար, որ իրենց երեխայի միջոցով բոլոր ազգերն օրհնված էին լինելու, և որ նրա միջոցով առաջացած սերունդը լինելու էր ավելին, քան ծովափի ավազը, Աստված կստանար այն

օրինական թույլտվությունը, որն անհրաժեշտ կլիներ Իրեն հետագայում՝ Իր սերմը Հիսուսի մայր Մարիամի մեջ դնելու համար: Բայց կարո՞ղ էր արդյոք Աստված նման տղամարդ գտնել. նրա անունն Աբրահամ է, և նա մեր հավատքի հայրն է:

> *«Հակառակ ամեն հույսի՝ Աբրահամը հույսով հավատաց, և այդ կերպով դարձավ շատ ազգերի հայր, ինչպես որ ասվեց նրան. «Այնպես պիտի լինի քո զավակը»: Չտկարանալով իր հավատքի մեջ՝ նա ընդունեց այն փաստը, որ իր մարմինը մահացածի պես էր, քանի որ ինքը մոտավորապես հարյուր տարեկան էր, և որ Սառայի արգանդը նույնպես մահացած էր: Այնուամենայնիվ, նա չերկմտեց անհավատությամբ Աստծո խոստման վերաբերյալ, այլ զորացավ իր հավատքով և փառք տվեց Աստծուն՝ լիովին համոզված լինելով, որ Աստված ի զորու էր կատարել այն, ինչ խոստացել էր»:*
>
> – Հռոմեացիների 4.18-21, NIV

Աբրահամը և Սառան հավատացին Աստծուն և ծնունդ տվեցին Իսահակին, երբ նրանք շատ ծեր էին և անկարող էին երեխաներ ունենալ: Քանի որ Աբրահամն էր հավատացել Աստծուն, խոստումը կարող էր գալ միայն այն դռնով, որը բացեց Աբրահամը: Հիսուսը ստիպված էր լինելու գալ Աբրահամի սերնդից: Թույլ տվեք շատ պարզ կերպով բացատրել: Նա չէր կարող գալ այլ ճանապարհով: Աբրահամի միջոցով գալը միակ օրինական ճանապարհն էր: Սա է պատճառը, որ բացելով Մատթեոսի Ավետարանի առաջին գլուխը, դուք տեսնում եք ձանձրալի ցուցակ այն մասին, որ այսինչը ծնեց այնինչին: Այս ամենը հենց այնպես գրված չէ առաջին գլխում: Այս ցուցակը հաստատում է այն փաստը, որ այս երկրային տիրույթում Հիսուսն Աբրահամի ժառանգն էր: Սա պետք է արձանագրվեր այս երկրի վրա, որտեղ սատանան հայտարարում է իր օրինական տիրապետության և իշխանության մասին: Եթե այս ցուցակը ճշգրիտ չլիներ, կամ՝ եթե Հիսուսն իրականում եկած չլիներ Աբրահամի սերն-

դից, սատանան կկարողանար հայտարարել, որ Հիսուսի ծնունդը և կյանքը հիմնված էին խարդախության վրա, և որ Նա իրավասու չէր մեր մեղքի գինը վճարելու համար:

ՆՐԱՆՔ ԱՐԴԵՆ ԻՍԿ ՎԵՐ ԷԻՆ ՏԱՆՁԱԼԻ ԱՇԽԱՏԱՆՔՈՎ ԵՎ ՔՐՏԻՆՔՈՎ ԳՈՅԱՏԵՎԵԼՈՒ ԱՆԵԾՔԻՑ:

Եթե հիշում եք, Իսրայելում կային շատ օրենքներ, որոնք արգելում էին ամուսնանալ սեփական ազգից դուրս: Սեփական ազգից դուրս ամուսնությունն արժանանում էր մահապատժի: Այժմ հասկանում եք, թե ինչու այդ սերունդը պետք է մաքուր մնար, և ինչու էին նրանք խստորեն հետևում այդ օրենքներին: Այո, դուք կգտնեք բացառություններ, երբ որոշ կանայք, որոնք չէին պատկանում Իսրայելի ժողովրդին, ամուսնացան իսրայելցիների հետ: Նրանցից մեկը Ռախաբն էր, ով ապրում էր Երիքով քաղաքում և թաքցրեց այն լրտեսներին, որոնք ուղարկվել էին՝ այդ երկիրը լրտեսելու համար: Այո, նա թվարկված է Մատթեոսի Ավետարանի առաջին գլխում, քանի որ նա ամուսնացել էր իսրայելցու հետ: Բայց դուք պետք է հասկանաք, որ հրեական մշակույթում սերունդը շարունակողը տղամարդն էր:

Թույլ տվեք հպանցիկ մի կողմնակի միտք արտահայտել: Մարդիկ շատ են խոսում այն մասին, թե որքան ժամանակ է, որ մարդն այս երկրի վրա է: Արդյո՞ք հնարավոր է պատասխանել այս հարցին: Այո՛: Կարող եմ հավաստիացնել ձեզ, որ Մատթեոսի Ավետարանի առաջին գլխի ցուցակը ճշգրիտ է: Այդտեղ չի կարող լինել որևէ բացթողում. հակառակ դեպքում, դուք և ես չէինք վայելի այն փրկությունը, որը ներկայումս պատկանում է մեզ: Սատանան խարդախություն կանվաներ այն: Այդ ցուցակը պետք է կատարյալ լինի: Այնպես որ, հիմնվելով այդ ցուցակի վրա, դուք կարող եք մոտավորապես հաշվարկել, թե որքան ժամանակ է, ինչ մարդը գտնվում է այս երկրի վրա: Պարզապես մտածեցի, որ կարող էի մեջբերել այս միտքը:

«Ես կդարձնեմ քեզ մեծ ազգ, և Ես քեզ կօրհնեմ: Ես մեծ կդարձնեմ քո անունը, և դու օրհնություն կլինես: Ես կօրհ-

նեմ նրանց, ովքեր օրհնում են քեզ. նրան, ով անիծի քեզ, Ես կանիծեմ, և երկրի բոլոր ժողովուրդներն օրհնված կլինեն քո միջոցով»:

– Ծննդոց 12.1-3, NIV

Ինչպես տեսնում եք այս խոսքում, Աբրահամի կողմից բացված դուռը դեպի այս երկրային տիրույթ այն օրինական մուտքն է, որով Հիսուս Քրիստոսը հետագայում գալու էր և օրհնելու էր այս աշխարհում ապրող մարդկանց: Թեև Աբրահամը և նրա սերունդները տրամադրեցին Աստծուն օրինական իրավունք և իրավասություն, որոնք անհրաժեշտ էին՝ Նրա կառավարման զորությունը և ազդեցությունն այս երկիր բերելու համար, այնուամենայնիվ, մարդը դեռ ապրում էր մեղքի և հոգևոր մահվան ճնշման ծուղակում, մինչև որ Աստված չուղարկեց Հիսուսին այս աշխարհ՝ վճարելու համար Ադամի մեղքի գինը: Սակայն, ինչ վերաբերում է մատակարարմանը, մենք տեսնում ենք, որ Աբրահամը և նրա ժառանգները, որոնք կրում էին թլփատության նշանը, բարգավաճում էին: Նրանք արդեն իսկ վեր էին տանջալի աշխատանքով և քրտինքով գոյատևելու անեծքից:

«Աբրամը դարձավ շատ հարուստ՝ անասուններով և արծաթով և ոսկով»:

– Ծննդոց 13.2, NIV

Այս խոսքում տեսնում ենք խոշոր փոփոխություն, որն այս ուխտն առաջացրեց մատակարարման վերաբերյալ: Դուք նկատո՞ւմ եք տարբերությունն այն խոսքերի մեջ, որոնք Աստված ասաց Աբրահամին, և այն խոսքերի, որոնք Նա ասաց Ադամին Ծննդոց 3.17-ում: Հիշեք՝ այն բանից հետո, երբ Ադամը մեղանչեց, Աստված ասաց նրան, որ գոյատևելու էր իր տանջալի աշխատանքով և քրտինքով: Սակայն մենք այլ բան ենք տեսնում Աբրահամի կյանքում: Աստված ասում է. «Ես կդարձնեմ քեզ»: Գրված չէ, որ Աբրահամը թողնվեց իր կարողությանը՝ վազելու իր քրտինքով և տանջալի աշխատանքով: Գրված է, որ Աստված ներգրավվեց նրա կյանքում: Աստված

ասաց. «Ես կդարձնեմ քեզ»: Արդյո՞ք այս իրադարձությունից հետո մենք տեսնում ենք Աբրահամին իր գոյությունը մի կերպ պաշտպանելիս: Հազիվ թե:

Աբրահամը հարո՛ւստ էր: Նրա երեխաները հարուստ էին: Աբրահամի կյանքը այս երկրի անեծքի համակարգի մեջ չէր: Նա ուներ ավելին, քան բավական էր: Շատ ժամանակ չանցավ, մինչև որ մարդիկ տեսան այս տարբերությունը: Այս տարբերությունը շարունակեց երևալ նրա սերունդների կյանքում: Որպես օրինակ, Աբրահամից մի քանի սերունդ հետո նրա թոռ Հակոբն աշխատում էր Լաբանի՝ իր աներոջ մոտ, և Լաբանը, տեսնելով Հակոբի վրա եղող օրհնությունը, փորձեց խաբեությամբ խլել նրա բարգավաճման արդյունքը: Սակայն Աստված Հակոբի օրհնությունը գողանալու ծրագրերը պտտեց ի վնաս Լաբանի և, միևնույն է, օրհնեց Հակոբին մեծ հարստությամբ: Ես նկատի ունեմ, որ թեև մարդիկ փորձում էին կանգնեցնել այս օրհնությունը, նրանց մոտ ոչինչ չէր ստացվում: Քանի դեռ ժառանգները հավատարիմ էին իրենց ուխտին և երկրպագում էին Աստծուն, Աստված բարգավաճում էր տալիս նրանց:

«ԵՀՈՎԱՆ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՂԱՐԿԻ ՔԵԶ ՔՈ ՇՏԵՄԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԵՎ ՔՈ ԲՈԼՈՐ ՁԵՌՆԱՐԿԵԼՈՒ ԲԱՆԵՐՈՒՄ...»:

– ԵՐԿՐՈՐԴ ՕՐԻՆԱՑ 28.8ա

Մտածե՛ք վերևում ասվածից բխող հետևությունների մասին: Ես ստանում եմ բազմաթիվ նամակներ և էլեկտրոնային նամակներ, որոնցում մարդիկ գրում են, որ ես չափազանց շատ եմ խոսում փողի մասին: Նրանք ասում են ինձ, որ բարգավաճումն Աստծո կամքը չէ: Նրանք շեշտում են, որ մենք պետք է տառապենք այս կյանքում և ծառայենք Աստծուն մեր կյանքի գնով: Ես կարող եմ համաձայնել նրանց պնդման մի մասի հետ: Հիսուսն իրականում ասաց Մարկոս 10.30-ում, որ մենք հալածանքներ կկրենք՝ մեր բարգավաճման պատճառով: Դժբախտաբար, բազմաթիվ քրիստոնյաներ հավատում են, որ Աստված խիստ վերակացու է, և մենք պետք է

մի կերպ գոյատևենք՝ աղքատության երդում անելով և տառապելով հիվանդություններից ու տկարությունից: Ո՛չ, դա այս երկրի անեծքն է, ոչ թե օրհնությունը: Աստված ցանկանում է ֆինանսապես հաստատել ձեզ:

Աստված ցանկանում է հաստատել ձեզ

Չունենալով ապահով և հաստատված ֆինանսական կյանք, դուք հարկադրված կլինեք մնալ գոյատևման վազքի մեջ ձեր ամբողջ կյանքում և չեք կարողանա կատարել ձեր հոգևոր առաջադրանքը՝ ապրելով, ըստ էության, ստրկության մեջ: Կարդացե՛ք Երկրորդ Օրինաց 28.8-13-ում գրվածը, թե ինչ Աստված ասաց Աբրահամի ժառանգներին.

> *«Տերն օրհնությունը կուղարկի քեզ քո շտեմարաններում և քո բոլոր ձեռնարկելու բաներում: Եվ քեզ կօրհնի քո Տեր Աստծո քեզ տված երկրում: Ինչպես որ քեզ երդում է արել, եթե քո Տեր Աստծո հրամանները պահես և Նրա ճանապարհներով գնաս, Տերը քեզ Իր համար սուրբ ժողովուրդ կհաստատի: Եվ երկրի բոլոր ժողովուրդները կտեսնեն, որ Տիրոջ անունը կոչված է քեզ վրա, և քեզնից կվախենան: Եվ Տերը քեզ առատություն կտա քո բարության համար՝ քո որովայնի պտուղը, քո անասունների պտուղը և քո երկրի պտուղը շատացնելով այն երկրի վրա, որ Տերը քո հայրերին երդում արեց քեզ տալու համար:*
>
> *Տերը Իր բարության գանձը, այսինքն՝ Երկինքը քեզ համար կբացի, որ քո երկրի անձրևը տա իր ժամանակին և քո ձեռքի ամեն գործը օրհնի: Եվ դու շատ ազգերի փոխ կտաս, բայց դու փոխ չես առնի: Եվ Տերը գլուխ կանի քեզ, և ոչ թե ագի: Դու միշտ բարձրում կլինես, և ցածրում չես լինի, եթե քո Տեր Աստծո պատվիրանները լսես, որոնք ես այսօր քեզ պատվիրում եմ, որ պահես և կատարես»:*

Ուշադրություն դարձրեք, որ նրանք դեռ հաստատված չէին այդ նոր երկրում, թեև ունեին խոստում այդ մասին: Բայց Մովսեսն ասում է նրանց, որ Աստված կհաստատի նրանց: Հասկանալու համար, թե ինչ է սա նշանակում, և ինչ է Աստված փորձում ասել նրանց, պատկերացրեք մի կաղնի: Երբ այն դեռ տնկի է, այն հաստատված չէ: Յուրաքանչյուրը կարող է տանել այն՝ ՈՐՏԵՂ ՑԱՆԿԱՆԱ: Բայց երբ կաղնին աճում և մեծանում է, ոչ ոք չի կարող տեղաշարժել: Այն հաստատված է:

> *«Տերը կուղարկի օրհնություն քո շտեմարաններում և այն ամենում, ինչին դիպչի քո ձեռքը: Քո Տեր Աստված կօրհնի քեզ այն երկրում, որը տալիս է քեզ: Տերը կհաստատի քեզ...»:*
>
> – Երկրորդ Օրինաց 28.8,9ա, NIV

Այսպիսով, ի՞նչ է նշանակում ֆինանսապես հաստատված լինելը: Աստված խոսում է այս մասին հենց այս հատվածում՝ 12բ խոսքում (NIV).

> *«Դու պարտք կտաս շատ ազգերի, բայց պարտք չես վերցնի ոչ ոքից: Տերը կդարձնի քեզ գլուխ, ոչ թե պոչ»:*

Աստված ասում էր, որ այնքա՛ն է օրհնելու նրանց, որ նրանք պարտք տվողներ են լինելու և այլևս պարտք չեն վերցնելու: Նրանք լինելու են գլուխ, և ոչ թե պոչ: Պոչը խոսք չունի իր ընթացքի մեջ. այն գնում է միայն՝ որտեղ գլուխն առաջնորդում է:

> *«Հարուստն իշխում է աղքատի վրա, և փոխառուն պարտատիրոջ ստրուկն է»:*
>
> – Առակաց 22.7, NIV

Փոխառուն հաստատված չէ: Նա գտնվում է պարտատիրոջ ողորմության ներքո և աշխատում է որպես ստրուկ՝ չունենալով

ազատություն: Բայց Աստված ասում է. «Ո՛չ, Ես հաստատելո՛ւ եմ քեզ: Ոչ ոք չի կարողանա պարտադրել քեզ հեռանալ քո տնից, որովհետև դու պարտք չես լինի դրա համար: Ոչ ոք չի կարողանա վերցնել քո մեքենան, որովհետև դու պարտք չես լինի դրա համար: Քո խոհանոցում լիքը մթերք կլինի, և դու կքայլես քո կողմից ձեռք բերված հողի վրա և կկատարես Աստծուց քեզ տրված առաջադրանքները՝ կատարյալ ֆինանսական խաղաղության մեջ: Դու հաստատվա՛ծ կլինես»:

Աստված ցանկանում է, որ դուք բարգավաճե՛ք:

ԳԼՈՒԽ 8

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Այն, ինչի մասին դուք կարդալու եք, Թագավորության զորավոր սկզբունքներից մեկն է՝ այնքան զորավոր, որ ես համարեցի, որ այն արժե դարձնել այս գրքի ենթավերնագիրը: Մենք գտնում ենք այս սկզբունքն Աբրահամի ծոռ Հովսեփի կյանքի պատմության մեջ: Որպես կարճ նախապատմություն, Հովսեփի եղբայրներն ատում էին նրան և ցանկանում ազատվել նրանից: Իրականում, նրանք ուզում էին սպանել Հովսեփին, բայց եղբայրներից մեկը չուզեց այդքան հեռու գնալ. այնպես որ, փոխարենը նրանք վաճառեցին Հովսեփին ճանապարհորդող առևտրականների: Այդ մարդիկ տարան նրան Եգիպտոս, որտեղ նա վաճառվեց Փարավոնի թիկնազորի հրամանատար Պետափրեսին:

«Եվ Հովսեփին իջեցրին Եգիպտոս: Եվ փարավոնի ներքինի եգիպտացի Պետափրես դահճապետը ծախու առավ նրան իսմայելցիների ձեռքից, որ նրան այնտեղ էին իջեցրել: Եվ Տերը Հովսեփի հետ էր, և նա հաջողակ մարդ էր, և իր եգիպտացի տիրոջ տանն էր: Եվ նրա տերը տեսավ, որ Տերը նրա հետ էր, և թե ինչ որ անում էր, Տերը հաջողում էր նրա ձեռքով: Եվ Հովսեփը շնորհք գտավ նրա առջև և ծառայում էր նրան, և նա իր տան վրա վերակացու արեց

նրան և իր ամբողջ ունեցածը նրա ձեռքը հանձնեց:

Եվ եղավ, որ նրան իր տան և իր ամբողջ ունեցածի վրա վերակացու արած ժամանակից հետո Տերը եգիպտացու տունը օրհնեց Հովսեփի պատճառով: Եվ Տիրոջ օրհնությունը լինում էր թե՛ տանը, և թե՛ դաշտում նրա ամբողջ ունեցածի վրա: Եվ նա իր ամբողջ ունեցածը Հովսեփի ձեռքին թողեց և նրա մոտ եղած մեկ բանից տեղեկություն չուներ՝ բացի իր կերած հացից»:

– Ծննդոց 39.1-6

Ուշադրություն դարձրեք 2ա խոսքին. *«Եվ Տերը Հովսեփի հետ էր, և նա հաջողակ մարդ էր (կամ՝ և նա բարգավաճում էր)»:* Ի՞նչ է սա նշանակում: Մի՞թե Աստված յուրաքանչյուրի հետ չէ: Այն ամենի համատեքստում, ինչ քննարկեցինք նախորդ գլուխներում տոհմաբանության վերաբերյալ, պատասխանն է՝ ո՛չ: Հիշեք՝ Աբրահամի հավատքը և դրան հաջորդող ուխտը թույլ տվեցին Աստծուն օրինավոր կերպով գործել Աբրահամի և նրա ժառանգների կյանքում՝ միայն նրանց կյանքում: Այնպես որ, փաստն այն մասին, որ Աստված բոլորի հետ չէ, չպետք է շփոթել այն բանի հետ, որ Աստված չի սիրում բոլորին: Նա սիրում է բոլորին, բայց Նրա ձեռքերը կապված են այն մարդկանց կյանքերում, որոնք չունեն իրավաբանական դիրք Իր առջև:

«Հիշեք, որ այն ժամանակ դուք առանձնացված էիք Քրիստոսից, արգելված էիք քաղաքացիությունից Իսրայելում և օտարականներ էիք խոստման ուխտերին՝ առանց հույսի և <u>առանց Աստծո այս աշխարհում</u>: Բայց այժմ Քրիստոս Հիսուսում դուք, որ մի ժամանակ հեռու էիք, մոտեցվել եք Քրիստոսի արյամբ»:

– Եփեսացիների 2.12,13, NIV

Ուշադրություն դարձրեք, որ Աստվածաշունչը խոսում է առանց ուխտի լինելու մասին, ինչը նշանակում է, որ Աստված և Նրա զո-

ությունն իրավաբանորեն կտրված են այդ մարդուց: Ինչո՞ւ: Քանի որ Աստված չունի օրինական իշխանություն կամ իրավասություն երկրային տիրույթում, եթե չկա օրինական պայմանագիր՝ հաստատված ուխտ այս երկրի վրա գտնվող որևէ տղամարդու կամ կնոջ հետ: Այս հատվածը պարզորեն ցույց է տալիս այս ճշմարտությունը. գրված է, որ առանց ուխտի՝ մարդիկ առանց հույսի և առանց Աստծո են այս աշխարհում: Հիշեք՝ քանի որ Հիսուսը հաստատեց նոր ուխտ մեզ համար, այժմ մենք Աստծո ընտանիքի անդամներ և Նրա հրաշալի Թագավորության քաղաքացիներ ենք (տե՛ս Եփես. 2.19): Այնպես որ, ետ նայելով Ծննդոց 39-րդ գլխում գտնվող մեր խոսքին, հասկանում ենք, որ *«Տերը Հովսեփի հետ էր»* արտահայտությունը նշանակում է, որ Աստված օրինական ազդեցություն ուներ Հովսեփի կյանքում՝ այն ուխտի պատճառով, որը կնքել էր նրա պապ Աբրահամը: Այս օրինական ուխտը, որի շնորհիվ Աստծո օրհնությունը և ազդեցությունը դրսևորվում էին, չեղարկեց այս երկրային տիրույթի տանջալի աշխատանքի և քրտինքի համակարգը: Աստված կարող էր օրինավոր կերպով օրհնել Հովսեփին:

ԱՍՏՎԱԾ ՉՈՒՆԻ ՕՐԻՆԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆ ԵՐԿՐԱՅԻՆ ՏԻՐՈՒՅԹՈՒՄ, ԵԹԵ ՉԿԱ ՕՐԻՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ՝ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՈՒԽՏ ԱՅՍ ԵՐԿՐԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՈՐԵՎԷ ՏՂԱՄԱՐԴՈՒ ԿԱՄ ԿՆՈՋ ՀԵՏ:

Հիշեք, թե ինչ Աստված ասաց Աբրահամին. *«Ես կդարձնեմ քեզ»:* Քանի որ Աստված Հովսեփի հետ էր և օգնում էր նրան, նա հաջողվում էր իր բոլոր գործերում՝ այն աստիճան, որ նույնիսկ նրա հեթանոս տեր Պետափրեսը տեսավ մեծ տարբերություն Հովսեփի կարողության մեջ՝ շատ այլ մարդկանց համեմատ, որոնց նա տեսել էր: Այստեղ ես պետք է նշեմ, որ երբ մենք բարգավաճում ենք Աստծո օգնությամբ, այն մարդիկ, որոնք գոյատևում են այս երկրի անեծքի համակարգում, նկատում են տարբերությունը: Պետափրեսն այնքա՛ն տպավորված էր, որ դրեց Հովսեփին իր ամբողջ ունեցվածքի վրա:

Գոյություն ունեն Թագավորության բազմաթիվ սկզբունքներ, որոնք հայտնվում են այս սուրբգրային հատվածում, սակայն բանալիների բանալին հայտնված է այստեղ: Ես անվանում եմ այն «Համաձայնության զորությունը». այն կարելի է անվանել նաև «Պետափրեսի սկզբունքը»: Այս մասին գրված է Ծննդոց 39.5-ում.

> *«Եվ եղավ, որ նրան իր տան և իր ամբողջ ունեցածի վրա վերակացու արած ժամանակից հետո Տերը եգիպտացու տունը օրհնեց Հովսեփի պատճառով: **Եվ Տիրոջ օրհնությունը լինում էր թե՛ տանը, և թե՛ դաշտում նրա ամբողջ ունեցածի վրա»:***

Ուզում եմ, որ հստակ պատկերացնեք, թե ինչ էր տեղի ունենում: Մի ժամանակ Հովսեփը չէր ղեկավարում ամեն ինչ, բայց եկավ պահը, երբ նա սկսեց ղեկավարել: Աստվածաշունչը պարզորեն նշում է այն պահը, երբ տեղի ունեցավ այդ փոփոխությունը: Տիրոջ օրհնությունը եկավ Պետափրեսի ամբողջ ունեցվածքի՝ նրա ամբողջ սեփականության վրա: Բայց նա չէր ճանաչում Հովսեփի Աստծուն և Իսրայելի ժողովրդի մասը չէր: Ուրեմն, ինչպե՞ս սա կարող էր տեղի ունենալ, և ի՞նչ է սա նշանակում: Ահա պատասխանը: Երբ Պետափրեսը հանձնեց իր ամբողջ ունեցվածքը Հովսեփի իշխանությանը, առանց հասկանալու, նրա ունեցվածքը հայտնվեց այն ուխտի ներքո, որը Հովսեփն ուներ Աստծո հետ:

Պետափրեսի ունեցվածքը, սեփականությունը և գույքը հայտնվեցին այլ թագավորության ներքո:

Իրավաբանորեն, Պետափրեսի ունեցվածքը ենթակա էր այս երկրի անեծքի համակարգին, մինչև որ այն հայտնվեց Հովսեփի խնամքի ներքո: Երբ Պետափրեսը հանձնեց իր ունեցվածքը Հովսեփի իշխանության իրավասությանը, նա չհասկացավ, որ նույնպես հանձնում էր այն Աստծո օրհնության ազդեցությանը: Աստվածաշունչը շարունակում է՝ ասելով, որ երբ Հովսեփն էր ղեկավարում ամեն ինչ, Պետափրեսը ոչնչից տեղյակ չէր, այսինքն՝ ստիպված չէր մտահոգվել

կամ անհանգստանալ ոչնչի մասին՝ բացի այն հացից, որն ուտում էր: Նա չուներ ոչ մի հոգս: Չունենալով հոգսեր՝ Պետափրեսը միայն կենտրոնացած էր իր առաջադրանքի և նպատակի վրա՝ որպես եգիպտական թիկնազորի հրամանատար: Այստեղ կա շատ բան, ինչի մասին կարելի է խոսել, բայց այն, ինչ վերապրեց Պետափրեսը՝ առանց գիտակցելու, Եբրայեցիների 4-րդ գլխում կոչվում է շաբաթվա հանգիստ, և այո, այն հասանելի է Նոր կտակարանի հավատացյալներին:

ԱՅՆ ԿՈՉՎՈՒՄ ԷՐ ՇԱԲԱԹ՝ ԱՅՆ ՕՐՎԱ ՕՐԻՆԱԿԸ, ՈՐՈՒՄ ՄԱՐԴԸ ԿԱՐԻՔ ՉԷՐ ՈՒՆԵՆԱ ՁԱՆՔ ԹԱՓԵԼ ԻՐ ՏԱՆՁԱԼԻ ԱՇԽԱՏԱՆՔՈՎ ԵՎ ՔՐՏԻՆՔՈՎ՝ ՊԱՐԶԱՊԵՍ ԳՈՅԱՏԵՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

Եթե ուսումնասիրեք շաբաթը, կտեսնեք, որ Աստված թույլ չէր տալիս իսրայելցիներին որևէ գործ անել այդ օրը, և այդ օրը չկար քրտինք և տանջալի աշխատանք: Շաբաթը, իհարկե, շաբաթվա յոթերորդ օրն էր, և այն համապատասխանում էր արարչագործության յոթերորդ օրվան: Միգուցե հիշեք, որ արարչագործության յոթերորդ օրն այն օրն էր, որն Աստված հանգստի օր հռչակեց: Եվ պատճառն այն չէր, որ Աստված հոգնել էր, այլ որ Նա ավարտել էր Իր գործը, և ամեն ինչ լիարժեք էր: Ըստ սկզբնական ծրագրի, յոթերորդ օրն այն օրն էր, որում մարդը պետք է ապրեր առանց հոգսերի, որում արդեն իսկ կար այն ամենը, ինչը անհրաժեշտ էր նրան, մինչև որ դա պետք կգար նրան: Բայց, իհարկե, մենք գիտենք, որ Ադամը կորցրեց այդ հանգիստը, երբ ապստամբեց Աստծո դեմ: Ապստամբելով Աստծո դեմ՝ Ադամը կտրվեց իր համար մատակարարելու Աստծո կարողությունից: Նա կորցրեց այն մատակարարման վայրը, որն Աստված նախապես պատրաստել էր: Այժմ Ադամը հարկադրված էր անձամբ մատակարարել իր համար՝ տրամադրելով իր ամբողջ ժամանակը տանջալի աշխատանքով և քրտինքով գործելուն՝ պարզապես գոյատևելու համար:

Բայց Աստված չէր ուզում թողնել մարդուն անհույս վիճակում: Նա տվեց նրան այդ հանգստի օրինակը, որը մեկ օր վերականգ-

նելու էր: Այն կոչվում էր շաբաթ՝ այն օրվա օրինակը, որում մարդը կարիք չէր ունենա ջանք թափել իր տանջալի աշխատանքով և քրտինքով՝ պարզապես գոյատևելու համար: Երբ Պետափրեսը ճաշակեց Աստծո օրհնությունը, որը Հովսեփի վրա էր այդ ուխտի շնորհիվ, նա վերապրեց Աստծո մատակարարման կարողությունը Հովսեփի միջոցով և հանգիստ գտավ: Բոլոր խնդիրները լուծված էին. նա չուներ ոչ մի հոգս:

> *«Եվ նա իր ամբողջ ունեցածը Հովսեփի ձեռքին թողեց և նրա մոտ եղած մեկ բանից տեղեկություն չուներ՝ բացի իր կերած հացից»:*
>
> – Ծննդոց 39.6

Հասկանալու համար, թե որքան կարևոր է շաբաթը, և թե ինչ էր Աստված ցույց տալիս մարդուն, դուք պետք է մի պարզ հարց տաք: Ինչպե՞ս էր շաբաթ օրը հնարավոր: Չէ՞ որ այս երկրի անեծքի համակարգի ներքո մարդը վազքի մեջ էր ամեն օր՝ պարզապես գոյատևելու համար: Եթե դա ճիշտ է, ինչպե՞ս է, որ մարդը կարող էր դադարեցնել իր վազքը շաբաթ օրը: Ինչպե՞ս էր նա հոգալու իր շաբաթ օրվա կարիքները, եթե նա չէր կարող աշխատել այդ օրը: Սա լավ հարց է, որը պետք է պատասխանվի, և այս պատասխանի մեջ մենք գտնում ենք «Տիրոջ օրհնության» մասին հայտնությունն ամբողջությամբ, որում վարվում էր Հովսեփը:

Կարծում եմ՝ այս սկզբունքի հրաշալի օրինակներից մեկը Ղևտացիների 25-րդ գլխում է, որում Աստված բացատրում էր Հոբելյանական տարին Իսրայելի ժողովրդին: Որպես տեղեկություն՝ Հոբելյանական տարին լինում էր 50 տարին մեկ: Այդ տարին նշանակալի է բազմաթիվ առումներով, որոնք ես չեմ մանրամասնելու այստեղ: Այնուամենայնիվ, ուզում եմ, որ հասկանաք հետևյալը. նրանց արգելված էր ցանել այդ տարում: Եվ նրանց նույնպես արգելված էր ցանել 49-րդ տարում, քանի որ այն յոթերորդ կամ շաբաթական տարի էր: Ուզում եմ, որ պարզ հասկանաք, թե ինչ էր տեղի ունենում. Իսրայելին պատվիրված էր ոչինչ չցանել 49-րդ և 50-րդ տարիներին: Դրա-

նից հետո նրանք պետք է սպասեին մինչև 51-րդ տարվա ավարտը՝ մինչև իրենց նոր ցանած սերմերի հունձքը: Այնպես որ, ըստ էության, Աստված ասում էր նրանց, որ պետք է ապրեին երեք տարի՝ առանց հունձքի: Եթե ես ասեի ձեզ, որ դուք երեք տարի աշխատավարձ չեք ստանալու, դուք մի փոքր կմտահոգվեիք: Իսրայելը մտահոգված էր: Բնականորեն դա անհնար էր: Բայց Աստված ինչ-որ բան էր ցույց տալիս նրանց:

> *«Եվ եթե ասեք, թե «Յոթերորդ տարին ի՞նչ կուտենք: Ահա չպիտի վարենք և մեր արդյունքները չպիտի ժողովենք»: Սակայն Ես կհրամայեմ Իմ օրհնությանը ձեզ համար վեցերորդ տարին, և երեք տարվա արդյունք կտա: Եվ ութերորդ տարին վար կանեք և հին արդյունքից կուտեք մինչև իններորդ տարին: Մինչև նրա արդյունքի հասնելը հնից կուտեք»:*
>
> – Ղևտացիների 25.20-22

Շաբաթը հնարավոր էր, միայն որովհետև Աստված օրհնել էր վեցերորդ օրը կրկնակի չափով կամ ավելի, քան բավական է: Թույլ տվեք, որ այս արտահայտությունը որոշ ժամանակ պտտվի ձեր մտքում: Մի՞թե սա չէ յուրաքանչյուր տղամարդու և կնոջ ձգտումը՝ ավելին, քան բավական է: Տալով մարդուն կրկնակի չափ վեցերորդ օրը՝ Աստված հիշեցնում էր, որ Նա է իրենց մատակարարը, և Նա մշտապես մատակարարում է ավելին, քան բավական է: Եկեք անկեղծ լինենք. եթե մենք ստանանք ավելին, քան բավական է, դա կազատի մեզ այս կյանքի առնետավազքից: Դա կազատի մեզ ստրկությունից՝ տալով ընտրության հնարավորություն: Ամենակարևորը՝ մենք ազատություն կստանանք, որպեսզի գտնենք մեր նպատակը և ձգտումը և բարգավաճենք դրանցում: Ահա թե ինչ էր վայելում Պետափրեսը: Ոչ մի հոգս: Ամեն կարիք լրացված էր: Միակ բանը, ինչի վրա նա կենտրոնանում էր, իր նպատակն էր: Կրկին, ինչպես Դրենդան և ես ասում ենք. «Քանի դեռ չեք լուծել ձեր ֆինանսական խնդիրները, դուք երբեք չեք գտնի ձեր նպատակը»:

Բայց կա հրաշալի՛ լուր: Շաբաթվա հանգիստը դեռ հասանելի է այսօր. դրանում մեր բոլոր կարիքները լրացված են, և մենք կարող ենք բարգավաճել՝ բարձրանալով գոյատևման մակարդակից:

> *«Այսպիսով, մնում է շաբաթվա հանգիստ Աստծո ժողովրդի համար, որովհետև ցանկացած մարդ, որը մտնում է Աստծո հանգիստը, նույնպես հանգստանում է իր գործից (տանջալի աշխատանքի և քրտինքի համակարգից, գոյատևումից), ինչպես որ Աստված հանգստացավ Իր գործերից»:*
>
> – Եբրայեցիների 4.9, NIV

Աստծո Թագավորությունը գերազանցեց երկրային տիրույթում գոյություն ունեցող տանջալի աշխատանքի և քրտինքի օրենքը Պետափրեսի դեպքում, և այն կանի նույնը ձեզ համար: Երբ սովորենք, թե ինչպես ստանանք Աստծո Թագավորությունից, մենք կարող ենք բարգավաճել և գտնել մեր նպատակը: Կյանքն իսկապես որ կարող է լինել արկածային՝ լի ավյունով և ուրախությամբ:

> *«Տիրոջ օրհնությունը հարստություն է բերում, և Նա նեղություն չի ավելացնում դրան»:*
>
> – Առակաց 10.22, NIV

Տիրոջ օրհնությունը հարստություն է բերում, և Աստված տանջալի աշխատանք չի ավելացնում դրան: Մենք կարող ենք բարձրանալ Ծննդոց 3.17-ում նկարագրված տանջալի աշխատանքի և քրտինքի համակարգից: Տարիներ շարունակ ես ապրել եմ այդ գոյատևման հին համակարգի ներքո, մինչև որ իմացել եմ, թե ինչպես է գործում Աստծո Թագավորությունը: Դուք նույնպես կարող եք իմանալ այս մասին: Աստված ձեզ հետ է: Նա կարող է օգնել ձեզ: Դուք կարող եք բարգավաճել: Ո՛չ, թույլ տվեք այլ կերպ ասել. դուք պե՛տք է բարգավաճեք: Այս աշխարհի «Պետափրեսները»՝ մարդիկ, որոնք չեն ճանաչում Աստծուն և տառապում են անհույս և ծանր աշ-

խատանքի անեծքի ներքո՝ փորձելով գոյատևել, հետևում են ձեզ: Նրանք տպավորված չեն ձեր կրոնով, ձեր եկեղեցական շենքերով և ձեր սուրբգրային հատվածներով, քանի որ չեն տեսնում ձեր չպատասխանված հարցերից այն կողմ: Դուք չեք կարող ակնկալել, որ մարդիկ կլսեն ձեզ, երբ պատմեք նրանց, թե որքան մեծ է Աստված, և միևնույն ժամանակ ապրեք նույն ֆինանսական ճնշման, պակասության և գոյատևման պայմաններում, ինչ նրանք: Ո՛չ, դուք պետք է ցույց տաք, թե ինչպիսին է Թագավորությունը, ինչպես որ Հովսեփն էր անում: Ես չեմ ուզում խիստ լինել, բայց մարդիկ հիմար չեն: Նրանք պատասխաններ են փնտրում:

ԴԱԴԱՐԵ՛Ք ՀԱՄԱՁԱՅՆԵԼ ՁԵՐ ՇՈՒՐՋԸ ԳՏՆՎՈՂ ԿԱՍԿԱԾԻ ԵՎ ԱՆՀԱՎԱՏՈՒԹՅԱՆ ՀԵՏ: ՓՈԽԵ՛Ք ԱՅՆ, ԻՆՉԻ ՀԵՏ ՀԱՄԱՁԱՅՆՈՒՄ ԵՔ, ԵՎ ՎԱՅԵԼԵՔ ԱՍՏԾՈ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ:

Տարիներ շարունակ ես չունեի ոչ մի ազդեցություն: Ոչ ոք չէր հրավիրում ինձ հեռուստատեսային հաղորդումների, և ես չունեի հազարավոր մարդկանցից բաղկացած եկեղեցի: Ինչո՞ւ: Քանի որ չունեի ասելիք, լուծումներ, պատասխաններ և ապացույց, որ Աստված կենդանի է, և որ Նա ինձ հետ է: Ես պարտքեր էի վերցնում, որպեսզի իմ ընտանիքը պարզապես գոյատևեր: Իմ մեքենան անսարք էր, իմ տունը խարխլված էր, և իմ կյանքը նույնպես խարխլված էր: Ինչո՞ւ ինչ-որ մեկը պետք է ցանկանար լսել, թե որքան մեծ է իմ Աստված: Այո՛, ես Երկինք էի գնում, և Երկինքն ամենահիրաշալի վայրն է, բայց մարդիկ չեն լսի այն մասին, թե որքան հրաշալի է Երկինքը, քանի դեռ դուք ցույց չեք տվել Երկինքն այստեղ՝ երկրի վրա: Լսե՛ք, ես ընդամենը ասում եմ, որ եթե Աստված իրական է, և Նրա Խոսքը ճշմարիտ է, նշանակում է՝ այն պետք է գործի: Մեր կյանքը պետք է տարբերվի. մենք ինքներս պետք է տարբերվենք: Մենք պետք է հասնենք այս սերնդին Թագավորության ճշմարտությամբ. «Պետափրեսները» հետևում են մեզ:

Այսպիսով, ինչո՞ւ է այս գրքի ենթավերնագիրը *«Համաձայնութ-*

յան զորությունը»: Քանի որ Պետափրեսը վերապրեց Աստծո Թագավորությունը և վայելեց շաբաթվա հանգիստը, որում մարդը չի ապրում քրտինքով և տանջալի աշխատանքով, որում չկա վախ, և թագավորում է խաղաղությունը: Այդ հանգստի մեջ գոյատևումը փոխարինվում է նպատակով և ավյունով, և աղքատությունը կլանվում է մատակարարմամբ: Ինչպե՞ս նա արեց դա: Նա բերեց իր խնդիրները և անհանգստություններն Աստծո Թագավորության իրավասության ներքո: Ըստ էության, թեև նա չէր հասկանում, թե ինչ էր անում, նա համաձայնեցրեց իր կյանքն Աստծո հետ: Նա եկավ համաձայնության Աստծո Թագավորության հետ և մտավ դրա իրավասության ներքո: Պետափրեսը բավականին խելացի գտնվեց՝ հանձնելով իր բոլոր գործերը Հովսեփի խնամքին, քանի որ նա տեսավ պատասխաններ: Դուք նույնպես կարող եք անել դա. Դրենդան և ես վարվեցինք հենց այդպես: Ահա թե ինչպես հայտնվեց իմ եղջերուն, իմ ֆինանսները, մեքենաները և տունը, որոնց կարիքը մենք ունեինք: Այնպես որ, թույլ տվեք մի խորհուրդ տալ. եթե ցանկանում եք վայելել այն, ինչ Աստված պատրաստել է ձեզ համար, փոխե՛ք այն, ինչի հետ դուք համաձայնեցնում եք ձեր կյանքը: Դադարե՛ք համաձայնել ձեր շուրջը գտնվող կասկածի և անհավատության հետ: Փոխե՛ք այն, ինչի հետ համաձայնում եք, և վայելե՛ք Աստծո Թագավորությունը:

ԳԼՈՒԽ 9

ԴՈ՛ՒՔ ԿԵՐԱԿՐԵՔ ՆՐԱՆՑ

Երբ առաջին անգամ իմ գրասենյակում հանդիպեցի Դոնին, նա խիստ հիասթափված էր և պարտքերի մեջ էր: Այդ պահին նրա կյանքում, թվում էր, ամեն ինչ վատ էր: Զրուցելով նրա հետ՝ իմացա, որ նա երեքից չորս ամիս չէր վճարել բնակարանի վարձավճարը, ինչպես նաև չէր փակել գրեթե բոլոր հաշիվները: Կային նաև ամուսնական խնդիրներ. նրա կինը հոգնել էր իրենց ֆինանսական վիճակից և կորցրել էր հարգանքը Դոնի հանդեպ, քանի որ նա անկարող էր հոգալ իր և իրենց հինգ երեխաների մասին: Իրականում, Դոնը ինքն էր կորցրել հարգանքն իր հանդեպ, և նա շատ հարցեր ուներ:

Նա զբաղվում էր առողջության ապահովագրության փաթեթների վաճառքով Օհայո նահանգում, բայց հաջողություն չուներ այդ գործում, և նրա ֆինանսական կյանքն արագորեն կործանվում էր:

Չնայած այն բանին, որ ամեն ինչ Դոնի դեմ էր, ես տեսա ներուժ նրանում: Նա պատրաստ էր սովորել և աշխատել: Այդ ազդեցիկ համադրությունն այն աստիճան գրավեց ինձ, որ ես աշխատանքի ընդունեցի նրան և որոշեցի ներդրում կատարել նրա ապագա բարեկեցության մեջ: Ի վերջո, այդ ներդրումը մեծ շահույթ բերեց երկուսիս:

Իմ նորաստեղծ ընկերությունը շահել էր ճանապարհորդություն դեպի Հավայան կղզիներ մեր մատակարարներից մեկից, և ես զգացի, որ դա փայլուն հնարավորություն էր, որպեսզի պատմեի Դոնին Աստծո Թագավորության մասին: Թեև Դոնը քրիստոնյա էր, նա չու-

ներ միևնույն ընկալումը, ինչ ես: Ու թեև մի քանի անգամ փորձել էի պատմել նրան Աստծո Թագավորության սկզբունքների մասին ֆինանսական բնագավառում, նա, թվում էր, պարզապես չէր հավատում իմ խոսքերին:

Ես շարունակ մտածում էի, թե ինչը կգրավեր Դոնի ուշադրությունը, որպեսզի նա հասկանար, որ ինքը նույնպես կարող էր հաջողության հասնել՝ սովորելով Աստծո Թագավորության սկզբունքները: Այնուամենայնիվ, Դոնն այնքա՜ն հուսալքված էր, որ չէր կարողանում հավատալ իր ուժերին և այն բանին, որ իր կյանքն իսկապես կարող էր փոխվել: Ես գիտեի, որ այդ ուղևորությունը դեպի Հավայան կղզիներ՝ իմ հնարավորությունն էր:

Մի քանի շաբաթ Դոնի և իմ մեկնելուց առաջ մենք զրուցում էինք այն մասին, թե ուր էինք գնալու և ինչ էինք անելու այդ ուղևորության ընթացքում: Կար մի բան, ինչը խիստ հետաքրքրում էր Դոնին: Նա ցանկանում էր կապույտ մարլին որսալ Խաղաղ օվկիանոսի գեղեցիկ ջրերում:

- Հավայան կղզիները կապույտ մարլինի մայրաքաղաքն է ամբողջ աշխարհում, - ոգևորված ասում էր ինձ Դոնը: - Ես միշտ ցանկացել եմ կապույտ մարլին որսալ. դա եղել է իմ երազանքը:

Առաջին անգամ մի քանի շաբաթվա ընթացքում ես փայլ տեսա Դոնի աչքերում: Վերջապես ինչ-որ բան ոգեշնչում էր նրան, և ես գիտեի, որ նրա ոգեշնչումը դուռ կբացեր շատ կարևոր մի դասի համար:

Դո՜ն, - ասացի ես, - դու գիտե՞ս, որ հնարավոր է իմանալ՝ ոչ թե հուսալ, այլ իմանալ, որ դու կապույտ մարլին կորսաս Հավայան կղզիներում՝ Աստծո Թագավորության շնորհիվ:

Դոնը շփոթվեց և հետաքրքրվեց. նա ցանկանում էր իմանալ ավելին, և ես շարունակեցի խոսել Թագավորության մասին: Մեջբերեցի Մարկոս 11.24-ը, որտեղ գրված է. *«Սրա համար ասում եմ ձեզ, թե ամեն ինչ, որ աղոթք անելով խնդրեք, հավատացեք, թե կառնեք, և կլինի ձեզ»:* Դոնի համար դա չափազանց լավ էր՝ հավատալու համար: Ես որոշ ժամանակ տրամադրեցի, որպեսզի օգնեի նրան հաս-

կանալ Թագավորության սկզբունքները և այն, թե ինչպես գործադրել հավատքը: Եվ մինչև մեր ճանապարհորդությունը, նրա կինը և նա սերմ ցանեցին՝ ճիշտ այնպես, ինչպես որ ես ցանեցի իմ եղջերուի համար, միաբան աղոթեցին և հավատացին, որ կապույտ մարլին էին ստացել:

Միևնույն ժամանակ, Դոնն անում էր այն, ինչ կարող էր՝ հունձքի իր մասը կատարելու համար: Նա ուսումնասիրեց հասանելի վարձույթով տրվող նավերը և դրանց գները և վերջապես վարձեց մի նավապետի, որը նրան դուր եկավ: Ամեն ինչ կազմակերպված էր, և բոլորս խիստ ոգեշնչված էինք Հավայան կղզիների կապույտ ջրերը դուրս գալու պատճառով:

Եկավ նավարկության օրը, և մենք, բարձրանալով նավը, խանդավառությամբ ասացինք նավապետին, որ այդ օրը կապույտ մարլին ենք որսալու: Մենք ակնկալում էինք հաջողակ սպորտային ձկնորսության օր, սակայն նավապետը հավաստիացրեց, որ այդ օրը կապույտ մարլին որսալու հավանականությունը մեծ չէր: Նրա նավերն օրական երկու շրջագայություն էին կատարում, և վերջին չորս ամսվա ընթացքում նրա նավակազմերը որսացել էին ընդամենը մեկ կապույտ մարլին: Հիմնական պատճառն այն էր, որ դեռևս մարլինների որսաշրջանի ժամանակը չէր, քանի որ մարլինը գաղթական ձուկ է: Հրաժարվելով հուսալքվել՝ մենք հարգալից ասացինք նրան, որ որսալու ենք այդ ձկանը, և շարունակեցինք պատրաստել մեր սարքավորանքը:

Վեց ժամ օվկիանոսում անցկացնելուց հետո մեր կարթերը նույնիսկ մեկ անգամ չշարժվեցին, և ես մի փոքր անհանգստանում էի, որ այդ վիճակը կարող էր թուլացնել Դոնի հավատքը: Իմ մտահոգության պատճառով, հարցրի նրան.

- Դո՛ն, - գոչեցի ես իմ դիր-

«ՍՐԱ ՀԱՄԱՐ ԱՍՈՒՄ ԵՄ ՁԵԶ, ԹԵ ԱՄԵՆ ԻՆՉ, ՈՐ ԱՂՈԹՔ ԱՆԵԼՈՎ ԽՆԴՐԵՔ, ՀԱՎԱՏԱՑԵՔ, ԹԵ ԿԱՌՆԵՔ, ԵՎ ԿԼԻՆԻ ՁԵԶ»:

– ՄԱՐԿՈՍ 11.24

քից, որը գտնվում էր կամրջակի վրա՝ նրա գլխավերևում, - ուզում եմ հարցնել քեզ՝ ե՞րբ դու ստացար այդ կապույտ մարլինը, երբ այն հայտնվի՞, թե՞ երբ մենք աղոթեցինք:

- Գա՛րի, դա պարզ է, - վստահաբար պատասխանեց Դոնը: - Ես ստացա այն, երբ աղոթեցի:

Ես ոգեշնչվեցի և վստահություն առա՝ լսելով նրա պատասխանը: Այդ պահին էր, որ հասկացա, որ Դոնը լրջորեն է ընդունել իմ հրահանգները և վճռել է որսալ իր մարլինը:

Մի քանի րոպե անց Դոնի կարթաձողը սկսեց ծգվել՝ իջնելով դեպի ջուրը, և ամուսինները բղավեցին.

- Ձո՛ւկ է:

- Չափից շատ մի՛ ոգևորվեք, - զգուշացրեց նավապետը: - Ճիշտ է, որ սա մեծ ձուկ է, բայց սա կապույտ մարլին չէ: Մարլինները լողում են անմիջապես ջրի մակերեսի մոտ և մեծ թռիչքներ են անում ջրի վրա, իսկ այս ձուկը խորքում է:

Րոպեները թռչում էին, մինչ Դոնը շարունակում էր պայքարել այդ ձկան հետ, որին դեռ պետք էր հանել մակերես՝ տեսնելու համար: Որքան էլ Դոնը հոգնել էր, այդ ձուկն ավելի էր հոգնել, և շուտով այն հանձնվեց: Դոնը և ես չզարմացանք, երբ նա վեր հանեց մեծ, գեղեցիկ մարլինի, բայց բոլորն այդ նավի վրա ապշել էին:

Դոնի և նրա ձկան լուսանկարը մինչ օրս իմ գրասենյակում է՝ որպես Թագավորության իրական լինելու վկայություն այլ մարդկանց համար և հիշեցում ինձ համար: Առաջին հայացքից դա ընդամենը ձուկ էր: Բայց Դոնի համար այդ մարլինն այնքա՛ն բան էր նշանակում: Եթե Թագավորությունը գործեց մարլինի դեպքում, այն, անկասկած, կգործի մնացած ամեն

ԻՆՉՊԵՍ ՈՐ ԱՆԿԱՐԵԼԻ Է ՏԵՍՆԵԼ ՔԱՄԻՆ, ԲԱՅՑ ԱՅՆ ՏԵՍԱՆԵԼԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ ԲՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ, ԱՅՆՊԵՍ ԷԼ ԱՍՏԾՈ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆ Է. ԱՅՆ ԻՐԱԿԱՆ Է, ԵՎ ԱՅՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ ԲՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ:

ինչի դեպքում, ինչի կարիքը նա ուներ այս կյանքում: Դոնը դեռ նոր էր սկսում գիտակցել, թե ինչպիսի ազդեցություն Աստծո Թագավորությունը կարող էր ունենալ իր կյանքում:

Երկու հազար տարի առաջ Նիկոդեմոս անունով մի մարդ հարցրեց Հիսուսին Աստծո Թագավորության մասին: Հովհաննես 3-րդ գլխում գրված է Տիրոջ պատասխանը. *«Քամին որտեղ ուզում է՝ փչում է, և նրա ձայնը լսում ես, բայց չգիտես, թե որտեղից է գալիս և ուր է գնում: Այսպես է ամեն Հոգուց ծնվածը»* (խս. 8): Դոնի հետ նավի վրա անցկացրած այդ գեղեցիկ օրը այս խոսքի փայլուն օրինակն է:

Թեև և՛ Դոնը, և՛ ես չէինք տեսնում Աստծո Թագավորությունը այդ օրը, բայց, անկասկած, տեսանք և զգացինք դրա արդյունքը՝ որսալով այդ մեծ մարլինին: Ինչպես որ անկարելի է տեսնել քամին, չնայած որ այն տեսանելի ազդեցություն ունի բնական աշխարհում, այնպես էլ Աստծո Թագավորությունն է. այն իրական է և ազդեցություն ունի բնական աշխարհում: Սովորելով այն օրենքները, որոնցով կառավարվում է Աստծո Թագավորությունը, մենք կատարում ենք փոփոխություններ մեր կյանքում՝ ճիշտ այնպես, ինչպես Դոնն արեց այդ օրը:

Ես ուզում եմ մի հարց տալ: Ինչպե՞ս հայտնվեց այդ մարլինը: Այս հարցը պատասխան ունի: Դուք չեք կարող պարզապես ասել, որ Աստված արեց դա: Ո՛չ, մենք պետք է իմանանք, թե որտեղի՞ց գիտեինք, որ այն հայտնվելու էր: Դուք իրականում պետք է իմանաք սա, քանի որ կարող է գալ մեկ օր, երբ ձեզ պետք կլինի կապույտ մարլին, կապույտ մեքենա կամ պարզապես մթերք: Փաստն այն է, որ այս պատմությունն այնքան էլ ձկնորսության մասին չէ, ինչպես որ իմ որսորդական պատմություններն իրականում եղնիկների մասին չեն: Այս պատմությունը պատկերացում է տալիս մեզ Թագավորության մասին և այն մասին, թե ինչպես է այն գործում: Կար հստակ պատճառ, թե ինչու այդ մարլինը հայտնվեց: Հիսուսը շատ ժամանակ էր տրամադրում՝ սովորեցնելով Իր աշակերտներին այն մասին, թե ինչպես էր գործում Թագավորությունը, և խոսելու հետ մեկտեղ, Նա նույնպես ցուցադրում էր այն:

Ուշադրություն դարձրեք, որ Թագավորությունը չի գործում այնպես, ինչպես այն երկրային տիրույթը, որտեղ մեծացել եք: Դուք իրականում չեք կարող լիովին ընկալել այն ձեր մտքով: Այո, այն գործում է որոշակի օրենքների հիման վրա, պարզապես այդ օրենքներն այնպիսին չեն, որոնց մենք ընտելացել ենք այս երկրում: Բայց մենք կարող ենք սովորել այդ օրենքները: Հիսուսը շատ ժամանակ էր տրամադրում՝ ցուցադրելով և սովորեցնելով Թագավորության օրենքները, ուր էլ որ գնում էր: Իմ ամենասիրելի պատմություններից մեկը, որում Հիսուսը ցուցադրում է Թագավորությունը, Մարկոս 6-րդ գլխում է: Դա հայտնի պատմությունն է այն մասին, որ Հիսուսը կերակրեց 5.000 տղամարդու՝ հինգ հացով և երկու ձկով: Թեև, մեծանալով եկեղեցում, ես լսել էի այս պատմությունը միլիոնավոր անգամներ, բայց ոչ ոք երբևէ չէր բացատրել ինձ, թե ինչպես Հիսուսն արեց դա:

«Եվ երբ որ արդեն շատ ժամանակ էր անցել, Նրա աշակերտները մոտ եկան և ասացին, թե. «Այս տեղը անապատ է, և ժամանակն էլ արդեն ուշ: Արձակի՛ր դրանց, որ չորս կողմի շեները և գյուղերը գնան, իրենց համար հաց առնեն, որովհետև այստեղ ուտելու բան չունեն»:

Նա էլ պատասխանեց և նրանց ասաց. «Դո՛ւք տվեք դրանց ուտել»: Նրանք էլ ասացին. «Գնա՞նք երկու հարյուր դահեկանի հաց առնենք և դրանց տանք, որ ուտեն»: Նա էլ նրանց ասաց. «Քանի՞ հաց ունեք: Գնացե՛ք և տեսե՛ք»: Երբ որ գիտացին, Նրան ասացին. «Հինգ հաց և երկու ձուկ»:

Եվ հրամայեց նրանց, որ ամենը գունդ-գունդ կանաչ խոտի վրա նստեն: Եվ դաս-դաս նստեցին՝ հարյուր-հարյուր և հիսուն-հիսուն: Եվ այն հինգ հացը և երկու ձուկն առած դեպի երկինքը նայեց, օրհնեց, կտրեց հացերը և Իր աշակերտներին տվեց, որ գցեն նրանց առաջը, և այն երկու ձուկը բաժանեց ամենին: Եվ ամենը կերան և կշտացան

և փշրանքներից տասներկու կողով լիքը վեր առան, և ձկներից էլ: Եվ հացը ուտողները հինգ հազարի չափ մարդիկ էին»:

– Մարկոս 6.35-44

«Հիսո՛ւս, մենք խնդիր ունենք: Մարդիկ քաղցած են, և եթե հիմա նրանք չգնան, շատ ուշ տուն կհասնեն, և մենք անհանգստանում ենք»: Ի՞նչ ասաց Հիսուսը նրանց: «Աստվա՛ծ իմ, դուք ճիշտ եք: Ես չէի հետևում ժամանակին. եկեք ավարտենք այս հավաքույթը հենց հիմա»: Ո՛չ, Նա պարզապես ասաց. «Դո՛ւք կերակրեք նրանց»: Ի՞նչ: Աստվածաշունչն ասում է, որ այնտեղ 5.000 տղամարդ կար, իսկ կանանց և երեխաներին հաշվելու դեպքում հեշտորեն կարող էր 20.000 մարդ լինել: Այդքան մարդկանց կերակրելը, նույնիսկ եթե դուք միջոցներ ունենայիք, շատ դժվարին առաջադրանք կլիներ, եթե ոչ՝ անհնարին: Համոզված եմ, որ աշակերտների հավատը չէր գալիս, երբ նրանք լսեցին Հիսուսի խոսքերը: Նրանց արձագանքը Նրա լուծմանը պարզորեն ցույց է տալիս այս երկրային իրականության սովորական մտածելակերպը. «Բայց Հիսո՛ւս, դրա համար ութ ամսվա աշխատավարձ է հարկավոր: Մի՞թե մենք պետք է գնանք և այդքան գումար ծախսենք կերակուրի համար»: Առաջինը՝ ուշադրություն դարձրեք, որ նրանք անմիջապես փոխարկեցին այդ կարիքն այս երկրային անեծքի համակարգի տնտեսությամբ, տանջալի աշխատանքով և քրտինքով, իսկ ավելի ճիշտ՝ դրա ութ ամսվա համարժեքով:

Մեկ անգամ, երբ աղոթում էի, Աստված ասաց, որ ես մարմնավոր մտածելակերպ ունեմ: Ես շփոթվեցի. ի՞նչ էր դա նշանակում: Միգուցե ես խնդիր ունեի կրքի՞ հետ: Ո՛չ, Նա նկատի ուներ, որ իմ միտքը սահմանափակ էր, քանի որ ես զտում էի իմ ապագան այս երկրային անեծքի մտածելակերպով՝ այն բանով, թե որքան արագ կարող էի վազել: Բոլորս ենք այդպես վարվում: Եթե մեզ նոր տուն է հարկավոր, մենք հետաքրքրվում ենք, թե որքան այն արժե, և անմիջապես հաշվարկում ենք՝ արդյո՞ք կարող ենք թույլ տալ այն մեզ: Ինչի՞ հիման վրա ենք մենք կատարում մեր հաշվարկը: Այս երկրային

անեծքի պատկերացման վրա. մենք մտածում ենք, թե որքան արագ կարող ենք վազել: Ենթադրենք, ես աշխատում եմ ժամում 15 դոլար, և շաբաթական 40 ժամը հավասար է... պարզվում է՝ ես երբեք չեմ կարողանա թույլ տալ ինձ գնել այդ տունը: Այնպես որ, դուք մոռանում եք այդ միտքը՝ համարելով այն անհնարին: Եթե մենք զտենք յուրաքանչյուր գաղափար այն բանով, թե որքան արագ կարող ենք վազել, մենք ԵՐԲԵՔ մուտք չենք գործի Թագավորության կյանքի մեջ, քանի որ Աստված սահմանափակված չէ այս երկրային համակարգով: Աստված ասում էր ինձ, որ եթե ես ցանկանում էի ներգրավվել Թագավորությունը, պետք է ընդունեի Թագավորության մտածելակերպը՝ այն, որ ամեն ինչ հնարավոր է:

Ահա թե ինչու աշակերտներն ասացին. «Դրա համար անհրաժեշտ է ութ ամսվա աշխատավարձ»: Ըստ էության, նրանք նկատի ունեին, որ այդքան մարդկանց կերակրելն անհնարին սխրանք էր:

Թույլ տվեք նկարագրել, թե ինչպիսին թվացին աշակերտներին Հիսուսի՝ «Դուք տվեք նրանց ուտել» խոսքերը: Պատկերացրեք, որ ես ձեր հովիվն եմ, և դուք չեք կարողացել կատարել ձեր հիփոթեքային վճարումները ֆինանսական խնդիրների պատճառով: Դուք երեք ամսվա ժամկետանց մարում ունեք և շուտով կորցնելու եք ձեր տունը: Գալիս եք ինձ մոտ և հարցնում՝ արդյո՞ք եկեղեցին կարող է օգնել, որպեսզի կատարեք ձեր վճարումները: Ես շատ հանգիստ ձայնով պատասխանում եմ ձեզ. «Ես ավելի լավ միտք ունեմ: Ինչո՞ւ լիովին չմարեք այդ գումարը, որպեսզի այլևս ստիպված չլինեք վճարումներ կատարել»: Ձեր հայացքն արտահայտում է հետևյալը. «Նա չհասկացավ, թե ինչ նկատի ունեմ»: Դուք ասում եք. «Ո՛չ, հովի՛վ, կարծում եմ՝ դուք չհասկացաք ինձ: Մենք ընդհանրապես փող չունենք. ահա թե ինչու եմ եկել ձեզ մոտ: Մեզ պարզապես հարկավոր է, որ եկեղեցին օգնի, որպեսզի կատարենք մեր ժամկետանց վճարումները»: Կրկին, ես հանգիստ նայում եմ ձեզ և պատասխանում. «Ո՛չ, ես հասկացա ձեզ: Դուք պարզապես պետք է մարեք ձեր հիփոթեքի ամբողջ գումարը և այլևս չեք ունենա վճարումներ»: Դուք կմտածեք, որ ես ցնորվել եմ՝ նման ծանրաբեռնված խաղասարքի, որը շարունակ նույն ազդանշանն է տալիս:

Հավանաբար, աշակերտները հենց այդպես էին զգում իրենց: «Հիսո՛ւս, Դու իրականում լուրջ չես խոսում՝ պատվիրելով կերակրել այս 20.000 մարդուն, այնպես չէ՞: Դա անհնա՛ր է: Մենք չունենք միջոցներ դրա համար: Եվ եթե ծրագիր կազմեինք, որպեսզի գնայինք և այնքան աշխատեինք, մինչև որ վաստակեինք այդ գումարը, սայլեր գտնեինք և հանձնաժողովներ կազմեինք՝ հաց գնելու համար, մինչև որ վերադառնայինք այդ հացով, բոլոր այս մարդիկ արդեն մահացած կլինեին: Նույնիսկ եթե ունենայինք այդ գումարը, ժամանակը չէր բավականացնի՝ ամեն ինչ կազմակերպելու համար»: Մենք հենց այսպես ենք արձագանքում անհնարին թվացող իրավիճակներին բնական աշխարհում, երբ չենք տեսնում ոչ մի ճանապարհ, որով դրանք կարող են լուծվել: Երբ մենք չենք ունենում մատակարարում, մեր տեսիլքը մահանում է:

Հիսուսն անպատասխան չթողեց աշակերտներին այդ իրավիճակում, և Նա չէր պատվիրի նրանց կերակրել այդ մարդկանց, եթե դա անհնարին լիներ: Նա պատրաստվում էր ցույց տալ նրանց բոլորովին այլ համակարգ՝ Թագավորությունը՝ գործի մեջ: Քանի որ աշակերտները շփոթվել էին, Հիսուսն Ինքը զբաղվեց այդ հարցով:

«Ի՞նչ ունեք: Գնացե՛ք և տեսե՛ք», - ասաց Հիսուսը: Աշակերտները վերադարձան և ասացին. «Մենք գտել ենք հինգ հաց և երկու ձուկ»: Հենց որ գտնվեցին հինգ հացը և երկու ձուկը, Հիսուսը խնդրեց աշակերտներին բերել դրանք Իր մոտ: Նա վերցրեց հացն ու ձուկը, օրհնեց և վերադարձրեց աշակերտներին: Բնականորեն ոչինչ չփոխվեց, բայց հոգևորապես տեղի ունեցավ մի շատ կարևոր բան՝ այն, ինչը Թագավորությունը հասկանալու բանալիներից մեկն է: Հիսուսը կարգադրեց աշակերտներին բաժանել հացը և ձուկը, և նրանք երկյուղածությամբ հետևում էին, թե ինչպես էր այդ կերակուրը բազմապատկվում իրենց աչքերի առջև և կերակրում բոլոր 20.000 մարդկանց: Ի՞նչ տեղի ունեցավ: Ինչպե՞ս դա տեղի ունեցավ:

Սա պարզելու համար պետք է որոշ դիտարկումներ անենք այս պատմության մեջ: «Օրհնել» բառը բառացիորեն նշանակում է առանձնացնել կամ ընծայել: Այնպես որ, կարելի է ասել, որ երբ Հիսուսն օրհնություն խոսեց այդ կերակուրի վրա, այդ հացն ու ձուկն

առանձնացվեցին՝ անցում կատարելով մի թագավորությունից մյուսը: Երկրային տիրույթում հնարավոր չէ կերակրել 20.000 մարդու հինգ հացով և երկու ձկով: Եվ նրանց կերակրելը դեռ ամենը չէր: Երբ մարդիկ ավարտեցին, աշակերտները հավաքեցին 12 զամբյուղ՝ կերակուրի մնացած կտորներով: Ինչպե՞ս ստացվեց, որ հինգ հացը և երկու ձուկը, որոնք բավական չէին, կշտացրին 20.000 մարդու, իսկ վերջում մնաց ավելի շատ, քան սկզբում էր: Այսպիսին է Թագավորությունը. այն ավելին է, քան բավական է:

ԱՍՏՎԱԾ ՍՈՎՈՐԵՑՐԵՑ ԻՆՁ ՑԱՆԵԼ ԱՍՏԾՈ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՄԻ ՓՈՔՐ ԱՅՆ ԲԱՆԻՑ, ԻՆՉԻ ԿԱՐԻՔԸ ԵՍ ՈՒՆԵՄ:

Որպես հոգևոր գիտնական, ուշադրությամբ ուսումնասիրելով այս պատմությունը, ես տեսա նույն բանաձևը, որն Աստված տվել էր ինձ եղնիկների վերաբերյալ: Եղնիկների որսի միջոցով Աստված սովորեցրեց ինձ ցանել Աստծո Թագավորության մեջ մի փոքր այն բանից, ինչի կարիքը ես ունեմ: Ահա թե ինչ արեց այս պատմության տղան իր մոտ եղած հացով և ձկով: Նա հանձնեց դրանք Աստծո Թագավորության իշխանությանը, և դրանք բազմապատկվեցին. 20.000 մարդ կերակրվեց, և դեռ 12 կողով ավելացավ: Ուշադրություն դարձրեք, որ հացը բազմապատկվեց՝ որպես հաց, իսկ ձուկը՝ որպես ձուկ: Ահա թե ինչպես է գործում այս սկզբունքը: Ես կարող եմ ձուկ ցանել Աստծո Թագավորության մեջ, և այն կբազմապատկվի՝ ձուկ դառնալով: Բայց ի՞նչ, եթե ինձ ձուկ է պետք, իսկ ես չունեմ ձուկ՝ ցանելու համար: Պատասխանը փողն է: Հիշեք՝ փողը փոխանակման համակարգ է: Մենք «անվանում» ենք փողն ամեն օր: Մենք անվանում ենք այն կաթ, տուն, հագուստ, հաց և ցանկացած այլ բան, ինչն անհրաժեշտ է մեզ ամեն օր: Փողը դառնում է այն, ինչի կարիքը մենք ունենք: Նույնը տեղի է ունենում, երբ մենք ցանում ենք. մենք կարող ենք անվանել մեր փողը: Փոխարենը խանութ գնանք և ձուկ առնենք՝ այն ցանելու համար, մենք կարող ենք պարզապես անվանել մեր փողը: Դուք կարող եք այդպես վարվել ձեր նվիրատվությունների

հետ, բայց ոչ՝ տասանորդի, քանի որ Աստված արդեն իսկ անվանել է այն: Մենք կարող ենք տեսնել նույն բազմապատկման կանոնը Ղուկաս 5-րդ գլխում:

> *«Եվ եղավ, երբ որ ժողովուրդը Նրա վրա կիտվում էր՝ Աստծո Խոսքը լսելու, և Ինքը Գեննեսարեթի ծովակի մոտ կանգնած էր, և երկու նավ տեսավ՝ ծովակի մոտ կանգնած, ձկնորսներն էլ նրանցից դուրս էին եկած և ուռկանները լվանում էին: Եվ նա մտավ այն նավերից մեկի մեջ, որ Սիմոնինն էր, և խնդրեց նրան նավը ցամաքից մի քիչ ներս տանել, նստեց և նավից սովորեցնում էր ժողովուրդներին: Եվ երբ որ խոսելուց դադարեց, Սիմոնին ասաց. «Նավը դեպի խորը տար, և ձեր ուռկանները գցեք որսի»:*
>
> *Եվ Սիմոնը պատասխանեց ու ասաց Նրան. «Վարդապե՛տ, ամբողջ գիշեր աշխատեցինք և ոչինչ չբռնեցինք, բայց Քո խոսքի համար ուռկանը կգցեմ»: Եվ երբ որ այս արին, ձկների մի մեծ բազմություն ներս փակեցին, և նրանց ուռկանը պատռվում էր: Եվ նշան էին անում մյուս նավի մեջ լինող ընկերներին, որ գան իրենց օգնեն: Եվ նրանք եկան և երկու նավը լցրին, մինչև որ թաղվում (կամ՝ «խորտակվում») էին»:*
>
> – Ղուկաս 5.1-7

Որպես հոգևոր գիտնական՝ եկեք ուսումնասիրենք այս պատմությունը: Ինչպե՞ս հայտնվեց այդ ձուկը: Դուք հասկանո՞ւմ եք դա: Հիսուսը քայլում էր ափով և գտավ մի նավ, որը ցանկացավ օգտագործել՝ բազմությանը քարոզելու համար: Նա հարցրեց Պետրոսին՝ նավի տիրոջը՝ արդյո՞ք կարող էր օգտվել դրանից, և Պետրոսն ասաց. «Իհա՛րկե»: Չէ՞ որ այդ պահին նավը պետք չէր նրանց. նրանք ձուկ էին որսացել ամբողջ գիշեր, բայց ոչինչ չէին բռնել: Այն բանից հետո, երբ Հիսուսն օգտվեց նավից, պատվիրեց Պետրոսին վերադառնալ խորքը և ձուկ որսալ: Համոզված եմ, որ Նրա խնդրանքը հանկարծակիի բերեց Պետրոսին, քանի որ նա պատաս-

խանեց. «Հիսո՛ւս, մենք ձկնորսության էինք ամբողջ գիշեր և ոչինչ չբռնեցինք»: Պետրոսն արհեստավարժ ձկնորս էր և գիտեր, թե ինչպես ձուկ որսալ: Ըստ իր փորձառության, այնտեղ պարզապես ձուկ չկար: Բնական տեսանկյունից, այնտեղ վերադառնալը պարզապես անիմաստ էր: Նրանք արդեն հավաքել էին իրենց սարքավորանքը և մաքրել էին ցանցերը:

Ես չեմ հավատում, որ Պետրոսը կաներ դա, եթե քիչ առաջ լսած չլիներ Հիսուսի՝ հավանաբար գրեթե մեկ ժամ տևող քարոզը, որից նա այնպես էր ազդվել, ինչպես երբևէ անցյալում: Այնպես որ, նա ասաց. «Քանի որ Դու ես ասում դա, ես կգցեմ իմ ցանցերը»: Պետրոսը կրկին ծով դուրս եկավ և այնքա՛ն ձուկ բռնեց, որ նրա ցանցերը գրեթե պատռվում էին, իսկ նավը գրեթե խորտակվում էր: Աստվածաշունչը գրի է առնում Պետրոսի արձագանքը. նա ապշե՛լ էր:

Ինչպե՞ս դա տեղի ունեցավ: Դուք ունե՞ք տարբերակներ: Կարո՞ղ ենք արդյոք իմանալ դա: Կարճ ամփոփելով՝ այստեղ գործեց համաձայնության զորության սկզբունքը, որը մենք դիտարկեցինք ավելի վաղ: Երբ Պետրոսը թույլ տվեց Հիսուսին օգտագործել իր ձկնորսական նավը, նրա նավը և գործը անցում կատարեցին այլ թագավորության մեջ: Նրա գործը դուրս եկավ երկրային անեծքի համակարգի իրավասությունից և հայտնվեց Աստծո Թագավորության իրավասության ներքո: Եվ քանի որ այն Աստծո Թագավորության իրավասության ներքո էր, Աստված օրինապես կարող էր գիտության խոսք փոխանցել Հիսուսին և հայտնել Նրան ձկան գտնվելու ճշգրիտ վայրը՝ «դեպի խորը»:

Վերլուծենք այս պատմությունը: Հիսուսը փոխ է վերցնում ձկնորսական նավը Պետրոսից, ով քիչ առաջ վերադարձել էր ամբողջ գիշեր տևող անարդյունք ձկնորսությունից հետո: Այս փոխանակման մեջ նրա նավը հայտնվեց Աստծո Թագավորության իրավասության ներքո: Հիսուսը գիտելիք ստացավ ձկան գտնվելու ճշգրիտ վայրի մասին՝ Սուրբ Հոգու միջոցով: Նա ուղղորդեց Պետրոսի նավն անմիջապես դեպի այդ վայրը: Եվ Պետրոսի նավը գրեթե խորտակվեց ձկների պատճառով: Նրա գործընկերների նավը նույնպես գրեթե խորտակվեց՝ առատ որսի պատճառով: Այսպիսով, ինչպե՞ս այդ

ձուկը բռնվեց: Պարզ ասած, երկնքից եկող անմիջական հրահանգի միջոցով: Համաձայնեք, որ յուրաքանչյուրը կարող է ձուկ որսալ, եթե իմանա, թե որտեղ է այն: Մտածե՛ք այս պնդման մասին: Աստված գիտի ամեն ինչ: Նա կարող է օգնել ձեզ և ասել, թե ինչ անեք:

Երբ Դրենդան և ես, սնանկ լինելով, սկսեցինք սովորել Թագավորության մասին, մի գիշեր Աստված երազ տվեց ինձ՝ ցույց տալով մի գործ, որն իրականում չգիտեի՝ ինչպես սկսեի: Արդեն 28 տարի է անցել, իսկ այդ գործը դեռ կա, և այն տարեկան հարյուր հազարավոր դոլարների շահույթ է բերում մեզ: Այդ 28 տարվա ընթացքում այն թույլ է տվել մեզ ցանել միլիոններ ծառայության և մարդկանց օգնելու մեջ: Ինչպե՞ս. ես լսեցի երկնքից, և նույնը կարող է կատարվել ձեզ հետ: Թույլ տվեք մի օրինակ բերել:

Մի քանի տարի առաջ ես հնգօրյա համաժողով էի անցկացնում Աստծո Թագավորության մասին: Երկրորդ երեկոյից հետո Քրիս անունով մի տղամարդ մոտեցավ ինձ և խնդրեց աղոթել իր համար: Ես հարցրի, թե ինչի համար է ցանկանում, որ աղոթեմ: Եվ նա պատմեց ինձ իր պատմությունը: Նա գործ էր ձեռնարկել մի մարդու հետ, որը վատնել էր իրենց գումարները և սնանկության էր հասցրել գործը: Նա արդեն չորս անգամ ամուսնացել էր և ամուսնական խնդիրներ ուներ և ընդամենը 40 տարեկան էր: Նա պատմեց ինձ, որ այնքա՛ն էր ընկճվել, որ մեկ օր լիցքավորել էր իր ատրճանակը, նստել մեքենան և որոշ ժամանակ վարելուց հետո կանգ առել մի չաշխատող բենզալցակայանի մոտ՝ մտադրվելով ինքնասպանություն գործել:

Գիշերվա ժամը 03:00-ն էր, և մինչ նա նստած էր լիցքավորված ատրճանակով, նրա բջջային հեռախոսը զանգում է: Նա անմիջապես ճանաչում է այդ համարը. իր նախկին գործընկերն էր: Նա ոչ մի դեպքում չէր ուզում զրուցել նրա հետ և չի պատասխանում: Հեռախոսը զանգում էր կրկին ու կրկին: Երբ եկավ 11-րդ զանգը, Քրիսն ի վերջո որոշեց պատասխանել: Նրա նախկին գործընկերոջ առաջին բառերը հետևյալն էին.

- Որտե՞ղ ես, և ի՞նչ ես անում:

Երբ Քրիսը պատասխանեց նրան, նա ասաց.

- Ոչինչ չանե՛ս, ես հենց հիմա գալիս եմ:

Պարզվեց, որ իր նախկին գործընկերը նվիրել էր իր կյանքն Աստծուն և ուզում էր պատմել այդ մասին Քրիսին: Զարմանալի է, որ նա հրատապություն է զգացել ավետարանելու Քրիսին գիշերվա ժամը 03:00-ին, և երբ Քրիսը չի պատասխանել, նա շարունակել է զանգել նրան:

Երբ Քրիսի գործընկերը եկավ, նա առաջնորդեց նրան դեպի Տերը, և Քրիսի կյանքն արմատապես փոխվեց: Ամեն ինչ բարելավվեց: Նա գտավ լավ եկեղեցի, նրա ամուսնությունը վերականգնվեց: Ամեն ինչ բարելավվում էր՝ բացի եկամտից: Քրիսն աշխատանք չուներ և հենց դրա համար էր խնդրում ինձ աղոթել: Ամբողջ այդ համաժողովի ընթացքում ես սովորեցնում էի ճիշտ այն, ինչ պատմում եմ ձեզ այս գրքի մեջ, որ Թագավորությունը կարող է կատարել զարմանալի բաներ, որոնք վեր են մեր կարողությունից:

Մտածելով այն մասին, որ Սուրբ Հոգին կարող է առաջնորդել և օգնել մեզ՝ տալով ցուցումներ և գաղափարներ, հանկարծ Քրիսի մտքում մի գաղափար ծնվեց: Նա չուներ շատ ֆինանսական հնարավորություններ, բայց համեղ շոռաբլիթներ էր պատրաստում: Նա մասնագիտացած էր դիետիկ շոռաբլիթներ պատրաստելու մեջ, և նրա պատրաստածը լավագույնն էր իր բոլոր փորձածներից: Իրականում, Քրիսի բոլոր ընկերները ճանաչում էին նրան որպես ամենահամեղ շոռաբլիթներ պատրաստող: Նա շատ անգամներ էր եղել տեղական առողջ սննդի խանութում և փորձել նրանց թխվածքներից մի քանիսը, բայց դրանցից ոչ մեկը նրան դուր չէր եկել: Քրիսը չուներ շատ հնարավորություններ, բայց նա զգում էր, որ կար մեկ բան, ինչ ինքը կարող էր անել՝ շոռաբլիթներ վաճառելը: Նա համոզված էր, որ եթե տաներ իր պատրաստած շոռաբլիթն իրենց տեղական առողջ սննդի խանութ և առաջարկեր համտեսել, նրանք կցանկանային վաճառել այն: Նա համոզված էր, որ այն կվաճառվեր ավելի լավ, քան նրանց ունեցածը: Եվ հենց այդպես էլ վարվեց: Շոռաբլիթ պատրաստեց և տարավ առողջ սննդի խանութ՝ առանց նախապես

նրանց տեղեկացնելու: Այնպես ստացվեց, որ Քրիսի գնալու ժամանակ այդ առողջ սննդի ամբողջ ցանցի գործադիր տնօրենն այցելել էր այդ մասնաճյուղ: Գործադիր տնօրենը համաձայնել էր համտեսել նրա շոռաբլիթը և պատասխանել նրան:

Այդ երեկո Քրիսը կրկին առաջ եկավ հավաքույթից հետո՝ ինձ հետ խոսելու համար: Նա պատմեց ինձ, թե ինչ էր արել, և խնդրեց կրկին միաբան աղոթել այդ առողջ սննդի խանութների ցանցի հետ պայմանագիր կնքելու համար: Հաջորդ օրը Քրիսը կրկին ներկա էր հավաքույթին և այնքա՜ն ոգևորված էր: Նա ասաց, որ այդ գործադիր տնօրենը ցանկանում է, որ ինքը շոռաբլիթներ պատրաստի ոչ միայն մեկ խանութի համար, այլ նույնպես իրենց ամբողջ խանութների ցանցի համար: Նա նույնպես հարցրել էր, թե ուրիշ ինչ կարող էր պատրաստել: Քրիսը ցնցվա՜ծ էր: Զարմանալի է, բայց այդ գլխավոր տնօրենը եկավ մեր համաժողովին, նվիրեց իր սիրտը Տիրոջը և մկրտվեց Սուրբ Հոգով: Երկու շաբաթ անց ես մի նամակ ստացա այդ մարդուց, որ նա ցանկանում է ցանել Աստծո Թագավորության մեջ: Նա նվիրաբերեց այդ ընկերությունում ունեցած իր բաժնեմասերի տասը տոկոսը մեր «Հավատքի կյանք՝ հիմա» ծառայությանը: Անհավատալի՜ է: Աստված կարող է մի գաղափար վերցնել և կարևոր մի բան անել ոչնչից:

ԳԼՈՒԽ 10

ՎԵՐՑՐՈՒ՝ ԱՌԱՆՑ ՔՐՏՆԵԼՈՒ

Դուք երբևէ տեսե՞լ եք ձիուն ամռանը՝ երկար վազքից հետո: Նրա մարմինն ամբողջովին պատված է ճերմակ փրփրոտ քրտինքով: Կարելի է տեսնել, որ նա ծանր աշխատանք է կատարել: Ինձ մշտապես հարցնում են. «Գա՛րի, մի՞թե դուք նկատի ունեք, որ ես չպետք է աշխատեմ»: Ո՛չ, ես չասացի դա, և ո՛չ էլ Աստծո Խոսքն է այդպես ասում: Բայց կա մեծ տարբերություն, թե ինչպես եք դուք աշխատում: Որպես օրինակ, դիտարկենք պատմությունը Պետրոսի և նրա գործընկերների մասին, որոնք երկու նավ ձուկ բռնեցին՝ այնքան շատ, որ նավերը գրեթե խորտակվում էին: Նրանք աշխատել էին ամբողջ գիշեր՝ փորձելով ձուկ որսալ, բայց ապարդյուն: Այնուհետև եկավ Հիսուսը և գիտության խոսքի միջոցով ցույց տվեց ձկան տեղը: Այդ ժամանակ նրանք նույնպես աշխատում էին, բայց այդ աշխատանքը լիովին այլ բնույթի էր: Իհարկե, նրանք ջանք էին գործադրում՝ հանելով այդ ձկներին: Բայց արդյո՞ք նրանք ձուկ էին որսում՝ դրա ընդունված իմաստով: Չէ՞ որ նրանք ձուկ չէին որոնում:

Մենք կարող ենք շատ բաներ որոնել: Օրինակ՝ կինը կարող է հաճոյախոսություններ որոնել: Ինչ-որ մեկը կարող է ձեռքը տանել գրպանը՝ բանալիներ որոնելով: Ձկնորսները ձուկ էին որոնում՝ որսալու համար: Այդ դեպքում, արդյո՞ք Պետրոսը ձկնորսություն էր անում՝ դրա ընդունված իմաստով: Ես պատմել եմ ձեզ, որ երբ որսի եմ գնում, ես եղնիկ եմ գտնում մոտավորապես 40 րոպեում: Արդյո՞ք դա որս անել է: Այլ կերպ ասած, եթե գիտեք, թե որտեղ է ձուկը, մի՞-

թե դուք իրականում ձկնորսություն եք անում: Եթե ես վստահ եմ, որ եղնիկ կամ եղջերու եմ որսալու, մի՞թե դա որսորդություն է: Ես ասում եմ այս ամենը, միայն որպեսզի դուք հասկանաք տարբերությունը: Այո, ես աշխատում եմ, բայց չեմ աշխատում ամբողջ գիշեր՝ ոչինչ չբռնելով: Ունենալով անհրաժեշտ ամեն ինչ կյանքում, ես կարող եմ աշխատել Թագավորության մեջ՝ կատարելով իմ Հոր գործը և իրականացնելով իմ նպատակը:

Ես կանվանեի դա «վերցնել»

Մատթեոս 17.26բ-ում, երբ Պետրոսը եկավ Հիսուսի մոտ՝ հարցնելով Նրան, թե ինչպես վճարի իրենց հարկերը, Հիսուսն ասաց.

> *«Գնա՛ ծովը և կարթը գցի՛ր և առաջին դուրս եկող ձուկն ա՛ռ, բերանը բացի՛ր և մի սատեր կգտնես. ա՛ռ այն, տո՛ւր նրանց՝ Իմ և քո տեղը»:*

Ուշադրություն դարձրեք, որ Հիսուսը չասաց. «Լա՛վ, Պետրոս, մենք պետք է հարկեր վճարենք: Ես կասեմ, թե ինչ անես: Գնա՛ քաղաք, մնա՛ այնտեղ մոտավորապես երեք ամիս, աշխատանք գտիր, փող վաստակիր, իսկ հետո, երբ գումար վաստակես և վճարես մեր հարկերը, կրկին ե՛կ և միացի՛ր մեր թիմին»: Ո՛չ, Հիսուսը նման բան չասաց: Ինչո՞ւ: Քանի որ, եթե Պետրոսը վերադառնար այս երկրային անեծքի համակարգի մտածելակերպին, նա ստիպված կլիներ թողնել իր առաջադրանքը և վազել փողի ետևից: Փոխարենը, Հիսուսը ցույց է տալիս մեզ, թե ինչպես է գործում Թագավորությունը, և ինչպես մենք պետք է վարվենք, քանի դեռ ապրում ենք այս աշխարհում: Պետրոսի պատասխանը նաև ձեր պատասխանն է: Հիսուսը պարզապես ցույց տվեց Պետրոսին, թե որտեղ էր մատակարարումը, ինչ միջոց էր անհրաժեշտ՝ այն վերցնելու համար, և ինչ նա պետք է փնտրեր: Պետրոսը միայն պետք է գնար և վերցներ դա:

Հետևելով Հիսուսին և Նրա աշակերտներին՝ մենք կտեսնենք, որ սովորաբար նրանք ապշած ու ցնցված էին, երբ տեսնում էին Թագավորության դրսևորումները: Աստվածաշունչն ասում է, որ երբ Հի-

սուսը չորացրեց թզենին Իր խոսքով Մարկոս 11-րդ գլխում, Պետրոսը զարմացավ: Երբ Ղազարոսը դուրս եկավ գերեզմանից չորս օր մահացած լինելուց հետո, աշակերտները զարմացան: Երբ Պետրոսը, Հակոբոսը և Հովհաննեսը շատ ձուկ որսացին, նրանք զարմացան: Դրենդան և ես կրկին ու կրկին ասել ենք զարմանքից բաց բերաններով. «Դու տեսա՞ր, թե ինչ կատարվեց»՝ տարիներ շարունակ նորանոր բաներ սովորելով այն մասին, թե ինչպես է գործում Թագավորությունը: Սուրբ Հոգու օգնությամբ մենք վերցնում ենք, եկեք կարդանք Մատթեոս 6-րդ գլուխը: Իմ Աստվածաշնչում այս հատվածն ունի «Հոգս մի՛ արեք» ենթավերնագիրը: Ինձ դա դուր է գալիս:

«Ոչ ոք չի կարող երկու տերերի ծառայել, որովհետև կա՛մ մեկին կատի և մյուսին կսիրի, կա՛մ մեկին կմեծարի և մյուսին կարհամարհի: Չե՛ք կարող Աստծուն ծառայել և մամոնային:

Սրա համար ասում եմ ձեզ՝ հոգս մի՛ արեք ձեր կյանքի համար, թե ինչ պիտի ուտեք, և ինչ պիտի խմեք, և ո՛չ ձեր մարմնի համար, թե ինչ պիտի հագնեք: Չէ՞ որ կյանքը ավելի է կերակուրից, և մարմինը՝ հագուստից: Մտի՛կ արեք երկնքի թռչուններին, որ չեն սերմում, և ո՛չ էլ հնձում, և ո՛չ ամբարների մեջ ժողովում, և ձեր երկնավոր Հայրը կերակրում է նրանց: Չէ՞ որ դուք նրանցից ավելի լավն եք: Հիմա ձեզնից ո՞վ կարող է հոգս անելով իր հասակի վրա մեկ կանգուն ավելացնել:

Եվ հագուստի համար ի՞նչ եք հոգս անում: Մտի՛կ արեք դաշտի շուշաններին, թե ինչպես են մեծանում: Ո՛չ ջանք են անում, և ո՛չ մանում: Բայց ասում եմ ձեզ, թե Սողոմոնն էլ իր ամբողջ փառքի մեջ նրանցից մեկի նման չհագավ: Իսկ թե որ դաշտի խոտը, որ այսօր կա և վաղը փուռն է գցվում, Աստված այնպես է հագցնում, չէ՞ որ շատ ավելի ձեզ, թերահավատնե՛ր:

Ուրեմն հոգս մի՛ արեք՝ ասելով, թե ի՛նչ պիտի ուտենք,

կամ ի՛նչ պիտի խմենք, կամ ի՛նչ պիտի հագնենք: Որովհետև այդ ամենը հեթանոսներն են խնդրում, որովհետև ձեր երկնավոր Հայրը գիտի, որ այդ ամենը պետք է ձեզ: Սակայն առաջ Աստծո արքայությունը և Նրա արդարությունը խնդրեք, և այդ ամենը կտրվի ձեզ: Ուրեմն վաղվա համար հոգս մի՛ արեք, որովհետև վաղվա օրն իր համար հոգս կանի: Օրվա համար բավական է իր նեղությունը»:

– Մատթեոս 6.24-34

Հիսուսն ասում է, որ դուք չեք կարող ծառայել երկու տերերի: Միգուցե մտածեք, որ կարող եք, բայց չեք կարող: Դուք կսիրեք մեկին, և միայն մեկին: Ես կասեմ ձեզ, թե որին: Նրան, որին դուք վստահում եք՝ ձեր կարիքները լրացնելու համար: Երբ Տերը ասաց ինձ մեր վարձակալած հին գյուղական տանը, որ ես երբեք ժամանակ չէի հատկացրել՝ սովորելու համար, թե ինչպես էր գործում Իր Թագավորությունը, Նա նկատի ուներ, որ Նա իրականում իմ տերը չէր: Նա այն անձնավորությունը չէր, որի հանդեպ ես լիարժեք վստահություն ունեի, և որին ես ծառայում ու վստահում էի: Իհարկե, ես եկեղեցի էի հաճախում, ես առատաձեռն էի, ես սիրում էի Աստծուն և գիտեի, որ Երկինք էի գնում: Բայց երբեք ժամանակ չէի հատկացրել, որպեսզի սովորեի Աստծո ֆինանսական համակարգի մասին և իմանայի, թե ինչպես է գործում Նրա Թագավորությունը:

«Որովհետև որտեղ որ ձեր գանձն է, այնտեղ էլ ձեր սրտերը կլինեն»:

– Ղուկաս 12.34

Դանդաղորեն կարդացե՛ք այս խոսքը. «Որտեղ որ ձեր գանձն է, այնտեղ էլ ձեր սրտերը կլինեն»: Շատերը սիրում են շրջել այս խոսքը և ասել. «Որտեղ ձեր սիրտն է, այնտեղ էլ ձեր գանձն է»: Բայց դա ճիշտ չէ, քանի որ այս խոսքն այլ բան է ասում: Մարդիկ մտածում են, որ դա նշանակում է, որ նրանք կարող են սիրել Աստծուն կիրակի առավոտյան, և այնտեղ կլինի իրենց գանձը: Դա ՍԽԱ՛Լ է: Ձեր

գանձն այն համակարգի մեջ է, որին դուք վստահում եք՝ ձեր կարիքները լրացնելու համար:

Հիսուսն ասում է, որ մենք ամեն ինչ հակառակ ենք անում:

Աստված ցանկանում է, որ առաջինը մեր կյանքում լինի Ինքը, ոչ թե փողը: Եթե փողն է մեր գանձը, այն կլինի առաջինը, և այն կպահանջի մեր ժամանակը, առաջնահերթությունները և սերը: Ահա թե ինչու Պետրոսը չպետք է թողներ իր առաջադրանքը և գնար գումար վաստակելու՝ հարկ վճարելու համար: Ահա թե ինչու է Աստված ցանկանում սովորեցնել մեզ վերցնել, ոչ թե քրտնել: Հիսուսը ցանկանում է սովորեցնել մեզ Թագավորության ճանապարհները՝ այն, թե ինչպես վստահել Աստծուն մեր մատակարարման համար, որպեսզի մեր սրտերն ազատ լինեն, և մենք սիրենք Աստծուն մեր ամբողջ սրտով: Հիսուսն ասաց. *«Չէ՞ որ կյանքը ավելի է կերակուրից, և մարմինը՝ հագուստից»:* Նա նկատի ուներ, որ կյանքի նպատակն իրեր ունենալը չէ: Կյանքի նպատակն է, որպեսզի ունեցվածքը ծառայի ձեզ և ձեր առաջադրանքին այս երկրի վրա:

Սակայն ի՞նչ ենք մենք տեսնում: Մարդկանց մեծ մասը անդադար վազքի մեջ է՝ ծառայելով ունեցվածքին: Մարդիկ վազքի մեջ են, որպեսզի վճարեն իրենց հիփոթեքային վարկը, մեքենայի վարկը և փակեն հաշիվները: Հիսուսն ասում է, որ սա չէ կյանքը: Մի՛ հարձակվեք ինձ վրա՝ ասելով. «Նշանակում է՝ Հիսուսն ասում է, որ ունեցվածքը վատ բան է»: Ո՛չ, Նա նման բան չի ասում: Նա ասաց 33-րդ խոսքում, որ եթե դուք, նախ, փնտրեք Աստծո Թագավորությունը և Նրա արդարությունը, այդ ամենը կավելացվի ձեզ: Խնդիրը ոչ թե ունեցվածքն է, այլ սիրտը: Եթե Աստված չուզեր, որ մենք որևէ բան ունենայինք, Հիսուսն այդպես էլ կասեր: Փոխարենը Նա ասում է, որ այն ամենը, ինչի ետևից վազում է այս աշխարհը, կավելացվի մեզ, եթե ապրենք Աստծո ուզած կերպով:

ԵԹԵ ՓՈՂՆ Է ՄԵՐ ԳԱՆՁԸ, ԱՅՆ ԿԼԻՆԻ ԱՌԱՋԻՆԸ, ԵՎ ԱՅՆ ԿՊԱՀԱՆՋԻ ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿԸ, ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՍԵՐԸ:

Այլ կերպ ասած, կյանքի նպատակն ունեցվածքին ծառայելը չէ, սակայն, դժբախտաբար, մարդկանց մեծ մասը հենց այդպես է վարվում: Նրանք չունեն ընտրություն. նրանք ստրուկ են: Անկարելի է ծառայել երկու տերերի, և ունեցվածքին ծառայելը կյանք չէ: Հիսուսը շարունակում է՝ բացատրելով, որ կա մեկ այլ համակարգ՝ ֆինանսական խաղաղության և մատակարարման վայր, որը տալիս է ձեզ ազատություն՝ ապրելու համար: Այն կոչվում է Աստծո Թագավորություն:

Մատթեոս 6-րդ գլխում Իր ուսուցման մեջ Հիսուսը երկու օրինակ է բերում այն մասին, թե ինչպիսին է Թագավորությունը: Նա ասում է. *«Մտի՛կ արեք երկնքի թռչուններին, որ չեն սերմում, և ո՛չ էլ հնձում, և ո՛չ ամբարների մեջ ժողովում, և ձեր երկնավոր Հայրը կերակրում է նրանց»* (խս. 26):

Թռչունները որդեր չեն բուծում:

Նրանք իրենց վրա չեն վերցնում առօրյա կարիքների հոգսը: Ո՛չ, Հայրն է կերակրում նրանց: Նրանք պարզապես պետք է վերցնեն այն, ինչի կարիքն ունեն ամեն օր: Դուք հասկանո՞ւմ եք: Նրանք չեն քրտնում՝ տանջալի աշխատանք կատարելով, որ պահպանեն իրենց կյանքը. նրանք վերցնո՛ւմ են:

Ծաղիկները ջանք չեն անում և չեն մանում:

> *«Եվ հագուստի համար ի՞նչ եք հոգս անում: Մտի՛կ արեք դաշտի շուշաններին, թե ինչպես են մեծանում: Ո՛չ ջանք են անում, և ո՛չ մանում: Բայց ասում եմ ձեզ, թե Սողոմոնն էլ իր ամբողջ փառքի մեջ նրանցից մեկի նման չհագավ» (խս. 28):*

Ծաղիկները չեն հագնվում տանջալի աշխատանքով և քրտինքով: Ո՛չ, Հայրն է հագցնում նրանց: Հիսուսը շարունակում է՝ հայտնելով ձեզ և ինձ մեր պատասխանը: Կա կյանքի մեկ այլ ճանապարհ՝ Թագավորության ճանապարհը: Հիսուսն ասում է. *«Առաջ Աստծո*

արքայությունը և Նրա արդարությունը խնդրեք (կամ՝ փնտրեք), և այդ ամենը կտրվի ձեզ» (խս. 33): Ի՞նչ է նշանակում փնտրել Աստծո Թագավորությունը: Դա նշանակում է հասկանալ, թե ինչպես է այն գործում: Ուսումնասիրել այն օրենքները, որոնք կառավարում են այն: Սովորել, թե ինչպես է գործում Աստծո համակարգը:

Եթե ինքնաթիռով իջեցնեի ձեզ մի երկիր, որտեղ նախկինում չէիք եղել, ձեր առաջին գործը լինելու էր սովորելը, թե ինչպիսին է այդ թագավորության կյանքը՝ ինչով են նրանք սնվում, ինչպես են գնում և վաճառում, և ինչ օրենքներով է կառավարվում նրանց երկիրը: Դուք պետք է սովորեք, թե ինչպես է կառավարվում Աստծո Թագավորությունը, որպեսզի կարողանաք վայելել դրա մասը լինելու առավելությունները: Ես գիտեմ իմ իսկ փորձառությունից, թե որքան բաներից էի զրկված, երբ չգիտեի, թե ինչպես է այն կառավարվում: Ձեր պատասխանը պարզ է: Ձեզ պետք է ֆինանսական հեղափոխություն: Հեղափոխության ժամանակ մարդիկ ընդվզում են իրենց կառավարության դեմ և նոր կառավարություն են կարգում: Դուք պետք է անեք նույնը: Դուք պետք է դեն նետեք այս երկրային անեծքի համակարգի հին կառավարումը՝ իր կարիքներով և հուսահատությամբ, և վայելեք նոր կյանք Աստծո Թագավորության մեջ՝ նոր օրենքներով, առանց կարիքների և մեծ ուրախությամբ:

ԳԼՈՒԽ 11

ԹՌՉԵԼԸ ՔԱՅԼԵԼՈՒՑ ՀԵՇՏ Է

Եթե ետ գնայիք ժամանակով և ուզեիք հասնել Նյու Յորքից Սան Ֆրանցիսկո, դուք պետք է նավ նստեիք: Ուղևորությունը Հարավային Ամերիկան շրջանցող ճանապարհով, որը կար մինչև Պանամայի ջրանցքը բացելը, կարող էր տևել մոտավորապես մեկ տարի: Ավելի ուշ, երբ բացվեց Օրեգոնի ճանապարհը, դուք կարող էիք հասնել Սան Ֆրանցիսկո չորս ամսում: Այսօր կարող եք հասնել այնտեղ չորս ժամում: Ինչպե՞ս: Օգտվելով նոր օրենքից՝ ամբարձիչ ուժի օրենքից: Ամբարձիչ ուժի օրենքը միշտ եղել է (թռչուններն օգտագործում են այն ամեն օր), բայց մարդիկ չէին հասկանում այն: Նման թռիչքի բնական օրենքներին, քրիստոնյաները մեծ մասամբ պարզապես անտեղյակ են Թագավորության օրենքներից, թեև նրանք կարդացել են դրանց մասին գրեթե իրենց ամբողջ կյանքում: Աստծո Թագավորությունն այստեղ է, այն ձեր ներսում է, և դուք դրա արտոնությունները ստանալու օրինական իրավունք ունեք: Բնական աշխարհում թռիչքի օրենքները չեն չեղարկում ծանրության ուժի օրենքը, այլ գերազանցում են այն: Այլ կերպ ասած, քանի դեռ դուք կիրառում եք թռիչքը վերահսկող օրենքները, դուք թռչելու եք, թեև ծանրության ուժը շարունակում է գործել: Դուք պետք է համաձայնեք, որ շատ ավելի հեշտ է թռչել չորս ժամ, քան ճանապարհորդել նավով մեկ տարի: Այդ դեպքում, սկսեք արագ գործել և թողեք ձեր հին դանդաղագործ մեթոդները:

Դուք երբևէ տեսե՞լ եք միապետ թիթեռի: Այստեղ՝ Օհայոյում, աշնան ընթացքում կարելի է տեսնել հարյուրավոր միապետ թիթեռների, որոնք հարավ են թռչում՝ ձմեռելու համար: Նրանք թռչում են Մեքսիկա՝ գրեթե 3.000 կիլոմետր ճանապարհ անցնելով: Բայց հետաքրքիր է հետևյալը. նրանք երբեք չեն եղել այնտեղ: Որտեղի՞ց գիտեն, թե ինչպես կամ երբ գնալ այնտեղ: Եթե Աստված գոյատևման միջոց է ստեղծել միապետ թիթեռների համար, Նա ունի ճանապարհ նաև ձեզ համար: Ինչպե՞ս է թիթեռին հաջողվում դա:

Թիթեռի կյանքում տեղի է ունենում կերպափոխություն (հունարեն «մետամորֆոզա», որի «մորֆ» արմատը նշանակում է փոփոխություն): Գրեթե բոլորը գիտեն, որ սկզբում միապետը թիթեռ չէ. նա թրթուր է: Թրթուր լինելու փուլում նա ապրում է մեկ կաթնաթոռ բույսի վրա և մեծանում է, մինչև որ պատրաստ է դառնում խոշոր փոփոխության համար: Որոշակի չափի հասնելուց հետո նա բոժոժ է պատրաստում. այն պարկուճի պես մի բան է, որի մեջ թրթուրը փակվում է 7-15 օրով: Դրանից հետո բոժոժից դուրս է գալիս թիթեռը, որի տեսքը և վարքը կտրուկ տարբերվում է այն փուլից, երբ նա թրթուր էր: Թիթեռն ապրում է գոյության լիովին այլ մակարդակի վրա: Նա թռչո՛ւմ է: Փոխարենը մեկ կաթնաթոռ բույսով սահմանափակվելը, այժմ նա կարող է թռչել՝ որտեղ ցանկանա: Նա գեղեցիկ է. նա ունի շնորհք և վայելչություն, որի նմանը չկա բնության մեջ:

Բայց ամենազարմանալի առավելությունը, որը նա ստանում է, թռչելով՝ փորձանքից փախչելու կարողությունն է: Գիտե՞ք, որ միապետ թիթեռը չի կարող ապրել սառը ձմեռային ամիսներին, որոնք գալիս են հյուսիսային կլիմայական գոտիներում: Նա կմահանա: Բայց Աստված այնպես է արել, որ այդ արարածը կարողանա թռչելով հեռանալ փորձանքից՝ անցնելով 3.000 կիլոմետր և գնալով մի վայր, որտեղ նախկինում երբեք չի եղել: Ինչպե՞ս է նրան հաջողվում դա: Կերպափոխման շնորհիվ: Եվ Աստվածաշունչն ասում է, որ նույն գործընթացի միջոցով դուք նույնպես կարող եք վեր թռչել ձեր խնդիրներից՝ նման միապետ թիթեռի, նույնիսկ այնպիսի իրավիճակներում, որոնցից բոլորովին ելք չեք տեսնում:

Սթիվը, ով իմ ընկերն է, մի գիշեր մեքենայով տուն վերադառնալիս ճանապարհին հարվածում է մի եղնիկի, ինչի պատճառով նրա մեքենան լիովին փչանում է: Դժբախտաբար, նրանց միակ մնացած ընտանեկան մեքենայի շարժիչն անսարք է դառնում մեկ շաբաթ անց: Սթիվի ապահովագրական ընկերությունը տրամադրում է նրան անվճար երկշաբաթյա մեքենայի վարձույթ իր մեքենայի կորստի համար, բայց նրանց ընտանեկան մեքենան ենթակա չի լինում որևէ ապահովագրական փոխհատուցման, ինչը կօգներ նրան նոր մեքենա գնել: Սթիվը և Կա՛րենը չգիտեին ինչ անել: Սթիվի գործի համար մեքենա ունենալը պարտադիր էր, քանի որ նա վաճառքի գործակալ էր և ամեն երեկո այցելում էր հաճախորդների:

Նրանք արդեն երկար ժամանակ ծանոթ էին Թագավորության ուսմունքին և գիտեին, որ Աստված էր իրենց պատասխանը: Այդ ժամանակ նրանք չունեին բավականաչափ խնայած գումար՝ նոր մեքենաներ գնելու համար: Այնպես որ, գիտեին, որ իրենց միակ հույսը Աստված էր և Նրա թագավորությունը: Անվճար վարձույթի երկու շաբաթն արագորեն ավարտվում էր, և նրանք դեռ չունեին պատասխան: Զարմանալիորեն, վարձույթի մեքենան ետ վերադարձնելու նախօրեին Սթիվին զանգում է մի մարդ՝ ասելով, որ ինքն ունի մի մեքենա, որը ցանկանում է նվիրել, և քանի որ նա գիտեր, որ Սթիվը հաճախում էր իմ եկեղեցի, նա զանգում է և հարցնում՝ արդյո՞ք նա ճանաչում է որևէ ընտանիքի մեր եկեղեցում, որը մեքենայի կարիք ունի: Սթիվն արագորեն բացատրում է իր իրավիճակը և ասում, որ ինքը շնորհակալ կլիներ, եթե կարողանար վերցնել այդ մեքենան իր և իր ընտանիքի համար: Դա հրաշալի էր, բայց Սթիվը վեց երեխա ուներ, և այդ փոքր մեքենան բավական չէր նրա համար: Այնուամենայնիվ, այդ մեքենայի հայտնվելը մեծապես խրախուսեց նրանց:

Հաջորդ կիրակի Սթիվը և նրա կինն առաջ եկան հավաքույթից հետո և խնդրեցին ինձ միաբան աղոթել իրենց հաջորդ մեքենայի համար: Կա՛րենն ասաց.

- Հովի՛վ, մենք հավատում ենք, որ ստանում ենք Հոնդա Օդիսեյ, և ուզում ենք, որ համաձայնեք մեզ հետ՝ մեր սերմը ցանելու ժամանակ:

- Իհա՛րկե, - ասացի ես:

Մենք աղոթեցինք: Ես իսկապես չեմ կարողանում հիշել, թե քանի շաբաթ անցավ, բայց ոչ շատ, միգուցե երեք կամ չորս, երբ մենք այցելեցինք նրանց: Երբ նրանց տանն էինք, մենք մտանք խոհանոց, և սառնարանի վրա փակցված էր Հոնդա Օդիսեյի լուսանկար: Կա՛ռենն ասաց, որ ամեն օր, երբ բացում էր սառնարանը, նա դնում էր ձեռքն այդ լուսանկարի վրա և գոհանում էր Աստծուց այդ մեքենայի համար:

Մոտավորապես մեկ շաբաթ անց իմ քարտուղարուհին զանգեց ինձ.

- Հովի՛վ, այսօր մենք մի հետաքրքիր զանգ ստացանք: - Մի մարդ ցանկանում է մեքենա նվիրել եկեղեցուն: Այդ ժամանակ ոչ ոք չգիտեր, որ Սթիվը և Կա՛ռենը հավատում էին նոր մեքենայի համար, և ո՛չ էլ՝ թե ինչպիսի մեքենա էին ցանկանում ունենալ: - Այդ մեքենան Հոնդա Օդիսեյ է, - ասաց նա:

- Ի՞նչ վիճակում է այն:

Նա ասաց, որ այդ մարդու խոսքով՝ մեքենան գերազանց վիճակում էր՝ առանց որևէ քերծվածքի, և վազքն ընդամենը 110.000 կիլոմետր էր: Ես ասացի նրան, որ գիտեմ, թե ում այն պետք է տրվի: Պատմեցի Դրենդային այդ մասին և խնդրեցի նրան զանգել Կա՛ռենին: Դրենդան զանգեց Կա՛ռենին և հարցրեց, թե ինչպես էին նրանց գործերը, և արդյո՞ք կար որևէ նորություն իրենց անհրաժեշտ մեքենայի վերաբերյալ: Կա՛ռենը պատասխանեց.

- Ես ևս մեկ օրով մոտ եմ դրան:

- Դու շատ ավելի մոտ ես դրան, քան մտածում ես, - ասաց Դրենդան: - Արի՛ և վերցրո՛ւ այն:

Ես սիրում եմ նման պատմություններ, իսկ դո՞ւք: Այս պատմությունն ունի շարունակություն, քանի որ Սթիվի և Կա՛ռենի վստահությունը Թագավորության հանդեպ ավելացավ:

Մոտավորապես այդ ժամանակ Սթիվը և Կա՛ռենը ցանկանում էին տուն ունենալ: Նրանք մի քանի տարի շարունակ տուն էին վարձակալում և զգում էին, որ ժամանակն էր, որ ունենային իրենց սեփա-

կան տունը: Սակայն կրկին, նրանք չունեին բավականաչափ գումար՝ կանխավճարի համար: Նրանք այցելել էին բազմաթիվ բանկեր՝ փորձելով հողատարածք ձեռք բերել, բայց բոլոր բանկերն ունեին նույն պահանջը՝ 50 տոկոս կանխավճար: Այդ պահին այդ երիտասարդ ընտանիքը չուներ բավականաչափ գումար՝ նման պահանջ կատարելու համար: Կա՛րենը հուսալքված էր, և նա խոսեց ինձ հետ այդ մասին: Մենք համաձայնեցինք, որ Աստված ճանապարհ կբացի: Եվ նրանք սկսեցին փնտրել այլ հողատարածքներ և տներ:

Մի հողատարածք, որը նրանք տեսան, գրավեց նրանց ուշադրությունը: Նրանք ցանկանում էին տուն կառուցել հենց այդ վայրում: Այդ 22 հեկտար հողատարածքը վաճառվում էր ընդամենը 55.000 դոլարով: Կրկին, նրանք չունեին անհրաժեշտ կանխավճարը: Սակայն ես գիտեի մի փոքր տեղական բանկի մասին (որն այդ տարածքում չէր, այլ գտնվում էր մոտավորապես երկու ժամվա հեռավորության վրա մեքենայով), որն ընդունում էր ձեռք բերվող հողատարածքը որպես կանխավճարի մաս: Այդ հողատարածքը գնահատվեց 100.000 դոլարով, և բանկն ասաց, որ նրանք ընդհանրապես կանխավճար տալու կարիք չունեն: Այնպես որ, նրանք գնեցին այդ հողատարածքը՝ առանց կանխավճարի, և գեղեցիկ տուն կառուցեցին այդ գեղեցիկ վայրում՝ առանց նախապես որևէ գումար տալու: Սթիվն ու Կա՛րենը շարունակում են բարգավաճել մինչև օրս, քանի որ նրանք, ինչպես Դրենդան և ես, քայլում են Թագավորության ճանապարհներով:

ՇԱՏ ՀԱՃԱԽ ՄԵՆՔ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄ ԵՆՔ ՄԵԶ՝ ԿՇՌԵԼՈՎ ՄԵՐ ԱՊԱԳԱՆ ԱՅՆ ԲԱՆՈՎ, ԻՆՉ ԻՆՔՆԵՐՍ ԵՆՔ ՀՆԱՐԱՎՈՐ ՀԱՄԱՐՈՒՄ: ԲԱՅՑ ԱՍՏԾՈ ՀԱՄԱՐ ԱՄԵՆ ԻՆՉ ՀՆԱՐԱՎՈՐ Է, ԵԹԵ ՊԱՐԶԱՊԵՍ ԹՈՒՅԼ ՏԱՆՔ, ՈՐ ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՓՈԽԻ ՄԵՐ ՄՏԱԾԵԼԱԿԵՐՊԸ:

Ես նման պատմություններ ունեմ իմ եկեղեցու անդամներից շա-

տերի մասին և լիովին ակնկալում եմ նույն տեսակի պատմություններ ձեր կյանքում: Աստված կարող է անել զարմանալի, իսկ երբեմն անհավանական բաներ՝ մեր կարիքները լրացնելու համար: Շատ հաճախ մենք սահմանափակում ենք մեզ՝ կշռելով մեր ապագան այն բանով, ինչ ինքներս ենք հնարավոր համարում: Բայց Աստծո համար ամեն ինչ հնարավոր է, եթե պարզապես թույլ տանք, որ Աստծո Խոսքը փոխի մեր մտածելակերպը:

> *«Մի՛ համապատասխանեք այս աշխարհի օրինակին, այլ վերափոխվեք՝ նորոգելով ձեր միտքը: Այդ դեպքում դուք կկարողանաք քննել և հաստատ իմանալ, թե որն է Աստծո կամքը՝ Նրա բարի, հաճելի և կատարյալ կամքը»:*
>
> – Հռոմեացիների 12.2, NIV

Որպես հավատացյալներ, մենք չպետք է համապատասխանենք այս աշխարհի օրինակին: Պողոսը նկատի ունի այս երկրի անեծքի համակարգը և դրա կենսաոճը, մասնավորապես այն, թե ինչպես ենք մենք մտածում: Երբևէ եղե՞լ է, որ զգեստ կարեք կամ ինչ-որ բան պատրաստեք՝ օգտվելով ինչ-որ գծագրից: Եթե այո, և ձեզ դուր չի եկել արդյունքը, ի՞նչ կլինի, եթե կրկին փորձեք՝ նույն գծագրով: Դուք կստանաք միևնույն արդյունքը: Այնպես որ, Պողոսն ասում է, որ մենք պետք է վերափոխվենք՝ նորոգելով մեր միտքը. մենք պետք է փոխենք այն, թե ինչպես ենք ապրում: Մեր մտածելակերպը պետք է տարբերվի այս աշխարհի մտածելակերպից:

«Վերափոխվել» բառն այս խոսքում «մորֆ» բառն է, որի մասին քիչ առաջ խոսեցինք, և այն նշանակում է փոփոխություն: Մեզ անհրաժեշտ է կերպափոխությո՛ւն: Մենք պետք է մտածենք Աստծո նման: Մենք պետք է մտածենք Թագավորությանը վայել կերպով: Փոխարենը մտածենք՝ ինչպես մի տգեղ թրթուր, որը ծուղակի մեջ է ձմռան պատճառով և դատապարտված է մահվան, պետք է վստահենք Աստծուն լիովին նոր կյանքի համար: Այդ դեպքում, և միայն այդ դեպքում մենք կկարողանանք թռչելով վեր բարձրանալ մեր խնդիրներից և կիմանանք, թե ո՛րն է Աստծո հաճելի և կատարյալ կամքն ամեն իրավիճակում: Եթե

մենք չընդունենք մտածելակերպի փոփոխությունը, մեր հին մտածելակերպը մշտապես ասելու է. «Ո՛չ, ո՛չ, ես չե՛մ կարող անել դա: Ո՛Չ, ես չեմ տեսնում, թե ինչպես դա կարող է լինել»:

Ո՞վ կարող էր մտածել, որ այդ տգեղ թրթուրը երբևէ կկարողանա թռչել շնորհքով և կատարելությամբ: Եթե նայեք թրթուրին և մտածեք, որ այն պետք է 3.000 կիլոմետր ճանապարհ անցնի, դուք պարզապես կտարուբերեք ձեր գլուխը և կասեք. «ԱՆՀՆԱ՛Ր է»: Բայց Աստծո Թագավորության մեջ ամեն ինչ հնարավոր է: Տեսե՛ք: Երբ սկսվում է իմ հեռուստատեսային հաղորդումը, ինձ ներկայացնում են որպես ֆինանսական փորձագետ: Երբեմն ես հիշում եմ այն օրերը, երբ դեռ թրթուր էի, և մտածում եմ. «Որքա՛ն զարմանալի է»:

Քանի դեռ մենք խոսում ենք թռչելու մասին, հենց որ Դրենդան և ես սկսեցինք սովորել, թե ինչպես է գործում Թագավորությունը, ես որոշեցի, որ ցանկանում եմ ինքնաթիռ ունենալ: Ես ինքնաթիռ էի վարում 19 տարեկանից: Ես միշտ ինքնաթիռներ եմ վարձել, բայց երբեք չեմ ունեցել իմ սեփականը, և իհարկե, դուք գիտեք, թե ինչու. քանի որ փող չունեի: Այնպես որ, մեկ օր որոշեցի, որ այդպես չպետք է լինի, և որ ինքնաթիռը դժվար բան չէ Աստծո Թագավորության համար: Ինչո՞ւ էի ես սահմանափակում Թագավորությունն այն բանով, ինչն ինքս էի հնարավոր համարում: Ես մի չեկ դուրս գրեցի և նշումների բաժնում գրեցի. «Իմ ինքնաթիռի համար» (և թվարկեցի մանրամասները): Ես դրեցի իմ ձեռքերն այդ չեկի վրա և ուղարկեցի այն փոստով՝ հավատալով, որ ստացա այդ ինքնաթիռն աղոթելու ժամանակ՝ համաձայն Մարկոս 11.24-ի:

> *«Սրա համար ասում եմ ձեզ, թե ամեն ինչ, որ աղոթք անելով խնդրեք, հավատացե՛ք, թե կառնեք (կամ՝ «որ ստացել եք»), և կլինի ձեզ»:*

Մեկ ամիս էլ չէր անցել, և ես գնացի բժշկի՝ հերթական ստուգման: Ես զարմացա, երբ հանկարծ բժիշկն ասաց.

- Դուք ճանաչո՞ւմ եք ինչ-որ մեկի, ով ցանկանում է ինքնաթիռ գնել:

Ես մտածեցի, որ դա տարօրինակ էր:

- Ի՞նչ տեսակի ինքնաթիռ, - հարցրի:

Ես զարմացա և ոգեշնչվեցի, քանի որ այդ ինքնաթիռը ճիշտ այնպիսին էր, որի համար ես հավատքով աղոթել էի: Այնպես որ, հարցրի նրան, թե որտեղ կարող եմ տեսնել այն, և նա ասաց, որ այն մեր շրջանի օդանավակայանում է, որը գտնվում էր իմ տան կողքին: Թույլ տվեք բացատրել: Իմ հողատարածքը սահմանակցում է մեր շրջանի օդանավակայանին: Յուրաքանչյուր ինքնաթիռ, որը վայրէջք է կատարում այդտեղ, թռչում է ուղիղ իմ տան վերևով: Այն, որ ես հետևում էի, թե ինչպես էին ինքնաթիռներն ամբողջ օրը գնում և գալիս, և որ օդանավակայանի թռիչքուղին ընդամենը մեկուկես կիլոմետրով էր հեռու իմ տան մուտքի դռնից, նշանակում էր, որ ես պարզապես պե՛տք է ինքնաթիռ ունենայի:

Ես խնդրեցի իմ ընկերոջը, ով ամբողջ կյանքում թռչում էր և նույնպես թռիչքների հրահանգիչ էր, գալ ինձ հետ և տեսնել այդ ինքնաթիռը: Երբ մենք զննում էինք այն, ես գիտեի, որ այդ ինքնաթիռն իմն էր. այն գերազա՛նց վիճակում էր: Այդ ինքնաթիռը ճիշտ այն էր, ինչ ես ցանկանում էի ունենալ: Այնուամենայնիվ, կար միայն մեկ խնդիր՝ նույն խնդիրը, որն ունեի տարիներ շարունակ, երբ ցանկանում էի ինքնաթիռ ունենալ. ես չունեի փող դրա համար: Երբևէ ունեցե՞լ եք այս խնդիրը: Բայց այս անգամ ես վախով ետ չէի ընկրկելու: Գիտեի, որ այդ ինքնաթիռն իմն էր. ես պարզապես դեռ չգիտեի, թե ինչպես էր Աստված միջոցներ տալու ինձ դրա համար:

Այդ դեպքից երկու ամիս առաջ Դրենդան և ես գրասենյակային տարածք էինք փնտրում մեր ընկերության համար: Մենք գիտեինք, թե որտեղ էինք ուզում, որ այն լիներ, բայց այդ տարածքում ոչինչ չէր վաճառվում: Այնպես որ, սկսեցինք տարածք փնտրել այլ վայրերում: Մենք գտանք երկու շենք, որոնք համարյա գնեցինք, բայց երկու դեպքում էլ արգելք զգացինք մեր հոգում: Մենք շարունակ վերադառնում էինք այն վայրը, որտեղ, ինչպես գիտեինք, պետք է լիներ մեր գրասենյակը՝ հուսալով ինչ-որ տարածք գտնել: Շարունակ աղոթում էինք դրա համար, և մեկ օր հայրս զանգեց ինձ.

- Ես գիտեմ՝ դու կասես, որ սա Աստծուց է, բայց մայրդ և ես խոսեցինք և ուզում ենք նվիրել ձեզ մեր շենքը՝ ձեր գրասենյակի համար:

Այն շենքը, որը պատկանում էր նրանց, ճիշտ այն վայրում էր, որտեղ ես հույս ունեի տարածք գտնել՝ մեր գործը տեղափոխելու համար: Ես ցնցվա՛ծ էի:

ԻՄ ԿՅԱՆՔԸ, ՈՐԸ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՎԱԾ ԷՐ ԳՈՅԱՏԵՎՄԱՄԲ ԵՎ ՎԱԽՈՎ, ՎԵՐԱՓՈԽՎԵԼ ԷՐ ԱՍՏԾՈ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ: ՕԳՏՎԵԼՈՎ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻՑ՝ ԵՍ ԳՏԱ ԱՆՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԼԻ ԿՅԱՆՔ:

Որպեսզի հասկանաք, թե ինչ տեղի ունեցավ, դուք պետք է իմանաք, որ այդ ժամանակ իմ հայրը հավատացյալ չէր: Նա շատ անպարկեշտ ձևով էր արձագանքում, երբ նրա մոտ հիշատակում էին Աստծուն: Նրա արձագանքն այնքան տհաճ էր, որ ես չէի կարողանում խոսել նրա հետ Աստծո մասին: Ես նույնիսկ աղոթում էի, որ Աստված ուղարկեր ինչ-որ մեկին, ով կկարողանար քարոզել նրան Քրիստոսի մասին: Ես գիտեի, որ չէի կարող փրկության բերել նրան. նա չէր լսում ինձ: Բայց իմ հայրը փրկվեց մի քանի տարի անց՝ 80 տարեկանում: Զարմանալի է, բայց նա փրկվեց՝ դիտելով մեր հեռուստահաղորդումները և տեսնելով այն զարմանալի գործերը, որոնք Աստված անում էր: Նրա կյանքի վերջին երեք ու կես տարում նա փոխված մարդ էր և եկեղեցում էր ամեն շաբաթավերջին:

Մեկ անգամ, հավաքույթի ավարտից հետո, երբ քայլում էի նստարանների կողքով, տեսա, որ հայրս զրուցում է մեր եկեղեցու անդամներից մեկի հետ, որին նա ճանաչում էր տարիներ շարունակ: Երբ մոտենում էի նրանց, լսեցի, որ այդ մարդը հարցնում է հորս, թե ինչու է սկսել եկեղեցի հաճախել: Հայրս պատասխանեց, որ ինքը տեսել էր շատ բաներ, որոնք չէր կարող բացատրել: Փա՛ռք Աստծուն: Հենց այդպես էլ պետք է լինի:

Բայց մենք պետք է վերադառնանք հորս հեռախոսազանգին այդ շենքի վերաբերյալ, երբ նա դեռ փրկված չէր: Դրենդան և ես ցնցվել էինք, երբ նա նվիրեց այդ շենքը մեզ: Իհարկե, գիտեինք, որ դա Աստծուց էր, և մենք պատասխանեցինք հորս այդ ժամանակ.

- Այո՛, հայրիկ, դու ճի՛շտ ես, սա Աստծուց է:

Այդ շենքը հիմնովին վերանորոգման կարիք ուներ, որպեսզի համապատասխաներ կոմերցիոն չափանիշներին և ծառայեր մեզ որպես գրասենյակ: Հայրս նվիրեց մեզ այդ շենքը դեկտեմբեր ամսին, և ես սպասելու էի մինչև գարուն՝ վերանորոգումը սկսելու համար: Շենքը փակված էր ամբողջ ձմեռվա ընթացքում: Ոչ ոք չէր օգտագործում այն, և հայրս ասաց ինձ, որ անջատել է ջուրը: Ձմեռային ամիսներն անցան, ինչպես նաև անցավ մեկ շաբաթ այն բանից հետո, երբ ես գնացի՝ ինքնաթիռը տեսնելու համար: Եվ մեկ օր եղբայրս զանգեց ինձ և ասաց, որ ավելի լավ է՝ գնամ իմ շենքը, քանի որ շենքից ջուր էր լցվում փողոց: Ես գնացի այնտեղ մեքենայով, և պարզվեց, որ երկրորդ հարկի լոգարանի ջուրը բաց էր մի քանի օր, միգուցե՝ մի քանի շաբաթ: Ներքևի հարկի պատերի ամբողջ ծեփը թափվել էր:

Ես գիտեմ, որ առաջին հայացքից դա վատ է թվում, բայց դուք չգիտեք, և եղբայրս նույնպես չգիտեր, որ ես արդեն պայմանագիր էի ստորագրել ամբողջ շենքի ներքին և արտաքին հարդարանքը հեռացնելու և շենքն ամբողջովին ձևափոխելու մասին, և աշխատանքները սկսվելու էին երկու շաբաթից: Այնպես որ, ջրից առաջացած վնասը բոլորովին խնդիր չէր, քանի որ այն, ինչ վնասվել էր, միևնույն է՝ հեռացվելու էր: Բայց կատարվեց հետևյալը. իմ ապահովագրական ընկերությունը փոխհատուցեց վնասը, և այդ գումարը բավական էր՝ իմ ինքնաթիռը գնելու համար:

Մի՞թե այդ ամենը կատարվեց ինձ հետ: Ես ստացա ինքնաթիռ և գրասենյակային շենք՝ առանց պարտքի: Որքա՞ն պետք է ջանք թափեի, որպեսզի իրագործեի այդ ամենը սովորական պայմաններում: Այո, այդ ամենը ի՛մն էր: Այժմ, երբ թռչում եմ այդ ինքնաթիռով և անցնում եմ իմ հողատարածքի վրայով, ես հիշում եմ, որ ինքնաթիռը կառավարելը նման է Աստծո Թագավորությանը, որի կառավա-

րումը և օրենքները թույլ են տալիս մեզ ապրել այլ հարթության մեջ: Ինչպես թրթուրի և թիթեռի դեպքում, թրթուրը երբեք չէր կարողանա Մեքսիկա հասնել, որքան էլ արագ վազեր իր ոտքերով: Իմ կյանքը, որը սահմանափակված էր գոյատևմամբ և վախով, վերափոխվել էր Աստծո Թագավորությամբ: Օգտվելով Թագավորության օրենքներից՝ ես գտա անսահմանափակ հնարավորություններով լի կյանք:

Ավարտելով այս գիրքը՝ ուզում եմ կիսվել ևս մեկ սուրբգրային հատվածով: Համոզված եմ, որ դուք լսել եք այն ձեր ամբողջ կյանքում: Բայց կարծում եմ՝ այժմ այն լիովին նոր իմաստ կստանա ձեզ համար:

> *«Ինձ մոտ եկե՛ք, բոլոր վաստակածներ և բեռնավորվածներ, և Ես հանգիստ կտամ ձեզ: Ձեզ վրա առեք Իմ լուծը և Ինձնից սովորեք, որովհետև Ես հեզ եմ և սրտով խոնարհ, և ձեր անձերի համար հանգստություն կգտնեք: Որովհետև Իմ լուծը քաղցր է, և Իմ բեռը՝ թեթև»:*
>
> – Մատթեոս 11.28,29

Հիսուսը եկավ՝ վերցնելու մեզնից մեր լուծը՝ այս երկրի անեծքի համակարգի տանջալի աշխատանքը և քրտինքը: Այժմ մենք պետք է վերցնենք Նրա լուծը (այն, ինչը կատարված է) և հանգստություն գտնենք (յոթերորդ օրը՝ ճշմարիտ շաբաթը) մեր անձերի համար:

Դուք կարող եք վերապրել զարմանալի բաներ ձեր կյանքում՝ պարզապես անելով այն, ինչ արեց Պետափրեսը, այսինքն՝ ապրելով Թագավորության օրենքներով: Որոշո՛ւմ կայացրեք այսօր համաձայնեցնել ձեր կյանքը Աստծո Թագավորության օրենքներին և սկսեք վայելել համաձայնության զորությունը: Սկսե՛ք ձեր ֆինանսական հեղափոխությունն այսօր, մի կողմ նետե՛ք հին կյանքի ոճը, հին կառավարումը, այս երկրի անեծքի համակարգը, որում կա աղքատություն, հիվանդություն և անհուսություն: Թողե՛ք ձեր հին թրթուրային կենսաոճը և սկսեք թռչել՝ կիրառելով Թագավորության օրենքները, որոնք Հիսուսը հասանելի դարձրեց ձեզ համար: Դուք այդ Թագավորության քաղաքացին եք:

Դուք օրինական իրավունքնե՛ր ունեք:

***

Եթե այս գիրքը հետաքրքրեց ձեզ, և եթե դուք որոշում եք կայացրել դառնալ Թագավորության աշակերտ, առաջարկում եմ ձեզ այցելել GaryKeesee.com կայքը, որտեղ կգտնեք տեղեկությունների մի ամբողջ դարան, որը կօգնի ձեզ և կաշակերտի Թագավորության մեջ: Ես նույնպես ցանկանում եմ խրախուսել ձեզ, որ դառնաք «Հեղափոխական թիմի գործընկեր», ինչի շնորհիվ դուք հնարավորություն կունենաք դիտել հատուկ միջոցառումներ և ուսուցողական տեսանյութեր:

Ֆինանսական բնագավառում հաղթող լինելու համար անհրաժեշտ է և՛ հոգևոր, և՛ երկրային՝ բնական գիտելիք: Եթե ցանկանում եք իմանալ, թե ինչպես ազատվեք պարտքերից և ստանաք պարտքերից ազատվելու անվճար ծրագիր՝ պատրաստված իմ «Ֆորվարդ Ֆայնենշլ Գրուպ» (Forward Financial Group) ընկերության կողմից, զանգե՛ք 1-800-815-0818 հեռախոսահամարով:

Ձեր մեծ ջանքերով վաստակած կենսաթոշակային միջոցները պաշտպանելը նույնքան կարևոր է, որքան իմանալը, թե ինչպես վաստակեք դրանք, հատկապես ներկա անկայուն ֆինանսական պայմաններում: Մեր ընկերությունը ներդրել է ավելի քան հարյուր միլիոն դոլար մեր հաճախորդների համար, և նրանցից ոչ ոք չի կորցրել նույնիսկ մեկ ցենտ վերջին 15 տարում՝ մեր երկրում տիրող ֆինանսական խառնաշփոթի պայմաններում: Կրկին, ձեր հեռախոսազանգը և մեր խորհուրդներն անվճար են: Զանգե՛ք 1-800-815-0818 հեռախոսահամարով՝ տեղեկություն ստանալու համար:

Դրենդան և ես որոշում ենք կայացրել օգնել անհատներին և ընտանիքներին հաղթել կյանքում: Ահա թե ինչու է Դրենդան հեռարձակում իր *«Դրենդա»* կոչվող հեռուստատեսային հաղորդումը: Այս հաղորդման նպատակն է խոսել ընտանեկան կյանքի մասին և խրախուսել բոլոր տարիքի կանանց: Այցելե՛ք Drenda.com կայքը՝ ավելին իմանալու համար:

Վերջապես, Դրենդան և ես կցանկանայինք առաջարկել ձեզ

աջակցել աշխարհով մեկ սփռված եկեղեցիների և հովիվների: Մեր «Հ-3» աջակցության նախագծի նպատակն է օգնել մարդկանց կյանքի գործնական հարցերում, ինչը մեր սրտի ցանկությունն է: Ամեն տարի «Հ-3»-ը տրամադրում է տասնյակ հազարավոր ուսումնական նյութեր աշխարհով մեկ գտնվող հովիվներին: Մենք նույնպես օգնում ենք կերակրել քաղցածներին, աջակցում ենք այնպիսի ծառայությունների, որոնց նպատակն է վերջ տալ սեռական թրաֆիքինգին բազմաթիվ երկրներում, աջակցել մանկատների, ֆինանսապես աջակցել հովիվների բազմաթիվ երկրներում, ինչպես նաև ապաստան տրամադրել կանանց մեզ մոտ՝ Օհայո նահանգում: Մեր նպատակն է օգնել ամբողջ աշխարհի մարդկանց իմանալ Աստծո Թագավորության մասին և բացահայտել այն ազատությունը և բավականությունը, որոնք Աստված ցանկանում է պարգևել բոլորիս:

Անչափ շնորհակալություն, որ թույլ տվեցիք ինձ պատմել մեր զարմանալի պատմությունը: Այժմ սկսեք գրել ձե՛ր կյանքի զարմանալի պատմությունը՝ Աստծո Թագավորության հետ:

Գարի Կիսիի

«Ձեր ֆինանսական հեղափոխությունը» գրքաշարի մյուս գրքերը

Համաձայնության զորությունը

Հանգստի զորությունը

Մարտավարության զորությունը

Մատակարարման զորությունը

Առատաձեռնության զորությունը

ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Համաձայնության զորությունը

Կարդացեք այս գիրքը, եթե դուք....

ՀՈԳՆԵԼ ԵՔ ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻՑ

ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՔ ԱԶԱՏՎԵԼ ՊԱՐՏՔԵՐԻՑ

ՉԳԻՏԵՔ, ԹԵ ԻՆՉԻՑ ՍԿՍԵԼ

ԱՆՀՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՔ

Գարի Կիսին անձամբ եղել է այդ վիճակում: Ինը տարի շարունակ, ծանր ֆինանսական դրության պատճառով, նրա կյանքը եղել է սաստիկ զգացմունքային խառնաշփոթի մեջ: Վարկային կազմակերպությունների հեռախոսազանգերը, Հարկային տեսչության արգելանքները, դատերը և ամոթը կազմում էին նրա կյանքի մասը: Այնուամենայնիվ, մեկ օր ամեն ինչ փոխվեց, երբ Աստված խոսեց Գարիի հետ նրա ֆինանսների վերաբերյալ և տվեց մի գաղտնիք, որը շրջադարձորեն փոխեց նրա կյանքը. նա ազատվեց պարտքերից, հիմնադրեց միլիոնավոր դոլարներ արժեցող ընկերություններ, և այսօր նա պատմում է այն բանալիների մասին, որոնք փոխեցին իր կյանքը իր՝ «*Ֆինանսների կարգավորում*» հեռուստատեսային հաղորդման միջոցով, որը հեռարձակվում է ամեն օր աշխարհի բոլոր ժամային գոտիներում: Գարին այս մասին սովորեցրել է հարյուր հազարավոր մարդկանց աշխարհով մեկ՝ համաժողովների ընթացքում և անձնական խորհրդատվությունների միջոցով: Նրա խոսքով, կան բազմաթիվ սկզբունքներ, որոնք հաջողակ կյանքի մաս են կազմում, բայց եթե նա կարողանար կիսվել միայն դրանցից մեկով, կխոսեր այս սկզբունքի մասին: Գարին հրավիրում է ձեզ միանալ ֆինանսական հեղափոխությանը և արմատապես փոխել ձեր ֆինանսական վիճակը *Համաձայնության զորության միջոցով:*

Գարի Կիսին հեղինակ է, քարոզիչ, գործարար, ֆինանսական մասնագետ և հովիվ, որի ձգտումն է օգնել մարդկանց հաղթել կյանքում, հատկապես հավատքի, ընտանիքի և ֆինանսների բնագավառներում: Գարին և կինը՝ Դրենդան, ստեղծել են մի քանի հաջողակ ձեռնարկություններ և «Հավատքի կյանք հիմա» ծառայության հիմնադիրներն են, որը թողարկում է երկու հեռուստատեսային հաղորդում՝ «Ֆինանսների կարգավորում» և «Դրենդա» անվանումներով, անցկացնում է համաժողովներ աշխարհով մեկ և տրամադրում է գործնական նյութեր: Կիսիները հովվում են նաև «Հավատքի կյանք» եկեղեցին, որը գտնվում է Օհայո նահանգի Կոլամբուս քաղաքի մոտակայքում:

GKM GARY KEESEE MINISTRIES

garykeesee.com